

ՎԱՆԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ  
ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

(Տեղագրական և ստուգաբանական քննություն)



930,2 (479.25)

ՀՀ ԳԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՆԵՐԻ ԽԱՂԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ  
ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

(Տեղագրական և ստուգաբանական քննություն)

A  
98346



ԵՐԵՎԱՆ  
«ՆԱԻՐԻ»  
2012

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

Խ 282

Աշխատանքը կատարվել է  
«ԿԱԱ պատմության ինստիտուտում»

Խաչատրյան Վալերի

Խ 282 Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում: Տեղագրական և ստուգաբանական քննություն / Վ. Ն. Խաչատրյան.– Եր.: Նաիրի, 2012, 180 էջ:

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

ISBN 978-5-550-01689-3

© Վալերի Խաչատրյան, 2012

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք .....	4
1 Հայկական տեղանունները մ.թ.ա. 3-րդ հազարամյակի շումերական և աքքադական սեպագիր աղբյուրներում.....	7
2 Հայկական տեղանունները մ.թ.ա. 14-13-րդ դարերի խեթական սեպագիր աղբյուրներում .....	19
3 Հայկական տեղանունները մ.թ.ա. 12-րդ դարի ասուրական սեպագիր աղբյուրներում.....	52
4 Հայկական տեղանունները մ.թ.ա. 9-7-րդ դարերի ասուրական և ուրարտական սեպագիր աղբյուրներում .....	71
Եզրակացություն .....	169
Հայկական տեղանվանացանկ .....	171
Գրականության ցանկ .....	177

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական լեռնաշխարհի հին երկրների, բնակավայրերի և այլ աշխարհագրական անուններ հանդիպում են սեպագիր աղբյուրներում մ.թ.ա. 3-րդ հազարամյակից ի վեր: Դրանց վերաբերյալ ամենահին տվյալները պարունակում են շումերական և արքադական տեքստերը: Իսկ մ.թ.ա. 14-13 դդ. խեթական, մ.թ.ա. 12-րդ դդ. ասուրական և մ.թ.ա. 9-7-րդ դդ. ուրարտական սեպագիր արձանագրությունները այս առումով ավելի շատ տեղեկություններ են մեզ ընծեռում:

Սույն աշխատության մեջ մենք փորձ ենք արել անցկացնել հիշյալ տարածքի՝ Տիգրիսի ակունքներից դեպի հյուսիս՝ մինչև Սև ծով և Եփրատ գետի վերին հոսանքից դեպի Անդրկովկաս ընկած տարածաշրջանի տեղանունների տեղագրական և ստուգաբանական քննություն: Նշելով դրանց տեղագրության վերաբերյալ եղած սեպագրական, ինչպես նաև մատենագրական փաստերը և ուսումնասիրողների եզրակացությունները՝ որոշ դեպքերում փորձում ենք նորովի մոտենալ գոյություն ունեցող մեկնաբանություններին կամ գտնել դեռևս չլուծված հարցերի պատասխանները: Ի հայտ են եկել նաև հարցին վերաբերող նոր տվյալներ, որոնք օգնում են ճշգրտել դրանց և տեղագրությունները, և ստուգաբանությունները: Հաճախ տեղանվան հետազայի համարժեքի հայտնաբերմամբ տեղորոշումը վերջնական լուծում է ստանում:

Տեղանունները ստուգաբանելիս, իհարկե, կարևորվում են տվյալ գրավոր աղբյուրների լեզվի և սեպագրերի առանձնահատկությունները: Իսկ դրանց իմաստի բացահայտման հարցում մեծ դեր ունեն հին և միջնադարյան հայկական բնակավայրերի անունները, որոնք իրենց կազմում ունեն համապատասխան արմատներ:

Աշխատանքը չձանրաբեռնելու համար խուսափում ենք կրկնվող հղումներ տալուց: Դա վերաբերում է հատկապես բառարանային տվյալներին: Մեր օգտագործած հայկական տեղանունները հիմնականում վերցված են Թ. Հակոբյանի, Հ. Բարսեղյանի և Ս. Մելիք-Բախշյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանից»: Հին հայերենի արմատները բերված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի ձևերով և իմաստներով:

Յուրաքանչյուր ածանցի մասին նշված է, թե այն խեթերենին, ուրարտերենին կամ հին հայերենին է պատկանում: Վերջիններիս մասին տվյալները քաղված են Գ. Ղափանցյանի և Գ. Ջահուկյանի համապատասխան աշխատություններից: Այդ բոլորին զուգընթաց նշել ենք խեթական, ասուրական և ուրարտական սեպագիր աղբյուրների գրության առանձնահատկությունները:

Գլխաբառերին անմիջապես հաջորդող փակագծերի մեջ տեղանվան լատիներեն գրության հետ նշվում են դրա երկիր (URU), քաղաք (URU) կամ ազգագավառ (I) նշանակող շումերերեն ցուցիչները, ինչպես որ առկա են տեքստերում:

Բառերի մեջ միևնույն բաղաձայնի կրկնված գրությունը (օրինակ՝ tt, kk և այլն) խեթերենում օրինաչափ չէ: Այն հաճախ ներկայացված է մեկ բաղաձայնով: Սեպագիր աղբյուրներում հանդիպող այն տեղանունները, որոնցում միևնույն բաղաձայնը կրկնված է (օրինակ՝ dukk-), արտասահմանյան ուսումնասիրողները նշում են միայն այն քննարկելիս (օրինակ՝ <sup>KUR</sup>Aššur, <sup>KUR</sup>Hatti), իսկ շարադրանքի մեջ այն ներկայացվում է մեկ բաղաձայնով: Մենք առաջնորդվել ենք միևնույն սկզբունքով: Ի դեպ ուրարտերենի -hi և -ni ածանցները տեղանուններում (նաև հատուկ այլ անունների մեջ) հանդիպում են -a<sup>h</sup>i, -e<sup>h</sup>i, -i<sup>h</sup>i, -u<sup>h</sup>i, և -ani, -eni, -ini, -uni տարբերակներով: Այդ a, e, i, u հնչյունները բառի հետ ածանցը կապող ծայնավորներ են, որոնք չեն փոխում -hi և -ni ածանցների իմաստները:

Քննարկվող տեղանունները վերցված են խեթական, ասուրական և ուրարտական սեպագիր աղբյուրներից, որոնց մասին նշվում է յուրաքանչյուր գլխաբառի սկզբում:

Մեր հետազոտության արդյունքները հանգեցնում են այն եզրակացությանը, որ սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 7-րդ դարը ներառյալ Հայկական լեռնաշխարհի հիմնականում բնակեցված է եղել հայերով:

Հին տեղանունների սկզբնական ձևերի ու նշանակությունների վերհանումը մեծապես նպաստում է տվյալ երկրի պատմության անհայտ էջերի բացահայտմանը: Սակայն դա բավականին դժվար խնդիր է, քանի որ ժամանակի ընթացքում այդ բառերը կրում են տարբեր փոփոխություններ՝ հնչյունական, իմաստային: Քիչ դեր չեն կատարում նաև նվաճողների կողմից քաղաքական նպատակներով կատարվող «շտկումները»: Նրանք բնիկների տեղանունները, այսինքն՝ օտար բառերը կամ հարմարեցնում են իրենց լեզվի արտասանական կանոններին, կամ թարգմանում են դրանք, կամ էլ, վա-

տագույն դեպքում, նոր անուններ են ստեղծում: Այդպես են վարվել հատկապես թուրքերը Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակներից ի վեր՝ Արևմտյան Հայաստանի պատմական տեղանունները փոխարինելով թուրքական անուններով:

Տեղանունների ստուգաբանությունների ժամանակ կարևորվում են պատմական, լեզվաբանական գործոնները: Առաջին հերթին անհրաժեշտ է, իհարկե, պարզել տեղանվան գործածության ժամանակը, հնարավորինս բացահայտել դրա ստեղծման պատմական հանգամանքները: Հնագույն տեղանվան բաղադրիչները ճշտորեն որոշելու համար պետք է ունենալ տվյալ լեզվի հին շրջանի համակարգի իմացություն: Այդ համակարգը, բնականաբար, բաղկացած է լինում և բնիկ, և փոխառյալ տարրերից, որոնք հավասարապես օգտագործվում են ժողովրդի կողմից: Ուրեմն տեղանվան բաղադրիչների օտարածին լինելը դեռ չի նշանակում, թե այն օտարների կողմից է ստեղծվել: Այս դեպքում կարևորվում է բառարմատների կամ ածանցների տվյալ համակարգում գործածական լինելը: Իսկ տեղանքի աշխարհագրական պատկերը հաճախ հուշում է, թե ինչպիսին է եղել անծանոթ տեղանվան սկզբնական նշանակությունը, և թե ինչ լեզվական բաղադրիչներից է այն բաղկացած: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, իհարկե, որ ստուգաբանական վերականգնումները ոչ միշտ են բառի հնագույն ձևի և իմաստի լիարժեք ճշգրտություն ապահովում:

Հայաստանի հնագույն տեղանունները մեզ հայտնի են դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից՝ շումերական, աքքադական (մ.թ.ա. 3-րդ հազ.), խեթական (մ.թ.ա. 2-րդ հազ), ասուրական (մ.թ.ա. 2-1-ին հազ. կեսերը), ուրարտական (մ.թ.ա. 1-ին հազ.), հին հունական (մ.թ.ա. 6-րդ դարից), բյուզանդական և այլ գրավոր աղբյուրներից: Մեծ թվով տեղանուններ են հանդիպում մ.թ. 5-րդ դարից սկիզբ առնող հայ մատենագրության, ինչպես նաև հայերեն ձեռագիր հիշատակարանների մեջ: Մեր նպատակն է ներկայացնել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերն ընկած ժամանակահատվածում մեզ հայտնի տեղանուններից հայերենով առավել հանդիչ բացատրություններ ունեցողները:

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի տեղանուններից մեզ հայտնի է միայն մի քանիսը:

# 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. 3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԵՎ ԱՔՔԱՂԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ

*Արատա* (<sup>KUR</sup>Aratta): Հարավային Միջագետքի Շումեր երկրի բնակիչները՝ շումերները, մեզ ավանդել են մ.թ.ա. 2112-2003 թթ. սեպագրերով գրված ինը վիպերգեր, որոնց մեջ հիշատակություններ կան մ.թ.ա. 2750-2500 թթ. Շումերում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

«Էնմերկարը և Արատայի տիրակալը» վիպերգության հաղորդման համաձայն՝ Ինանա աստվածուհին խորհուրդ է տալիս Շումերի Ուրուկ քաղաքի տիրակալ Էնմերկարին ոսկի, արծաթ, լազուրիտ և այլ թանկարժեք քարեր ձեռք բերելու և տաճարները հարդարելու համար պատվիրակություն ուղարկել Արատա երկիր: Թագավորը նրա պատվերը կատարում է: Նրանք անցնելով լեռները՝ մուտք են գործում Անշան երկիր: Վերջինս Իրանի հարավարևմտյան տարածաշրջանի հետագայի էլամ երկիրն է: Պատվիրակությունը այնտեղից գնում է Արատա (Крамер, էջ 32-33):

Նույն գրավոր աղբյուրի մեկ այլ բաժնում կա հաղորդում, որի համաձայն՝ բեռնավորված ջորիներով այն Անշանից անցնում է յոթ լեռներ ու հասնում Արատա երկիր (նույնը, էջ 38-39): Այս տեղեկությունները որոշակի կերպով մատնացույց չեն անում, թե Արատան որտեղ է գտնվել: Դրա տեղադրության մասին մասնագիտական գրականության մեջ հիմնականում գոյություն ունեն երեք տեսակետներ:

Վ. Սարիանիդին կարծում է, որ Արատան գտնվել է Աֆղանստանում, քանի որ վերջինս հայտնի է լազուրիտի հանքերով, որտեղից շումերները կարող էին տանել այդ թանկարժեք քարը (Сарианиди, էջ 88): Ս. Կրամերը գտնում է, որ Արատան պետք է տեղադրել Իրանի Ատրպատական նահանգում՝ Կասպից ծովի և Ուրմիա լճի միջև (Крамер, էջ 22): Ա. Մովսիսյանը կարծում է՝ Արատա երկիրն ընդգրկել է ողջ Հայկական լեռնաշխարհը (Մովսիսյան, էջ 18, 23, քարտեզ): Վերջինս իր տեսակետը հաստատելու համար դիմում է «Էնմերկարը և Էնսուկուշիրանան» վիպերգության այն հաղորդմանը, որի համաձայն Արատայի տիրակալի քուրմը խոստանում է նրան «Ուրուկի գետով», որը Եփրատն է, գնալ Շումեր (նույնը, էջ 10): Դա, իհարկե, կարևոր փաստարկ է: Սակայն Ա. Մովսիսյանը

Արատան նույնացնում է Ուրարտուի հետ, որի անվան մեջ առանձնացնում է -ur բաղադրիչ՝ իբր «տեղ, երկիր» իմաստով՝ առանց նշելու, թե այդ բառը որ լեզվին է պատկանում (նույնը, էջ 31): Այդ առիթով հիշատակված «Մայրիների լեռը» նա տեղադրում է Կորդուքի շրջանում, այնինչ դա Ամանոս լեռն է՝ Կիլիկիայի ծովածոցից անմիջապես հարավ-արևելք: Շումերի Լագաշ քաղաքի տիրակալը Ամանոսից՝ «Մայրիների լեռից» մայրի ծառեր է տարել իր տաճարները վերակառուցելու համար (Barton, էջ 183, 185):

Վերը նշված երեք ուսումնասիրողների մոտ չի բացատրված Անշանից Արատա տանող ճանապարհի յոթ լեռների հարցը, իսկ Ա. Մովսիսյանը չի անդրադառնում այն փաստին, որ Հայկական լեռնաշխարհը լազուրիտ չունի: Նախ կարևոր ենք համարում անդրադառնալ Արատայի՝ Ուրուկի գետի հետ կապ ունենալու հարցին: «Էնմերկարը և Էնսուկուշիրանան» վիպերգության՝ Արատային վերաբերող բաժինը Ս. Կրամերը վերապատմելով ներկայացրել է հետևյալ ձևով. «Այն օրերում (ժամանակ), երբ Էնամիբարագա-Ուտուն (միգուցե) հանդիսանում էր ամբողջ Շումերի թագավորը, Արատայի տիրակալը, ում վեզիրը կրում էր Անսիգարիա անունը, մի բանազնացի միջոցով մարտահրավեր ուղարկեց երեքի տիրակալ Էնմերկարին, ում վեզիրն էր համարվում Նամենադամուն»: Հաղորդագրության ուղերձի էությունն այն էր, որ Էնմերկարը պետք է ձանաչեր Էնսուկուշիրանային որպես իր վերադաս և որ Ինանա աստվածուհին (արծանիկը) պետք է բերվեր Արատա: Էնմերկարը մարտահրավերին ընդառաջ է գնում և երկար հասցեագրման մեջ, որտեղ իրեն նկարագրում է որպես աստվածների սիրելի, հայտարարում է, որ Ինանան կմնա Էրեքում և իր հերթին պահանջում է, որ Էնսուկուշիրանան դառնա իր ենթական: Այդ ժամանակ Էնսուկուշիրանան հավաքում է իր խորհրդի անդամներին և նրանցից խորհուրդ հարցնում: Թվում է, թե վերջիններս նրան խորհուրդ են տալիս ենթարկվել, բայց նա հպարտորեն մերժում է: Ապա Արատայի մաշ-մաշ քուրմը՝ միգուցե Ուրգիրանան անունով, գալիս է նրան օգնության և պարծենում, որ (ցավոք տեքստից չի երևում, թե ով է խոսողը) նա կկտրի «երեքի գետը», կհպատակեցնի «ծովից մինչև մայրիների լեռն ընկած վերին և ներքին (ցածի)» երկրները և ծանր բեռնված նավակներով կվերադառնա դեպի Արատա: Էնսուկուշիրանան գոհացած է և նրան է տալիս հինգ մինա ոսկի և հինգ մինա արծաթ, ինչպես և անհրաժեշտ միջոցներ» (Крaмep, էջ 232):

Ս. Կրամերի վերը նշված գրավոր աղբյուրի համապատասխան հատվածի ներկայացրած բովանդակությունը խիստ հավաստի

տպավորություն է թողնում: Սակայն Ուրուկ քաղաքի անունը այստեղ տրված է էրեք ձևով, որը հեղինակի հաջորդ աշխատության մեջ ճշգրտված է Ուրուկ ձևով, որի տիրակալը էնմերկարն է եղել (Kramer, էջ 236): Տեքստում հանդիպող *masmaš* շումերերեն բառը, որը վերաբերում է Արատայի քուրմին, հավանաբար ինչ-որ պաշտոնի անուն է:

Տվյալ հաղորդումից իմանում ենք, որ սկզբում Արատայի տիրակալ էնսուկուշիրանան բանագնացի միջոցով հպատակություն է պահանջում Ուրուկի առաջնորդ էնմերկարից: Սակայն վերջինս իր գերակայությունն է առաջարկում նրան: էնսուկուշիրանան՝ Արատայի տիրակալը, խորհրդի է հրավիրում իր մեծամեծներին, որոնք գտնում են, որ Արատայի առաջնորդը պետք է ընդունի նրա պահանջը: Արատայի տիրակալը մերժում է նրանց առաջարկը: Այդ ժամանակ նրա քրմերից մեկն իր օգնությունն է առաջարկում: Այդ քուրմը խոստանում է կտրել էրեքի՝ Ուրուկի գետը, հպատակեցնել «ծովից մինչև մայրիների լեռն ընկած վերին և ներքին» երկրները և վերադառնալ ծանր բեռնված նավակներով դեպի Արատա: Տիրակալն ընդունում է նրա առաջարկությունը: Ի դեպ, Ուրուկ քաղաքի ավերակները գտնվում են ստորին Եփրատի ափից քիչ դեպի արևելք: Այդ իսկ պատճառով «Ուրուկի գետը» ուսումնասիրողները նույնացնում են Եփրատի հետ:

Վերը նշված սեպագիր արձանագրության մեջ հիշատակված ծովը Պարսից ծոցն է, որը Շումերի հարավային սահմանն էր: Իսկ «Մայրիների լեռը», ինչպես հետազոտողները գտնում են, հին հունական գրավոր աղբյուրների Ամանոսի լեռներն են (այժմ՝ Աման), Կիլիկիայի ծովածոցին հարավ-արևելքից արընթեր է (Monte, էջ 146): Տեքստում այն ներկայացված է որպես Պարսից ծոցին հակադիր ծայր:

Վերը բերված սեպագիր աղբյուրի տվյալների համաձայն՝ Արատայի քուրմը իր տիրակալին խոստանում է Ուրուկի գետով՝ Եփրատով, հասնել Շումեր երկիր և այդ նույն ջրային ճանապարհով վերադառնալ բեռնված նավակներով հանդերձ: Այս տեղեկությունը մեկընդմիջտ հաստատում է, որ Արատան գտնվել է այդ գետի վերին ավազանում և ոչ Ատրպատականում կամ Աֆղանստանում: Այս տվյալը ցույց է տալիս, որ Արատան Շումերի հետ կապող ճանապարհներից մեկն էլ Եփրատ գետն է եղել (հմմտ.՝ Մովսիսյան, էջ 18):

«էնմերկարը և Արատայի տիրակալը» վիպերգության մեջ գրված է. «Թող Արատա երկրի բնակիչները բերեն իրենց բարձրունքներից լեռնային քարեր»: Մեկ այլ հատվածում կարդում ենք. «Բնակիչները

լեռնային երկրի մաքուր, աստվածային օրենքներով թող կառուցեն ինձ համար» (Կրամեր, էջ 36, 39):

Արատայի բարձր լեռնային երկիր լինելու մասին, ինչպես ուսումնասիրողները գիտեն, մի շարք այլ հիշատակություններ էլ կան: Դրանք բոլորը վկայում են, որ այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում, որտեղից սկիզբ է առնում Եփրատը գետը:

Այդ վիպերգի մեջ հիշատակված է երկրի համանուն քաղաքը (Կրամեր, էջ 38): Այն մենք հակված ենք նույնացնելու հին Հայաստանի Տուրուբերան նահանգի Հարք գավառի Արածանի (-անի ածանցով) բնակավայրի հետ՝ հիշատակված 11-րդ դարի հայ պատմիչ Արիստակես Լաստիվերցու աշխատության մեջ: Դրա անունով է կոչվել Արածանի գետը: Կարծում ենք՝ Արատան ներկայացրել է նշված գետի ավազանը և ոչ թե ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Արատայի տեղադրման հարցում կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ այդ երկրից է լազուրիտ տարվել Շումեր: Սակայն Հայկական լեռնաշխարհն այդ թանկարժեք քարի հանքեր չի ունեցել և չունի: Դրա փոխարեն այն հարուստ է եղել հայքարով՝ ազուրիտով, որը կապույտ գույնի հանքաքար է: Երկար ժամանակ տարածաշրջանում կարծում էին, որ դա լաջվարդն է՝ լազուրիտը: Սակայն 20-րդ դարի քիմիական անալիզների օգնությամբ պարզվեց, որ դա Հայաստանում տարածված պղնձի կապույտ հանքաքարի տեսակն է, որն իր գույնով և արտաքին այլ հատկանիշներով մշակված վիճակում բոլորովին չի տարբերվում լազուրիտից: Հայաստանի հայքարի մասին հիշատակում է հռոմեացի պատմիչ Պլինիոս Ավագը (cos areniae, մ.թ. 1-ին դար), տաջիկ փիլիսոփա-բժշկապետ Ավիցեննան (10-րդ դար), Ալ-Բիրունին (10-րդ դար) և այլք: Այն օգտագործվել է ոչ միայն որպես վարդ, այլ նաև իբրև կապույտ ներկանյութ և դեղամիջոց (Մելքումյան, էջ 75-78):

Այսպիսով, կարելի է կարծել, որ Արատայից հայքարն է Շումեր տարվել այդ երկրի տաճարները հարդարելու համար: Ինչպես վերը նշվեց, էմներկարը Շումերից բանագնացներ է ուղարկել Արատա, որոնք մտել են Անշան (հարավ-արևմտյան Իրան), որտեղից նրանք անցել են յոթ լեռներ և հասել այդ երկիրը: Անշանը իր Սուգա քաղաքով գտնվում էր այժմյան Քարխես գետի միջին ավազանում: Այդտեղից համարյա ուղիղ գծով մինչև Արածանիի ավազան Ջազրոս լեռնաշղթային զուգահեռ մոտ յոթ լեռներ կան, որոնց մոտով, կարծում ենք, անցել է շումերական պատվիրակությունը:

Իսկ ինչո՞ւ նրանք այդ ճանապարհով են գնացել Արատա և ոչ՝ Տիգրիսի կամ Եփրատի ավազաններով դեպի հյուսիս: Կարծում

ենք՝ դրա պատճառը հետևյալն է: Շումերները հաշվի են առել այն հանգամանքը, որ մինչև մայիս ամիսը Հայկական լեռնաշխարհը ծյունածածկ է: Ուրեմն նրանք բանագնացներ պետք է ուղարկեին դրանից հետո՝ հունիս և հուլիս ամիսներին: Սակայն այդ ժամանակ Միջագետքում խիստ շոգ է լինում, որը և կոժվարացներ նրանց ճանապարհը: Ուստի նրանք գերադասել են Իրանի հարավարևմտյան տարածքով գնալ Արատա:

Այսպիսով, շումերական սեպագիր աղբյուրներում հիշատակված մ.թ.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսի Արատա երկիրը գտնվել է Հայկական լեռնաշխարհում՝ Արածանի գետի միջին ավազանում, որի սահմանների մասին որոշակի փաստեր չկան:

Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի կարծիքով՝ *Արատա* տեղանունը հ.-ե. նախալեզվի \*ar-տ արմատն է, որը նշանակում է «ջրեր, գետ» (Гамкредидзе, հ. II, էջ 1325): *Արատա* տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայերենի հ.-ե. *արած*- արմատը, որն առկա է «ուտել, ճարակիլ (խոտ)» բայի մեջ: Ինչպես Գ. Ջահուկյանը գտնում է, դա *արատ* «արոտ» արմատն է (Ջահուկյան, 1987, էջ 253): Այդ բառը նշված իմաստով առկա է Այրարատ նահանգի Արած, Վայոց ձորի Արած, Մշո դաշտի Արածանի (*-անի* մասնիկով), Արցախի Արածանս (*-ան* ածանցով և հոգնակի թվի հայցական հոլովի *-ս* ցուցիչով), Սյունիքի Ծղուկ գավառի Արածի (*-ի* վերջավորությամբ) և Կոտայքի Արածոնք (*-ոն* և *-ք* ածանցներով) հին գյուղերի անուններում: Մեր այս ենթադրությունը, կարծում ենք, հաստատվում է նաև հետևյալ լեզվական փաստերով: Հին հայերենում գոյություն է ունեցել *տ* և *ծ* բաղաձայն հնչյունների միմյանց փոխարինելու երևույթ, օրինակ՝ տատանել և ծածանել, մուտ-ք և մուծել, տիտ և ծիծ, աղտ և աղծ, բուտ «ուտելիք» և բուծել (Ջահուկյան, 1987, էջ 255): Վերոգրյալը ցույց է տալիս, որ *Արատա* տեղանունը կարող էր դառնալ Արած-*անի*: Ավելին՝ *արատ*- արմատն առկա է Սուրմալուի գավառի Արատան (*-ան* ածանցով), Հայոց ձորի Արատենք (*-են* և *-ք* մասնիկներով), Վայոց ձորի Արատինք (*-ին* և *-ք* ածանցներով) հին հայկական տեղանուններում, որոնցում մենք տեսնում ենք նույն *արած*-արմատը:

Ի դեպ, Արատայի տիրակալ Էնսուկուշիրանայի, նրա վեզիր Անսիգարիայի և քուրմ Ուրգիրնանայի անուններն իրենց հնչյունական զուգակցումներով խորթ են հայերենին: Դրանք հիշեցնում են շումերերեն բառեր: Այս առիթով պետք է նկատի ունենալ, որ Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 3-րդին Բաբելոնում անվանում էին Պուլու, իսկ Սալմանասար 3-րդին՝ Ուլուլայ: Մովսես Խորենացին Ասորեստանի արքա Աշուրբանակալին հիշատակում է Թոնոս Կոն-

կողեռոս, իսկ Միդիայի առաջնորդ Կիաքսարին՝ Վարբակես անուններով: Դրանք հայ պատմիչը վերցրել է հին հունական գրավոր աղբյուրներից (Խաչատրյան, 1998, էջ 17): Նման օրինակներ շատ կան, երբ Ասորեստանի տիրակալներն ունեն օտար հորջորջումներ: Այդպես էլ վարվել են շումերները Արատայի տիրակալի և ազնվատոհմիկների անունների հետ՝ դրանք թարգմանելով իրենց լեզվով: Ուստի տվյալ անձնանուններով չի կարելի դատողություններ անել այդ երկրի բնակիչների լեզվի մասին:

*Արմանի* (KUR<sup>URU</sup>Armani): Այդ երկիրը հիշատակված է Աքքադի թագավոր Նարամսուենի (մ.թ.ա. 23-րդ դար) սեպագիր արձանագրություններից մեկի մեջ, որտեղ թվարկված են նրա դեմ ապստամբած և պարտություն կրած 17 երկրների և տիրակալների անունները. որոնցից մի քանիսը կավե տալստակի վնասված լինելու պատճառով չի պահպանվել: Այդ երկրներն են՝ Գուսուա, Պակի, Ուլիվի, [...], Խատի, Կանեշ, [...], Ամուրու, Պարասի, Արմանի, «Մայրիների լեռ», [...], Լարակ, Նիկի, Թուրկի և Կուրսաուրա (Ադոնց, 1972, էջ 26, ծան. 1):

Գոյություն ունի այդ վավերագրի խեթերեն թարգմանությունը, որը նույնպես վնասված տեղեր ունի: Այդ երկրների անունները տվյալ օրինակում ներկայացված են հետևյալ կերպ՝ Դուրա, Պակի, Ուլիվի, [...], Խատի, Կանեշ, [...], [...], Ամուրու, Պարաշի, Արմանի, «Մայրիների լեռ», [...], Լարակ, Նիկի, Դուրկի և Կուրշաուրա (Keilschrifttexte, III, 13, I, տող 9-15):

Թվարկված երկրներից Խատին, ինչպես հայտնի է, ընդգրկել է Փոքր Ասիայի Հալիս գետի ավազանը: Կանեշը խեթական սեպագիր աղբյուրներում բազմիցս հիշատակված Կանեշ քաղաքն է իր շրջանով՝ Կեսարիայի մոտ (Monte, էջ 169), Կուրսաուրան անտիկ ժամանակների Գարսաուրան է՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջանում (նույնը, էջ 143):

Ամուրուն հին ամորիների երկիրն է՝ այժմյան Սիրիայի և Լիբանանի սահմանի շրջանում՝ Միջերկրական ծովի ափին:

Ուլիվին է. Ֆոռերը նույնացրել է Սասունի Խուլբ գավառի հետ՝ Տիգրիսի ակունքից քիչ դեպի արևելք (Forrer, էջ 85):

Պարաշին, կարծում ենք, ներկայացրել է խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Պարաշա քաղաքի շրջանը: Այն գտնվել է Ադանայից հյուսիս՝ Արծալա երկրում (Monte, էջ 43-44):

Դուրկի կամ Թուրկի երկիրը, թերևս, Ադանայի շրջանն է, որի մասին հուշում է տեղի միջնադարյան Դուրակ (Թուրակ) բնակավայրի անունը (Ալիշան, էջ 246):

Աքքադերեն և խեթերեն այդ արձանագրությունների ցուցակներում չպահպանված երկրներից մեկը, կարծում ենք, Իբլան է, որի մասին գրված է նույն Նարամսուենի մարմարե սալիկի վրայի սեպագիր արձանագրության մեջ այսպես. «Աստվածային Նարամսուենը՝ հզոր արքան (աշխարհի) չորս կողմերի, նվաճողը Արմանի և Իբլա երկրների» (Barton, էջ 138):

Իբլայի ընդգրկած տարածքը որոշելու համար դիմենք Շումերի Լագաշ քաղաքի թագավոր Գուդեայի հետևյալ սեպագիր արձանագրությանը, որտեղ գրված է. «Երբ տունը Նինդիրսու աստծո համար նա կառուցեց, Նինդիրսուն, որին արքան սիրում է, վերևի ծովից մինչև ներքևի ծովը բացեց իր ճանապարհը ինչպես դուռ: Ամանուից՝ մայրիների լեռից մայր ծառեր...նա վերածեց գերանների և բերեց ներքև այդ լեռից.....Ուրսու քաղաքից, [որը գտնվել է] Իբլա լեռան վրա» (Barton, էջ 183):

Ակնհայտ է, որ տվյալ տեքստը դպիրը գրել է իր անունից, ուստի Ուրսու քաղաքը նրա պատկերացմամբ, իբր գտնվել է Իբլա լեռան վրա: Սակայն պարզ է դառնում, որ Ամանուն նույն «Մայրիների լեռն» է, որը Իբլայի և դրա քաղաք Ուրսուի հետ սահմանակից է եղել:

Սարգոն Աքքադացու (մ.թ.ա. 24-րդ դար) մի արձանագրության մեջ այդ մասին կարդում ենք. «Սարգոն արքան Տուտուլիում Դագան աստծուն պաշտամունք մատուցեց: Վերին երկիրը...նա (աստվածը) տվեց Մարիին, իսկ Յարմուտին և Իբլա երկրները մինչև անտառը մայրիների և լեռները արծաթի՝ Սարգոնին» (Barton, էջ 109):

Այս տեղեկությունը հաստատում է, որ Իբլա երկիրը սահմանակից է մայրիների անտառին՝ արծաթի լեռներին, որը Գուդեայի վերը բերված սեպագիր աղբյուրում նշված է Ամանու անունով: Դա այժմյան Աման լեռներն են՝ Կիլիկիայի ծովածոցից անմիջապես հարավ-արևելք (Monte, էջ 12): Պետք է նկատի ունենալ վերը բերված այն տեղեկությունը, որի համաձայն Ուրշու քաղաքը Իբլայում է գտնվել: Այն խեթական սեպագիր տեքստերում բազմիցս հիշատակված Ուրշան է՝ ժամանակակից Ուրֆան, Եփրատ գետի և Աման լեռների միջև (Monte, էջ 475): Պարզ է դառնում, որ Իբլան իր Ուրշու քաղաքով գտնվել է Արևմտյան Սիրիայի հյուսիսային հատվածում՝ Կիլիկյան Տավրոս լեռներից անմիջապես հարավ:

Բ. Հրոզնին վերը բերված ցուցակի Արմանի երկիրը տեղադրում է Հալեայի շրջանում (Hrozny, 1947, էջ 110): Հ. Գյուտերբոկն Արմանին նույնացնում է Հալեայի հետ՝ նկատի ունենալով վերջինիս հետագայի խալման կամ խալվան անունը (Güterbock, էջ 73-75): Արմանի անունը դրանցից հնչյունական կազմով խիստ է տարբերվում:

Նարամսուենի վերը նշված սեպագիր արձանագրության խեթերեն թարգմանության մեկ այլ օրինակում գրված է. «Որդիներին, հարստությունը նրա՝ Հալապ քաղաքի թագավորի, ես վերցրեցի: Նրանց հետո հալպա քաղաքի երկրում թողեցի» (Keilschrifttexte, III, 60, I, տող 5-7): Այստեղից պարզ է դառնում, որ Նարամսուենը Հալապը և Արմանին միմյանցից որոշակիորեն տարբերել է: Ուրեմն դրանք նույնացնել չի կարելի: Հալապ անունը կավե տախտակի վրա չի պահպանվել վնասված լինելու պատճառով: Նարամսուենը չէր կարող նվաճել Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանի Ուլիվի երկիրը՝ Սասունի հուլբ գավառը՝ առանց իրեն հպատակեցնելու դրանից անմիջապես հարավ գտնվող տարածաշրջանը, որն ուրարտական աղբյուրներում հիշատակված Արմե երկիրն է:

Եվ իրոք, նա վերոհիշյալ 17 երկրների դեմ ձեռնարկած հաղթական արշավանքի առիթով մի քարակոթող է թողել նշված տարածքի կենտրոնական մասում, որը գտնվում է Ստամբուլի թանգարանում: Դրա վրա գրված է. «Նարամսուենը, հզոր [թագավորը] աշխարհի չորս կողմերի: Ով որ դարձնի ճակատը [հուշայան, այլտեղ] տեղադրի և հիմքերը քանդի. ով այս արձանագրությունը դիմագերծի, թող Իշտարը [...նրան] պատառոտի և նրա սերմը անհետացնի» (Barton, էջ 141):

Արմե երկրի մասին Ուրարտուի թագավոր Սարգուրի 2-րդը իր տարեգրության մեջ գրում է. «Ես նվաճեցի Արմե երկիրը, նվաճեցի Նիխիրիանի քաղաքը՝ այս երկրի թագավորանիստ քաղաքը» (Арутюнян, 2001, N 242, DI+DI, տող 1-13):

Բ. Պիոտրովսկին գտնում է, որ Նիխիրիանին հետագայի Նփրկերտն է (Пиотровский, 1956, էջ 76): Այս տեսակետն ուսումնասիրողներն ընդունում են:

Արմե երկիրը ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է նաև Ուրմե ձևով: Վերջինիս ընդգրկած տարածքի առունով հետաքրքիր է Մենուայի Մուշի Թրմերդ գյուղի մոտից հայտնաբերված արձանագրությունը: Այդտեղ գրված է. «[Քաղաքը] Ալաու [...], դեպի Ուրմե [երկիրն] ավերեցի: Ուրշա [...] նի քաղաքը, նվաճեցի երկիրը: Ուրմեուխի երկիրը խլեցի, միացրեցի [...]»: Հասա մինչև [...]: Ես ուղևորվեցի [...] երկիր, Տարպարակա [քաղաքը], էրիմա [քաղաքը], նվաճեցի, 70 [...]: .....Ավերեցի, հրի մատնեցի [ամր]ոցները: Եկա...[քաղաքը] Քուլմերի...ամրոցը ես կառուցեցի» (Арутюнян, 2001, N 57, A, B):

Որքանով կարելի է կռահել այս խիստ վնասված տեքստից, Մենուան գրավում է Ալաու...քաղաքը, ետ է շարտում թշնամու զորքին,

նվաճում է Ուրմե երկիրը և հասնում ինչ-որ երկրի Ուրշանի քաղաքը:

Ակնհայտ է, որ տվյալ Ուրշանին խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ուրշա քաղաքն է՝ ժամանակակից Ուրֆան (Monte, էջ 475-476): Պարզվում է, որ Ուրմեն սահմանակցել է այդ քաղաքի երկրի հետ: Դա մ.թ.ա. 23-րդ դարում հիշատակված Իբլա երկիրն է՝ Ուրշանի քաղաքով:

Վերը բերված Մենուայի վավերագրի համաձայն՝ նա ուղևորվում է գործով նաև մեկ այլ երկիր, որի անունը չի պահպանվել: Սակայն այդտեղ նա նվաճում է Տարպարակա և երիմա քաղաքները՝ 70 այլ բնակավայրերի հետ: Դրանցից առաջինի մասին հնարավոր չէ որևէ պարզաբանում տալ: Իսկ երիման, կարծում ենք, հիշեցնում է բյուզանդական պատմիչ Կոստանդին Ծիրանացու (10-րդ դար) Բարսեղ 1-ին կայսեր (867-886 թթ.) արևելյան արշավանքի առիթով հիշատակած Էրիմոսիկե ամրոցը, որը գտնվել է Ամիդից հարավ՝ Միջագետքում (<ՏԲ): Ուրեմն այդ մեզ անհայտ երկիրը գտնվել է Տիգրիսի և Մարդինի լեռների միջև, որտեղ Ուրարտուի արքան նվաճել է նաև 70 այլ բնակավայրեր: Ակնհայտ է, որ Էրիմոսիկե տեղանվան մեջ բացի *էրիմ* բաղադրիչը առկա է հին հույների ավելացրած *-ոս* վերջավորությունը, որին հետագայում հայերն ավելացրել են իրենց լեզվի *-իկ* մասնիկը: Պարզ է դառնում, որ Ուրմեն հարավում ձգված է եղել ամենաքիչը մինչև Տիգրիսի հունը:

Հաղորդման վերջին մասում գրված է, որ Մենուան Քուլմերի քաղաքում ամրոց է կառուցել: Ինչպես ընդունում են ուսումնասիրողները, տվյալ Ուրմե երկրի Քուլմերի քաղաքը նույն ասուրական գրավոր աղբյուրների Կուլիմերին է՝ հայկական Քղիմար բերդաքաղաքը՝ Քաղիրթ գետի միջին ավազանից քիչ արևելք (Երեմյան, քարտեզ):

Այս բոլորից պարզվում է, որ Ուրմե երկիրն ընդգրկել է Վերին Տիգրիսի ողջ արևմտյան ավազանը: Ավելին՝ Արմե երկրի Նիխի-րիանի կենտրոնը՝ Նփրկերտը, ընկած է եղել Քղիմարից քիչ դեպի արևմուտք՝ այդ տարածաշրջանի կենտրոնում: Դա հաստատում է, որ Ուրմե և Արմե տեղանունները նույնական են: Այստեղ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ասուրական և ուրարտական սեպագիր աղբյուրներում վկայված որոշ տեղանուններում *u* (ու) ձայնավորը մեկ այլ դեպքում *a* (ա) հնչյունով է փոխարինված, որն ուրարտերենին և խուրիերենին առնչվող հնչյունաբանական երևույթ է: Օրինակ՝ Կադմուխի տեղանունը հանդիպում է նաև Կուդմուխի տարբերակով: Շուպրիայի Ուպումու ամրոցի անունը հայերեն գրավոր աղբյուրում վկայված է Ափում ձևով: Տվյալ դեպքում մենք գործ

ունենք *u* (ու) և *o* (օ) ձայնավորների հերթագայության հետ, քանի որ սեպագրերում *o* (օ) գրել են *u* (ու) նշանի օգնությամբ: Կարելի է հաստատ ասել, որ Ուրմեն նույն Արմեն է թե լեզվական, թե տարածքային առումով:

Հարկ է նշել, որ այն սեպագիր աղբյուրում, որտեղ հիշատակված է Արմանի կամ Արմե (Ուրմե) տեղանունը, բացակայում է Ալզի կամ Ալշե անունը և հակառակը: Դա նշանակում է, թե Արմեն և Ալզին վերաբերում են միևնույն տարածաշրջանին և փոխարինել են միմյանց: Սակայն վերն ասածը վերաբերում է այն ժամանակներին, երբ նշված տարածաշրջանը միավորված է եղել մեկ պետական կազմավորման մեջ: Մ.թ.ա. 14-13-րդ դդ. սեպագիր աղբյուրներում հիշատակված Ալզին կամ Ալշեն միասնական մի երկիր է եղել, ինչպես Նարամսուենի հիշատակած Արմանին կամ Մենուայի ժամանակի Արմեն՝ Ուրմեն:

Ինչպես վերը տեսանք, Ուրարտուի արքա Մենուայի սեպագիր աղբյուրի համաձայն՝ Արմե կամ Ուրմե երկրի կազմի մեջ են դիտարկվում Բիթ-Չամանին՝ Ամիդի շրջանը, Շաշնուինին՝ Սասունը, և Ալզինին՝ Արծնը իր Քղիմար քաղաքով:

Սակայն Ասորեստանի արքաներ Թուկուլթի-Նինուրթա 2-րդի (890-884 թթ. մ.թ.ա.) և Աշուրնաժիրապալ 2-րդի (883-859 թթ. մ.թ.ա.) սեպագիր արձանագրություններում Բիթ-Չամանին՝ Ամիդի շրջանը, առանձին երկիր է դիտարկված: Նույնը վերաբերում է Սալմանասար 3-րդի (859-824 թթ. մ.թ.ա.) նվաճումների ժամանակներին:

Ուրարտուի տիրակալ Մենուայի կողմից իշխանության սկզբի տարիներին ձեռնարկած մի արշավանքի ժամանակ նա Վանա լճի հարավ-արևմտյան ափին գրավում է Ալզինին պատկանող Կուտումե քաղաքը՝ Կոտոմը, այնուհետև նվաճում Ալզինին՝ Արծնը, և ապա Շաշնուինին՝ Սասունը (Арутюнян, 2001, N 148, 22-26):

Շաշնուինին՝ Սասունը և Ալզինին՝ Արծնը միասին Ասարխադոնի (680-669 թթ. մ.թ.ա.) վավերագրերում հիշատակված են որպես մեկ երկիր՝ Շուպրիա անունով: Դրա Ուպումու քաղաքը Սասունի Ափումն է, իսկ Կուլիմերին՝ Արծնի Քղիմարը (Арутюнян, 1985, համապատասխան անունների տակ): Այդ ժամանակ՝ այն է մ.թ.ա. 680 թվականին, Արմե երկրի կազմի մեջ պետք է ընդգրկված լիներ նաև Ամիդի շրջանը՝ Բիթ-Չամանին: Վաղ միջնադարի հայ պատմիչներին հասած տեղեկությունների համաձայն՝ արդեն Սկայորդին Սասունում ոտքի հանեց ողջ լեռնաշխարհի հայությանը Մսրա Մելիքի (Ուրարտուի) տիրապետության դեմ և ազատագրեց Հայաստանի մեծ մասը նրա գերիշխանությունից:


Արմանին արդեն Պարսից Դարեհի ժամանակ սկսեց հիշատակվել Արմինա ձևով՝ որպես Հայաստանի և հայերի անուն: Արաբական աշխարհը շարունակեց Արմանի անվանել Հայաստանը և հայերին առ այսօր: Պատճառն այն էր, որ Արմեն եղել է հայերի՝ ուրարտական լծի դեմ պայքարի կենտրոնը:

Ասորեստանի թագավոր Ասարխադոնը Արմե երկրի (ասուր.՝ Շուպրիա) տիրակալին հիշատակում է Նիք-Թեշուբ անվամբ, ով ապաստան էր տվել մարդասպաններին և պարտավոր էր դրանց վերադարձնել (Дьяконов, 1951, N 67): Դա վերաբերում է մ.թ.ա. 680 թ., երբ Ասորեստանում Սինախերիբ թագավորին սպանում են իր որդիները և փախչում ու ապաստան են գտնում հայոց առաջնորդ Սկայորդու մոտ (Մովսես Խորենացի, I, ԻԳ):

Փաստերի այս համեմատությունն ակնառու է դարձնում այն, որ նույն իրադարձության առիթով հայոց առաջնորդ Սկայորդուն Սինախերիբի որդի Ասարխադոնն անվանում է Նիք-Թեշուբ: Այդ նույն վավերագրում վերջինս Սկայորդու որդիներին հիշատակում է Շերի-Թեշուբ և Լիգի-Թեշուբ անուններով: Ինչպես երևում է, խուրիների Թեշուբ աստծու անունը առկա է երեք անձնանուններում: Դրանք խուրիերեն հորջորջումներ են և կապ չունեն Արմե երկրի հետ: Սակայն դրանք հիշատակված են Ասորեստանի թագավորի կողմից: Այդ նույն ձևով Մովսես Խորենացին Ասորեստանի տիրակալ Աշուրբանակալին հիշատակում է Թոնոս Կոնկողեռոս, իսկ Միդիայի առաջնորդ Կիակսարին՝ Վարբակես անուններով, որոնք հին հունարեն հորջորջումներ են: Հայ պատմիչը դրանք վերցրել է հին հույն հեղինակներից:

Նույնը կարելի է ասել Նարամսուենի սեպագիր արձանագրության մեջ հիշատակված Արմանի երկրի Մադակինայի և Ուլիվիի Լապանալիայի անունների մասին, որոնք օտար հորջորջումներ են: Տեղում նրանք այլ կերպ են կոչվել: Ուստի նման անձնանունները բոլորովին հիմք չեն տալիս Արմանի կամ Արմե երկրի ազգաբնակչության լեզվի մասին եզրակացություններ անելու համար:

Արմանի տեղանվան մեջ, կարծում ենք, առկա է հին հայերենի *-անի* ածականակերտ ածանցը: Արմե անվան մեջ *-են* թեմատիկ (ավելորդ) ծայնավոր է: *Արմ*- արմատը Գ. Ջահուկյանը, անդրադարձնալով գիտության մեջ եղած բոլոր տեսակետներին, բխեցնում է հայերենի *հ.-ե. արմ* «զարմիկ» (կարծում ենք՝ «տոհմիկ» իմաստով) արմատից (Ջահուկյան, 1987, էջ 285-288): Այն մենք տեսնում ենք հայոց հին մայրաքաղաք Արմավիրի անվան մեջ՝ զուգակցված հին հայերենի *արի* (դրափոխված *-արիր*)՝ օրի. «իշխան» բառի հետ: Այդ



արմատն առկա է նաև Բասեն գավառի Արմալի (-ալի ածանցով), Կոգովիտի Արմանի (-անի մասնիկով), Շիրակի Արմանի, Ստեփանավանի Արմանիս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով) հին գյուղերի անուններում: Կարծում ենք՝ դա հուշում է տվյալ բնակավայրերի հարուստ բնություն ունենալու մասին: Դրանցում *արմ-* արմատը օգտագործված է իր երկրորդական՝ «ընտիր» իմաստով: Հայոց լեզվի արմատներն են պարունակում Արմե երկրի Բիթ-Չամանի, Նիխի-րիանի, Շաշուիների, Կուլիների և այլ տեղանուններ (տես ս):

*Ուլիվի* (KUR<sup>URU</sup> Սլլիւի): Այդ երկիրը հիշատակված է Աքքադի թագավոր Նարամսուենի մի արձանագրության մեջ ի թիվս 16 այլ վարչաքաղաքական միավորների (տես Արմանի):

Ե. Ֆորերն այն տեղադրում է Սասունի հյուսիսարևմտյան շրջանում և նույնացնում տեղի հայկական Խուլբ գավառակի և իր համանուն կենտրոնի հետ (Forrer, 1920, էջ 85): Ուլիվին վկայված է նաև ասորեստանյան (Սլլսբա) և ուրարտական (Սլլիբա, Սլլսբա) սեպագիր աղբյուրներում (Арутюнян, 1985, էջ 205):

Խուլբ տեղանունը վերը նշված գրավոր աղբյուրներում հանդես է գալիս առանց հին հայերենի /ւ/ բաղաձայնի գուցե այն պատճառով, որ բառասկզբի *ս* (ու) ձայնավորն այդ լեզուներում ունեցել է կոշտ սկիզբ (:): Իսկ Ուլիվի կամ Ուլիբա տարբերակների բառամիջի ավելորդ /ի/ ձայնավորը արդյունք է սեպագիր դպրության, որտեղ հաճախ միմյանց հաջորդող երկու բաղաձայն հնչյուններ միայն հնարավոր է գրել որևէ ավելորդ ձայնավորով: Այդ երևույթն առկա է նաև խեթական սեպագիր աղբյուրներում: Աքքադացիները խնդրո առարկա տեղանվան վերջի *ծ* (բ) հնչյունը դարձրել են *ս* (վ):

Այդ տեղանունը միջնադարի գրավոր աղբյուրներում հանդիպում է հիմնականում Խուլբ, Խուլբա և Խուլի տարբերակներով, որոնցից ճշգրիտը, ինչպես կտեսնենք ստորև, առաջինն է:

Խուլբ տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *խուլ* արմատից, որը ունի նաև «ծածուկ տեղ» իմաստը և *բ* հին ածանցից (հմնտ. թամբ և թամք, շեղ և շեղբ, սկսել և սկիզբ):

*խուլ* արմատը մենք տեսնում ենք Սղերդի գավառի Խուլիկ (-իկ ածանցով), Շուշիի շրջանի Խուլի (-ի մասնիկ), Դերսիմի Խուլ և Մեղրու Խուլ հին գյուղերի անուններում:

## 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. 14-13-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Մ.թ.ա. 14-13-րդ դարերի խեթական սեպագիր աղբյուրներում հանդիպում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածին վերաբերող բազմաթիվ նահանգների, գավառների, բնակավայրերի, երբեմն էլ գետերի ու լեռների անուններ: Այդ տարածաշրջանը, բացառությամբ վերին Տիգրիսի ավազանի, կոչվում էր Հայասա երկիր անունով: Այն գտնվել է Վանա լճի, Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի և Սև ծովի միջև (Խաչատրյան, 1998, էջ 34-37):

Այստեղ մենք ներկայացնում ենք Հայասայի տեղանունները որոշ տեղագրական ճշգրտումներով և դրանց իմաստների բացահայտմամբ:

Հաշվի են առնվել խեթերի լեզվի և նրանց օգտագործած սեպագրերի առանձնահատկությունները:

*Ազի* (KUR<sup>URU</sup>Azzi): Հայասա երկրի կենտրոնական Ազի նահանգն ընդգրկել է գրեթե ողջ Ճորոխի ավազանը: Հարավում այն սահմանակից է եղել «Բարծր երկրի» հետ, հյուսիսում տարածված է եղել մինչև Սև ծով՝ Տրապիզոնի և Բաթումի միջև, արևմուտքում Գայլ գետով հարևան է եղել Խատի և դրանից հյուսիս՝ Կասկա երկրների հետ: Դրա արևելյան սահմանների մասին ոչ մի տվյալ չկա (Хахатриян, էջ 128-137):

Ազի տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *ազ-* (հմմ. «ազագիլ» «չորանալ») արմատից և *-ի* ածանցից: Այս բառը առկա է Բարծր Հայքի Ազա (սեռական հոլովի *-ա* ցուցիչով), Գողթնի Ազանց (*-ինք*, հոգնակի սեռ. հոլովի *-անց* ցուցիչով), Ամիդի շրջանի Ազիք (*-իք* ածանցով), Սղերդի Ազիկ և միջնադարի հայկական այլ տեղանուններում: Ազի տեղանունը պահպանվել է նույն տարածաշրջանի Թորթումի ավազանի Ազորդ (*-որդ* մասնիկով) գավառի և դրա համանուն կենտրոնի անվան մեջ, որը և գտնվել է չոր տարածքում:

*Ալատարմա/ե* (<sup>URU</sup>Alatarmale): Խեթական թագավոր Արնուվան-դաս 3-րդի (մ.թ.ա. 13-րդ դարի երկրորդ կես) և Դուկամայի (Ազիի քաղաք Ճորոխի ավազանում) առաջնորդ Աիսիյայի միջև խեթերեն

լեզվով կնքված դաշնագրում Ալատարման հիշատակված է որպես վերին Եփրատի, միջին և ստորին Արածանիի ավազանների բնակավայրերից մեկը (Խաչատրյան, 1998, էջ 88):

Խատի երկրի արքա Սուպիլուլիումաս 1-ինի (մ.թ.ա. 14-րդ դարի առաջին կես) սեպագիր մի տեքստում գրված է, որ նա չէր դադարեցրել իր ղեկավարությունը Նիխիրիյա քաղաքում (հետագայում՝ Նփրկերտ՝ վերին Տիգրիսի արևմտյան ավազանում): Սակայն թշնամին (Ասորեստանը) Խատիից խլում է Խուրի երկրները: Այդ ժամանակ խեթական թագավորը միայն Ալատարմա քաղաքի համար թշնամի չէր համարվում:

Այս փաստերը նկատի ունենալով՝ ուսումնասիրողները Ալատարմա բնակավայրը որոնում են Իսուվայի (հայկ. Ծոփք) հարավում, որտեղ այն սահմանակից է եղել խուրիական գավառների հետ (Քոսյան, էջ 33):

Կարծում ենք, Ալատարմա տեղանունն իր մեջ պարունակում է հին հայերենի *ալ-ք* «խորք, խորունկ տեղ, անդունդ» և *տարմ* «խումբ» (հմմ. տարմանալ «խմբվել») արմատները, որոնք միացած են -ա-հոդակապով:

*Ալ-* բառը հանդիպում է Արդահանի շրջանի Ալ, Մանազկերտի գավառի Ալա (-ա ածանցով), Կորձեք նահանգի Տնորիք գավառի Ալքի (-ք հոգնակիակերտով և -ի մասնիկով) և Սալմաստի Ալքյան (-յան վերջավորությամբ) պատմական տեղանուններում:

Ալատարմա տեղանունը հուշում է, որ այդ բնակավայրը գտնվել է խորխորատ, փոս տեղում: Դա, հավանաբար, արևմտյան Տիգրիսի ակունքներից մեկի կիրճն է եղել:

*Ալզի* (<sup>KUR</sup>Alzi, <sup>KUR</sup>Alše): Գիտական գրականության մեջ Է.Ֆոռեթի առաջարկությամբ ընդունված է, որ խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ալզի կամ Ալշե երկիրը ասուրական վավերագրերի Ալզին է՝ հին հայկական Աղձնիքը, Վերին Տիգրիսի արևմտյան ավազանում (Арутюнян, 2001, էջ 18):

Խեթական վավերագրերի տվյալների համաձայն՝ Ալզի (հանդիպում է նաև Ալզիյա ձևով) երկիրը գտնվել է Իսուվայի (հին հայկ. Ծոփքը Արածանիի ստորին ավազանում) և Միտանիի (հյուսիսային Միջագետքը ժամանակակից Մարդին լեռներից սկսած դեպի հարավ) միջև: Այլ փաստերի վկայությամբ՝ այն ընկած է եղել Իսուվայի և այժմյան Բոհոտան գետի հարավային ավազանի Պապիսի (Բաբիսի, Պապանիսի, ուշ ժամանակների Թիլ-Ֆաֆա բնակավայրի շրջան)

երկրների միջև (արևմտյան Տիգրիսի ավազանում): Այդ նույն աղբյուրների վկայությամբ՝ Անտարատալը (Անտարատալի) Ալշե կամ Ալզիյա երկրի թագավորն է եղել:

Վերը բերված բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են մ.թ.ա. 13-րդ դարին, հաստատում են, որ Ալզին ընդգրկել է ոչ միայն հետագայի Աղծնիքի, այլ նաև դրանից հարավ մինչև ժամանակակից Մարդին լեռներն ընկած տարածքները:

Սակայն մ.թ.ա. 13-րդ դարի և հետագայի ասուրական սեպագիր արձանագրություններում Ալզին այդպիսի հզոր վարչաքաղաքական միավոր չի ներկայացվում:

Ասորեստանի թագավոր Թուբուլթի-Նինուրթա I-ի (մ.թ.ա. 1244-1208 թթ.) քարե սալիկների սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք. «Այն ժամանակ Բաբխի, Կադմուխի, Պուշի, Մումի, Ալզի, Մադանի, Նիխանի, Ալայա, Թեբուրզի, Պուրուկուզի երկրները՝ բոլոր լայնարձակ շուբարիական երկրները, ես կրակի մեջ այրեցի: Թագավորներին՝ նրանց տիրակալներին, ես խոնարհեցրի իմ ոտքերի առաջ և պարտավորեցրի» (Дьяконов, 1951, N 6):

Ինչպես ընդունված է, Բաբխի երկիրը (Պապխի) գտնվել է Բոհտանի՝ Տիգրիսի հետ միախառնվելու անկյունում, որին հարավից սահմանակից է եղել այժմյան Տուր-Աբդին լեռների հյուսիս-արևելյան լանջերը զբաղեցնող Կադմուխիին (Арутюнян, 2001, էջ 51):

Նիխանին ուսումնասիրողները այն նույնացնում են Տիգրիսի հարավային ափի ժամանակակից Նիխան լեռան և դրան հարակից տարածքների հետ (Арутюнян, 2001, էջ 155): Մյուս երկրների տեղերն առայժմ հայտնի չեն:

Ինչպես տեսնում ենք, տեղադրությամբ հայտնի վերը նշված գավառները գտնվել են Արևմտյան Տիգրիսի աջ ավազանում:

Ալզիի տեղորոշման հարցի վրա լույս է սփռում Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) տարեգրության այն հաղորդումը, որի համաձայն նրա գահ բարձրանալուց 50 տարի առաջ 20 հազար մուշկեր ներթափանցել էին Ասորեստանին ենթակա Ալզի և Պուրուկուզի երկրները, որոնք «իջնում են լեռներից» և գրավում Կադմուխին (Дьяконов, 1951, N10, I, 62):

Պարզ է դառնում, որ նշված երկու վարչաքաղաքական միավորները ընկած են եղել բարձր լեռներում:

Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդի (մ.թ.ա. 850-824 թթ.) Տուշխանից գտնված միակտոր քարի սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ այդ տիրակալը զորքով լեռներն անցնում է և

իջնում Իսուվա երկրի էնգիտե կոչված շրջանը, այնուհետև Արածանին անցնելով՝ գրավում է Սուխնու (Բյուրակնի լեռների շրջան), Ղայաենի (Ճորոխի ավազան) երկրները (Дьяконов, 1951, N27, II, 40): Սակայն նույն թագավորի տարեգրության մեջ այդ արշավանքի մասին գրված է, որ նա հերթականությամբ գրավում է Ալգի, Սուխնու, Ղայաենի և այլ երկրներ (Авдиев, 1970, էջ 113):

Քանի որ Թիզլաթալասար 1-ինի տարեգրության տվյալների համաձայն Ալգին և Պուրուկուզին լեռնային երկրներ են, ուրեմն առաջինը էնգիտեն չէ, որովհետև այն գտնվել է Իսուվայի կազմում: Այն հետագայի Անձիթն է, որի տարածքը լեռնային չէ:

Կարծում ենք՝ Ալգին, ինչպես նաև Պուրուկուզին, ընկած են եղել Հայկական Տավրոս լեռների հարավային լանջերին՝ Տիգրիսի ակունքից արևմուտք:

Այս տեսակետից խիստ հետաքրքրական են մ.թ.ա. 9-7-րդ դարերի ուրարտական սեպագիր արձանագրությունների տվյալները:

Վանի Սուրբ Պողոս եկեղեցու պատի շարվածքի մի քարի երեսի կողմում գրված է, որ Մենուան (մ.թ.ա. 811-787 թթ.) Մանա երկիրը (Ուրմիա լճի հարավային ավազան) նվաճելուց հետո նույն տարում զորք է ուղարկում, որը գրավում է Շուրիշինիլի, Տարխիգամանի, Շադալիեխինի և այլ բնակավայրեր: Այնուհետև հիշատակված է Խատինաշտանիա երկրի կողմի ժայռը (տեքստը վնասված է): Դրանցից հետո նշված է. «Ալգինի երկրից 2113 մարդ <այդ> տարում՝ մի մասին ես սպանեցի, մյուսներին՝ կենդանի քշեցի: Նրանցից՝ տղամարդկանց ես բաժանեցի զինվորներին» (Арутюнян, 1970, N44):

Ակնհայտ է, որ նշված գյուղերը գտնվել են Ալգի երկրի կազմի մեջ, քանի որ վերջինս տեքստի ամփոփման բաժնում է հիշատակված: Իսկ Խատինաշտանիա երկիրը ուսումնասիրողները հակված են նույնացնելու Խատեի հետ, որը գտնվում էր Եփրատ գետից անմիջապես արևմուտք (Арутюнян, 2001, էջ 226 և 238):

Կարծում ենք՝ այս հաղորդման համաձայն Ալգինի երկիրը գտնվել է Հայկական Տավրոս լեռների հարավային փեշերին (Տիգրիսի ակունքից արևմուտք)՝ մինչև Եփրատի ափի Խատինաշտանիա երկրի ժայռերը:

Սակայն Մենուայի մեկ այլ սեպագիր արձանագրության մեջ, հայտնաբերված Վանա լճից քիչ հյուսիս ընկած հետագայի Պատոնոց գյուղի մոտից, Ալգի երկրի մասին մենք ունենք այլ տեղեկություններ: Դրա հաղորդման համաձայն՝ Վանի թագավորը նվաճում է Բուշտու երկիրը (Ուրմիա լճի հարավային ավազան) և հարակից

գավառները: Տեքստի շարունակության մեջ կարդում ենք. «Նույն տարում Ալգի երկիրը ապստամբել էր: Աստված Խալդին ընդառաջ գնաց Մենուա թագավորին՝ Իշպուինիի որդուն. նա ավերեց Կուտումե քաղաքը, նվաճեց Ալգի երկիրը, նվաճեց Շաշնուինի երկիրը, կառուցեց բերդ Կուտումեում» (Արպտյոհյա, 1970, N 148, տող 22-26):

Ուսումնասիրողները պարզել են, որ Ալգիին պատկանող Կուտումե բնակավայրը Վանա լճի հարավ-արևմտյան ափին առընթեր հետազայի Կոտումն է՝ այժմյան Կուտումը (Արպտյոհյա, 2001, էջ 125): Մենուան Կուտումեն նվաճելուց հետո գրավում է Ալգի երկիրը և աւպա՝ Շաշնուինին:

Ն.Վ.Հարությունյանը գտնում է, որ Շաշնուինին պետք է փնտրել Ալգիի հարևանությամբ, ինչ-որ տեղ արևմտյան Տիգրիսի վերին ավազանում (Արպտյոհյա, 2001, էջ 242):

Ինչպես պարզել են ուսումնասիրողները, հայկական որոշ բառերի *s* (*u*) հնչյունը ուրարտները տեքստերում հաճախ ներկայացրել են որպես *š* (*z*) (Ջահուկյան, 1998, էջ 429):

Շաշնուինի տեղանվան մեջ առկա է նրանց կողմից ավելացված ուրարտերենի *-ini* ածականակերտ ածանցը:

Ակնհայտ է, որ *Շաշնու-* տեղանունը իրենից ներկայացնում է հին հայկական Սասունի սեռական Սասնո հոլովով դրված ձևը: Ուրեմն Շաշնուինին ներկայացնում է Սասուն գավառը:

Իսկ տվյալ սեպագիր տեքստի հիշատակած Ալգի երկիրը, որը գտնվել է Կուտումեից (հայկ. Կոտում) հարավ մինչև Շաշնուինի՝ Սասուն, չի նույնանում Հայկական Տավրոսի արևմտյան հատվածի հարավային փեշերին գտնված Ալգինիի հետ: Ակնհայտ է, որ տվյալ Ալգին Մեծ Հայքի Արծն գավառն է (Երեմյան, 1963, քարտեզ), որը Սասունի հարավ-արևելյան հարևանն է եղել: Վանի արքա Մենուան, Արծն անունը շփոթելով դարձրել է Ալգի: Այդ նույն ձևով, սկսած հինգերորդ դարից, նաև հայ պատմիչներն են վարվել՝ Արծնը դարձնելով Աղծնիք, որի մեջ մտնում էր նաև Սասունը:

Հին հույն պատմիչները տվյալ դեպքում ավելի հարազատ են մնացել հայկական տեղանվանը՝ Արծնը ներկայացնելով Արզանենե ձևով: Արծն տեղանունը հիշեցնում է Ախալցխայի գավառի Արծն, Բագրևանդի Արծնի (-նի ածանցով), Կոտայքի Արզնի հին բնակավայրերի անունները:

Վերջինիս առիթով հիշենք, որ հին հայերենում գոյություն է ունեցել *ծ* և *զ* հնչյունների լծորդություն (իմմ. ձգռտալ և զգռտալ, ոծնի և ոզնի և այլն, Ջահուկյան 1998, էջ 153):

Կարծում ենք՝ նշված տեղանունների մեջ առկա է հին հայերենի *արծ*- «քար, ժայռ» արմատը, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, հանդիպում է արծագանգ (հմմ. գանգյուն «հնչյուն») և արծան բառերի մեջ:

*Ապարխուլա* (<sup>URU</sup>Aparhula): Խեթական թագավոր Արնուվանդաս 3-րդի (մ.թ.ա. 13-րդ դարի երկրորդ կես) Ազիի Ղուկամա քաղաքի առաջնորդ Աիսիյայի հետ կնքած դաշնագրի տվյալների համաձայն՝ Ապարխուլա բնակավայրը գտնվել է Պախուվա (Դերսիմից մինչև Բյուրակնի լեռներ ընկած տարածաշրջան) երկրում (Хачатрян, էջ 117-118):

Ապարխուլա տեղանունը, կարծում ենք, կապված է հին հայերենի ապար (ապառ), «ժայռ, ապառաժ» և *խուլ* «ծածուկ տեղ, մեկուսի» իմաստով արմատներից ու նշանակում է «մեկուսի ժայռի մոտ գտնվող բնակավայր»:

Հավանական է, որ ժամանակակից Ապարանի շրջանի և նրա համանուն կենտրոնի անունը *ապար* բառն է -ան հոգնակիակերտ ածանցով ու նշանակում է «ապարներով հարուստ տարածք»:

Այդ բառը առկա է Սյունիքի Երնջակ գավառի Ապարան, Մոկքի Ապարան, Վայոց ձորի Ապարանք և այլ հին գյուղերի անուններում:

*խուլ* արմատը հանդիպում է Խարբերդի շրջանի Խուլ, Մեղրիի Խուլ և Դերսիմի Խուլագյուղ պատմական բնակավայրերի անուններում՝ «ծածուկ տեղ, մեկուսի» իմաստով:

Ապարխուլան, կարծում ենք, տեղով և անունով նույնական է Պախուվայի տարածքի՝ հետագայի Խործյան գավառի Ապար (Ապառ) գյուղի հետ՝ ներկայիս Փերի գետի վերին հովտում:

*Արանծախի* (<sup>ID</sup>Aranzahii): Գ. Ղափանցյանը Արանծախի գետի անունը վերագրում է Տիգրիսին: Սակայն միևնույն ժամանակ հավանական է համարում, որ դա Արածանին է: Հեղինակը կարծում է, որ այդ անվան -ծախ բաղադրիչը խորիներեն է և նշանակում է «լիճ, ճահիճ»: Այդ արմատը, նրա կարծիքով, առկա է հին հայերենի ճահիճ բառի մեջ (Карацян, 1975, էջ 203, ծան. 3):

Կարծում ենք՝ խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Արանծախի գետի անունը հայկական Արածանիի դրափոխված ձևն է: Իսկ -hi բաղադրիչը խորիների կողմից ավելացված ածանց է: Նրանք խեթերի ժամանակ զբաղեցնում էին նաև Մալաթիայի շրջանը: Խեթերը այն օգտագործել են նրանց հորջորջմամբ:

խորիական տեքստերում այդ գետանունը հանդիպում է Արանգի-խի, Արանգուխի և այլ տարբերակներով (Monte, էջ 524-525):

Արածանի գետանունը կազմված է հայերենի հ.-ե. *արած-* «արածատեղ» (հմմտ.՝ արածիլ «ուտել, ճարակիլ (խոտ)») և նույն լեզվի -անի հավաքական իմաստ ընծեռող ածանցից: Այդ բառը հանդիպում է Այրարատ նահանգի Արած (գավառ), Վայոց ծորի Արած, Մշո դաշտի Արած, Կոտայքի շրջանի Արածոնք (-ոն և -ք ածանցներով) և Սյունիքի Ծղուկ գավառի Արածի (-ի մասնիկով) հին տեղանուններում:

Սակայն գետի անունը նման իմաստ չի կարող ունենալ: Ուստի մենք կարծում ենք, որ Արածանի գետը կոչվել է Հարք գավառի *Արածանի* բնակավայրի անունով: Այդ նույն ձևով Մեղրիի անունն է կրել այնտեղի գետը: Կարճավանի տեղանվամբ է կոչվել դրա մոտի գետը: Արածանիի վտակներից մեկը անվանվել է Մուշ քաղաքի անունով և այլն:

*Արավանա* (<sup>URU</sup>Arawana): Այդ բնակավայրը գտնվել է, ինչպես վկայում են խեթական սեպագիր աղբյուրները, ժամանակակից Երզնկայից քիչ դեպի հյուսիս-արևելք, Ճորոխի ակունքների շրջանում և նույնանուն է 1912 թ. Կովկասյան ռուսական ռազմական շտաբի քարտեզում նշված տեղի Արավանես գյուղի հետ (Хачатрян, էջ 84-86):

Արավանա տեղանունը, կարծում ենք, իր կազմի մեջ ունի հին հայերենի *ար* «կողքին, դեմը, առջև» և իրանականից փոխառյալ *ավան* «բնակավայր» արմատները ու նշանակում է «գյուղի կողքի կամ դիմացի» (ամրոց), (Խաչատրյան, 1998, էջ 43):

Արավանես տարբերակում առկա է -ես հոգնակիակերտ մասնիկը հոգնակի թվի հայցական հոլովածևով:

Առավան անունով մի բնակավայր գտնվել է Նիկտեի շրջանում: Ավան բառն իբրև տեղանուն շատ է հանդիպում: Նույնը կարելի է ասել առ- արմատի մասին, որը մենք տեսնում ենք Ախուրյանի շրջանի Առափի, Եփրատի ոլորանից քիչ դեպի հարավ-արևմուտք հայկական Առափկերտի՝ Արաբկիրի և այլ հին բնակավայրերի անուններում:

*Արիպա* (<sup>URU</sup>Aripša): Հայասա երկրի Արիպա քաղաքը խեթական սեպագիր տեքստերի տվյալների հիման վրա տեղադրվում է Ճորոխ գետի միջին ավազանում և նույնական է վերջինիս մի թևին

առնթեր հետագայի Արաբ-կալե բնակավայրի հետ (Խաչատրյան, 1998, էջ 35):

Կարծում ենք, խեթերը տարնմանության հնչյունական օրենքի հետևանքով տեղանվան երկրորդ a ծայնավորը, որն առկա է իր հետագայի համարժեքի մեջ (Արաբ-կալե), դարձրել են i, իսկ վերջից ավելացրել իրենց լեզվի -ša ածանցը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սեպագրերում r և ʔ (ր և ռ) բաղաձայն հնչյունները գրի են առնվել միայն r ունեցող վանկերի նշանների միջոցով, մենք ենթադրում ենք, որ այդ տեղանունը հնչել է \*Առափ: Արաբ-կալե տարբերակը ուշ թուրքական աղավաղված ձև է:

Ուստի հավանական պետք է համարել այն, որ այդ տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. առ «կողքին, դեմը» և ափն «որևէ տեղի եզր (ջրի, ծորի և այլն)» արմատներից: Խեթական սեպագիր արձանագրություններից մեկի հաղորդման համաձայն Արիպսան գտնվել է «ջրավազանի մեջ», այսինքն՝ այն շրջափակված է եղել ջրով, իհարկե, պաշտպանական նպատակներով: Ուրեմն, Արիպսա տեղանունը նշանակում է «գետի ափերի կողքին գտնվող քաղաք»: Առափ բառը հանդիպում է Ախուրյանի շրջանի Առափի (-ի ածանցով), Մակուի Առափ հին բնակավայրերի անուններում: Նույն կազմությունն ունի Փոքր Հայքի Արաբկիր քաղաքի անունը –կերտ ածանցի աղավաղված –կիր տարբերակով: Այն գտնվել է Եփրատի աջակողմյան վտակներից մեկի աջ ափին:

*Արծիյա* (<sup>URU</sup>Arzija): Արծիյան տեղով և անունով համապատասխանում է Բարձր Հայքի Կարին քաղաքից քիչ դեպի հյուսիս գտնված միջնադարի հայկական Արծնի հետ (Хачатрян, էջ 64-66):

Արծն անունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *արծ-* «սպիտակ» արմատը (Ջահուկյան, 2010, էջ 151) և -ն հին ածանցը, որը խեթերը փոխարինել են իրենց լեզվի -ija ածականակերտ մասնիկով (հմմ. Ջահուկյան, 1987, էջ 333):

Այդ բառը հանդիպում է Բագրևանդի Արծակ (-ակ վերջավորությամբ), Կոզովիտի Արծափ (հմմ. ափ «եզր»), Տարոնի Արծինք (-ինք ածանցով) հին տեղանուններում:

*Արնիյա* (<sup>URU</sup>Arnija): Այն Հայասա երկրի պաշտամունքային կենտրոններից մեկն է եղել (Хачатрян, էջ 148):

Կարծում ենք Արնիյան Սպերի շրջանի (Ճորոխի միջին ավազան) միջնադարյան հայկական Արնոս գյուղն է, որը վկայված է նաև Առ-

նու ձևով: Այդ տեղանվան մեջ առկա է խեթերի կողմից ավելացված իրենց լեզվի -ija ածանցը, որը փոխարինել է հին հայերենի -ու մասնիկին (տեղանունը դրված է հոգնակի թվի հայցական հոլովածևով):

Դրանում մենք տեսնում ենք հայերենի հ.-ե. *առն* «վայրի արու ոչ-խար» արմատը, որը հանդիպում է Պարսկահայքի Առնա (-ա ածանցով, այժմ՝ Խոյ), Գեղարքունիքի Առնեղ (-եղ ածանցով), Այրարատի Ծաղկոտն գավառի Առնիկ (-իկ վերջավորությամբ, ամրոց է) և Հայկական Տավրոսի արևելյան հատվածի Առնոս (լեռ Մոկսի շրջանում) հին տեղանուններում:

*Արխիտա* (<sup>URU</sup>Arhita): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Արխիտա քաղաքը գտնվել է Իսուվայից (հայկ. Ծոփք) անմիջապես հյուսիս-արևելք ընկած Պախուվա երկրում:

Արխիտա տեղանունը խեթերեն *arha* «սահման, եզր» բառի (Զահուկյան, 1987, էջ 334) գործիական հոլովածևն է: Ուստի կարծում ենք, որ այն թարգմանություն է նշված տարածքի հետագայի Երիզա բնակավայրի անվան, որն ունի նույն իմաստը: Այն կազմված է հին հայերենի *երիզ* «շերտ, եզր» արմատից (Խաչատրյան, 1998, էջ 44):

Վերջինս մենք տեսնում ենք Եկեղյաց գավառի Երիզա (այժմ՝ Երզնկա), Մուշի Երիզակ (-ակ ածանցով) հին տեղանուններում:

*«Բարձր Երկիր»* (<sup>KUR</sup>UGU-TI): Մ.թ.ա. 14-13-րդ դարերի խեթական սեպագիր աղբյուրներում բազմիցս հիշատակված «Բարձր Երկիրը» ընդգրկել է վերին Եփրատի ավազանը՝ ոլորանից մինչև ակունքների շրջանը (Хачатрян, էջ 58-60):

Այն վկայված է շումերերենի UGU «բարձր» գաղափարագրով և իր տարածքով համընկնում է հետագայի հայկական Բարձր Հայք նահանգի հետ:

*Բիտեյարիգա* (<sup>URU</sup>Bittejariga): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների օգնությամբ պարզվել է, որ այդ բնակավայրը գտնվել է ժամանակակից Երզնկայի դաշտում և նույնանում է տեղի հին հայկական Բթայառիճի հետ (Карацян, 1975, էջ 59,92, 245):

Աքքադական սեպագրերում *be* սեպանշանը ընթերցվում է *նաև pè, pí, bał, pád, bít, pít* և այլ ձևերով (Labał, էջ 67): Գ. Ղափանցյանի ժամանակ այդ տեղանունն ուսումնասիրողները ներկայացնում էին *Pattjariga* ձևով: Սակայն հետագայում ուսումնասիրողները, նկատի ունենալով այն փաստը, որ այդ տեղանունը հանդիպում է նաև *Pí-it-*

ti-ja-ri-ik ձևով, այդ be ընթերցվող սեպանշանը իրավացի կերպով կարդում են pit (Monte, էջ 319):

Այդ տեղանունը, կարծում ենք, բաղկացած է հին հայերենի բութ «հաստ, թավ» և առիձ «գյուղ, շեն» արմատներից: Դրանցից առաջինը հանդիպում է Վասպուրական նահանգի Բոգունիք գավառի Բութ, Վերին Բասենի Բութակ (-ակ մասնիկով) և Բայազետի շրջանի Բութակ հին տեղանուններում:

Այն, գուցե, նշանակում է «խիտ շինություններով գյուղ» կամ «թավ բուսականությամբ հարուստ բնակավայր» (հմմ. Ջահուկյան, 1987, էջ 337):

Բթայառիձ տեղանվան սկզբի լսվող և չգրվող ը ձայնավորը խեթական դպիրները գրի են առել i ձայնավոր ունեցող վանկերի սեպանշանների օգնությամբ, քանի որ սեպագրությունը ը գրելու միջոց չի ունեցել: Իսկ վերջին ճ բաղաձայնը նույն պատճառներով տրված է g(q) ունեցող վանկանշանի սեպագրով:

*Գազու [...]*(<sup>URU</sup>Gazu[...]): Այն Հայաստանի պաշտամունքային կենտրոններից մեկն է եղել (Хачатрян, էջ 148):

Գազու[...] տեղանվան վերջավորությունը կավե տախտակի վրա վնասված է: Հնարավոր է, որ այն wa վանկն է: Դրա մասին հուշում է վերջում պահպանված u ձայնավորը:

Այդ դեպքում, կարծես, տեղանվան մեջ առկա է խեթերի ավելացրած իրենց լեզվի -sua(r) գոյականակերտ ածանցը:

Կարելի է ենթադրել, որ Գազու(վա)ն Երզրունի գավառի Գազ բնակավայրն է՝ նշված 1912 թ. Կովկասյան ռուսական ռազմական շտաբի հինգ վերստանոց քարտեզում:

Այն իր կազմի մեջ ունի հին հայերենի *գազ*՝ «վիշտ բույս» արմատը, որը հանդիպում է Բաղեշի նահանգի Սղերդի գավառի Գազեր, Տայքի Խոտրջուրի շրջանի Գազեր, նույն տեղի Գազերու ձոր, Լաչինի Գազի-դերե (թուրք. դերե «ձոր»), Սասունի Գազիկ (-իկ ածանցով), Վանի Բաշկալեի գավառակի Գազիկ և այլ հին տեղանուններում (հմմ. Ջահուկյան, 1987, էջ 337):

Գուցե դրանք այդպես են կոչվել տեղանքի՝ այդ բույսով հարուստ լինելու պատճառով:

*Գաշմիյախա* (<sup>URU</sup>Gašmijaḫa): Այն հիշատակված է Խատի երկրի թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի և Հայաստանի արքա Խուկանայի միջև խեթերեն լեզվով կնքված դաշնագրի մեջ որպես վերջինիս պաշտամունքային բնակավայր (Хачатрян, էջ 148):

Գ. Զահուկյանը Գաշմիյախա տեղանվան մեջ տեսնում է հին հայերենի *կազմ* բառը և խեթերի ավելացրած - (a)ha ածանցը (Джа-укаян, 1964, էջ 69-70):

Խեթական դպիրները s հնչյունը գրելու վանկանշաններ չեն օգտագործել: Ուստի օտար այն հատուկ անունները կամ բառերը, որոնք նրանք տարբեր առիթներով իրենց տեքստերում գրի էին առնում, և որոնք պարունակում էին s, դիմում էին š պարունակող վանկերի սեպանշանների օգնությանը:

Ի դեպ, Ga-aš-mi-ja-ha տեղանվան սկզբի ga ընթերցվող սեպանշանը կարդացվում է նաև ga, kà (Labat, էջ 320): Ավելին՝ խեթերենում հաճախ են g և k հնչյունները փոխարինել իրար:

Կարծում ենք, Գասմիյախա կամ Կասմիյախա տեղանվան մեջ առկա է հին հայերենի *կասս-ել*՝ «մանրել, ջարդել, ցորենը ծեծել» բայի արմատը -մ ածանցով (հմմ. «կող և կողմ», «տիլ և տիղմ», «սեր և սերմ», «սղել և սեղմ», Զահուկյան, էջ 233) և -աղխ «բազում, բազմություն» բառի *ախ* տարբերակը ու նշանակում է «բազում կասելու տեղեր՝ կալեր ունեցող»:

«Կասել» բայը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, «կալ» գոյականից ազդվելով՝ որոշ բարբառներում դարձել է *կալսել* կամ *գալսել*: Այդ արմատից են կազմված Վանի նահանգի Գասե (-է ածանցով, Կաս), Կոզովիտի Գասե, Մուշի շրջանի Կասե, Վերին Բասենի Գասնի (-նի ածանցով), Արցախի Աղդամի մոտի Կասըմլի (լի բառի հետ) և Վանի գավառի Կասըմլի հին տեղանունները:

Հիշենք այդ բառի հոմանիշ «կալ» արմատը պարունակող Սյունիքի Կալ, Նախիջևանի Կալ (նաև Գալ ձևով), Դիարբեքիի Կալեր, Սյունիքի Կալեր հին գյուղերի անունները:

Բերված օրինակներում նաև ակնառու է, որ նույն տեղանունը ունի գ և կ բաղաձայն հնչյուններով տարբերակներ:

Գասմիյախան մենք հակված ենք նույնացնելու Տյուրիկի (այժմ՝ Դիվրիզի, Եփրատի ոլորանից քիչ դեպի հարավ-արևմուտք) շրջանի Գասման (-ան ածանցով) միջնադարյան հայկական բնակավայրի հետ:

*Դանկուվա* (<sup>URU</sup>Dankuwa): Այդ բնակավայրը գտնվել է հետագայի Երզնկայի շրջանում:

Դանկուվա տեղանունը իրենից ներկայացնում է խեթերենի dankui «մութ» արմատի տեղական-տորական հոլովածը: Ուստի կարծում ենք, որ այն թարգմանություն է նույն տարածքի միջնադարի հայկական Մթնի բնակավայրի անվան, որը կազմված է հին հայերենի *մութ* «մութ» արմատից -նի ածանցով (Хачатрян, էջ 54-55):

Մութ բառն առկա է Արցախի Մթնածոր (բերդաքաղաք), Մեղրու շրջանի Մթնածոր (գյուղ), Կղարջքի Մթնածոր, Բիթլիսի գավառի Մութ, Դերսիմի Մութնա և այլ հին տեղանուններում:

*Դուկամա* (<sup>URU</sup>Dukkamma, <sup>URU</sup>Duggama): Հայասա երկրի Դուկամա քաղաքը գտնվել է Ազի նահանգում (Ճորոխի ավազան) Արիսասայից քիչ հեռու (Хачатрян, էջ 36-40):

Գ. Ջահուկյանն այդ տեղանունը բխեցնում է խեթերենի duk(k)-, dug(g)- «տեսանելի լինել» բայի արմատից, որի վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի բայարմատներից գոյականներ կերտող -ama(r) (-awar) ածանցը (Ջահուկյան, 1987, էջ 335):

Կարծում ենք, Դուկաման Ճորոխի միջին ավազանի Ազորդ գավառի՝ միջնադարի Հայ բնակավայրն է, որի անունը խեթերը թարգմանել են իրենց լեզվով: «Հայ» տեղանունը *հայ-ել* «նայել» բայի արմատն է և նշանակում է «տեսանելի տեղում գտնվող»:

Այդ բառն առկա է Բաբերդի գավառի Հայեք (-եք հոգնակիակերտ մասնիկով), Սասունի Մոտկանի շրջանի Հայթաղ (թաղ բառի հետ), Հայոց ձոր գավառի Հայեք (Հայք բերդի անունով), Դերսեմի Հայնի (-նի ածանցով), Արղանամադենի Հայնի և շատ այլ հին տեղանուններում:

*Ջազիսա* (<sup>URU</sup>Zaziša): Հայասա երկրի Ջազիսա բնակավայրը տեղադրվում է ժամանակակից Չիմեն լեռներից քիչ հյուսիս-արևելք և, կարծում ենք, նույնական է այժմյան Ջազալար գյուղի հետ: Դա Երզրումի շրջանի հին Ջազա բնակավայրն է (Хачатрян, էջ 58):

Ջազիսա տեղանունը, որի մեջ մենք տեսնում ենք խեթերի ավելացրած -iša ածանցը, իր մեջ ունի հայերենի հնդեվրոպական ազ-«չոր» (հմմ. ազազիլ «չորացնել») արմատը և գ- սաստկական նախածանցը: Վերջինս նկատվում է Վանի նահանգի Ջակոս (ակոս բառով), և նույն տարածաշրջանի Ջերվանդանց (Երվանդ անունից) գյուղերի անուններում: Ջազ բառը հանդիպում է Վանի նահանգի Հեքյարի գավառի Ջազա (-ա ածանցով), Բաղեշի Ջազալի (-ալի մասնիկով) և այլ հին տեղանուններում:

Դրա *չոր* հոմանիշից են կազմված Բաբերդի Չոր, Այրարատի Չորակերտ, Դիարբեքի Չորիք (-իք հոգնակիակերտի հետ), Ապարանի շրջանի Չորուտ (-ուտ ածանցով) և այլ հին գյուղերի անուններ:

*Ինգալապա* (<sup>URU</sup>Ingalawa): Այն Հայասա երկրի քաղաքներից մեկն է եղել Ճորոխի ստորին հովիտում, որը համապատասխանում է տեղի հին հայկական Նիգալ գավառի համանուն կենտրոնի հետ (Խաչատրյան, 1998, էջ 34, 35, 42):

Խեթերը Նիգալ տեղանունը դրավոլոլոթյամբ դարձրել են Ingal-՝ ավելացնելով իրենց լեզվի -awa(r) գոյականակերտ ածանցը:

Այն, կարծում ենք, իր մեջ ունի հայերենի *հ.-ե. «նիգ»*՝ «դռան ետևի սողնակ» և *ալ-ք* «խորք, խորունկ տեղ» արմատները: Իրոք, Նիգալը գտնվել է Ճորոխի ստորին հոսանքի խոր կիրճի մեջ, որը կոչվել է Նիգալի ձոր և հյուսիսից դեպի երկրի խորք տանող ճանապարհը փակելու դեր է ունեցել:

*Նիգ* արմատը մենք տեսնում ենք Արագածի շրջանի հին Նիգ գավառի անվան մեջ: Այն նույնպես գտնվել է գլխավոր ճանապարհը փակող տարածքում: Վերջինս հիշեցնում է Երզրումի գավառի Նիգդերե (հմմ. թուրք. «դերե»՝ «ձոր»), Սպերի շրջանի Նիգե (-է ածանցով), Շուշիի կողմերի Նիգի (-ի մասնիկով) հին բնակավայրերի անուններում:

*Ալ-ք* «խորունկ տեղ» բառը առկա է Արդահանի Ալ, Արցախի Ալ (Ալճ) և այլ հին տեղանուններում:

*Իշտիտինա* (<sup>URU</sup>Ištītina): Խեթական սեպագիր աղբյուրների հաղորդումների համաձայն Իշտիտինա գավառը իր համանուն կենտրոնով գտնվել է «Բարձր երկրի» (հայկ. Բարձր Հայք) կազմում՝ ինչ-որ տեղ այժմյան Երզնկայից քիչ հեռու (48, էջ 61-62):

Ն. Մարտիրոսյանը այն նույնացնում է միջնադարյան Տյուրիկի և Ակնի միջև եղած Ըշթըթենիք բնակավայրի հետ (Մարտիրոսյան, 1951, էջ 97):

Հին հայերենի սաստկական *գ-* նախածանցը տեղանուններում երբեմն դառնում է *շ*: Դրա մասին է վկայում Ջանգեզուրի Ըշկամի հին տեղանունը, որի մեջ առկա այդ *գ-ն* կամ՝ «կալսելու գործիք» արմատից առաջ դարձել է *շ*:

Խեթական սեպագրության մեջ ը ծայնավոր գրելու միջոց չկա: Ուստի դպիրները հաճախ օտար բառերի կամ հատուկ անունների այդ հնչյունը պետք է գրի առնեին *i* պարունակող վանկերի սեպանշանների միջոցով: Հնարավոր է, որ Ըշթըթենիք տեղանունը նրանց մոտ դառնար Ištītina և բաց թողնվեր վերջին -իք ածանցը:

Այդ տեղանունը կազմված է հայերենի *թութ* արմատից՝ դրա *թթենի* «թթի ծառ» բառից -ենի ածանցով:

*Իսուվա* (KUR<sup>URU</sup>İşawa): Խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Իսուվա երկիրը Հայաստյի նահանգներից մեկն է եղել, որն ընդգրկել է Արածանի գետի ստորին ավազանը: Այն իր տարածքով և անունով համապատասխանում է ասորական սեպագրերում վկայված Իշուվային, հին հունական աղբյուրների Սոֆենեին (Σωφηνή), ուրարտական Ծուպանիին (<sup>KUR</sup>Şupani) և հին հայկական Ծոփքին (Хачатрян, էջ 107-112 և ծան. 259):

Ի. Ղյակոնովի կարծիքով՝ Իսուվա անունն իր մեջ ունի ուրարտերենի išani «այն կողմ» բառի /š- արմատը և խուրիերենի –we ածանցը (Дьяконов, 1968, էջ 86):

Ուրարտների համար այդ երկիրը գետի (տվյալ դեպքում Եփրատի) ոչ թե այն, այլ ճիշտ հակառակ՝ այս կողմում էր: Նրանք այն կոչում էին ոչ թե Իշուվա, որը, իբր, ուրարտերեն է, այլ Ծուպանի, որը հայկական Ծոփք անվան ուրարտական տարբերակն է:

Վերը բերված այդ տեղանվան բոլոր օտար հորջորջումները հայկական Ծոփքի այլ լեզուներով հնչած տարբերակներ են:

Ծոփք տեղանունը կազմված է հին հայերենի ծոպ (ծոփ) «ժապավեն, երիզ» արմատից և -ք հոգնակիակերտ ածանցից: Այն հանդիպում է Երևանի նահանգի Ծոպանիս (-անի ածանցով և հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով, Ծոփանիս), Գուգարքի Ծոպի (Ծոփ) և Ծոփափոր (Ծոբափոր, գավառ) հին տեղանուններում:

Ծոփքի տարածքը կտրտված է Արածանի գետի վտակներով: Հնարավոր է, որ տեղի բնակիչներն այդ նահանգն անվանակոչելու ժամանակ նկատի են ունեցել դրա երիզներով տարածքներ ունենալու հանգամանքը:

*Լալատա* (<sup>URU</sup>Lalata): Խեթական սեպագիր աղբյուրներից մեկի մեջ Լալատան հիշատակված է որպես Ուրա քաղաքի շրջանի մի բնակավայր (Քոսյան, էջ 69, 117): Իսկ վերջինս Բաբերդի հին Ուռեն գյուղն է (Խաչատրյան, 1998, էջ 34, 43):

Լալատան հիշեցնում է Ղազախի գավառի Լալ, Ղարաղաղի Լալալի (-ալի ածանցով), Իջևանի շրջանի Լալավեր (ավեր բառի հետ), Ղերսիմի Լալան (-ան մասնիկով), Արդահանի Լալեք (-եք հոգնակիակերտ վերջավորությամբ), Վանի նահանգի Հեքյարի գավառի Լալկան (-կան ածանցով), Ալավերդի քաղաքից անմիջապես հյուսիս-արևմուտք գտնվող Լալվար լեռան (-վար «պես» մասնիկով) և այլ հին տեղանունները:

Պրանք բոլորը կազմված են հայերենի հ.-ե. լալ «լաց լինել, արտասվել» արմատից և գանազան ածանցներից և հուշում են, թե նշված տեղերը շատ անձրևոտ են:

Լալատա տեղանունը նույնպես ունի այդ լալ արմատը, որի վրա խեթերն ավելացրել են իրենց լեզվի գոյականակերտ -ata(r) ածանցը:

Կարծում ենք, Լալատան տեղով և անունով նույնական է Երզնկայի գավառի Լալելի գյուղի հետ, որը գտնվել է Բաբերդի շրջանի սահմաններում: Կերջինիս անվան մեջ առկա է հայերենի -ելի մասնիկը:

Այս առիթով հիշենք Քղիի գավառի Անձրևիկ գյուղի և Նախճավանի Գողթնի շրջանի Անձրևաբեր վանքի անունները:

*Լիլիմա* (<sup>URU</sup>Lillima): Խատի երկրի արքա Արնուվանդաս 3-րդի դաշնագրում՝ կնքված խեթերեն լեզվով Ազիի Ղուկամա քաղաքի առաջնորդ Աիսիայի հետ, Լիլիման հիշատակված է վերին Եփրատի, միջին և ստորին Արածանիի ավազանների բնակավայրերի անունների ցուցակում:

Այն մենք հակված ենք նույնացնելու այժմյան Մադենի շրջանի միջնադարյան Լիլիկ գյուղի հետ (Խաչատրյան, 1998, էջ 36):

Այդ տեղանվան վերջին -իկ ածանցը խեթերը փոխարինել են իրենց լեզվի գոյականակերտ -ma մասնիկով:

Լիլի- բառը հանդիպում է Ղարադաղի Լիլիյան (-յան ածանցով) բնակավայրի անվան մեջ: Այն հայերենի հ.-ե. լի «լցված, անպակաս» արմատի կրկնությունն է: Լի բառը մենք տեսնում ենք Մուշի շրջանի Լիս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Վանի Հեթյարի գավառի Լիս հին բնակավայրերի անուններում: Լիլիման և վերը բերված տեղանունները հուշում են, թե այդ բնակավայրերի տարածքները բերքով առատ են եղել:

Խարբերդի նահանգի Բերրի քաղաքի և իր շրջանի անունը կազմված է հին հայերենի բերրի «առատ, բերքառատ» արմատից: Վանի Բերրի, Սուրմալուի շրջանի Բերի, Արդվինի Բերի, Երզնկայի Բերի և այլ հին բնակավայրերի անունները ներկայացնում են նշված բերրի բառը:

*Խալարա* (<sup>URU</sup>Halara): Խեթական սեպագիր տեքստերի տվյալների համաձայն Խալարան Իսուվա երկրի (հայկ. Ծոփքը Արածանիի ստորին ավազանում) բնակավայրերից մեկն է եղել: Այն, կարծում ենք, տեղով և անունով նույնանում է տեղի հետագայի Խալար գյուղի հետ (Խաչատրյան, 1998, էջ 36-37):

Վերջինս առկա է Երզնկայի Խալար, Մեղրու շրջանի Խալարդի (-դի բաղադրիչը հին հայերենի -տի հոգնակիակերտ ածանցի տարբերակն է) հին տեղանուններում:

Կարծում ենք՝ Խալարան, ինչպես նաև մյուս հայկական բնակավայրերի անուններն իրենց կազմի մեջ ունեն *խալարակայք* «խոյակ» բառի *խալար-* արմատը և հուշում են այն մասին, թե այդ գյուղերը խոյակներով զարդարված շինություններ շատ են ունեցել: Նույն իմաստն ունի Արցախի Ներքին Խաչեն գավառի Խոյական բերդի անունը:

*խալիմանա* (<sup>URU</sup>*Halimana*): Այս բնակավայրը, կարծում ենք, Բարծր Հայքի Երզնկայի շրջանի Մանք գյուղն է, որի անվան վրա խեթերն ավելացրել են իրենց լեզվի *halı* «պահակակետ» բառը՝ բաց թողնելով դրա -ք ածանցը:

Խալիմանան, իրոք, գտնվել է «Բարծր երկրում»: Դրա անունը իր մեջ ունի հին հայերենի *ման* «պտույտ, գալար, ոլորք» արմատը, որը ցույց է տալիս, թե այդ բնակավայրը գտնվել է գետի ոլորանի մոտ (Խաչատրյան, 1998, 15 43):

Ման բառը հանդիպում է Վասպուրականի Մանակերտ (շրջան, կերտ բառածանցի հետ), Երզրումի Մանց (հոգնակի թվի սեռական հոլովի -ց ցուցիչով), Սպերի գավառակի Մանուց (հոգնակի թվի սեռական հոլովի -ուց ցուցիչով) և շատ այլ հին բնակավայրերի անուններում:

*խալմեսնա* (<sup>URU</sup>*Halmesna*): Այդ բնակավայրը գտնվել է Պախուվա երկրում, որը ընդգրկել է Դերսիմից մինչև Սրմանց լեռները (Хахатрян, էջ 118):

Խալմեսնա տեղանունը խեթերենի *halmesna* «երգ» բառի տրական-տեղական հոլովածնն է: Կարծում ենք, այն Դերսիմի հին Երզեհոն (հին հայերեն *երզեհոն* բառն է՝ «մի տեսակ նվագարան») գյուղի անվան խեթերեն թարգմանությունն է:

*Երգ* արմատն առկա է Շիրակի Երգ, Երզրումի գավառի Երգվա (սեռական հոլովի -վա ցուցիչով) պատմական բնակավայրերի անուններում: Հավանաբար դրանք հուշում են տեղում երգիչների առկայության մասին:

*խախա* (<sup>URU</sup>*Hahha*): Այն գտնվել է Բարծր Հայք նահանգի Երզնկա քաղաքից քիչ դեպի հյուսիս-արևմուտք և նույնական է տեղի հին Խախ բնակավայրի հետ (Хахатрян, էջ 53-58):

Խախ տեղանունը կազմված է հին հայերենի *խախ* «չոր» արմատից և վկայում է տարածքի չոր լինելու մասին: Այն հանդիպում է Թորթումի Խախու (-ու ածանցով), Նախիջևանի Խախ, Օլթիի շրջանի Խախկերտ և այլ հին տեղանուններում:

Այդ բառի «չոր» հոմանիշը առկա է Խարբերդի դաշտի Չոր, Այրարատ նահանգի Ճակատք գավառի Չորակերտ, Երզնկայի Չորս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով), Կոզովիտի Չորուտ (-ուտ մասնիկով) և այլ հին գյուղերի անուններում:

*Խատենա* (<sup>KUR</sup>Hatena): Խեթական սեպագիր տեքստերի տվյալների համաձայն՝ Խատենան «Բարձր երկրի» (հայկ. Բարձր Հայք) գավառներից մեկն է: Այն ընդգրկել է Եփրատի ավազանը՝ ոլորանից մինչև Երզնկայի դաշտը, և երբեմն հիշատակված է իր Կումախա (հայկ. Կամախ) քաղաքի անունով (Хахатрех, էջ 50-54):

Խեթական սեպագրերում հ և խ հնչյունները զանազանող սեպանշաններ չկան: Երկու դեպքում էլ դպիրները դրանք գրի են առել միայն *h* ունեցող վանկերի նշանների օգնությամբ:

Ուստի կարծում ենք, որ Խատենա տեղանունը կազմված է հին հայերենի *խատ* «կտրելը, հատված, կտոր» արմատից և նույն լեզվի -են ածանցից:

Այդ առումով Խատենան համեմատելի է Վանի գավառի Հատեր (-եր հոգնակիակերտ վերջավորությամբ), Կիլիկիայի Խատին (-ին մասնիկով), Արցախի Մարդակերտի շրջանի Հատիս (-իք ածանցով, անունը դրված է հին հայ. հոգնակի թվի հայցական հոլովածևով), Կոտայքի Հատիս և այլ հին տեղանունների հետ: Դրանցում *խատ*-բառը մատնանշում է, որ տեղանքը շրջապատից բաժանված է եղել գետով կամ ծորով, կամ էլ գտնվել է լեռան կտրվածքի մոտ: Տվյալ դեպքում Խատենա գավառը Եփրատ գետով բաժանված է եղել երկու մասի:

*Խատիմա* (<sup>URU</sup>Hatima): Խատիման Իսուվա երկրի (հայկ. Ծոփքը Արածանիի ստորին ավազանում) բնակավայր է (Քոսյան, էջ 54-55):

Ի դեպ, խեթական, ինչպես նաև ասուրական և ուրարտական սեպագրերում հ և խ հնչյունների համար գրության տարբեր միջոցներ չեն եղել: Երկու դեպքում էլ դրանք տրվել են *h* ունեցող վանկերի նշանների օգնությամբ:

Ուստի կարելի է մտածել, որ Խատիմա տեղանվան մեջ առկա է հին հայերենի *խատ* «կտրելը, կտոր, հատված» արմատը, որի վրա

խեթական դպիրները ավելացրել են իրենց լեզվի -ma գոյականա-  
կերտ ածանցը:

Այս բառը մենք տեսնում ենք Վանի նահանգի Հատեր (հոգնա-  
կիակերտ -եր ցուցիչով), Արցախի Մարդակերտի շրջանի Հատիս  
(-իք ածանցով, անունը հին հայերենի հոգնակի հայցական հոլո-  
վածնով է) և Ելիզավետպոլի նահանգի Կարյազինի գավառակի  
Հատք (-ք հոգնակի թվի վերջավորությամբ) հին տեղանուններում:

Թվարկված բնակավայրերի անունները, ինչպես և Խատիման,  
ցույց են տալիս, որ այդ գյուղերը գտնվել են շրջապատից ինչ-որ  
ծևով սահմանափակված տարածքում կամ լեռան կտրվածքի մոտ:

*Խուդու* (<sup>URU</sup>Huddu): Խեթական սեպագիր տեքստերից մեկի մեջ  
Խուդուն հիշատակված է Ուրա քաղաքին պատկանող բնակավայ-  
րերի ցուցակում (Քոսյան, էջ 117): Իսկ վերջինս միջնադարի հայկա-  
կան Ուռեն գյուղն է Բաբերդի շրջանում (Խաչատրյան, էջ 34, 43):

Խատենա տեղանվան առիթով մենք արդեն նշել ենք, որ խեթա-  
կան սեպագրերում հ և խ հնչյունները գրվում էին միայն *h* պարունա-  
կող վանկերի նշաններով: Ավելին՝ այդ տեքստերում միշտ չէ, որ *d* և  
t բաղաձայնները տարբերակված են: Միևնույն բառը հաճախ մի  
դեպքում *d*, մեկ այլ դեպքում t բաղաձայնով է ներկայացված: Օրի-  
նաչափ չէ նաև բաղաձայնների կրկնակ գրությունը:

Դ, որ, թ հնչյունների լծորդությունը նկատվում է նաև միջնադարի  
հայկական տեղանուններում: Երզնկայի գավառի Խուդի (սեռական  
հոլովի -ի ցուցիչով) գյուղի անունը հանդիպում է նաև Խուտի ձևով:  
Սասունի Մոտկանի շրջանի Խուդատատվան (-ա հոդակապով դա  
նույն Դատվան տեղանունն է) բնակավայրը նույն Խութ գավառի  
համանուն կենտրոնն է (օրինակները շատ են, Ջահուկյան, 1987, էջ  
253):

Նկատի ունենալով այս փաստերը՝ կարծում ենք, որ Խուդու տե-  
ղանունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *խութ* «ոտի տակի արգելք, խո-  
չընդոտ, անհարթ» արմատը, որը հանդիպում է Սիսիանի շրջանի  
Խուդ, Երզնկայի Խուդի, Տուրուբերան նահանգի Խութ (գավառ),  
Բիթլիսի Խութ (Խուտ), Խարբերդի Խութծոր և Գորիսի Խութիս (-իք  
մասնիկով) հին գյուղերի անուններում:

Նշված բոլոր բնակավայրերը կամ շրջանները գտնվել են ան-  
հարթ տարածքների վրա:

*Խուրլա* (<sup>URU</sup>Hurla): Խատի երկրի արքա Արնուվանդաս 3-րդի և  
Ազիի Դուկամա քաղաքի առաջնորդ Աիսիայի միջև կնքված դաշ-

նագրում Խուրլան հիշատակված է որպես Պախուվա երկրի բնակավայր (Хачатрян, էջ 16-117): Կարծում ենք՝ այն տեղով և անունով նույնական է հետագայի Քղիի գավառի, որը գտնվել է նույն տարածքում, Խոռխոռ գյուղի հետ (Ադոնց, 1987, էջ 89):

Խեթերը խուրիների լեզվի անունը գրում էին *hurlii* ձևով, որի մեջ առկա է նրանց լեզվի -*ii* ածականակերտ ածանցը, իսկ *r* հնչյունը գրված է *Hurlaš* ձևով: Այս դեպքում էլ *r* բաղաձայնը վեր է ածվել *ri*-ի: Դա մեզ անհայտ հնչյունական երևույթ է: Այդ նույն ձևով էլ, կարծում ենք, Քղիի գավառի Խոռխոռ տեղանունը, որի մեջ *hur* արմատը կրկնված է, խեթերը մեզ ավանդել են Խուրլա տարբերակով: Ի դեպ, նրանց սեպագրերում *r* և *ri* հնչյունները գրված են մեկ *r* գրությամբ: Դրանք իրարից չեն զանազանված:

Խոռխոռ տեղանունը իրենից ներկայացնում է հին հայերենի *hur* «ծակ, փոս, փոս տեղ» արմատը, որը հանդիպում է Խոտրջուրի շրջանի (Ճորոխի միջին ավազան) Խոռ, Սյունիքի Ծղուկ գավառի Խոռ, Իջևանի Խոռ, Վանի նահանգի Արծկեի Խոռանց (հոգնակիակերտ -անց ցուցիչով), Հայոց ծորի Խոռզոմ և այլ հին տեղանուններում:

Կարելի է մտածել, որ Խուրլան և նշված բնակավայրերը գտնվել են փոս տեղերում կամ դրանց մոտ:

*Ծանծալիյա* (<sup>URU</sup>Zanzalija): Խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ծանծալիյա բնակավայրը, կարծում ենք, տեղով և անունով նույնական է Բասենի Ծանծաղ գյուղի հետ (Խաչատրյան, 1998, էջ 43): Վերջինիս վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի -*ija* ածականակերտ ածանցը:

Այդ տեղանունն իր մեջ ունի հայերենի *ծանծաղ* «ոչ խոր (ջրի, հողի համար)» արմատը, որը հանդիպում է Երասխի Ծանծաղ վտակի անվան մեջ: Հավանական է, որ դրա անունով է կոչվել նշված բնակավայրը: Դրանք երկուսն էլ նույն տարածքում՝ Բասեն գավառում են:

*Ծուխնա* (<sup>KUR</sup><sup>URU</sup>Zuḫma): Հայասա երկրի Ծուխնա նահանգը տեղադրվում է Բյուրակնի լեռների արևելյան հատվածի շրջանում (Хачатрян, էջ 112-113): Կարծում ենք՝ այն կոչվել է նշված տարածքի հյուսիսային սահմանի՝ Բասենի շրջանի Ծխնկերտ բերդաքաղաքի անունով, որի *ծուխ* «ծուխ» արմատի վրա խեթերն ավելացրել են բայարմատներից գոյական *սնուն* կազմող -(*i*)ma ածանցը: *Ծուխ*

բառն առկա է Շիրակի Ծխանիստ (-ա- հոդակապով, նիստ բառի հետ, բերդ), Մուշի Ծխառ (առ բառի հետ), Թորթումի Ծխիկ (-իկ ածանցով) և Վանի գավառի Ծխու վանք հին բնակավայրերի անուններում:

*Կալարումա* (<sup>URU</sup>Kalaruma): Խեթական թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի տարեգրության տվյալների համաձայն՝ Կալարումա բնակավայրը Կամախանայի հետ (հայկ. Կամախ՝ Երզնկայից քիչ դեպի արևմուտք) գտնվել է Խատենա գավառի մեջ (Եփրատի ավազանը ոլորանից մինչև Երզնկայի դաշտ, Хачатрян, էջ 50-54): Կարծում ենք՝ Կալարումա տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *գալար* «ոլորք» արմատից, որը հայ բարբառներում հանդիպում է *կալարիլ* «ոլորել» (Մոկք), կալըրվիլ «գալարվիլ» (Սալմաստ) ձևերով և նույն լեզվի ներգոյական հոլովի -ում ցուցիչից:

Նշված բառը առկա է Պարսկահայաստանի Կոտուրի շրջանի Կալարուք (-ուք հոգնակիակերտ ածանցով), Գուգարքի Կալարք (-ք մասնիկով) և Կոգովիտի Կալարաշ (-աշ մասնիկով) հին տեղանուններում: Այս բոլորից հետևում է, որ Կալարումա բնակավայրը զբաղեցրել է գետի ոլորանի, գալարի տարածքը:

*Կանուվարա* (<sup>URU</sup>Kannuwara): «Բարձր երկրի» Կանուվարա բնակավայրը տեղով և անունով նույնանում է Երզրումի շրջանի Կան գյուղի հետ (Хачатрян, էջ 61-62): Այդ անվան վրա խեթերն ավելացրել են իրենց -uwara հավաքական իմաստ ընձեռող ածանցը:

Կանուվարա տեղանունը, կարծում ենք, հին հայերենի *կան* «ոլորք, պտույտ, շրջան» արմատը ունի իր մեջ և հուշում է, թե այդ բնակավայրը գտնվել է գետի ոլորանում: Այն հիշեցնում է Սպերի շրջանի Կան, Արդահանի Կան և Սյունիքի Կան հին բնակավայրերի անունները:

*Կարնա* (<sup>HUR.SAG</sup>Karna): Խեթական թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի (մ.թ.ա. 14-րդ դ. առաջին կես) նամակում՝ ուղղված Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ 3-րդին, գրված է, որ արքայի գահ բարձրանալուց առաջ նրա երկրի վրա հարձակվել էին Հայասա, Կասկա (Պոնտական լեռների շրջան) և Խուրի (վերին Տիգրիսի արևմտյան ավազանի) երկրները (Խաչատրյան, 1998, էջ 55):

Այդ նույն իրադարձության մասին նա Միտանի երկրի տիրակալ Շատիվազայի հետ ասուրերեն լեզվով կնքած դաշնագրում չի հիշատակում Հայասա, Կասկա և Խուրի թշնամիների մասին, այլ

թվարկում է դրանց կազմի մեջ մտած վարչական միավորների անունները (տե ս նույնը):

Սուպիլուլիումսը Հայասայի փոխարեն տեքստում գրում է, որ իր երկրի վրա հարձակվել էին Արավանա (Ճորոխի վերին ավազան), Ջազիսա (Երզրումի շրջանի Ջազա բնակավայր), Տիմինա (Երզնկայի դաշտի այժմյան Ջիմին բնակավայրը) գավառների բանակները: Իսկ Հայասայի Ազի (Ճորոխի ավազան) և Ծուխմա (Բյուրակնի լեռների շրջան) նահանգների փոխարեն Խատիի արքան գրում է, որ իր դեմ ընդվզել էին նաև Խալիվա և Կարնա լեռների բնակիչները (Խաչատրյան, 1998, էջ 54):

Դրանք մեծ լեռնահամակարգեր են, քանի որ ընդգրկել են Հայասայի երկու խոշոր նահանգների տարածքներ: Կաղ միջնադարից սկսած Կարինի (այժմ՝ Երզրում) հարավի լեռները (երբեմն նաև Հայկական պարի արևմտյան մասը) կոչվել են Կարնո սարեր, որը հայ բարբառներում հանդիպում է նաև Կարնա ձևով: Հետևաբար այդ անունով կոչվել են Բյուրակնի լեռները:

Խալիվա անվան վերջին wa սեպանշանը սովորաբար խեթական սեպագիր տեքստերում ունի նաև pi ընթերցումը (Labat, էջ 177): Այդ դեպքում այն պետք է ընթերցել *Halipi*: Ի դեպ, հին հույն պատմիչները այժմյան Բաթումիի և Տրապիզոնի միջև գտնվող Պալխար լեռների բնակիչներին կոչում էին խալիբներ (*xalibez*): Ուրեմն տվյալ Խալիպին հետագայի Պալխարի լեռների անունն է:

Կարնա լեռնաշղթայի անունը Կարին քաղաքի անվան սեռական հոլովի ձևն է -ա ցուցիչով: Այդ տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *կար* «չվան, հող» արմատից և -ին ածանցից ու հավանաբար նշանակում է «ձանապարհների միացման տեղում գտնվող բնակավայր»: *Կար* բառն առկա է Կարս քաղաքի անվան մեջ հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով: Այն մենք տեսնում ենք Կիլիկիայի Կարակ (-ակ ածանցով), Սիսիանի շրջանի Կարին, Ծոփքի Կարսիկ (-իկ մասնիկով) և Արդվինի Կարսիկ հին բնակավայրերի անուններում:

*Կումախա* (<sup>URU</sup>*Kumaha*): Կումախա տեղանունը խեթական սեպագիր աղբյուրներում հանդիպում է նաև Կամախանա (-ana ածանցով) ձևով: Այն հետագայի Երզնկայի Կամախ բնակավայրն է (Хачатрян, էջ 115):

Այդ տեղանունը կազմված է հին հայերենի կամախ «ընծա» արմատից, որը մատնանշում է տեղանքի բերրի հողեր ունենալու հանգամանքը (Хачатрян, էջ 42):

Նշված բառը առկա է Տայքի Կամախ (բերդ), Բիթլիսի գավառի Կամախ հին տեղանուններում (հմմ. Վանի շրջանի Ընծակ բնակավայրի անվան հետ):

Հայասա (KUR<sup>URU</sup> Ha-ja-ša): Հայասա երկիրը, հիշատակված մ.թ.ա. 14-13-րդ դդ. խեթական սեպագիր աղբյուրներում, ընդգրկել է Վանա լճի, Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի և Սև ծովի միջև ընկած տարածաշրջանը (Խաչատրյան, 1998, էջ 34-38):

Դեռևս 1927 թ. Կ. Ռոտը հայտնել է այն կարծիքը, որի համաձայն Հայասա, Հայք և հայ անվանումները ակնհայտորեն իրար հետ կապված են (Rot, էջ 11-12): Այս տեսակետն ուսումնասիրողներից շատերն ընդունում են: Խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Հայասայի հատուկ անունների ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք կազմված են հին հայերենի արմատներից (Խաչատրյան, 1998, էջ 38-46):

Հայ անվան ստուգաբանության առիթով Գ. Ջահուկյանը քննել է ուսումնասիրողների բոլոր տեսակետները:

Որոշ գիտնականներ այն բխեցնում են Մակեդոնիայի παιονες ժողովրդի անունից: Վ. Գեորգիևը, նկատի ունենալով, որ Ստրաբոնը պայոններին համարել է փոյուզիական ցեղ, *հայ* անունը կապում է հ.-ե. \*pōu-«փոքր» արմատի հետ՝ ապացույց համարելով Հայասա երկրի՝ Փոքր Հայքում գտնվելու հանգամանքը (Георгиев, էջ 39):

Գ. Ջահուկյանը չի ընդունում այս տեսակետը, քանի որ Փոքր Հայք անվանումը Հայասայից շատ հետո է առաջացել, և այդ համադրությունը հնչյունական առումով խոցելի է: Հեղինակը նաև նշում է, որ պայոնների հին հունական գրավոր աղբյուրներով վկայված հատուկ անունները իլիրական կամ թրակիական են և հեռու են հայկական բնույթ ունենալուց (Ջահուկյան, 1987, էջ 282-283):

Այս բոլորին կարելի է ավելացնել այն փաստը, որ p>h հնչյունափոխությունը վաղնջական ժամանակների երևույթ է: Նույնիսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի խեթական սեպագիր տեքստերում չկա p-ով սկսվող որևէ հայկական տեղանուն, որը հետագայում դրա փոխարեն ձեռք բերած լինի h:

Ուսումնասիրողներից վերջինը Ի. Դյակոնովն է, ով *հայ* անունը բխեցնում է *Hati* երկրի անունից (Дьяконов, 1968, էջ 211-212):

Գ. Ջահուկյանը գրում է, որ հատի երկրի անունը, ինչպես հայտնի է, խեթերին նախորդած տեղաբնիկների ինքնանվանումն է և անհավանական է, թե հայասացիները նույնպես, որոնք Հալխս գետի ավազանի բնակիչներ չեն եղել, խեթերի պես ժառանգեին այն (Ջահուկյան, 1987, էջ 282):

Ի. Դյակոնովը գտնում է, որ *Hə-at-ti* երկրի անունը սկսվում է հ բաղաձայնով, իսկ դրանում առկա է-ն դարձել է j: Ուստի *հայ* անունը դրանից է առաջացել: Միևնույն ժամանակ նա համոզված է, թե *Hə-ja-ša* անվան մեջ *h-*ն հնչել է խ, իսկ դրա հիմքը *həja-* է՝ խեթերի կողմից ավելացված *-ša* ածանցով, իսկ *հայ* անունը հոգնակի թվի սեռական հոլովում վերականգնում է -n: Այդ պատճառով էլ Հայասա անունը կապ չի կարող ունենալ *հայ*-ի հետ (Дьяконов, 1968, էջ 211-212):

Տվյալ դեպքում առկա են մի շարք անճշտություններ: Հեղինակը միևնույն *hə* սեպանշանը խատիի անվան մեջ առաջարկում է կարդալ հա, իսկ *Hə-ja-ša-*-ի մեջ՝ -խա, որն անընդունելի է: Իսկ է բաղաձայն ունեցող սեպագիր աղբյուրներում հիշատակված ոչ մի հատուկ անուն հետազայում չի վկայված դրա փոխարեն j կիսաձայնով: Դա հնդեվրոպական լեզուներին հատուկ ավելի վաղնջական հնչյունափոխության երևույթ է:

Ավելին, Ի. Դյակոնովը գտնում է, որ Հայասա անվան մեջ երկրորդ ձայնավորն ա-ն է, իսկ *հայ* ինքնանվան մեջ վերականգնվում է -n: Այդ դեպքում հարց է առաջանում. թե ինչպես այդ կարող է պատահել, երբ խատի երկրանվան վերջի -ի ձայնավորը *հայ* բառը սեռական հոլովում չի վերականգնում:

Հայասա երկրի անունն իր մեջ ունի խեթերի կողմից ավելացված *-aša* ածականակերտ ածանցը:

Հին հայերենի ոչ բոլոր արմատներն են, որոնք նախալեզվում ունեցել են որևէ ձայնավոր: Դրանք, ինչպես և *հայ* անունը, մյուսների նմանակությամբ ո թեքված ձևերում վերականգնում են n (Խաչատրյան, 1998, էջ 40-41):

Գ. Ջահուկյանը գրում է, որ որոշ ուսումնասիրողներ էլ *հայ* անունը բխեցնում են հ.-ե. նախալեզվի \**poti*-«տեր, տանտեր» հիմքից, որը, հեղինակի կարծիքով, խիստ կասկածելի է, քանի որ Հ. Աճառյանն այդ արմատը համարում է հին հայերենի *հոյ* բառի նախածնը (Ջահուկյան, 1987, էջ 284):

Մովսես Խորենացու հաղորդումներից մեկի համաձայն՝ Հայկ նախալեզվի անունով են կոչվել Հայաստանը և հայերը (Մովսես Խորենացի, I, ԺԱ): Հայկ անձնանունն իր մեջ ունի -իկ ածանցը՝ սղված ի ձայնավորով (հմմտ. պարսիկ, հնդիկ, ռուզիկ և այլն) և նշանակում է «հայ մարդ»: Այն, կարծում ենք, որևէ հայ նշանավոր թագավորի տիտղոս է՝ առաջացած ժողովրդի անունից: Այդ ձևով մարերի առաջնորդ Նյուքարը կոչվել է Մադես՝ «մար» անունով:

Գ. Ջահուկյանը հավանական է համարում *հայ* բառը բխեցնել հ.-ե. նախալեզվի \*pōi-«արածեցնել» արմատից, քանի որ Հերոդոտոսը հայերին բնորոշում է որպես «շատ ոչխարներ ունեցող» (Ջահուկյան, 1987, էջ 284):

Մեր կարծիքով, քանի որ *հայ* բառը հայերի ինքնանվանումն է, ուստի այն պետք է որոնել հայոց լեզվի մեջ:

Ժողովուրդների անունների առաջացման բազմապիսի ձևեր են գոյություն ունեցել: Դրանցից այստեղ մենք կնշենք միայն մի քանիսը:

Այս կամ այն ժողովրդին անուն կարող են տալ նաև հարևանները: Մի դեպքում նրանք կարող են օգտագործել իրենց բառերը, մյուսում՝ տվյալ ժողովրդի՝ իրենց հարևան նահանգի կամ գավառի անունով կոչել:

Իսկ ժողովուրդների ինքնանվանումները, կարծում ենք, առաջ է եկել սեփական պետականության առաջին անգամ հանդես գալու հետ: Տարբեր ցեղեր, որոնք ունենում էին լեզվական բավականին շատ ընդհանրություններ, աստիճանաբար միավորվելով մտել են մեկ պետության կազմի մեջ, որի անունն էլ դառնում էր նրանց համար ընդհանուր:

Խթթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Հայասա երկրի կենտրոնական Ազի նահանգն ունեցել է երկու խոշոր քաղաքներ՝ Առիպսան և Դուկաման, որոնցից հայտնի չէ, թե որն է եղել մայրաքաղաք: Դրանցից առաջինը գտնվել է Սպերից քիչ դեպի հյուսիս-արևելք, և կարծում ենք, հետագայի տեղի Արաբկալե բնակավայրն է: Վերջինս հուշում է, թե Առիպսան խեթերի կողմից քիչ աղավաղված Առափս տեղանունն է: Այն կազմված է հայերենի հ.-ե. *ար*՝ «կողքին, դեմը» և *ափն*՝ «եզր, ծայր (ծորի, գետի և այլն)» արմատներից հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով ու նշանակում է «դեմը, կողքին եզրերի» բնակավայր: Իրոք, այն շրջապատված է եղել գետով՝ պաշտպանական նպատակներով:

Դա հիշեցնում է Ախուրյանի շրջանի Առափի գյուղի անունը: Վերջինս գտնվում է Ախուրյան գետի ափին:

Առիպսան, ինչպես վկայում են խեթական սեպագիր աղբյուրները, Դուկամայից հեռու չի եղել: Մուրսիլիս 2-րդն այն գրավել է հաջորդ առավոտյան: Դուկամայի մասին Արնուվանդասը մի դաշնագրում գրում է. «Արիխպիծիին՝ [Բիտե]յարիգա [քաղաքի մարդու], Աիսիյա, Դուկամա քաղաքի մարդ, Ալի[վասուին՝ Արիսիտա քաղաքի մարդու], ձեզ հետ դաշնագիրը այսպես կնքեցի» (Keilschrifttexte, XXIII, 72, II, 1-2):

Այնուհետև այդ արձանագրության մեջ կարդում ենք. «Ավագները Իսուվա երկրի, ավագները Պախուվա երկրի, ավագները Ծուխմա երկրի, ավագները Կուսախա երկրի, ավագները Մալդիյա քաղաքի Արիխայիծիի՝ Բիտեյարիզա քաղաքի մարդու հետ բոլորը դաշինքին [թող ներկա լինեն]: Ով արևայինիս դեմ.....Խատիի դեմ իր [երկրում ապստամբի], նա ձեզ համար թշնամի թող դառնա.....: [Եթե դուք] ձեր դարպասի մոտ չասեք [այդ մասին ձեր] տոհմակցին, ցեղակցին, կդառնաք ինձ համար թշնամի» (նույնը, տող 36-41):

Այս հաղորդումներից առաջինում ակնհայտ նշված է, որ Արնուվանդասը դաշնագիրը կնքել է Աիսիայի՝ Դուկամա քաղաքի՝ այսինքն Ազի երկրի տիրակալի հետ: Նա վերջինից պահանջում է, որ Իսուվա (Արածանիի ստորին ավազան), Պախուվա (այդ գետի միջին հոսանքի շրջան), Ծուխմա (դրա վերին հովիտ) և Կուսախա (վերին Եփրատի ողջ ավազանը) երկրները պետք է Ազիի հետ միասնաբար ենթակա լինեն Խատի երկրին:

Ավելին, տեքստից ակնհայտ է դառնում, որ նշված նահանգների բնակիչներն Աիսիայի ցեղակիցներն են, այսինքն՝ խոսում են նույն լեզվով, իսկ դրանց առաջնորդները սերված են Դուկամայի արքունիքից, դրա առաջնորդի տոհմակիցներն են:

Այս տվյալներից պարզվում է նաև, որ Հայասայի թագավորանիստ քաղաքը Դուկաման է, որի անունը խեթերի կողմից տեղի որևէ բնակավայրի անվան թարգմանություն է:

Դուկամա անունը, ինչպես ուսումնասիրությունները պարզել են, կազմված է խեթերենի dukk-«տեսանելի լինել» արմատից և -amar բայահիմքից գոյական կազմող ածանցից ու նշանակում է «տեսանելի տեղում գտնվող» (Ջահուկյան, 1987, էջ 92, 335):

Կարծում ենք՝ Դուկաման ճորոխի հարավային վտակ Թորթունի ավազանի միջնադարի հայկական Հայ բնակավայրն է, որը գտնվել է Սպերից քիչ դեպի հարավ-արևելք: Այն կազմված է հին հայերենի հայ-«նայիլ» արմատից, որն առկա է հայ-իլ՝ «նայիլ, դիտել» և մի շարք այլ բառերում: Հայ բնակավայրի անունը նույնպես նշանակում է «բարձր, տեսանելի տեղում գտնվող», որը և հաստատում է Դուկամայի հետ դրա նույնությունը:

Հայ արմատն այդ իմաստով հանդիպում է Բաբերդի Հայեք (-եք ածանցով), Սասունի Հայթաղ (թաղ բառի հետ), Տարոնի Հայկերտ (-կերտ ածանցով), Ծովքի Հայնի (-նի մասնիկով), Դերսիմի Հայնի, Բալուի Հայնի, Ալաշկերտի Հայք, Խնուսի Հայք և շատ այլ տեղանուններում:

Ուրեմն այս Հայ քաղաքի անունը տարածվել է ինչպես Ազիի, այնպես էլ Վերին Եփրատի, Արածանիի ավազանների վերոհիշյալ երկրների վրա սկզբից որպես պետության, որը խեթերը հիշատակում են Հայասա ձևով (այն ընկալվում է «հայկական») և ապա՝ որպես բնակիչների համար ընդհանուր անունով:

*Մանձանա* (<sup>URU</sup>Manzana): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Մանձանա բնակավայրը գտնվել է Իսուվա երկրում (Արածանիի ստորին ավազան, Քոսյան, էջ 72): Կարծում ենք, այն նշված տարածքի՝ հետագայի Չորրորդ Հայք նահանգի Շահունյաց Ծոփք գավառի Մանծկերտ քաղաքն է, որի անվան մեջ առկա է -կերտ բառածանցը:

Խեթերը Մանծ տեղանվան վրա ավելացրել են իրենց լեզվի -ana ածանցը:

Ի դեպ, խեթական սեպագրության մեջ ծ, ծ, գ, գ հնչյունները գրելու համար օգտագործվել է մեկ միջոց: Դա z ունեցող վանկերի նշաններն են:

Ծ և g հնչյունների հերթագայությունը հին հայկական տեղանունների համար խորթ երևույթ չէ: Բաթումի մարզի Մեծագիլ գյուղի անունը կա նաև Մեցագիր տարբերակով: Մուշի գավառի Մեծիկ բնակավայրը հանդիպում է նաև Մեցիկ ձևով, Սպերի շրջանի Մեծանցը՝ Մեցանց, Սևանա լճի արևմտյան կողմի Մեծեփ լեռան անունը՝ Մեցեփ:

Նկատի ունենալով նշված հնչյունական օրինաչափությունը՝ մենք Մանծկերտ տեղանվան մեջ տեսնում ենք հին հայերենի *ման* «պտույտ, ոլորք, գալար» արմատը՝ հոգնակի թվի սեռական հոլովի -g ցուցիչով:

Այդ բառը հանդիպում է Երզնկայի գավառի Մանք (-ք ածանցով), Երզրումի Մանս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով) և Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Մանկերտ հին տեղանուններում: Մանծկերտ տեղանունը հուշում է, որ բնակավայրը ընդգրկել է գետի մի քանի ոլորաններ:

*Մարարխա* (<sup>URU</sup>Mararḫa): Խատի երկրի արքա Արնուվանդաս 3-րդի և Ազիի (Ճորոխի ավազան) առաջնորդ Աիսիայի միջև կնքված խեթերեն լեզվով դաշնագրում Մարարխան հիշատակված է Իսուվա, Պախուվա, Կումախա և Ծուխմա նահանգների բնակավայրերի անունների ընդհանրական ցուցակում (Խաչատրյան, էջ 88):

Կարծում ենք, Մարարխա տեղանվան մեջ առկա է հին հայերենի մար «տեր» արմատը, որի վրա խեթերը ավելացրել են arḫa «սահման, տարածք» բառը:

Այն մենք տեսնում ենք Բիթլիսի գավառի Մար, Ղափանի շրջանի Մարակերտ, Գորիսի Մարածոր, նույն տեղի Մարադուզ (ճիշտ ձևը Մարատուս է, որի մեջ կա տու «պարզև, նվեր» բառը) և Սասունի Մարաթուք (վանք, պետք է լինի Մարատուք) հին տեղանուններում:

*Մեծարի* (<sup>URU</sup>Mezzari): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Մեծարի բնակավայրը գտնվել է Իսուվա (հայկ. Ծոփք) երկրում (Քոսյան, էջ 73): Նշված վավերագրերում z-ն ներկայացնում է խեթերենի *ṣ* բաղաձայնը: Սակայն այն օտար բառերը կամ հատուկ անունները, որոնք հանդիպում են այդ տեքստերում և ունեն *q*, *ḫ*, կամ *ṣ* բաղաձայն, նույնպես պետք է գրվեին *z* ունեցող վանկերի նշանների օգնությամբ, քանի որ վերջիններիս համար այլ միջոց չկար:

Մեծարին, կարծում ենք, տեղով և անունով Ղերսիմի շրջանի Մեծկերտ գավառի համանուն կենտրոնն է: Այդ տարածքը մ.թ.ա. 14-13-րդ դարերում մտնում էր Իսուվա երկրի կազմի մեջ:

Մեծարի տեղանունը կազմված է հայերենի *հ.-ե. մեծ* «մեծ, զորեղ, իշխանավոր, հարուստ» և *արի* «քաջ» արմատներից ու նշանակում է «քաջ իշխանավոր»:

Մեծ բառն առկա է Մուշի շրջանի Մեծ (Մեծիկ), Սպերի Մեծէգրեկ (*ազարակ* բառի հետ), Տաուշի Մեծ գյուղ և այլ հին բնակավայրերի անուններում:

*Նիխիրիյա* (<sup>URU</sup>Nihirija): Խեթական թագավոր Սուպիլուլիումաս 2-րդին վերաբերող մի սեպագիր արձանագրության մեջ հաղորդում կան այն մասին, որ նա իր «ղեկավարությունը» Նիխիրիյա քաղաքում չէր վերացրել: Սակայն թշնամին (Ատրեստանը) եկել էր ու իր զորքի դեմ կռվել խուրիական երկրների համար (IV, 14, II, 7-11, III, 34-35):

Տվյալ վավերագրում հիշատակված է նաև Արևելյան Խաբուրի ակունքների շրջանի Մեիրի երկիրը (H. Арутюнян, 1985, էջ 143-144):

Այս տվյալները հուշում են, թե Նիխիրիա քաղաքը գտնվել է Վերին Տիգրիսի արևմտյան ավազանում:

Վանի թագավոր Սարդուրի 2-րդի տարեգրության մեջ այն հիշատակված է Նիխիրիանի ձևով՝ որպես Արմե (ուշ Սասուն) երկրի թագավորանիստ քաղաք (H. Арутюнян, 2010, N 242): Բ. Պիտրովսկին իրավացիորեն այն նույնացնում է Սասունի հետագայի Նփրկերտ քաղաքի հետ (Пиотровский, էջ 76):

Ի. Ղյակոնովը գտնում է, որ տվյալ նույնացումը տեղագրությամբ հնարավոր է, իսկ լեզվաբանորեն դժվար է հաստատել (Дьяконов, 1968, էջ 227, ժան. 96):

Նփրկերտը միջնադարում կոչվել է նաև Նֆրկերտ:

Հարկ է նշել, որ այժմյան Ուրֆա քաղաքը հայտնի է նաև Ուռհա անունով: Վերջինիս հ-ն փոխարինված է ֆ-ով, որը միջնադարում է մուտք գործել հայերենում: Հին շրջանի շատ լեզուներում այն բացակայում էր: Ուստի, կարծում ենք, Նիխիրիյանին, որի մեջ առկա է հ, այն կարող էր հետագայում դառնալ ֆ և ապա՝ փ:

Նփրկերտ հետագայի տեղանունը հուշում է, թե Nihirija-ի տարբերակում առանձնանում է խեթերենի –i(ja) ածանցը, իսկ Nihiriani-ի մեջ՝ ուրարտների ավելացրած –ni ածականակերտ մասնիկը:

Վերջինիս երկրորդ i ծայնավորը սեպագրության արդյունք է. դպիրները հաճախ երկու բաղաձայն հնչյուններ իրար կողքի գրելիս դժվարացել են և թույլ են տվել ծայնավորի հավելում: Այդ երևույթը նկատվում է նաև խեթական վավերագրերում:

Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ մենք հավանական ենք համարում այդ տեղանվան մեջ տեսնել հին հայերենի պարսկերենից փոխառյալ *նիրի* «սակ» արմատը: Դրա *սակ* «տուրք» հոմանիշից է կազմված Շատախի Սակ բնակավայրի անունը: Այն գտնվել է այժմյան Բաղեշի հյուսիսից հարավ տանող ճանապարհին: Սականե անունով մի գյուղ է եղել Ամիդի շրջանում՝ դեպի Մծբին տանող ճանապարհի վրա, որի անվան մեջ առկա է նաև հայերենի -անի ածանցը՝ քիչ աղավաղված ձևով:

Ի դեպ, Նփրկերտը նույնպես ընկած է եղել Փոքր Ասիայից դեպի Միջագետք տանող ճանապարհի վրա:

*Շամուխա* (<sup>URU</sup>Šamuḫa): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Շամուխա բնակավայրը գտնվել է «Բարձր երկրի» (Բարձր Հայք) կազմում և սահմանակից է եղել Խատի երկրին (Քոսյան, էջ 62-67):

Հ. Մանանդյանը այն նույնացնում է Եփրատի ոլորանից քիչ դեպի հյուսիս գտնվող ժամանակակից Չեմուխ գյուղի հետ (Մանանդյան, 1977, էջ 496): Գ. Ղափանցյանը Շամուխա տեղանվան մեջ առանձնացնում է *շամ* «եղեգ» բառը (Капанцян, 1948, էջ 52):

Կարծում ենք՝ բացի նշված արմատից տվյալ տեղանունը իր մեջ ունի նաև հին հայերենի *ուղիս* «առատ հոսող ջուր, հեղեղատ» բառի ուխ տարբերակը և նշանակում է «բնակավայր, որը գտնվում է շամբերով հարուստ հեղեղատի մոտ»:

*Շամ*- արմատը հանդիպում է Դիարբեքիի Շամ, Կոզովիտի Շամ, Վանի շրջանի Շամանց (-անք ածանցով), Թումանյանի շրջանի Շամուտ (-ուտ մասնիկով) և Սիսիանի շրջանի Շամախի (աղխ, ախ «բազում» բառի հետ) հին գյուղերի անուններում:

*Շինուվա* (<sup>URU</sup>Šinuwa): Խեթական սեպագիր տեքստերի հաղորդումների համաձայն՝ Շինուվա բնակավայրը գտնվել է Իսուվա երկրում (հայկ. Ծովք, Քոսյան, էջ 91):

Այդ տեղանունը հիշեցնում է Վանի նահանգի Հեքյարի գավառի Շինուծոր (-ու հոդակապով, *ծոր* բառի հետ), Սյունիքի Սողքի շրջանի Շինք (-ք մասնիկով), Թումանյանի շրջանի Շնող (\*Շենհող անունից), Երևանի Շինի (-ի ածանցով), Բիթլիսի Շեն և Սասունի Շեն հին գյուղերի անունները, որոնց մեջ առկա է պարսկերենից փոխառյալ *շէն* «շինվածք, շինություն» արմատը:

Կարծում ենք՝ Շինուվա տեղանվան մեջ նույնպես գործ ունենք այդ նույն *շէն* (շին) բառի հետ, որի վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի -*uwa(r)* գոյականակերտ ածանցը:

Հավանաբար, Շինուվան տեղով և անունով նույնական է այդ տարածքի՝ հետագայի Խարբերդի նահանգի Խոզաթ գավառի Շեն բնակավայրի հետ:

Ի դեպ, խեթական սեպագրերում *s* պարունակող վանկերի նշաններ չկան: Դրա փոխարեն ասուրականից վերցված են միայն *š* ունեցող վանկերի սեպանշանները: Ինչպես կարծում են ուսումնասիրողները, դրանք բոլորը խեթերենում ներկայացնում են *s* բաղաձայնը: Սակայն դա չի նշանակում, թե օտար այն տեղանունները, որոնք ունեն այդ հնչյունը, չէին կարող ներկայացվել *š* ունեցող վանկերի նշանների օգնությամբ:

*Շուլամա* (<sup>URU</sup>Šullama): Խեթական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Շուլամա բնակավայրը գտնվել է Իսուվա երկրում: Այն, կարծում ենք, նշված տարածքի հետագայի Բալուի շրջանի Սղամ գյուղն է (Хачатрян, էջ 37):

Ավելին, քանի որ սեպագրերում ը ձայնավոր գրելու միջոց չի եղել, այդ հնչյունն ունեցող հայկական տեղանունը խեթական դպիրները միայն կարող էին գրի առնել *ս(ու)* կամ *ի(ի)* պարունակող վանկանշանների օգնությամբ: Ուստի Սղամ տեղանվան լսվող, բայց չգրվող *ը*-ն նրանք ներկայացրել են *ս(ու)* ձևով:

Սղամ տեղանունը կազմված է հին հայերենի *սող* «սղացող» և *ամ*-«լի» (հմմ. *ամայ*՝ «լցնել») արմատներից ու նշանակում է «սողացող հողերով լի տարածք»:

Սող բառը *ս(ը)ղ* ձևով մենք տեսնում ենք Ղարաբաղի շրջանի Սղան (-ան ածանցով), Տաթևի վանքից 3-4 կմ հարավ-արևմուտքի Սղանց (հոգնակի սեռական հոլովի -ց ցուցիչով), Բիթլիսի նահանգի Սղերդ (Սղկերտ ձևից կ-ի անկումով) և Վանի Հեքյարի գավառի Սղուտ (-ուտ մասնիկով) հին տեղանուններում: Այն մատնանշում է այդ բնակավայրերի մոտ սողանքների առկայության մասին:

*Պալիսնա* (<sup>URU</sup>Pališna): Այս բնակավայրը գտնվել է Իսուվա երկրում (հայկ. Ծոփք) և տեղով ու անունով համընկնում է նույն տարածքի հետագայի հայկական Պաղնատուն գավառի Պաղին քաղաքի հետ (Xачатրян, էջ 111-112 և ծան. 264): Խեթերը վերջինիս -ին ածանցը փոխարինել են իրենց լեզվի -isar մասնիկով, որը բառերի տրական-տեղական հոլովածնում դառնում է -isna:

Հին հայերենում լ հնչյուն ունեցող որոշ բառեր հանդիպում են նաև դ տարբերակով (հմմտ. բալ «մեզ, մշուշ, մառախուղ» և բաղաձև «մշուշի նման», *գիլ* «գլորվիլ» և *գիղ* «գլորվիլ», *դուլ* «դադար, հանգիստ» և *դղայ* «հանգիստ առնել, դադարիլ», ել «ներսից դուրս գալ», որից՝ ելուզակ, նաև եղուզակ, ելունդ՝ «պտույտ, ուռուցք» և եղունդ՝ նույն իմաստով: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Պաղին (Պալան) տեղանվան մեջ առանձնացնում ենք *պայ* «քարաժայռ» արմատը, որը հանդիպում է Գորիսի շրջանի Պալա (-ա ածանցով), Արդահանի Պալս, Դերսիմի Պալաշար (շար բառի հետ) և այլ տեղանուններում:

*Պախուվա* (KUR<sup>URU</sup>Pahhūwa): Հայասայի Պախուվա նահանգը ընդգրկել է Ծոփքի, Բարձր Հայքի և Սրմանց լեռների միջև ընկած տարածքը: Դրա կենտրոնը կոչվել է այդ նույն անունով (Xачатրян, էջ 116-117):

Վերջինս նույնական է Դերսիմի արևելյան հատվածի ժամանակակից Պախ բնակավայրի հետ, որը միջնադարի Պահարկան գյուղն է: Այն իր մեջ ունի հին հայերենի պարսկերենից փոխառյալ *պահ* «պահպանություն» և *արկ* «արկանել, ձգել» արմատները (վերջինս -ան ածանցով է): Խեթերը -արկան բաղադրիչը փոխարինել են իրենց լեզվի -sua(r) բայարմատներից գոյականներ կազմող մասնիկով:

Այդ *պահ* բառն առկա է Կամախ գավառակի Պահաձոր (-ա-հո-դակապով, *ծոր* բառի հետ), Վանի նահանգի Հեքյարի գավառի Պահանիս (-անի ածանցով և հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), նույնի Խոշաբի շրջանի Պահանց (-անք ածանցով և -ց հոգնակի սեռական հոլովի վերջավորությամբ), Գեղարքունիքի Պահավանք (-վանք բառի հետ) և Սյունիքի Բաղք-Աճանան գավառի Պահու (-ումասնիկով) հին տեղանուններում:

*Պարայա* (<sup>URU</sup>Parraja): Պարայան Հայասա երկրի պաշտամունքալին կենտրոններից մեկն է եղել, որի տեղը անորոշ է (Քոսյան, էջ 78):

Գ. Զահուկյանը այդ տեղանվան մեջ տեսնում է խեթերենի *para* «առաջ, դուրս, հեռու» բառը և նույն լեզվի -ja ածանցը (Джайкян, 1964, էջ 59-60):

Նկատի ունենալով, որ Հայասա երկիրը բնակեցված է եղել հին հայերով՝ մենք կարծում ենք, Պարայա տեղանվան մեջ առկա է հին հայերենի *պար* «շուրջ, շրջան» արմատը սեռական հոլովի -ա ցուցիչով, որի վրա էլ խեթերը ավելացրել են իրենց լեզվի -ja մասնիկը:

*Պար* բառը հանդիպում է Վանի շրջանի Պար, Ուրմիայի գավառի Պար, Ղերսիմի Պարատր հին բնակավայրերի անուններում ու հուշում է, թե գյուղերը շրջանաձև դիրք են ունեցել: Կարծում ենք՝ Պարայան տեղով և անունով համընկնում է Էրզրումի շրջանի հին Պար գյուղի հետ:

*Տախիսա* (<sup>URU</sup>Tahhisa): Խեթական թագավոր Արնուվանդաս 3-րդի և Ազիի Ղուկամա քաղաքի առաջնորդ Ախիյայի միջև կնքված դաշնագրում տրված է բնակավայրերի անունների մի ցուցակ, որը վերաբերում է Վերին Եփրատի և Արածանիի ավազանների երկրներին, որտեղ և հիշատակված է Տախիսան (Խաչատրյան, 1998, էջ 88):

Գոյություն ունի կարծիք, որի համաձայն Տախիսան նույն Ծոփքի Ղեգիք գավառի համանուն կենտրոնն է (Քոսյան, էջ 94): Սակայն այդպիսի համադրությունը հնչյունափոխության ոչ մի օրենքով չի հաստատվում:

Կարելի է ենթադրել, որ Տախիսա տեղանունը կազմված է հին հայերենի *դահ* «կարծրացած, դարթ, կոշտ» արմատից, որը հանդիպում է նաև *դախ* ձևով և -իք հոգնակիակերտ ածանցով: Այն հոգնակի թվի հայցական հոլովում դառնում է Տախիս: Այդ ձևով էլ խեթերը հիշատակել են:

*Տախ* բառը, որը դահ կամ դախ բառի մի տարբերակ է, հանդիպում է Վանի շրջանի Տախ, Սյունիքի Բաղք-Աճանան գավառի Տախ

և Դիարբեքիի նահանգի Տախիկ (-իկ ածանցով) հին բնակավայրերի անուններում, որը հուշում է, թե տվյալ գյուղերը հարուստ են եղել կոշտ հողերով: Դրա հոմանիշ կոշտ արմատից են կազմված Բիթլիսի գավառի Կոշտյան (-յան ածանցով) և Մուշի Կոշտյան պատմական տեղանունները:

Վերը նշված տեղանունների ցուցակում հիշատակած է նաև Տախիսնա (<sup>URU</sup>Tahhišna) կոչված մեկ այլ բնակավայր, որի անվան մեջ բացի վերը նշված *տախ* արմատից և -իք ածանցից (հոգնակի հայցականում այն դառնում է -իս) առկա է հայերենի հ.-ե. -ն մասնիկը (հմմտ. «ակ» և «ակն», «եգ» և «եզն», «անծ» և «անծն», «ծիծառ» և «ծիծառն» և այլն, Ջահուկյան, 1987, էջ 238):

*Տամատա* (<sup>URU</sup>Tamatta): Տամատա բնակավայրը Հայաստ երկրի պաշտամունքային կենտրոններից մեկն է (Хачатрян, էջ 148):

Գ. Ջահուկյանն այդ տեղանվան մեջ առանձնացնում է խեթերենի -ta ածանցը, իսկ Տամա բաղադրիչը համեմատում է հիերոգլիֆներով ավանդված այդ լեզվի tama(°)ha «ես կառուցեցի» հիմքի հետ (Джаукян, 1967, էջ 75):

Կարծում ենք՝ Տամատա տեղանունը իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *տամուկ* «խոնավ» բառի տամ- արմատը: Հ. Աճառյանը դրանում -ուկ բաղադրիչը դիտում է որպես ածանց: Նշված *տամ*-բառը հանդիպում է Պարսկահայաստանի Տամբեր գավառի անվան մեջ, որը բեր արմատի հետ նշանակում է «խոնավաբեր»: Խարբերդի գավառի Տամիթաղ (սեռական հոլովի -ի ցուցիչով և թաղ բառի հետ), Կարսի մարզի Օլթիի շրջանի Տամուրդ (-ուրդ ածանցով) հին գյուղերի անունները նույնպես իրենց հիմքում ունեն այդ արմատը, որը հուշում է տեղանքի խոնավ լինելու մասին: Այդ առիթով հիշենք Վանի Կարկառ գավառի Թացու բնակավայրի անունը:

Հավանաբար, Տամատան տեղով և անունով կարելի է նույնացնել վերը նշված Օլթիի Տամուրդ բնակավայրի հետ, որի անվան -ուրդ ածանցը խեթերը փոխարինել են իրենց լեզվի -ata(r) գոյականակերտ ածանցով: Ի դեպ նշված տարածքը գտնվել է Հայաստաի կենտրոնական Ազի նահանգի կազմում:

*Տիմինա* (<sup>URU</sup>Timina, <sup>URU</sup>Timana): Այս բնակավայրը գտնվել է Երզնկայի շրջանում, որը նույն տեղի Ճիմին (Ժմկ. Ջիմին) գյուղն է (Хачатрян, էջ 86-87):

Ասուրական և խեթական սեպագրության մեջ ճ գրելու սեպանշան չի եղել: Ուստի օտար բառի այդ հնչյունը պետք է արտացոլվեր t պարունակող վանկանշանների օգնությամբ:

Տիմինա տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի հին հայերենի *ճիմ* «հողի գուլձ» (բարբառային *ճիմ, ճումմ*) արմատը և -ին ածականակերտ ածանցը:

Հ. Աճառյանը *ճիմ* բառը համարում է փոխառություն չաղաթայերենի շիմ «գուլձ» ձևից: Ղա համոզիչ է, քանի որ նշված լեզվի կրողները ոչ մ.թ. 5-րդ և ոչ էլ մ.թ.ա. 14-րդ դարերում ոչ մի առնչություն չեն ունեցել Հայկական լեռնաշխարհի և հայերի հետ, որպեսզի վերջիններս նրանցից վերցնեին այն:

Ավելի ճիշտ կլինի մտածել, որ հին հայերենի *ճիմ* արմատը ծագումնաբանական ընդհանրություն ունի չաղաթայերենի համապատասխան բառի հետ:

*Ճիմ* արմատը կրկնված է Կիլիկիայի Ճիմճիմ գյուղի անվան մեջ: Այն *ճում* ձևով հանդիպում է Բիթլիսի գավառի Ճում և Աղանայի շրջանի Ճում հին բնակավայրերի անուններում: Նշված բոլոր բնակավայրերը այդպես կոչվել են տեղում ճիմուտ հողերի առկայության պատճառով:

*Ուրա* (<sup>URU</sup>Ura): Տվյալ բնակավայրը գտնվել է Բաբերդի շրջանում: Այն տեղի հին հայկական Ուռեն գյուղն է (Хахатрян, էջ 129-132):

Խեթերը սեպագրերում չունենալով *n* հնչյուն գրելու հնարավորություն, այն ներկայացրել են Ուրա ձևով՝ բաց թողնելով հին հայերենի -են ածանցը:

Ուռենը իր կազմի մեջ ունի նշված լեզվի *ուռ* «ձյուղ, ընծյուղ, ուռի» բառը, որը հանդիպում է Վանի գավառի Ուռի (-ի ածանցով), Երզնկայի Ուռի, Դերսիմի Ուռի և այլ բազմաթիվ հին գյուղերի անուններում, որը վկայում է տեղում այդ տեսակի ծառերի առկայության մասին:

### 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. 12-ՐԴ ԴԱՐԻ ԱՍՈՒՐԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Մ.թ.ա 1113 թ. Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինը Հայկական Տավրոս լեռնաշղթայի արևմտյան հատվածի հարավային լանջերի Ալզի և Պուրուկուզի (Պուրուլումզին նախկին ընթերցումն է) երկրներ ներթափանցած թրակափռուզիական ցեղերին՝ 20 հազար մուշկերին կոտորելուց հետո մուտք է գործում լեռնաշխարհ, որտեղ կռվում է Նաիրիի 60 թագավորների միացյալ զորքի դեմ:

Նրա տարեգրության տվյալների համաձայն՝ Նաիրիի այդ երկրները զբաղեցնում էին թումե գավառից (հայկ. Թմնիս Եփրատի ձախ ափին՝ Մալաթիայից հյուսիս-արևելք) մինչև Դայաենի (Ճորոխի ավազան), Խաբխիից (այժմյան Արևելյան Տիգրիս գետի վերին ավազան) մինչև Վերին ծով (Սև ծով) տարածաշրջանը (Дьяконов, 1951, N11, N17 և 8, էջ 95-97):

Թիգլաթպալասարն այնտեղ նվաճել է 23 երկրներ: Դրանք են՝ Թումե, Թունուբե, Թուալի, Կի(ն)դարի, Ուզուլա, Ուիրամ, Շուրուրիա, Ունգամունի, Անդիաբե, Պաիտերի, Աթուրզինի, Կուլիբարզինի, Շինիբիրնի, Խիմուա, Պիլաքինի, Աբաենի, Ադաենի, Կիրինի, Ալբայա, Ուզինա, Նագաբիա, Աբարսինի և Դայաենի (Дьяконов, 1951, N10):

Այդ գավառները, դատելով նրա արշավանքի անցած ուղուց, գտնվել են Արածանիի և Ճորոխի ավազաններում, Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած տարածաշրջանում:

Ասորեստանի տիրակալը հիշատակում է նաև Նաիրի երկրների 16 լեռնաշղթաներ: Դրանք են՝ Էլամա, Ամադանա, Էլխիշ, Շերաբելի, Թարխունա, Թիրկախուլի, Կիգրա, Թարխանաբե, Էլուլա, Խաշտարաե, Շախիշարա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանգի, Նուբանաշե և Շեշե (Дьяконов, 1951, N10):

Այստեղ մենք անդրադառնում ենք այդ գավառների և լեռնաշղթաների անունների տեղագրության և ստուգաբանության հարցերին:

#### Նաիրի երկրների անունները

Ի.Դյակոնովի կարծիքով՝ Նաիրիի գավառների և լեռնաշղթաների անունները խորիքեն են: Հեղինակը այդ եզրակացությանը հան-

գում է՝ հենվելով այն կարծեցյալ փաստերի վրա, որոնց համաձայն՝ դրանցից Աթուրգինի, Կուլիբարգինի, Աբաենի և Ադաենի տեղանուններում, իբր, առկա է խուրիերենի -ոն անջը (Дьяконов, 1968, էջ 125): Ի դեպ, նշված տեղանուններում առկա են հին հայերենի -ին և -ենի անջնները (Ջահուկյան, 1998, էջ 23, 26): Իսկ դրանք ներկայացնում են հին հայերենի արմատներով կազմված տեղանուններ (տես համապատասխան գլխաբառերը):

*Աբաենի* (<sup>KUR</sup>Abaeni): Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինի մ.թ.ա. 1113 թ. Հայկական լեռնաշխարհում նվաճած Նաիրի 23 երկրների շարքում հիշատակված է Աբաենին (Арутюнян, 1985, էջ 8):

Ի դեպ, ba նշանը սեպագրերում ընթերցվում է նաև pà (Labat, էջ 43):

Այդ տեղանունը հիշեցնում է Ախալցխայի Ապ, Նիզ գավառի (Ապարանի շրջան) Ապնագեղ (կա նաև Աբնագեղ, որում առկա է -ն անջը), Քղիի Ափեվանք (առկա է նաև Ապեվանք ձևը վանք բառի հետ) և այլ հին գյուղերի անունները:

Հավանաբար, Աբաենի տեղանունը վերը թվարկվածների նման իր կազմի մեջ ունի հին հայերենի *ափն* «որևէ տեղի ծայր, եզր» արմատի աբ տարբերակը, հին -ն անջնով (Ջահուկյան, 1987, էջ 238): Դրա վրա -ա- հոդակապով ավելացված է -ենի անջանակերտ անջնը (հմմտ. մայրենի, հայրենի, այծենի):

Հին հայերենում գոյություն է ունեցել բ, պ, փ հնչյունների հերթագայություն (Ջահուկյան, 1998, էջ 252): Դա ակնհայտ երևում է նաև վերը բերված տեղանուններում:

Ափ (ապ) բառով կազմված բնակավայրերի անունները հուշում են այն մասին, որ դրանք գտնվել են ծորի կամ գետի եզրին:

Կարծում ենք՝ Աբաենի երկիրը իր տարածքով և անունով նույնական է Վանա լճի արևմտյան ափին առընթեր Աբդաղ բնակավայրի ու իր շրջանի հետ: Վերջինիս մեջ առկա է թուրքերենի դաղ «սար, լեռ» բառը: Այդպես նրանք կոչել են նաև կողքի լեռը:

*Աբարսիունի* (<sup>KUR</sup>Abarsiuni): Հիշատակված է Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինի տարեգրության մեջ որպես Նաիրի 23 երկրներից մեկը: Հետազոտողները նկատի ունենալով, որ դրանց անունների ցուցակում Աբարսիունին անմիջապես նախորդում է Դայաննիին (Ճորոխի ավազան), գտնում են, որ այն ընկած է եղել վերջինից անմիջապես հարավ (Арутюнян, 1985, էջ 7):

Կարծում ենք, Աբարսիունին նշված տարածքի ժամանակակից Օլթիի շրջանի հին Ավարես գյուղն է, որի անունով էլ կոչվել է այդ գավառը:

Ի դեպ, ասորեստանցիների և հայերի զբաղեցրած տարածքների միջև՝ հյուսիսային Միջագետքում ապրում էին խուրիները: Առաջինները հաճախ նրանց միջոցով էին տեղեկանում Հայաստանի մասին: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ Աբարսիունի տեղանունը ասորեստանցիները արտասանել են խուրիների հորջորջումով: Նրանց լեզվում ուրարտերենի նման վ բաղաձայն չկա: Ուստի նրանք օտար անվան այդ հնչյունը փոխարինել են բ-ով՝ վերջից ավելացնելով իրենց լեզվի -ունի ածանցը, որի հետևանքով ե ծայնավորը սղվել է: Ավարես տեղանունը հիշեցնում է Ակնի շրջանի Ավարիկ (-իկ մասնիկով), Վանի նահանգի Մոկսի գավառի Ավարիկ, Վանի շրջանի Ավար, Սյունիքի Ավարիկ և այլ հին բնակավայրերի անուններ, որոնցում առանձնանում է հին հայերենի *ավարիկ* բառը, որը նշանակում էր «երեք տարեկան գոմեշ», և առանց -իկ ածանցի «գոմեշ» իմաստով առկա է նշված տեղանուններում: Հիշենք Կողբի շրջանի Գոմշավան (*ավան* բառի հետ), Փոքր Հայքի Գոմշատուն (*տուն* արմատով) և Արագածոտնի շրջանի Գոմշուտ (-ուտ ածանցով) հին հայկական գյուղերի անունները, որոնք այդ բառերով են կազմված:

*Ադաենի* (<sup>KUR</sup>Adaeni): Նաիրիի 23 երկրներից մեկն է՝ հիշատակված Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 1-ինի տարեգրության մեջ (Арютюнян, 1985, էջ 12):

Ադաենի տեղանունը կարելի է համեմատել Ղերսիմի շրջանի Ադա (-ա ածանցով, հիշատակված է նաև Ատա ձևով), Որմյա երկրի (Պարսկահայք) Ադա (կա նաև դրա Ատա տարբերակը), Սղերդի գավառի Ադել (այն հանդիպում է նաև Ատիլ հորջորջմամբ, որի մեջ մենք ունենք -իլ մասնիկը) հին բնակավայրերի անունների հետ:

Դրանք, կարծում ենք, կազմված են հին հայերենի *հատ* «կտրել, հատված, կտոր» արմատի *ատ* տարբերակից, որը բարբառներում հանդիպում է ադ և հադ ձևերով:

Ադաենի տեղանունն իր մեջ ունի նշված *հատ* բառի *ադ* տարբերակը, -ա և -ենի ածանցները (Ջահուկյանը, 1998, էջ 23) ու նշանակում է «կտրտված տարածք ունեցող բնակավայր»: Հնարավոր է նաև, որ Ադաենի տեղանունը Ատաենի հնչեր, քանի որ սեպագրերում da նշանը ընթերցվել է նաև ղa, tá (Labat, էջ 155):

*Աթուրգինի* (<sup>KUR</sup>Aturgini): Նաիրիի 23 երկրներից է: Աթուրգինի տեղանունը կարելի է համեմատել նշված երկրի Սալմանասար 3-րդ թագավորի մ.թ.ա. 856 թ. արշավանքի կապակցությամբ վկայված Աղուրու լեռան անվան հետ: Վերջինս գտնվել է Վանա լճին հյուսիս-արևելքից առընթեր Արճեշի տարածաշրջանում (Арутюнян, 1985, էջ 12):

Եթե նկատի ունենանք հին հայկական լեզվի մեջ և տեղանուններում դ, տ, թ հնչյունների հերթագայությունը (հմմ. Ադա, որ է Ատա, Ադիլ՝ Ատիլ, տես Ադաենի) և ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպող հնչյունական j>g անցումը (հմմ. Ijani երկրի անունը, որը վկայված է նաև Iğani ձևով), ապա հնարավոր է, որ Աղուրու լեռան անունը հանդես գար Աթուրգինի ձևով՝ հին հայերենի -ին ածանցի հավելմամբ (Զահուկյան, 1998, էջ 26) որպես գավառի անուն:

Կարծում ենք՝ նշված տեղի (Արճեշի շրջան) բնակիչներն աթուրի նմանվող իրենց լեռը կոչել են Աղուրու (ի դեպ, ուրարտական սեպագրերում ր և ռ հնչյունները հանդես են գալիս մեկ r գրությամբ): Այդպես են առաջացել Երզնկայի Աթուր Անահտա լեռան և Իջևանի Աթուրիկ ձորի անունները:

*Ալբայա* (<sup>KUR</sup>Albaja): Նաիրիի 23 երկրներից Ալբայան, կարծում ենք, Մուշի շրջանն է, որը այդպես կոչվել է այդ տարածքի Աղբանիս բնակավայրի անունով: Վերջինիս մեջ առկա է -անի ածանցը: Այն քննարկվող տեղանվան մեջ հանդիպում է հին հայերենի -ա ածանցով:

Ալբայան իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *աղբ*՝ «գոմաղբ» արմատը (բարբառներում «պարարտություն»), որը հանդիպում է Սասունի Աղբի (-ի մասնիկով), Բաբերդի շրջանի Աղբանոց (-ան և -ոց վերջավորություններով), Վասպուրականի Աղբակ (-ակ) և այլ հին տեղանուններում և հուշում է, թե այդ տեղերում հողը գոմաղբի նման հարուստ է:

*Անդիաբե* (<sup>KUR</sup>Andiabe): Ն.Ադոնցը Նաիրիի 23 երկրներից մեկը՝ Անդիաբեն նույնացնում է Բագավանի և Մանազկերտի միջև Հռոմեական ճանապարհացույցում նշված Անտեբա բնակավայրի և դրա շրջանի հետ (Ադոնց, 1972, էջ 350):

Սեպագրերում di նշանն ընթերցվում է նաև ʿi (Labat, էջ 205):

Այն միջնադարյան Այնթափն է իր հարակից տարածքներով, որի անունը իր մեջ ունի հին հայերենի *այն* «ակն, ակունք» և *թափ* «հատակ, խորք» արմատները և հուշում է տեղում ջրի խոր ակունքի

կամ ջրհորների առկայության մասին (հմմտ. Ջահուկյան, 1998, էջ 157): Այնթափ անունով մի գյուղ գտնվել է Կիլիկիայում: Երևանի մոտի Այնթափ բնակավայրը գաղթած հայերն են կոչել իրենց հին գյուղի անունով:

*Ղայանի* (<sup>KUR</sup>Dajani, <sup>KUR</sup><sup>URU</sup>Dajaeni): Նաիրիի 23 երկրներից Ղայանին ուսումնասիրողները տեղադրում են Ճորոխի ավազանում և նույնացնում հետագայի հայկական Տայք նահանգի հետ (Арютюнян, 1985, էջ 70-71):

Խեթական մ.թ.ա. 14-13-րդ դդ. սեպագիր տեքստերում այդ տարածաշրջանը հիշատակված է Ազի անունով: Հավանական է, որ այն կոչվել է իր կենտրոնի՝ հետագայի Ազորդի անունով: Կարծում ենք՝ մ.թ.ա. 12-րդ դ. վերջերից այդ վարչաքաղաքական միավորը, որը ասուրական սեպագիր աղբյուրներում սկսում է հիշատակվել Ղայանի անունով, այդպես կոչվել է իր մեկ այլ գերիշխող կենտրոնի՝ հետագայի Տայոց քար բերդաքաղաքի անունով:

Ղայանի տեղանունը կարելի է համեմատել Կոզովիտի Ղայեար (-եար ածանցով, այն հանդիպում է նաև Ղահար, Ղահեր ձևերով), Կապանի շրջանի Ղախ, Սյունիքի Սյուս Բաղք գավառի Ղախն (-ն ածանցով, կա նաև դրա Տախն տարբերակը) հին բնակավայրերի անունների հետ:

Կարծում ենք՝ Ղայանին և վերոհիշյալ տեղանունները կազմված են հին հայերենի *ղահ* «կարծր, դարթ» արմատից, որը բարբառներում հանդիպում է դայ (Մուշ), դահ (Կարին, Ալաշկերտ), դախ (Երևան, Ջուղա), տախ (Վան, Սալմասար) և այլ տարբերակներով:

Ղայանի տեղանվան հիմքում ընկած է Տայոց քար ժայռի վրա կառուցված համանուն բերդի անունը, որտեղ և նստում էին այդ երկրի առաջնորդները: Այն իր կազմի մեջ ունի նաև հին հայերենի ածականակերտ -անի ածանցը (հմմտ. լեզու և լեզվանի, հով և հովանի, գեղ և գեղանի, պետք և պիտանի, Ջահուկյան, 1998, էջ 13) և նշանակում է «Տայոց քար բերդի երկիր»: Դրա *ղայ-* արմատը հուշում է այդ ժայռի կարծր լինելու մասին: Իսկ Ղայանի տարբերակում, կարծում ենք, առկա է հին հայերենի ածականակերտ -ենի ածանցը (հմմտ. հայրենի, մայրենի, արմավենի, այծենի, գայլենի և այլն, Ջահուկյան, 1998, էջ 23):

Հավանական է, որ ասուրական դպիրները դրա գրության մեջ թույլ են տվել -ա- ծայնավորի հավելում, որը բխում է սեպագրության դժվարություններից: Կարելի է կարծել նաև, որ -ae-ն ներկայացնում է -a- ծայնավորի քմայնացված ձևը:

Ղայանին ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված է Ղիաուխի ձևով (տես ս):

*Թուալի* (<sup>KUR</sup>Tuali): Նաիրիի 23 երկրներից Թուալին, կարծում ենք, Կաղզվանի շրջանի միջնադարյան Թուալ բնակավայրն է իր շրջակա տարածքներով (Խաչատրյան, 1998, էջ 97):

Այն իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *թու* (թով) «կախարդություն» արմատը ու -ալի ածանցը և նշանակում է, թե այդ գավառը թովիչ բնություն ունի: Վասպուրական նահանգի Որսիրանքի շրջանում եղել է Թու անունով մի բնակավայր, որը վկայված է նաև թով ձևով: Թուալի գյուղը գտնվել է Պարսպատունիքում:

Այդ *թու* կամ *թով* (հին հայերենի թու) բառը մենք տեսնում ենք Սյունիքի Բաղք-Քաշունիք գավառի Թով, Խոտրջուրի շրջանի Թովիտ (-իտ մասնիկով) հին տեղանուններում:

*Թումե* (<sup>KUR</sup>Tumme): Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինը մ.թ.ա. 1113 թ. գործով անցնում է Եփրատ գետը և հայտնվում նաիրյան Թումե երկրում:

Ուսումնասիրողները պարզել են, որ այն համանուն Թմնիս բերդաքաղաքն է՝ Ծուխի Անծիթ գավառում, որը գտնվել է Եփրատ գետի ձախ ափին, հին կամրջի դիմաց (Խաչատրյան, էջ 95-97, հմմտ. Арутюнян, 1985, էջ 189):

Կարծում ենք, Թումե տեղանունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *թումբ*, «գետի առաջ շինված պատնեշ, թումբ» բառը առանց հին -բ ածանցի (հմմտ. շամ և շամբ «եղեգ», թամբ և թամբ «ծիու թամբ», շեղ և շեղբ և այլն):

Թում- արմատը հանդիպում է Կորձեք նահանգի Թմնիս (-նի ածանցով և հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով), Բիթլիսի Թում, Մուշի Թում, Վանի շրջանի Թում, Արցախի Հաղրութի շրջանի Թում հին գյուղերի անուններում:

*Թունուբե* (<sup>KUR</sup>Tunube): Ն. Ադոնցն այս գավառը տեղադրում է ժամանակակից Մաղենի լեռնանցքից քիչ հյուսիս՝ նույնացնելով Սալմանասար 3-րդի տարեգրության 15-րդ տարվա արշավանքի կապակցությամբ հիշատակված Թունիբունիի հետ: Վերջինիս մեջ նա առանձնացնում է -սու ածանցը (Ադոնց, 1972, էջ 60):

Կարծում ենք՝ Թունուբե տեղանվան մեջ առկա է հին հայերենի *թոն* «անձրև» արմատը գործիական հոլովի -ով վերջավորությամբ:

Սեպագրերում ո ծայնավոր գրելու միջոց չի եղել: Այդ հնչյունը դպիրները արտահայտել են ս(ու) պարունակող վանկերի օգնությամբ:

Իսկ վերջին *b* բաղաձայնը վկայում է, որ այդ տեղանունը ասորեստանցիները օգտագործել են խուրիների հորջորջմամբ: Նրանց լեզվում *v* հնչյուն չի եղել, դրա համար էլ այն օտար անուններում փոխարինվում էր *b*-ով: Ենթադրյալ \**Թոնով* ձևը դարձել է *Թունուբե*: Իսկ *Թունիբունի*ի մեջ առկա է *-ի* ածանցը, որից հետո ավելացված է խուրիերենի *-uni* ածանցը:

Թոն արմատով կազմված են *Վանի* գավառի *Թոնի* (*-ի* ածանցով), *Արաբկիրի* շրջանի *Թոնիս* (հոգնակի հայցական հոլովի *-u* ցուցիչով), *Փոքր Հայքի Թոնուկ* (*-ուկ* մասնիկով) և *Թոնուս* (*-ուք* վերջավորությամբ, անունը դրված է հոգնակի թվի հայցական հոլովով՝ *-u* ցուցիչով) և այլ հին բնակավայրերի անուններ:

*Խիմուվա* (KUR<sup>URU</sup> *Himuwa*): Խիմուվան Նաիրիի 23 երկրներից մեկն է, որը Ն. Վ. Հարությունյանը առաջարկում է որոնել Վերին Եփրատի հովտում, Իսուվայի և Թեգարամայի հարևանությամբ (Арютюнян, 1985, էջ 229): Խեթական սեպագիր տեքստերի տվյալներով՝ Խիմուվա երկիրը գտնվել է Խատիից հյուսիս-արևելք: Այն նշված տարածքի Կասիա երկրի (Գալլ գետի ակունքների շրջան), Կաստամայի հետ կապեր է ունեցել (Monte, էջ 109):

Թիզլաթպալասարն իր մեկ այլ արձանագրության մեջ որպես Նաիրի երկրների սահմաններ հիշատակում է ոչ միայն *Թունեից* մինչև *Դայանեի* և *Խաբիսի* (Արևելյան Տիգրիսի վերին հոսանքի հարավային ավազան), այլ նաև *Պաիտերի* և *Խիմուվա* գավառները (Дьяконов, 1951, N11):

Եթե նկատի ունենանք, որ *Պաիտերին* Հայկական պար լեռնաշղթայի միջին մասի Պայդերան գյուղն է իր շրջակա տարածքներով (Խաչատրյան, 1998, էջ 100), ապա դրա հակառակ՝ արևմտյան ծայրերում պետք է որոնել Խիմուվան, այսինքն՝ վերին Եփրատի հովտում: Վերջինս, թերևս, Երզնկայից 15 կմ դեպի հարավ-արևմուտք ընկած միջնադարյան Հիմսոր (\**Հիմծոր*) բնակավայրն է իր տարածաշրջանով:

Այն կազմված է հին հայերենի *հիմն* «հիմ, հիմք» (*-ն* ածանցով) և *ծոր* «ծոր, ցածր հովիտ» արմատներից ու նշանակում է «ծորի հովտում գտնվող»:

*Կիրինի* (<sup>KUR</sup>Kirini/u): Նաիրիի 23 երկրներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 111):

Որոշ ուսումնասիրողներ հակված են այդ գավառը նույնացնելու հայկական Կարինի (Ժմկ. Երզրում) և դրա շրջանի հետ (տես նույնը):

Սակայն այդ կարծիքի հետ դժվար է համաձայնել, քանի որ տվյալ տեղանվան *i* ձայնավորը հետագայում *a* դառնալ չէր կարող: Նման հնչյունափոխության մասին փաստեր չկան:

Կարծում ենք՝ Կիրինի գավառի անունը բաղկացած է սեմական լեզուներից փոխառյալ հին հայերենի *կիր* «կիր» արմատից և նույն լեզվի -ին ածանցից:

Այդ առիթով հիշենք Տավուշի շրջանի Կիրան (-ան ածանցով), Ելիզավետպոլի գավառի Կիրանց (-անք մասնիկով, որը դրված է հոգնակի սեռական հոլովածևով), Իջևանի Կիրանց, Ղափանի Կիրատեղ (տեղ բառի հետ), Խոյի Կիրատու (տու բառի հետ), Բիթլիսի Կիրիս (-իք վերջավորությամբ, այն հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով է), Սպերի Կիրիս, Վանի Կիրշեն (շեն բառի հետ) և Կոզովիտի Կիրիկ (-իկ ածանցով) հին տեղանուններում:

Կիրինին, որի մեջ առկա է հայերենի -ին ածանցը, Երզրումի Կիրիս բնակավայրն է իր շրջակայքով:

Այդ բոլոր տեղանունները հուշում են, որ դրանց տարածքներում կրի հանք կամ կրահողեր են եղել:

*Կուլիբարզինի* (<sup>KUR</sup>Kulibarzini): Կարծում ենք՝ Նաիրիի 23 երկրների շարքում հիշատակված Կուլիբարզինին հին հայկական Խործյանք գավառն է (հետագայի Քղիի շրջան), որի կենտրոնը կոչվել է Կողոբերդ (Խաչատրյան, 1998, էջ 97):

Կուլիբարզինի տեղանունը, թերևս, կազմված է հայերենի *հ.-ե. կող* «լանջ» և *բարծու* «բարծր» (-ու ածանցով) արմատներից ու -ին ածանցից: Երկրորդ բաղադրիչը հայկական տարբերակում փոխառինված է բերդ բառով (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 154):

Պետք է նկատի ունենալ, որ ասուրական սեպագրերում *ծ* հնչյուն գրելու միջոց չի եղել, այն արտահայտվել է *z* ունեցող վանկերի սեպանշանների օգնությամբ: Ավելին՝ դրանցում *n* գրելու հնարավորությունը նույնպես բացակայել է: Այդ ձայնավորը ներկայացված է *u* (ու) սեպանշանով:

Նշված բառերը մենք տեսնում ենք Տայքի Կող (գավառ), Բիթլիսի նահանգի Սղերդի շրջանի Կող, Այրարատի Կող, Երզրումի Կող,

Մուշի Բարձան (-ան ածանցով), Սասունի Բարձան (լեռ), նույնի խութ գավառի Բարձենք (-ենք մասնիկով) և այլ հին տեղանուններում:

Կուլիբարզինի տեղանունը նշանակում է «բարձր լեռան կողի վրա գտնվող բնակավայր»:

*Նազաբիա* (<sup>KUR</sup>Nazabia): Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինի տարեգրության համապատասխան բաժնում Նազաբիան հիշատակված է որպես Նաիրի 23 երկրներից մեկը (Дьяконов, 1951, N10):

Ն. Ադոնցը այն նույնացնում է Մանագլերտի և Արածանիի ակունքների միջև Պետինգերյան քարտեզում (4-րդ դար) նշված ճանապարհային Նասաբի կայանի ու նրա շրջանի հետ (Ադոնց, 1972, էջ 61, 350):

Նասաբի անունով մի հին հայկական գյուղ եղել է Ուրմիա լճից արևմուտք՝ Հեր գավառում:

Որոշ հայկական պատմական տեղանուններ, որոնք ունեն ս(s) հնչյունը, երբեմն հիշատակված են գ բաղաձայնով: Վայքի Մարատուս գյուղի անունը վկայված է Մարադուզ ծևով, Գեղարքունիքի մարզի Նորատուսը՝ Նորադուզ, Շարուր գավառի Աբխիան՝ Աբիզին տարբերակով:

Կարծում ենք՝ Նազաբիա տեղանունը իր կազմի մեջ ունի հին հայերենի *նասնակ* «այնպես» (հմմտ. տղանակ «տղայի պես», աղջնակ «աղջկա պես», խոսնակ «խոսող» և այլն, որոնցում առկա է -նակ ածանցը) բառի *նաս-* «այն» և *աին* «եզր» (-ն ածանցով) արմատներից ու ասորեստանցիների ավելացրած -ia(-ija) տեղ ցույց տվող ածանցից:

Հանդգվելու համար, որ այդ տեղանվան -աբ բաղադրիչը հին հայերենի ափ արմատն է, հիշենք Մեղրու շրջանի Ափկես գյուղի անունը, որը հանդիպում է նաև Աբկես, Նիգ գավառի Ափնագեղինը՝ Աբնագեղ տարբերակներով: Ախալցխայի Ապ բնակավայրը կոչվել է նաև Աբ և այլն:

Նազաբիա տեղանունը նշանակում է «ծորի կան գետի այն ափին գտնվող»:

*Նաիրի երկրներ* (KUR.KUR<sup>mes</sup>Nairi): Ասորեստանի տիրակալ Թուքուլթի-Նինուրթա 1-ինի մ.թ.ա. 1244 թ. Հայկական լեռնաշխարհում նվաճած Նաիրի երկրներն ընդգրկել են Հայկական Տավրոս լեռների, Վանա լճի, Եփրատ գետի և Սև ծովի միջև ընկած տարա-

ծաշրջանը: Նրա ժամանակակից Խատի երկրի թագավոր Թուդխա-լիաս IV-ը դրանք հիշատակում է Հայասա անունով (Խաչատրյան, 1998, էջ 81-83):

Ասորեստանի արքա Թիզլաթպալասար 1-ինը մ.թ.ա. 1113 թ. դե-պի հյուսիս ձեռնարկած արշավանքի կապակցությամբ իր տարե-գրության մեջ նշում է, որ Նաիրի երկրները գտնվում են Խաբիսից (Արևելյան Տիգրիսի հարավային ավազան) մինչև Մեծ (Սև) ծով, Թումեից (Թմնիս՝ Հայկական Տավրոսի ծայր արևմտյան փեշերին) մինչև Դայաենի (Տայք՝ Ճորոխի ավազանում) ներառյալ, Խիմուվա երկրից (Եփրատի ոլորանի շրջան) մինչև Պաիտերի (Հայկական պարի միջին շրջան) երկիր (նույնը, էջ 82-83, 95):

Նաիրին ասուրական դպիրների կողմից ստեղծված տեղանուն է: Ա.Դայմելի բառարանում շումերերենի NA<sub>4</sub> «քար, լեռ» և IR<sub>1</sub>, «բնա-կավայր» բառերի դիմաց համապատասխանաբար դրված են ասու-րերենի na-a և i-ri-i նույնիմաստ արմատները: Այսինքն՝ ասորես-տանցիները դրանք փոխ են առել շումերերենից, որոնցով էլ կազմ-ված է Նաիրի տեղանունը: Այն նշանակում է «լեռնային բնակա-վայր» կամ «լեռնաշխարհ» (նույնը, էջ 83): Կարծում ենք՝ վաղուց տարածում գտած այն ենթադրությունը, որի համաձայն Նաիրի տե-ղանունը կազմված է ասուրերեն nāru «գետ» բառից և նշանակում է «գետերի երկիր», չի կարելի հավանական համարել, քանի որ Աս-որեստանը և շատ այլ երկրներ հարուստ են եղել գետերով, սակայն այդ հանգամանքը հիմք չի դարձել դրանք կոչել *գետ* անունով:

Այդ տերմինը (ինչպես և հին հույն պատմիչների կողմից ստեղծ-ված Պարիադրեսը՝ «լեռներ» և այլ տեղանուններ), կիրառում չի գտել, այլ օգտագործվել է միայն ասուրական սեպագիր արձանա-գրություններում:

Նաիրի անունով ասորեստանցիները կոչել են ոչ միայն մ.թ.ա. 14-13-րդ դարերի Հայասա երկիրը, այլև հետագայի Խուբուշկիա (Վերին Տիգրիսի ավազան), Բիթ-Չամանի (Պիարբեքիրի շրջան), հյուսիսարևմտյան Իրանական սարահարթի երկրները և Ուրարտուն:

*Շինիբիրնի* (<sup>KUR</sup>Šinibirni): Ն. Ադոնցը նաիրյան Շինիբիրնի գավա-ռը նույնացնում է այժմյան Պալուից հյուսիս հին Շինիբրա բնակա-վայրի ու իր շրջանի հետ (Ադոնց, 1972, էջ 61):

Այդ տեղանունը, կարծում ենք, իր կազմի մեջ ունի հայերենի *շեն* «չինություն» և *բիր* «բիր, բրիչ» արմատները -ի- հոդակապով և -ն ածանցը (հմմտ. եզ և եզն, անծ և անծն, ակ և ակն, Ջահուկյան, 1987, էջ 238) ու նշանակում է «բրիչներով աշխատող շեն՝ գյուղ»:

Շեն բառը շատ է հանդիպում միջնադարի հայկական տեղանուններում: Բիր արմատը մենք տեսնում ենք Արարատի շրջանի Բիրալի (-ալի ածանցով), Արագածոտնի Բիրական (այժմ՝ Բյուրական), Բալուի գավառի Բիրան (-ան մասնիկով) և այլ հին տեղանուններում:

*Շուրուրիա* (<sup>KUR</sup>Šururia): Ն. Ադոնցը կարծում է, որ նաիրյան Շուրուրիա երկիրը Ծաղկանց լեռների փեշերից մեկի վրայի միջնադարի հայկական Շորեր գյուղն է իր շրջակա տարածքներով հանդերձ (Ադոնց, 1972, էջ 61):

Շուրուրիա տեղանվան մեջ առկա է հին հայերենի *շորոր* բառը՝ առաջացած *օրորայլ*՝ «երերալ, շարժուիլ» կրկնավոր արմատից (հմմտ. օր «շարժել»), որի վրա ասորեստանցիները ավելացրել են իրենց լեզվի -ia(ija) ածանցը:

Հայկական Շորեր տեղանունը, ինչպես ցույց է տալիս դրա հին Շուրուրիա տարբերակը, ժողովրդական ստուգաբանության արդյունք է:

*Շորոր*- բառը մատնանշում է, որ այդ գավառի համանուն կենտրոնի մոտ գոյություն է ունեցել ճահճուտ կամ հաճախ երկրաշարժ է եղել, որի պատճառով էլ այն այդպես է կոչվել: Այս առիթով հիշենք Քղիի գավառակի Օրոր, Վանի շրջանի Որոր, Արճեշի Օրորան (-ան ածանցով), հին բնակավայրերի և Արածանիի Օրոր վտակի անունները, որոնք իրենց կազմում ունեն նշված արմատը: Դրա ձոճել հոմանիշից է կազմված նախկին Թումանյանի շրջանի Ճոճկան (-կան ածանցով) գյուղի անունը:

*Պաիթերի* (<sup>KUR</sup>Paiteri/s): Պաիթերի նաիրյան երկիրը կարելի է նույնացնել 1912 թ. Կովկասյան ռուսական ռազմական շտաբի քարտեզում նշված Հայկական պար լեռների միջին մասի Պայդերան բնակավայրի և նրա շրջանի հետ (Խաչատրյան, 1998, էջ 96):

Դրա համար հիմք է ծառայում նաև այն փաստը, որի համաձայն Նաիրի երկրները մի կողմում սկսվում են Խիմուվա գավառից, իսկ դա վերին Եփրատի ոլորանի շրջանն է, իսկ հակադիր կողմում՝ արևելքում, վերջանում են Պաիթերի գավառով (Дьяконов, 1951, N11):

Կարծում ենք՝ Պաիթերի տեղանունը կազմված է հին հայերենի *պայթ* «ճաքիլ, տրաքվիլ» արմատից և -եր հոգնակիակերտ վերջավորությունից: Պայդերանի տարածքը հայտնի է Թոնդուրեք հրաբխային գագաթով, որի անունը թոնիր բառից է կազմված:

*Պիլաքինի* (<sup>KUR</sup>Pilaqini): Նաիրյան երկրներից մեկն է (Арютюнян, 1985, էջ 158-159):

Ն. Ադոնցը առաջարկում է նույնացնել Պտղոմեոսի քարտեզում (2-րդ դար) նշված Խարբերդի գավառի Βελχανια բնակավայրի և դրա շրջանի հետ (Ադոնց, 1987, էջ 44):

Հնչյունական անցումների տեսակետից, կարծում ենք, այս համադրությունը քննություն չի բռնում:

Պիլաքինին հիշեցնում է Երզնկայից 20 կմ. դեպի արևելք 1912 թ. ռուսական կովկասյան ռազմական շտաբի քարտեզում նշված Պիլակլի անունով բնակավայրը, որը հայկական գրավոր աղբյուրների Փիլաքին է: Դիարբեքիի շրջանում եղել է Փիլաքլի անունով ևս մի գյուղ: Դրանցում -լի բաղադրիչը թուրքերի կողմից ավելացված ածանց է:

Հ. Աճառյանը հին հայերենի *փիլաք* «երկինք, երկնականամր» բառը համարում է արաբերենից փոխառություն: Սակայն նշում է նաև, որ այդ արմատն առկա է ասուրերենում pilku ձևով, որը նշանակում է «շրջանակ, բոլորակ», որը ծագում է այդ նույն լեզվի palaku «ցանկապատ կամ սահման քաշել» բայի արմատից:

Նկատի ունենալով այն, որ Պիլաքինին հիշատակված է մ.թ.ա. 12-րդ դարի ասուրական սեպագիր աղբյուրներում, իսկ արաբները դրանից շատ հետո են ներթափանցել Միջագետք, մենք համամիտ ենք Հ. Աճառյանի վերջին կարծիքին, որի համաձայն «փիլաք» բառը ասուրերենից է անցել հայերենին:

Ասուրական սեպագրերում փ գրելու հնարավորություն չի եղել: Այն կարող էր վավերացվել միայն ք(պ) ունեցող վանկերի սեպանշաններով: Ուստի կարծում ենք, որ Պիլաքինի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *փիլաք* «պարիսպ, սահման» արմատը -ին ածանցով: Այն նշանակում է «պարսպապատ բնակավայր», որի անունով էլ կոչվել է գավառը:

*Ուզինա* (<sup>KUR</sup>Ugina): Ուզինան Նաիրիի 23 երկրներից մեկն է (Арютюнян, 1985, էջ 196): Ասուրական սեպագրերում ո գրելու հատուկ նշան չի եղել: Այն անհրաժեշտության դեպքում գրի էր առնվել ս(ու) ունեցող սեպանշանի օգնությամբ: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Ուզինա տեղանունը կարելի է համեմատել հետագայի Քրիի գավառակի Օգնուտ (-ուտ ածանցով), Տրապիզոնի շրջանի Օգենե (հին հունարենի -ենե ածանցով) և Կարսի մարզի Օլթիի շրջանի Օգնաբաղ (-ա- հողակապով բաղ բառի հետ) հին տեղանունների հետ, որոնցում առանձնանում է հին հայերենի *ոզ-ել* «ասել, խոսել, երգել,

նվագել» բայի ոգ- արմատը: Կարծում ենք՝ դա հաստատվում է նշված բառի «երգ» հոմանիշից կազմված տեղանուններով: Երգումի գավառի Երգի (-ի ածանցով), Շիրակի Երգս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Ղերսիմի Երգեհոն (հին հայերենի *երգեհոն* «նվագելու գործիք» բառից) հին բնակավայրերի անունները հուշում են, որ այդ գյուղերում առկա են եղել երգող, նվագող մարդիկ:

Ուզինա տեղանունը թերևս իր մեջ ունի այդ նույն -ոգ արմատը և -ին ածականակերտ ածանցը:

Ի դեպ, Նախիջևանի զոգերը՝ Գողթան գավառի երգիչները, հայտնի էին դեռևս 5-րդ դարից, որոնց անունը այդ նույն ոգ-ել «երգել» բայի արմատն է՝ սաստկական գ- ածանցով: Այն հանդիպում է Երզնկայի գավառի Ջոզնի (-նի ածանցով), Խնուսի շրջանի Ջոզնի, Սյունիքի Բաղք-Աձանանի Ջոզող հին բնակավայրերի անուններում:

*Ուզուլա* (<sup>KUR</sup>Uzula): Ուզուլան Նախրիի երկրներից մեկն է (Арютюнян, 1985, էջ 200):

Ն. Ադոնցը հավանական է համարում այն նույնացնել Պալույի և Պաղինի միջև գտնվող ժամանակակից Իսոլ գյուղի և նրա շրջանի հետ (Ադոնց, 1972, էջ 60):

Ուզուլա տեղանունը հիշեցնում է Սիսիանի շրջանի Ուզ (Ուզի), Վայոց ձորի Ուզի (-ի ածանցով, ձոր), Ջանգեզուրի Ուզում (-ում ներգոյական հոլովի վերջավորությամբ) և Վանի գավառի Ուզոց (-ոց մասնիկով) հին գյուղերի անունները, որոնք կազմված են հին պարսկերենից փոխառյալ *ուզ*- «որոնում, փնտրտուք» արմատից:

Ուզուլա տեղանունը բացի այդ բառից իր մեջ ունի հին հայերենի -ուլ ածանցը (թաթ՝ «ծեռքի, ոտքի առջևի մաս» և թաթուլ՝ «անասունների առջևի ոտք», կափ՝ «փակել» և կափուլ՝ «դարան» Ջահուկյան, 1998, էջ 33):

Կարծում ենք՝ այդ ուզ- արմատով տեղանունները հուշում են այն մասին, թե այդ տեղերում բնակավայր հիմնադրող մարդկանց փնտրած ու ուզած տարածքներն են, այսինքն՝ նրանց համար շատ ցանկալի են եղել:

*Ուիրամ* (<sup>KUR</sup>Uiram): Կարծում ենք՝ Նախրի երկրների անունների ցուցակի Ուիրամը Ուրմիա լճի արևմտյան ավազանի միջնադարի հայկական Ուրմիա գավառն է: Վերջինս ասորեստանցի դպիրները ներկայացրել են ի ձայնավորի դրափոխությամբ:

Ուրմիա գավառը կոչվել է իր համանուն Ուրմի կենտրոնի անունով, որն իր կազմի մեջ ունի հին հայերենի *որմ* «պատ» արմատը և

-ի անձանցը: Ուրմիա տեղանունը դրված է սեռական հոլովածևով ու նշանակում է Ռրմիի գավառ:

*Ունզամունի* (<sup>KUR</sup>Unzamuni): Այն Նաիրիի երկրներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 208):

Սեպագիր աղբյուրներում օտար տեղանունների ջ, գ, ծ հնչյուններ գրելու միջոցներ չեն եղել: Դրանք կարող էին գրի առնվել միայն z պարունակող վանկանշանների միջոցով: Ուրարտական դպիրները Գուգարքի Ջավախք գավառի անունը ներկայացրել են Zabaha, Արցախի Թառիջ բնակավայրինը՝ Tarzua ձևերով:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Ունզամունի տեղանվան մեջ կարելի է առանձնացնել հին հայերենի *ունջ*՝ «խորք, խորունկ տեղ» և *ամ* «լի» (հմտ. ամալ՝ «լցնել») արմատները և -ունի անջանցը: Այն նշանակում է «խորունկ տեղ գտնվող գավառ»: Տվյալ ունջ բառը մենք տեսնում ենք Վայոց ձորի Ունջոռք (որ «տակ» արմատով) և Սողքի Ունջի ձոր հին տեղանուններում:

*Քինդարի* (<sup>KUR</sup>Qindari): Քինդարին Նաիրիի 23 երկրներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 110):

Այս տեղանունը հիշեցնում է Արդահանի Քինդիր (կա նաև Կինդիր տարբերակը) և Ակնի շրջանի Քինդիր (առկա է նաև Կինդիր ձևը) հին բնակավայրերի անունները:

Կարծում ենք՝ Քինդարին և վերը բերված մյուս երկու տեղանունները ներկայացնում են հին հունարենից փոխառյալ հայերենի *կինդար* (կեդար)՝ «խոր, թագ» բառը, որը հուշում է տարածքի գերազանց դիրք ու բնաշխարհի ունենալու մասին: Հիշենք առավել ուշ շրջանի Ելիզավետպոլի Թագան (-ան անջանցով), Շիրակի Թագավորանիստ և Քիթլիսի գավառի Թագավորաց գյուղերի անունները, որոնք իրենց կազմում ունեն «թագ» արմատը:

Կարծում ենք՝ Քինդարին Վանի շրջանն է՝ նկատի ունենալով այդ տեղի Քինդրանց (Կինդիրանց) միջնադարյան հայկական բնակավայրը:

### Նաիրի երկրների լեռնաշղթաների անունները

Ասորեստանի տիրակալ Թիզլաթպալասար 1-ինը իր տարեգրության մեջ, բացի 23 գավառների անուններից, հիշատակում է նաև 16 լեռնաշղթաների մասին:

Դրանք են՝ Էլամա, Ամադանա, Էլխիշ, Շերաբելի, Թարխունա, Թիրկախուլի, Կիզրա, Թարխանաբե, Էլուլա, Խաշտարաե, Շախիշա-

րա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանգի, Նուբանաշե և Շեշե (Дьяконов, 1951, N10):

*Ամադանա* (<sup>SADU</sup>Amadana): Ուսումնասիրողները այդ լեռնաշղթան նույնացնում են Ասորեստանի թագավոր Աշուրնասիրապալ 2-րդի հիշատակած Ամադանիի հետ, որը գտնվում է այժմյան Մադեն բնակավայրի և Եփրատ գետի միջև (Арутюнян, 1985, էջ 24):

Այն կոչվել է տեղի լեռնանցքի Մադեն բնակավայրի անունով ածայնավորի հավելումով (հմմտ. «ա-նաւթի»՝ «սոված» և «նաւթի»՝ «սոված», «ա-նաւսր»՝ «նոսր» և «նաւսր»՝ «նոսր», Ջահուկյան, 1987, էջ 254): Մադեն տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *մատ* (բարբառային մադ) «մոտ կամ առաջ գնալ» արմատից -են ածանցով, որը մատնանշում է լեռնանցքի առկայության մասին: Մադ բառը հանդիպում է Կապանի շրջանի Մադան (-ան ածանցով), Ալավերդիի Մադան (Մատան) և Խարբերդի շրջանի Մադան (Մատան) և այլ հին տեղանուններում:

*Էլամա* (<sup>SADU</sup>Elama): Ժամանակակից Հեքյարի լեռնաշղթայի գագաթներից մեկը Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինի մեկ այլ սեպագիր արձանագրության մեջ հիշատակված է Էլամունի անունով (Арутюнян, 1985, էջ 253):

Ուստի, կարծում ենք, նույն արքայի Նաիրի երկրների Էլաման այդ լեռնաշղթայի անունն է: Սեպագիր աղբյուրներով ավանդված հին լեզուներում ե և է հնչյուններ չեն եղել: Ուստի Էլաման հին հայերենով կարելի է ընթերցել նաև Ելամա, որի մեջ առկա են հայերենի հ.-ե. *ել* «գառիվեր» և *ամ*- «լի» (հմմտ. ամալ՝ «լցնել») արմատները: Այն նշանակում է «գառիվեր լանջեր ունեցող»:

Ել բառը հանդիպում է Կարսի շրջանի Ելանլի (-ան ածանցով և լի բառի հետ), Կապադոկիայի Ելանլի, Գեղամա լեռների Ելանլի, Նախիջևանի շրջանի Ելան(դադ) և այլ հին լեռնագագաթների անուններում և մատնացույց է անում դրանց գառիվեր լինելու մասին:

*Էլխիշ* (<sup>SADU</sup>Elhish): Ն.Վ. Հարությունյանը Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինի հիշատակած Էլխիշ լեռնաշղթայի անունը համարում է պահպանված Մանազկերտից հյուսիս հին Էլխիս բնակավայրի հորջորջման մեջ (Арутюнян, 1985, էջ 255): Այդ գյուղը գտնվել է Խնուսի գավառում՝ լեռների փեշերին, որը մեզ հիմք է տալիս կարծելու, որ Էլխիշն այդ լեռների անունն է:

Այն ասորեստանցի դպիրները գրել են ուրարտերենի նման՝ s հնչյունը ներկայացնելով š (հմմ. Տուշպա և Տոսպ, Ուշկիանի (լեռներ) և Ոսկեպար, Ջահուկյան, 1987, էջ 430):

Եթե նկատի ունենանք, որ սեպագրության մեջ ե և է ձայնավորները չեն զանազանված, ապա Ելխիշ տեղանվան մեջ կարելի է տեսնել հայերենի հ.-ե. *ել* «գառիվեր» և *խխտ* արմատները: Վերջինիս մեջ -տ բաղաձայնը, կարծում ենք, չի լսվել օտարների կողմից, ուստի և չի գրվել (Խաչատրյան, 1998, էջ 99):

*Էլուլա* (<sup>SADU</sup>Elula): Նաիրի երկրների լեռնաշղթաների մասին սեպագիր աղբյուրներում լրացուցիչ տեղեկությունները գրեթե բացակայում են: Ուստի ուսումնասիրողները դիմում են այդ տարածաշրջանի հետազայի համարժեքների օգնությանը:

Հայկական Տավրոսի արևելյան հատվածի լանջերից մեկի վրա գտնվել է միջնադարյան հայկական էլուլ բնակավայրը: Ուստի կարծում ենք, որ էլուլա անունը վերաբերում է նշված լեռնաշղթային (Խաչատրյան, 1998, էջ 98):

Էլուլա տեղանունը պարունակում է հայերենի հնդեվրոպական *ել* «գառիվեր» և *ուլ* «վիզ, պարանոց» արմատները: Ղա հուշում է, թե տվյալ լեռները ունեն գառիվեր պարանոցներ (տե՛ս էլամա): Ի դեպ, հայերենում կան է և ե հնչյունների հերթագայության շատ օրինակներ, որոնք մեծ մասամբ կապված են բարբառների հետ:

*Թարխանաբե* (<sup>SADU</sup>Tarhanabe): Թարխան անունով մի բնակավայր գտնվել է Վանա և Ուրմիա լճերի միջև՝ հյուսիսից հարավ ձգվող Կոտուրի լեռների փեշերից մեկի վրա: Ուստի, կարծում ենք, որ Թիզլաթպալասար 1-ինի հիշատակած Թարխանաբեն այդ լեռնաշղթան է:

Վերջինիս մեջ առկա է հին հայերենի *թարխ* «նախագիծ, (զուցե ուրվագիծ), ուրվական քանդակների» արմատը և -ան հոգնակիակերտ ածանցը *բերդ* բառի հետ, որի վերջի ռդ հնչյունները բաց են թողնվել օտարների համար լսելի չլինելու պատճառով:

Թարխ բառը հանդիպում է Արցախի Թարխանաբերդ, Լաչինի Թարխան, Կաղզվանի Թարխան, Արաբկիրի Թարխնիկ (-իկ մասնիկով), Երզրումի Թարխունի (-ունի ածանցով) և այլ հին տեղանուններում:

*Թարխունա* (<sup>SADU</sup>Tarhuna): Թարխունա լեռները ուսումնասիրողները որոնում են Չայլ գետի (այժմ՝ Կելկիտ) ակունքների շրջանում՝ այն նույնացնելով խեթական սեպագիր աղբյուրների Տարախնա գավառի հետ (Архуноян, 1985, էջ 180):

Սակայն Թիզլաթպալասարը տվյալ արշավանքի ժամանակ նշված շրջանը չի հասել. նա իր ռազմական գործողությունները

սկսել է Արածանիի ստորին ավազանից՝ շարժվելով դեպի արևելք՝ հասել է այդ գետի արևելյան ակունքները, ապա այնտեղից մուտք է գործել Ճորոխի ավազան ու նվաճել Դայաենի երկիրը (Арютюнян, 1970, էջ 46):

Մենք հակված ենք Թարխունա լեռները նույնացնել Տայքի հարավարևմտյան սահմաններում գտնվող ժամանակակից Կարգաբազար լեռների հետ, քանի որ դրանց փեշերից մեկի վրա գտնվել է միջնադարյան հայկական Թարխունի բնակավայրը, որն էլ, կարծում ենք, պահպանել է այդ անունը:

Թարխունի տեղանունն իր մեջ ունի հին հայերենի *թարխ* «նախագիծ, ուրվական քանդակների» արմատը -ունի ածականակերտ ածանցով (տես Թարխանաբե):

*Թիրկախուլի* (<sup>ՏADU</sup>Tirkahuli): Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինը, տարեգրության մեջ հիշատակում է նաև Թիրկախուլի լեռնաշղթան:

Նկատի ունենալով, որ Մնծուրի լեռների լանջերից մեկի վրա գտնվել է միջնադարյան հայկական Թիրքիլոխ բնակավայրը, կարծում ենք, վերջինս պահպանել է այդ լեռների Թիրկախուլի անունը (Զահուկյան, 1988, էջ 153):

Այն բաղկացած է հայերենի հ.-ե. *թեր* «կողմ», *կախ* «կախված» և *ուլ* «պարանոց» արմատներից և նշանակում է «պարանոցներով մի կողմ կախված»: Նկատենք, որ դա խիստ բնութագրական է լեռնաշղթայի համար (Խաչատրյան, 1998, էջ 99):

*Խաշտարաե* (<sup>ՏADU</sup>Haštarae): Որոշ ուսումնասիրողներ այդ լեռնաշղթայի անունը համեմատում են խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակված Գայլ գետի վերին ավազանի Խաշտերիա երկրի հորջորջման հետ և կարծում, որ դրանք գտնվել են նշված տարածաշրջանում (Арютюнян, 1985, էջ 228):

Թիգլաթպալասարն իր մ.թ.ա. 1113 թ. արշավանքի ժամանակ ոչ միայն Գայլ գետ, այլ նաև Վերին Եփրատի ավազան (նկատի ունենք ոլորանից սկսած մասը) չի հասել: Նա Արածանիի ստորին ավազանով շարժվել է դեպի արևելք, հասել այդ գետի ակունքների շրջան, որտեղից մուտք է գործել Ճորոխի հովիտ (նույնը, էջ 46):

Խաշտարաեն, կարծում ենք, նույնական է Հայկական պար լեռնաշղթայի հետ, որի մասին է վկայում դրա միջին մասի հետազայի Խասդար անունով գյուղի առկայությունը: Վերջինս հետազայի աղավաղված ձևն է Խաշտարաե անվան, որի կազմի մեջ մենք տեսնում

ենք հին հայերենի *խաշն* «ոչխարի հոտ» (-ն ածանցի մասին տես Ջահուկյան, 1987, էջ 134) և *դար* «բարձրավանդակ» արմատները: Այդ բառերը միասին հանդիպում են Սասունի Խարզան գավառակի Խաշդար և Դիարբեքիի Խաշդար, իսկ խաշ- արմատը՝ Բաբերդի գավառակի Խաշին (-ին ածանցով) և Ջանգեզուրի հարավի Խաշինք (լեռնաշղթա) հին տեղանուններում:

*Կիզրա* (<sup>SADU</sup>Kizra, <sup>SADU</sup>Kisra): Ասորեստանի թագավոր Թիգլաթ-պալասար 1-ինի տարեգրության մեջ հիշատակված Հայկական լեռնաշխարհի Կիզրան կամ Կիսրան, կարծում ենք, Չըլդըր լճի մոտ գտնվող լեռնագագաթն է, որն այսօր էլ կոչվում է Քըսըր: Վերջինս թուրքերի կողմից Կիսրա անվան աղավաղված տարբերակն է:

Կիզրա կամ Կիսրա լեռնաշղթայի անունը, կարծում ենք, իր մեջ պարունակում է հայերենի *կեզ*՝ «այրել» արմատը, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, շեշտից առաջ դառնում է *կիզ* (հմմտ. կիզուլ՝ «այրել») և -իր ածանցը: Կիզրա տեղանունը սեռական հոլովածևում կորցրել է ի ձայնավորը՝ վերջից ընդունելով սեռական հոլովի -ա ցուցիչը:

Այդ բառը մենք տեսնում ենք Խլաթի գավառակի Կիզվան, Բիրլի-սի Կիզիս (-իք ածանցով, անունը դրված է հոգնակի հայցական հոլովածևով), Բասենի Կիզինքար և Դերսիմի Կիզիկ (-իկ վերջավորությամբ) հին տեղանուններում: Հավանական է, որ այդ բնակավայրերը խիստ արևոտ են եղել: Իսկ Քըսըրը արևակեզ լեռ է:

*Շախիշարա* (<sup>SADU</sup>Šahišara): Այս լեռնաշղթայի անունը հիշեցնում է ժամանակակից Արսիանի լեռների լանջերից մեկի վրա գտնվող միջնադարի հայկական Շակշիար բնակավայրը: Ուստի, կարծում ենք, այն պահպանել է նշված լեռների Շախիշարա հորջորջումը:

Վերջինս իր մեջ ունի հին հայերենի *շահ*՝ «պար, շրջան» և *շար*՝ «շարվածք» արմատները -ի- հողակապով, ու հուշում է, թե այդ լեռներն ունեն շրջանաձև շարված գագաթներ (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 153): Շակշիար գյուղի անունը մեզ հասել է աղավաղված ձևով: *Շահ* բառը մենք տեսնում ենք Շատախի Շահ, Օլթի գետի վտակ Շահալի (-ալի ածանցով), Գուգարքի Շահալի և այլ հին գյուղերի անուններում: Իսկ *շար* արմատը հանդիպում է Փոքր Հայքի Շար, Քղիի Շարակ (Շարուկ, գավառ), Երզրումի Շարին (-ին մասնիկով) և այլ հին տեղանուններում:

*Շեշե* (<sup>SADU</sup>Šeše): Այս լեռնաշղթան վերջինն է, որտեղ եղել է Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինը: Ուստի ուսումնասիրողները այն իրավամբ նույնացնում են ժամանակակից Շավշեթի հետ, որը գտնվում է այժմյան Բաթումից դեպի հարավ-արևելք (Арютюнян, 1985, էջ 245):

Ակնհայտ է, որ Շեշեն Շավշեթի անվան, որի մեջ առկա է վրացերենի -եթի ածանցը, հին աղավաղված տարբերակն է:

Կարծում ենք՝ Շավշեթի լեռների անունն իր մեջ ունի հին հայերենի *շոշի* (շաւշիւ)՝ «քայքայվիլ» բայի շաւշ- արմատը, որը հուշում է դրանց քայքայված լինելու մասին:

*Շուլիանզի* (<sup>SADU</sup>Šulianzi): Կարծում ենք՝ Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 1-ինի հիշատակած Շուլիանզին տեղով և անունով Երզրումի հարավի Շողանի լեռներն են: Վերջինիս անվան մեջ առկա է հին հայերենի *շող* «արևի ճառագայթ, ցուրք» արմատը, որը հանդես է գալիս հոգնակի սեռական հոլովի -եանց ցուցիչով (այն ունեցել է -եանք ածանցը, Ջահուկյան, 1988, էջ 155):

Սեպագրերում ց հնչյունի համար առանձին գրության ձև գոյություն չունի: Այն դպիրները ներկայացրել են z ունեցող վանկանշանների օգնությամբ:

*Շող* բառը հանդիպում է Երզնկայի գավառի Շող, Քղիի շրջանի Շող, Սասունի Շողեք (-եք մասնիկ), Դերսիմի Շողեր և այլ հին բնակավայրերի անուններում ու հուշում է, թե առավոտյան առաջինն այդ տեղերում են արևի շողերն ընկնում:

*Ուբերա* (<sup>SADU</sup>Ubera): Կարծում ենք՝ Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 1-ինի տարեգրության մեջ հիշատակված Ուբերա լեռնաշղթայի անունը կազմված է հին հայերենի *ուի* «խոռոչ» արմատից -եր հոգնակիակերտ վերջավորությամբ: Դա հուշում է, թե այդ լեռնաշղթան հարուստ է խոռոչներով: Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ սեպագրերում ո գրելու միջոց չի եղել, այն դպիրները ներկայացրել են ս(ու) ունեցող վանկանշանների օգնությամբ: Ավելին, հին հայերենում գոյություն է ունեցել բ.պ.փ բաղաձայն հնչյունների հերթագայություն (հմմտ. բլբջակ բառը հանդիպում է պղպջակ ձևով, բղետը՝ պղետ, բոյտը՝ պոյտ, բլիւլ՝ փլիլ տարբերակներով, Ջահուկյան, 1987, էջ 252-253):

*Ուի* բառը իր նշված տարբերակներով հանդիպում է նաև այլ տեղանուններում: Երզրումի Օփուկ գյուղի անունը հանդիպում է նաև Օբավան տարբերակով, Նախճավանի Օփիկը՝ Օբովանիս, Արդվի-նի Օպիզը՝ Օփզա և այլն:

#### 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ Մ.Թ.Ա. 9-7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՍՈՒՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Այս բաժնում մենք քննարկում ենք մ.թ.ա. 9-7-րդ դդ. ասորական և ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Տիգրիսի ակունքների, Եփրատ գետի և Սև ծովի միջև գտնվող տարածաշրջանի նահանգների, գավառների ու բնակավայրերի անունները: Փորձում ենք ճշգրտել որոշ մասի տեղերը և բացատրել դրանց իմաստները:

Դրանց լեզվի մասին ժամանակին Գ. Մելիքիշվիլին հայտնել է կարծիք, որի համաձայն այդ տեղանունները խուրի-ուրարտական են, ուստի լեռնաշխարհը բնակեցված է եղել այդ ցեղերով: Գիտնականը իր տեսակետն աշխատում է հիմնավորել այն փաստերով, որ նշված տեղանունների վերջավորությունները խուրի-ուրարտական ածանցներ են (Меликишвили, 1960, էջ 406-410):

Պետք է նկատի ունենալ, որ Հայկական լեռնաշխարհի տեղանունները հիշատակելիս խեթերը, ասորեստանցիները և ուրարտները դրանցից շատերի վրա ավելացնում էին իրենց լեզվի մասնիկները: Ուստի այս հանգամանքը դեր չի խաղում դրանց լեզվի վերաբերյալ որոշակի կարծիք հայտնելու համար:

Ավելին՝ Գ. Մելիքիշվիլին այդ տեղանուններից մի քանիսի՝ մոտ մեկ տասնյակի մեջ տեսնում է Միջագետքի Նուզի հին քաղաքի արխիվից հայտնաբերված ասորական սեպագիր աղբյուրներում հիշատակված խուրիական անձնանունների արմատներ: Դրա հիման վրա նա գտնում է, որ լեռնաշխարհի տեղանունները խուրիերեն են, ուստի և այդ տարածաշրջանը բնակեցված է եղել խուրիներով (տե՛ս նույն տեղում):

Հեղինակը տվյալ դեպքում անտեսում է այն հանգամանքը, որ նրա նշած խուրիական անձնանունների արմատների իմաստները դեռևս մնում են անհայտ գիտության համար: Ուստի և դրանք նման եզրակացություն անելու համար չեն կարող հիմք ծառայել:

Գ. Մելիքիշվիլին, այդուհանդերձ, փորձել է դրանցից երեք տեղանուններ (Դիդինի, Աբիլիանիխի, Աշտուխինի) ստուգաբանել, որոնց մասին մենք անդրադառնում ենք համապատասխան գլխաբառերի բաժնում:

*Աբաինդի* (<sup>URU</sup>Abaindi): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող կավե տախտակի սեպագիր արձանագրության տվյալներից մեկի համաձայն՝ Աբաինդին Այադու գավառի բնակավայրերից մեկն է (Арутюнян, 1985, էջ 7):

Կարծում ենք՝ այդ տեղանունն իր մեջ ունի հին հունարենից փոխառյալ հայերենի *աբբա* (աբբաս)՝ «հայր, վանահայր» արմատը, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, իր գուգահեռներն ունի հին հնդեվրոպական լեզուներում: Դրանք բոլորը ծագում են սեմականից: Այդ Աբաինդի տեղանվան երկրորդ բաղադրիչը հին հայերենի -ինդ ածանցն է, որը հանդիպում է Սիսականի Լերինդ («լեռ» բառից), Թալինի շրջանի Իրինդ (հմմտ. Ղարադաղի Իրի, Ելիզավետպոլի Իրանց տեղանունների հետ) հին գյուղերի անուններում:

*Աբբա* արմատի աբբաս տարբերակն առկա է Ալաշկերտի շրջանի Աբաս, Նախիջևանի Աբասաբաղ (բաղ բառի հետ, բերդ), Գուգարքի Աբասաձոր, Վայոց ձորի Աբասաշեն և այլ հին տեղանուններում (տես Աբասինի):

*Աբա(ս)* բառի «հայր» հոմանիշից են կազմված Տարոնի Հայրաբլուր, Սյունիքի Հաբանդ գավառի Հայրաշեն (Հայրաբերդ, այժմ՝ Շինուհայր, որ պետք է լինի \*Շինուայր՝ կազմված «շեն» և «այր»՝ «քարանձավ» արմատներից, նույնի Աղահեջք գավառի Հայրի և այլ հին գյուղերի անուններում:

*Աբասինի* (<sup>URU</sup>Abasini): Այս բնակավայրը հիշատակված է ուրարտական թագավոր Մենուայի Մանագկերտից հարավ-արևմուտք գտնվող այժմյան Խոտանլու գյուղում հյատնաբերված սեպագիր արձանագրության մեջ:

Նկատի ունենալով նշված վավերագրի գտնվելու տեղը՝ ուսումնասիրողներն այն որոնում են այդ տարածքում (Арутюнян, 2001, էջ 8): Կարծում ենք՝ Աբասինի տեղանվան հիմքում ընկած է հին հունարենից փոխառյալ հայերենի *աբբա(ս)*՝ «հայր, վանահայր» բառը, որի վրա ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի -ini- ածականակերտ ածանցը:

Այդ արմատը հանդիպում է Ալաշկերտի շրջանի Աբաս, Դիարբեքիրի նահանգի Աբասե, Արցախի Աբասաշեն (Աբասաձոր -ա- հողակապով մեկ շեն մեկ ձոր բառի հետ) և Գուգարքի Չորրփոր գավառի Աբասաձոր հին բնակավայրերի անուններում: Համոզվելու համար հիշենք այդ բառի հոմանիշ «հայր» արմատից կազմված Տարոնի Հայրաբլուր և Սյունիքի Աղահեջք գավառի Հայրք հին գյուղերի անունները (տես Աբաինդի):

*Աբիլիանիխի* (<sup>URU</sup>Abilianih<sub>i</sub>): Ղա հայկական Աբեղյանք գավառն է՝ Երասխի միջին ավազանում՝ բազմիցս հիշատակված ուրարտական սեպագիր աղբյուրներում (Арутюнян, 1985, էջ 9):

Աբիլիանիխի տեղանունն իր մեջ ունի *աբեղ* բառը և -եան (-յան) ածանցը, որի վրա ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի -(i)h<sub>i</sub> ածանցը:

*Աբեղ* բաղադրիչը հանդիպում է Բարծր Հայքի Ղերջան գավառի Աբեղածոր (-ա- հողակապով և ծոր բառի հետ), Կապադովկիայի Աբեղանոց (-անոց մասնիկով), Վասպուրականի Աբեղներ (լեռ) և Արդահանից Օլթի տանող ճանապարհին առընթեր Աբեղներ (լեռներ) հին տեղանուններում:

Կարծում ենք՝ Աբեղ բառն իր կազմում պահպանել է հ.-ե. ա- նախածանցը, որն ինչպես Գ. Ջահուկյանը նշում է, ոչ մի իմաստ չի տալիս արմատին (հմմտ. նաւթի և անաւթի «սոված», նաւսր և անաւսր «նոսր», Ջահուկյան, 1985, էջ 254):

Այդ *բեղ*՝ «բեղուն» արմատն առանց ա- նախածանցի մենք տեսնում ենք Խուրթի շրջանի Բեղոնք (-ոն և -ք մասնիկներով), Արդվինի Բեղ, Սյունիքի Կովսական գավառի Բեղ, Ղիարբեքիի նահանգի Բեղամս (ամ- «լի» բառի հետ հոգնակի թվի հայցականի ցուցիչով) և այլ հին բնակավայրերի անուններում:

Ղրա *բերրի*՝ «բերքառատ» հոմանիշն առկա է Վանի նահանգի Բերի, Սուրմալուի գավառի Բերի, Արդվինի շրջանի Բերի և այլ հին տեղանուններում:

Ի դեպ, Գ.Մելիքիշվիլին Աբիլիանիխի տեղանվան մեջ տեսնում է ուրարտերենի *abili-du*՝ «ավելացնել» արմատը և եզրակացնում, որ համանուն գավառը իբր բնակեցված է եղել ուրարտներով (Меликишвили, 1954, էջ 109):

Ինչպես Գ. Ջահուկյանն է նշում, հին հայերենի «ավելի» (յ-ավել- ուլ) բառը ունի իր հին հունարեն Յφελω «ավելացնել, մեծացնել» արմատը: Ղա ցույց է տալիս, թե մենք գործ ունենք հնդեվրոպական արմատի հետ: Այն հայերենից է անցել ուրարտերենին և այդ լեզվի -du բայեր կազմող արմատով է հանդես գալիս (Ջահուկյան, 1988, էջ 149): Ուստի, կարծում ենք, այն չէր կարող ընկած լինել Աբիլիանիխի տեղանվան հիմքում: Տեղին է նշել, որ Գ. Ջահուկյանը տվյալ ավել- արմատը կապում է բեղուն բառի հետ (տես նույն տեղում):

*Աբրանիա* (<sup>URU</sup>Abrania): Ասորեստանի տիրակալ Թիզլաթպալասար 3-րդի տարեգրության մեջ Աբրանիան էլուզիայի հետ հիշատակված է որպես Նահիրիի բնակավայրից մեկը:

Էլուզիան հին հունական գրավոր աղբյուրների էլեզիան է՝ հայկական Եղեզիս գյուղը Արածանիի ստորին ավազանում:

Աբրանիան ուսումնասիրողները նույնացնում են բյուզանդական գրավոր աղբյուրներում հիշատակված Աբարների՝ հետագայի Ջերմուկի հետ նշված տարածաշրջանում (Арутюнян, 1985, էջ 9): Աբրանիա տեղանունը հիշեցնում է Բաբերդի շրջանի Աբրանք կամ Ապրանք, Երզրունի գավառի Աբրանք (Ապրանք), Բալուի Աբրանք (Ապրանք) բնակավայրերի անունները:

Կարծում ենք՝ այն իր կազմի մեջ ունի հին հայերենի *ապրանք* «պարեն, կայք, ունեցվածք» բառի «աբրանք» տարբերակը (Ջահուկյան, 1987, էջ 253), որի վերջին -ք բաղաձայնն ասորեստանցիները փոխարինել են իրենց լեզվի տեղ ցույց տվող -ia ածանցով:

*Աբունի* (<sup>KUR</sup>Abuni): Ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված Աբունին Երասխի վերին ավազանի հին հայկական Հավնունիք գավառն է (Арутюнян, 1985, էջ 9-10):

Կարծում ենք՝ Աբունի տեղանունը ոչ թե հին հայերենի *հաւ*՝ «պապ» արմատն ունի իր մեջ (հմմտ. Խաչատրյան, 1998, էջ 126), այլ դրանում առկա է հայերենի հ.-ե. *աւն*՝ «սեփականություն» բառը: Ի դեպ՝ Հավնունիքի կենտրոնը վկայված է Ավնիկ ձևով (-իկ ածանցով):

Այդ *աւն*- արմատը մենք տեսնում ենք նաև Երզնկայի շրջանի հին Ավնի (-ի մասնիկով) գյուղի անվան մեջ:

Աբունի անվան մեջ վ բաղաձայնը ուրարտները փոխարինել են բ հնչյունով, քանի որ նրանց լեզվում վ չի եղել: Իսկ Հավնունիք տարբերակում մենք տեսնում ենք հին հայերենի հնդեվրոպական ինախդիրը, որը ձայնավորից առաջ, ինչպես Գ. Ջահուկյանը նշում է, դառնում է յ կամ հ (Ջահուկյան, 1987, էջ 244-245):

*Ադախունի* (<sup>KUR</sup>Adahuni): Ուրարտուի թագավոր Սարդուրի 2-րդի տարեգրության մեջ հիշատակված Ադախունի երկիրը ուսումնասիրողները տեղադրում են Սևանա լճի արևմտյան ավազանում (Арутюнян, 1985, էջ 12):

Այն կարելի է համեմատել Տարոնի Ադախ և Ալաշկերտի շրջանի Ադախալի (-ալի ածանցով) հին բնակավայրերի անունների հետ:

Կարծում ենք՝ Ադախունի տեղանունը կազմված է հին հայերենի *դահ*՝ «հնանալով կարծրացած, դարթ» արմատից, որը, ինչպես Հ. Աճառյանը նշում է, ունի «դախ» տարբերակը՝ դրա դարթ՝ «կոշտ» իմաստով: Դրանում առկա է ա- նախածանցը (հմմտ. անաւթի և նաւթի, անաւոր և նաւոր, Ջահուկյան, 1987, էջ 246), որը բառին որևէ իմաստ չի տալիս: Տեղանվան վերջից ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի –տո ածանցը: Այն նշանակում է «կոշտ հողեր ունեցող բնակավայր»:

*Ադանի* (<sup>KUR</sup> Adani): Ասորեստանի արքա Աշուրնասիրապալ 2-րդի տարեգրության տվյալներից մեկի համաձայն՝ Ադանին գտնվել է Ամադանի լեռների հարևանությամբ (Арутюнян, 1985, էջ 14): Վերջինս Հայկական Տավրոսի ժամանակակից Մադեն բնակավայրից դեպի արևմուտք, մինչև Եփրատ գետը եղած հատվածն է (Խաչատրյան, 1998, էջ 99):

Հնարավոր է, որ Ադանի տեղանունը հնչեր Ատանի, քանի որ սեպագրերում *da* նշանը ընթերցվել է նաև *ta*, *tá* (Labat, էջ 155): Ուստի, կարծում ենք, որ դրանում առկա է հին հայերենի *հատ*՝ «կտրելը, հատված, կտոր» արմատի *ատ* տարբերակը:

*Հատ*- բաղադրիչը պահպանել են իրենց մեջ Կիլիկիայի Հատին (Հադին, -ին ածանցով), Արցախի Մարդակերտի շրջանի Հատիս (Հադիս, հոգնակի հայցականի հոլովածևով), Վանի գավառի Հատեր (-եր մասնիկով) և Ելիզավետպոլի Հատք հին տեղանունները:

Ադանին կազմված է նույն *հատ* արմատից -անի ածականակերտ ածանցով, որի համանուն կենտրոնը ընդգրկել է կտրտված և խոր-դուբորդ տարածք:

*Աելիյա* (<sup>URU</sup> Aelija): Աելիյա բնակավայրը հիշատակված է Ուրարտուի արքա Մենուայի՝ հյուսիս-արևելքից Վանա լճին առընթեր Գործոթ գյուղում գտնված սեպագիր արձանագրության մեջ (Арутюнян, 1985, էջ 13):

Կարծում ենք՝ Աելիյա տեղանվան մեջ առկա է հին հայերենի *հայելի* բառը «տեսանելի» իմաստով, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ia (-ija) ածանցը: «Հայելի» բառը հանդիպում է Դիարբեքիի շրջանի Հայելիկ (-իկ ածանցով), Սյունիքի Աղահեջք գավառի Հայելիկ, իսկ դրա *հայ* արմատը՝ Բաբերդի Հայեք (-եք հոգնակիակերտ վերջավորությամբ), Բիթլիսի Մոտկանի շրջանի Հայթաղ (թաղ բառի հետ), Բալուի Հայնի և այլ հին տեղանուններում:

Վերջիններիս մեջ առկա *հայ*՝ «նայել, դիտել» արմատը հուշում է, թե այդ բնակավայրերից ամեն մեկը իր տարածքով բոլոր կողմերից տեսանելի է եղել:

*Ազա* (<sup>1</sup>Azaini KUR-ni): Ազա ցեղի երկիրը՝ ազգագավառը, ընդգրկել է Արարատյան դաշտը (նույնը, էջ 13):

Այդ տեղանունն իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *ազ*-՝ «չոր» արմատը (հմմտ. *ազազիլ*՝ «չորանալ») և -ա(յ) ածականակերտ ածանցը և նշանակում է «չորային երկիր»:

*Ազ*- բառը մենք տեսնում ենք Բիթլիսի գավառի Ազ, Օրդուբադի շրջանի Ազա, Արցախի Ազալի (-ալի մասնիկով), Ճորոխի վերին ավազանի Ազանց և այլ հին գյուղերի անուններում:

*Ալահինի* (<sup>10</sup>Alaini): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ալահինի գետը, ինչպես գտնում են ուսումնասիրողները, պետք է որոնել Վանի գավառում (Арютюнян, 1985, էջ 17):

Դրա անունը կազմված է հայերենի հնդեվրոպական *աղ*՝ «աղ» արմատից և -ային ածականակերտ ածանցից ու նշանակում է «աղի ջուր ունեցող գետ» (Ջահուկյան, 1988, էջ 151):

*Աղ* բառը հանդիպում է Քդիի շրջանի Աղային, Վանի գավառի Աղահանք («հանք» բառի հետ), Երևանի մոտի Աղածոր (ծոր արմատով), Թորթում գետի ակունքի Աղասար և այլ հին տեղանուններում:

*Ալբուրի* (<sup>URU</sup>Alburi): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի (մ.թ.ա. 721–705 թթ.) Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ալբուրի բնակավայրը գտնվել է Այադու երկրում (Վանա լճի հարավային ավազան, Арютюнян, 1985, էջ 18):

Գ. Ջահուկյանն այդ տեղանվան մեջ իրավացիորեն տեսնում է հայերենի հ.-ե. *աղբյուր*՝ «ջրի աղբյուր» արմատը (Ջահուկյան, 1988, էջ 154), որը իրենից ներկայացնում է դրա բարբառային «աղբուր» տարբերակը: Դրանով են կազմված Բաբերդի Աղբյուր, Կոտայքի շրջանի Աղբյուրի, Հրազդանի Աղբյուրակ և այլ հին գյուղերի անուններ:

*Ալի* (<sup>URU</sup>Alli): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող կավե տախտակի սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ալի բնակավայրը գտնվել է Այադու երկրում (Վանա լճի հարավային ավազան, Арютюнян, 1985, էջ 22):

Կարծում ենք՝ Ալի տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *ալի* «ալիք, կոհակ» արմատից: Դա հաստատվում է վերը նշված սեպագիր աղբյուրի այն հաղորդմամբ, որի համաձայն Այադուն գտնվել է «ալեկոծվող ծովի ափին» (Ջահուկյան, 1988, էջ 160):

Տեղանունը հիշեցնում է Վանա լճի հյուսիսարևելյան ավազանի Առբերան գավառի Ալիք բնակավայրի անունը:

*Ալիա* (<sup>URU</sup>Alia): Արձեշից մոտ 10 կմ հյուսիս-արևելք Արծվաբերդ գյուղում հայտնաբերված Վանի տիրակալ Մենուայի սեպագիր արձանագրության մեջ գրված է, որ նա ջրանցք է անցկացրել Ալիա բնակավայրի մոտով: Ուսումնասիրողները վերջինս նույնացնում են տեղի հետազայի հայկական Աղիովիտ գավառի համանուն կենտրոնի հետ (նույնը, էջ 20):

Ալիա տեղանունը, ինչպես գտնում է Գ. Ջահուկյանը, իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *աղ* արմատը (Ջահուկյան, 1988, էջ 151), որի վրա ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի *-ia* տեղ ցույց տվող ածանցը:

Այդ բառն առկա է Խարբերդի շրջանի Աղին (-ին ածանցով), Մուկսի Աղին, Վանի նահանգի Ոշտունիք գավառի Աղին, Անիի Աղին, Արաբկիրի Աղին և այլ հին տեղանուններում: Դա հուշում է նշված գյուղերի տարածքներում աղակալված հողերի առկայության մասին:

*Ալիշտու* (<sup>URU</sup>Alištu): Ուրարտուի թագավոր Արգիշտի 1-ինը նվաճել է Սևանա լճի հարավային ավազանում գտնվող Ալիշտու բնակավայրը, Լիքիունիից (Լիձք) հետո (Արչուռյան, 1970, էջ 208-209):

Վերջինից քիչ դեպի արևելք գտնվող այժմյան Արծվանիստ գյուղը առաջ կոչվել է Ալիշտալի (-ալի ածանցով), որը և նույն Ալիշտուն է:

Կարծում ենք՝ այդ տեղանվան մեջ առկա հայերենի հ.-ե. *ալի* «ալիք» (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով, որը հաջորդ է բաղաձայնի ազդեցությամբ դարձել է *š*) և *տու* բառերը ու արտահայտել են «ալիք տվող լճի ափին գտնվող բնակավայր» իմաստը:

Ալի արմատը հանդիպում է Խարբերդի շրջանի Ալիշի (-շի ածանցով) և Վանա լճի հյուսիսային ափի Ալիք կամ Ալիքալի բնակավայրերի անուններում:

*Ալնիունու* (<sup>URU</sup>Alniunu): Ուրարտական թագավոր Սարգուրի 1-ինի ասուրերեն սեպագիր արձանագրության մեջ նշված է, որ նա Տուշպա (Վան) քաղաքը կառուցելիս քարերը բերել է տվել Ալնիու-

նու բնակավայրից: Ուսումնասիրողները կարծում են, որ այն գտնվել է Մանազկերտի շրջանում (Арутюнян, 1985, էջ 23):

Ալինուոնու տեղանունն ասուրերեն ուղղական հոլովածևում է ձեռք բերել վերջի ս(ու) ձայնավորը: Ուրարտական տեքստում այն կգրվեր \*Ալինուհի վերջում կունենար i հնչյուն:

Կարծում ենք՝ այն կազմված է հայերենի հ.-ե. *աղ*՝ «աղ» արմատից և -նի հոգնակի իմաստ ընծեռող ածանցից, որի վրա ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի -սու մասնիկները (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 157):

Ալինուոնուն նշանակում է «աղակալած հողեր ունեցող»:

Նշված աղ բառը մենք տեսնում ենք Արաբկիրի շրջանի Աղն (-ն հին մասնիկով), Ակնի Աղնիկ (-իկ ածանցով), Բարձր Հայքի Աղնցիք (-ցի և -ք ածանցներով) և այլ հին բնակավայրերի անուններում:

*Ալտուկույա* (<sup>URU</sup>Altukuja): Վանի թագավոր Մենուայի՝ Գործոթ գյուղում գտնված սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ալտուկույա բնակավայրը գտնվել է Ծիադխի գավառում (Арутюнян, 1985, էջ 23): Վերջինս ընկած է եղել Վանա լճի հյուսիսային ափամերձ շրջանում (տես Ծիադխի):

Գ. Ջահուկյանը գտնում է, որ այդ տեղանունն իր մեջ ունի հայերենի հ.-ե. *աղտ*՝ «կեղտ» և *կոյ* (կու)՝ «գոմաղբ» արմատները (Ջահուկյան, 1988, էջ 154, 160):

Դրանցից առաջինը առկա է Երզրումի գավառի Աղտաղտ, Կաղզվանի շրջանի Ախտամ (ամ- «լի» բառի հետ), Արցախի Աղդամ, Սյունիքի Շահապունիքի Աղտավ (-ավ ածանցով) և այլ հին տեղանուններում:

Իսկ *կու* կամ *կոյ* բառը մենք տեսնում ենք Խարբերդի շրջանի Կու, Արագածոտնի Կուաշ (-աշ ածանցով, այժմ՝ Կոշ), Մուշի Կուս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Սյունիքի Շահապունիքի Կուք (-ք մասնիկով) և այլ հին տեղանուններում:

*Ալուարձա* (<sup>URU</sup>Aluarša): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ալուարձա բնակավայրը գտնվել է Այադու երկրում (Վանա լճի հարավային ավազան, Арутюнян, 1985, էջ 23):

Այդ տեղանունը, հավանաբար, իր մեջ ունի հայերենի հ.-ե. *աղ* արմատից կազմված *աղու*՝ «քաղցր, անուշ, լավ» և *արձ*՝ «փայլուն» բառերը (հմմտ. արծնել, Ջահուկյան, 1988, էջ 160):

Դրանցից առաջինն առկա է Աղվերան (-եր և -ան ածանցներով), Սյունիքի Արևիք գավառի Աղվանք (-ան և -ք մասնիկներով), Երզնկայի շրջանի Աղվանից (հոգնակի սեռական հոլովածևով) և այլ պատմական գյուղերի անուններում, որոնց մեջ ու հնչյունը դարձել է վ:

Իսկ *արծ-* արմատը հանդիպում է Կարինի շրջանի Արծն (-ն հին մասնիկով), Տարոնի Արծինք (-ին և -ք ածանցներով) և Ապահունիքի Արծուխ (-ուխ «հեղեղատ» բառի հետ) հին տեղանուններում:

*Ալուդիրի* (<sup>URU</sup>Aludiri): Վանա լճից հյուսիս-արևելք գտնվող Պատնոց գյուղի մոտի մի ավերակ բնակավայրում հայտնաբերված Մենուայի սեպագիր արձանագրության մեջ գրված է, որ նա այնտեղ Ալուդիրի անունով ամրոց է կառուցել (Арутюнян, 1985, էջ 23):

Վերջինս իր կազմում ունի հայերենի *աղու*՝ «քաղցր, անուշ, լավ» և *դիր*՝ «դիրք» բառերը ու նշանակում է «լավ դիրք ունեցող ամրոց»:

Ակնի շրջանի Աղուանիս (-անի ածանցով և հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Սյունիքի Ճահուկ գավառի Աղու տեղանունները կազմված են այդ աղու բառով:

Իսկ *դիր* արմատը հանդիպում է Ուրմիա լճից քիչ դեպի արևմուտք գտնվող Կոտուրի շրջանի Դիրալի (-ալի ածանցով), Վանի Բերկրի գավառի Դիրայլի (հավանաբար՝ Դիրալի), Հեքյարիի Դիրի (-ի մասնիկով) և Զանգեզուրի Դիրի հին բնակավայրերի անուններում (էջ 116):

*Ալուշի[նի]* (<sup>KUR</sup>Aluši[ni]): Այժմյան Բյուրակնի լեռների արևմտյան լանջերից մեկի վրա գտնված ուրարտական թագավոր Սարդուրի 2-րդի սեպագիր արձանագրության մեջ գրված է նրա կողմից Ալուշինի անունով մի գավառի նվաճման մասին:

Ուսումնասիրողները, նկատի ունենալով այդ վավերագրի գտնվելու վայրը, Ալուշինին տեղադրում են նշված տարածքում (Арутюнян, 1985, էջ 24):

Կարծում ենք՝ այն հյուսիս-արևմուտքից տվյալ վայրին առնթեր հին հայկական Մանանաղի գավառն է, որը տվյալ դեպքում կոչվել է իր Աղյուս բնակավայրի անունով: Վերջինիս վրա ուրարտներն ավելացրել են իրենց լեզվի -ini ածականակերտ ածանցը: Իսկ հին հայերենի այն բառերը կամ տեղանունները, որոնք իրենց կազմում ունեն s (ս) հնչյունը, ուրարտները հաճախ գրի են առել š ունեցող վանկանշանների օգնությամբ (տե՛ս Զահուկյան, 1987, էջ 429):

Ուրարտները աղյուս տեղանվան, որը հին հայերենի *աղյուս* բառն է ներկայացնում, քմային իւ (-յու) ձայնավորը դարձրել են ս(ու):

*Ալքանիա* (<sup>URU</sup>Alqania): Այն գտնվել է Բուզունիայի (Աշոցքի շրջան) տարածքում (հմմտ. Арутюнян, 1985, էջ 21):

Ալքանիա բնակավայրի անունը, կարծում ենք, իր մեջ ունի հայերենի հ.-ե. *աղկաղկ*՝ «աղքատ» կրկնությամբ արմատը և -անի ածականակերտ ածանցը, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի տեղ ցույց տվող -ia մասնիկը: Այդ տեղանունը նշանակում է «աղքատ հողեր ունեցող»:

*Աղկ-* բառը հանդիպում է Երզնկայի Աղկան (-ան ածանցով), Դիարբեքիի գավառի Աղկան և Խարբերդի Աղկի (-ի մասնիկով) հին տեղանուններում:

Հին հայերենի կ և ք հնչյունների հերթագայությունը առկա է նաև նույն *աղկաղկ* և *աղքատ* տարբերակների մեջ:

*Ախիունի* (<sup>URU</sup>Ahiuni): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ախիունի բնակավայրը, ինչպես ուսումնասիրողներն են պարզել, գտնվել է Վանա լճի հարավ-արևելյան ափին առընթեր Երինու գավառում (Арутюнян, 1985, էջ 47, 261):

Այն հիշեցնում է Մուշի Ախս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով), Վանի գավառի Ախս, Արդահանի Ախաշեն (-ա- հողակապով և շեն բառի հետ), Բասենի Ախս (-ա վերջավորությամբ), Օլթիի Ախս և Գեղարքունիքի Ախսենք (Ախսյան, -ա- հողակապով -ենք կամ -յան ածանցով) հին բնակավայրերի անունները: Դրանց բոլորի մեջ առանձնանում է ախ- արմատը, որը աղխ-ի տարբերակն է ու նշանակում է նաև «օղակ»:

Ախիունին կազմված է այդ նույն *ախ-* արմատով և -յուն ածանցով ու նշանակում է «օղակածև, կլոր տեսք ունեցող բնակավայր»: Այն տեղով և անունով, կարծում ենք, նույնական է պատմական Ոչտունիքի Ախավանք բնակավայրի հետ որն ընդգրկել է Երինուի շրջանը:

Այդ *ախ-* արմատի «օղ» կամ «օղակ» (-ակ ածանցով) հոմանիշներն առկա են Տրապիզոնի նահանգի Օղ, Մուշի Օղակ (-ակ մասնիկով), Մակուի շրջանի Օղակ, Տարոնի Օղական (-ական մասնիկով, ամրոց) և Կոզովիտի Օղան (-ան ածանցով) հին բնակավայրերի անուններում:

*Ախուրիանի* (<sup>URU</sup>Ahuriani): Ժամանակակից Սարիղամիշի մոտ Ուրարտուի արքա Արգիշտի I-ի թողած սեպագիր արձանագրության մեջ նշված է Ախուրիանի բնակավայրի գրավման մասին: Ուսումնասիրողները, նկատի ունենալով այդ հաղորդումը և այն, որ հնում Ախուրյան կոչվել է ոչ թե Արփան, այլ Կարսի գետը, Ախուրյանին որոնում են դրա վերին ավազանում՝ վավերագրի գտնվելու վայրում՝ այն անվանապես նույնացնելով նշված գետի հորջորջման հետ (Арутюнян, 1985, էջ 47):

Ախուրյան անունը կազմված է հին հայերենի *խոր*՝ «խոր, խորունկ» արմատից որը հանդիպում է նաև *խորի* և *խուրի* ձևերով և -եան (յան) ածանցից ա- նախածանցով (հմմտ. նաւթի և անաւթի «սոված», նաւր և անաւր «նոսր», Ջահուկյան, 1987, էջ 254): Հին հայերենում գոյություն է ունեցել ո և ու ձայնավորների հերթագայություն (հմմտ. զոմեզ և զումեզ «կովի մեզ»), որը հանդիպում է նաև հին տեղանուններում: Այսպես՝ Գուգարք տեղանունը մենք ունենք նաև Գոգարք ձևով, Ռշտունիքի Գոգանը՝ Գուկանք, Մոկսի Գոգին (լեռներ)՝ Գուքի և այլն: Այդ բառը հանդիպում է Նախիջևանի Ախուրա և Բասենի Ախուրի հին բնակավայրերի անուններում ու հուշում է այդ տեղերի փոս լինելու մասին: Ախուրյան գետի անունը նշանակում է «խոր հուն ունեցող գետ»:

*Ամաշ* (<sup>URU</sup>Ammas): Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդի Կալխու քաղաքի հնավայրից հայտնաբերված քարե սալիկների վրայի սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք, որ թագավորը իր զորահրամանատար Դայան-Աշուրին զորքով ուղարկում է դեպի Ուրարտու: Վերջինս Բիթ-Ջամանի գավառից (այժմ՝ Դիարբեքի-րի շրջան) հետո մտնում է Ամաշ գյուղի լեռնանցքը (դա այժմյան Մադեն բնակավայրի մոտի գետնափոր ուղին է), ապա անցնում է Արծանիա (Արածանի) գետը (Арутюнян, 1985, էջ 26):

Իսկ Աշուրնասիրապալ 2-րդը իր տարեգրության մեջ գրում է, որ ինքը զորքով Կարանի բնակավայրից մտել է Ամադանի լեռնանցքը (Арутюнян, 1985, էջ 36):

Ուրեմն՝ մի դեպքում այդ անցուղին կոչվել է Ամաշ, իսկ մյուս դեպքում՝ Ամադանի, որը այժմյան Մադենն է: Ամաշ տեղանունը, կարծում ենք, իրենից ներկայացնում է հին հայերենի *ամաս-ել*՝ «արկանել, մտցնել, մուծել» բայի արմատը, որը հուշում է լեռնանցքի մասին: Այդ նույն իմաստն ունի նաև Ամադանին:

*Այադու* (<sup>URU</sup>Ajadu): Այս գավառի անունը ուրարտական սեպագիր արձանագրություններում հանդիպում է նաև Աիդու(նի), Այդու(նի), Այադի և Այաիդ աղավաղված ձևերով: Ուսումնասիրողները Այադուն տեղադրում են Վանա լճի հարավային և հարավ-արևելյան ավազանում (նույնը, էջ 15):

Այդ տեղանունը հիշեցնում է Գորիսի շրջանի Մարադուզ կամ Մարատուս (մար «տեր» բառով, -ա- հողակապով և տու բաղադրիչով), Խոյի Կիրատու (հմմտ. կիր և տու), Սասունի Մարաթուք (լեռ, պետք է լինի \*Մարատուք) և Գեղարքունիքի Նորադուզ կամ Նորատուս հին գյուղերի անունները: Այադու տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *ահ*՝ «վախ. շատ մեծ» արմատի բարբառային *այ* տարբերակից -ա-հողակապով և *տու* բառի բարբառային տարբերակից ու նշանակում է «ահարկու կամ շատ մեծ գավառ»: Դրա մասին է վկայում Սարգոն 2-րդի այն հաղորդումը, որի համաձայն Այադուն ունեցել է 30 բերդ (նույնը, էջ 15):

*Աի-* արմատը ունեն իրենց մեջ Երզրունի շրջանի Ահալը (-ալի ածանցով), Թումանյանի Ահնիծոր, Եղեգնաձորի Ահնիծոր հին տեղանունները:

*Այալե* (<sup>URU</sup>Ajale): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Այալեն Արմարիլիի (Վանի նահանգ) հզոր քաղաքներից մեկն է եղել (Арутюнян, 1985, էջ 16):

Այս տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *ահ*՝ «վախ, սարսափ, շատ մեծ» արմատի բարբառային *այ* տարբերակից և -ալի ածանցից ու նշանակում է «ահարկու»: Ի դեպ՝ ուրարտական սեպագրերում երբեմն միևնույն բառի վերջի *i* ձայնավորը ներկայացված է *e*, որը բառիմաստի մեջ փոփոխություն չի մտցրել:

Այալեն հիշեցնում է Սամսոնի շրջանի Ահալի, Երզրունի Ահալիկ (-իկ ածանցով), Թումանյանի Ահնիծոր, Եղեգնաձորի Ահնիծոր, Խարբերդի Ահնիծոր հին բնակավայրերի անունները: Կարծում ենք, Այալեն Վանի գավառի Ահավանք գյուղն է:

*Այաժուն* (<sup>URU</sup>Ajašun): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Այաժունն Այադու երկրի 30 բերդաքաղաքներից մեկն է (նույնը, էջ 17): Եթե նկատի ունենանք, որ վերջինս ընդգրկել է Վանա լճի հարավային ավազանը՝ հետագայի Մոկսի և Շատախի

չրջաններով հանդերձ, ապա Այածունը կարելի է նույնացնել դրանցից առաջինի Շուն բնակավայրի հետ:

Վերջինիս անունը, կարծում ենք, հայերենի *հ.-ե. ծունգ/կ* «ծունկ» արմատն է, որը նախալեզվում վերականգնված է առանց վերջի բաղաձայնի և հնդեվրոպական մյուս հին լեզուներում նույն ձևով առանց կ աձականի է: *Շուն* բառը բացի «ոտքի ծունկ» իմաստից, ինչպես նշում է Հ. Աճառյանը, նշանակում է «շարականի խազ, որ օ ձևն ունի և ծնկան զլխից է առնված»:

Կարծում ենք, Շուն տեղանունը հուշում է, որ բնակավայրը կամ նրա բերդը կառուցված է եղել ծնկի զլխի նման թումբ ու կլոր տեղի վրա: Այածունի մեջ առկա է նաև հին հայերենի *ահ* «սարսափ, ահ, ահարկու մեծ» բառի *այ* բարբառային տարբերակը, որը հանդիպում է Կորձեք նահանգի Այս, Կարսի Այաշ (-աշ ածանցով) և Վանի Թիմարի գավառի Այանք հին տեղանուններում (տես Այալե):

*Անաշե* (<sup>URU</sup>Anaše): Ուրարտուի արքա Իշալուինին և իր որդի Սե-նուան որոշ տարիներ իշխել են միասին: Ժամանակակից Ալաշկերտի շրջանում հայտնաբերված նրանց սեպագիր արձանագրության մեջ գրված է, որ այդ տիրակալները նվաճել են Անաշե քաղաքը և Ուխտերուխի երկիրը:

Ուսումնասիրողները, նկատի ունենալով այդ վավերագրի գտնվելու վայրը, Անաշեն նույնացնում են Ալաշկերտի հետ (նույնը, էջ 27): Այդ տեղանունը հիշեցնում է Արագածոտնի Անբերդ (բերդ բառի հետ), Ախալցխայի Ան (այժմ՝ Անի), Շիրակի Անի (-ի ածանցով), Բաթումի շրջանի Անագերտ (-ա- հողակապով, կերտ բառի հետ), Ախալքալաքի Անակերտ և Արդվինի Անակերտ հին գյուղերի անունները: Դրանցում առկա է հայերենի *հ.-ե. ան-ել՝* «անել, ստեղծել, արարել», բայի *ան-* արմատը, որի ն հնչյունը *արար* բառի մեջ, ինչպես նշում է Հ. Աճառյանը, փոխարինված է ը բաղաձայնով:

Անաշե տեղանվան մեջ մենք ունենք այդ նույն *ան-* արմատը, որի վրա -ա-հողակապով ավելացված է ուրարտերենի -še ածանցը: Ինչպես վերջինս, նույնպես և թվարկված բոլոր տեղանունները նշանակում են «լավ արարված, ստեղծագործված շինություններ ունեցող»:

*Անգանու* (<sup>URU</sup>Anganu): Այն հիշատակված է Ասորեստանի արքա Թիզլաթպալասար 3-րդի հին Կալխու քաղաքի ավերակներում հայտնաբերված քարե սալիկների սեպագիր արձանագրության մեջ:

Դրա հաղորդման համաձայն՝ նշված տիրակալը ենզի երկրի (Խարբերդի շրջան) բնակավայրերը նվաճելուց հետո գրավում է Ուրարտուի Անգանու բերդը: Ուսումնասիրողները դրա հիման վրա այն նույնացնում են ժամանակակից Մադենից մոտ 10 կմ դեպի արևելք գտնվող Էնգենե բնակավայրի հետ (նույնը, էջ 27):

Անգանուն կարելի է համեմատել Վայոց ձորի Անգանք կամ Անգոնք (-անք և -ոնք ածանցներով), Վանից քիչ դեպի հարավ-արևելք եղած Անգավանք (-ա- հողակապով և վանք բառի հետ), Վանի գավառի Խավարածորի շրջանի Անգեվ (-եվ ածանցով) և Բերկրիի Անգիս (հոգնակի հայցականի հոլովածևով) հին տեղանունների հետ:

Դրանցում առկա է հայերենի հ.-ե. *անկանիլ* կամ *անգանիլ*՝ «երթալ, դիմել, ընկնել, ապաստանել» բայի *անկ-* արմատը առանց -ան ստևածանցի, որը բառին ոչ մի իմաստ չի տալիս ու նշանակում է, թե այդ բնակավայրերը ունեցել են ապաստանելու տեղ՝ իջևանատուն:

Անգանու անունը հիշատակված է ասորեստանցիների կողմից, ուստի վերջում ունի ս (ու) հնչյունը, որը նրանց լեզվի ուղղական հոլովին է հատուկ: Ուրարտերենում այն պետք է ունենար Անգանի ձևը: Կարծում ենք, Անգանուն իր մեջ ունի վերը նշված հին հայերենի անգ- կամ անկ- «ապաստան» արմատը և -անի ածականակերտ ածանցը: Վանանդի Իջավան բնակավայրի և Իջևանի շրջանի անունները նման իմաստ ունեն:

*Անգալիա* (<sup>URU</sup>Anzalia): Այդ բնակավայրը գտնվել է Այադու երկրում՝ Վանա լճի հարավային ավազանում (Арютюнян, 1985, էջ 29): Ուրարտական սեպագրերում օտար բառերի կամ հատուկ անունների ձ և գ հնչյունները չեն տարբերակված: Դրանք գրված են z ունեցող վանկերի սեպանշաններով: Ուստի, կարծում ենք, որ Անգալիա տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *անծ(ն)* «մարդ» արմատից -ալի ածանցով: Վերջից ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ia մասնիկը: Այն նշանակում է «մարդաշատ»:

*Անծ* բառը հանդիպում է Ծոփքի Անծիտ (-իտ ածանցով), Վանի նահանգի Գյավուշ գավառի Անծիք (-իք մասնիկով) և Ջանգեզուրի Չավնդուրի շրջանի Անծալի հին տեղանուններում:

*Անիաշտանիա* (<sup>URU</sup>Aniaštan): Այդ անունով երկու բնակավայրեր են հիշատակված ուրարտական սեպագիր աղբյուրներում: Դրանցից մեկը գտնվել է Ուրմիա լճի Սանգիբուտու գավառում, իսկ

մյուսը՝ Վանա լճի արևելյան ափին, որը ուսումնասիրողները նույնացնում են հին հայկական Անստան բնակավայրի հետ (նույնը, էջ 29, Ադոնց, 1972, էջ 233):

Անիաշտանիա տեղանունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *առնել*՝ «անել, ստեղծել, շինել» բառի նույն իմաստն ունեցող *ան*- արմատը -ի ածանցով և *աստան* -ել՝ «ուղղել» բայի աստան- արմատը, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ia մասնիկը: Այն նշանակում է «ուղիղ շինություններով բնակավայր»: Անի բառը իր «ստեղծել» իմաստով, մենք տեսնում ենք Շիրակի Անի, Երզնկայի Անի և Շարուրի Անի հին բնակավայրերի անուններում:

• *Անիշտիրգա* (<sup>KUR</sup>Aništirga): Ուսումնասիրողները եղած փաստերի հիման վրա որոնում են այդ գավառը Ախուրյան գետի Երասխի մեջ թափվելու տեղից հյուսիս (Арутюнян, 1985, էջ 30):

Նշված տարածքում հայկական Անի քաղաքն է գտնվել, որի անվան վրա, կարծում ենք, ուրարտները ավելացրել են իրենց լեզվի *šidaguri* «կառուցված» բառը՝ աղավաղված ձևով: Ուրարտական վավերագրերում վկայված է նաև դրա *šidauri* տարբերակը (Арутюнян, 2001, էջ 463):

Անի տեղանունը իր կազմում ունի հայերենի հ.-ե. *առնել*՝ «անել, ստեղծել, շինել» բառից առաջացած նույնիմաստ անել բայի *ան*- արմատը -ի ածանցով և նշանակում է «արարմունք, ստեղծագործություն, շինություն», որը հաստատում է *šidaguri* վերը նշված ուրարտերեն բառը:

Կարծում ենք՝ հին հայերենի ու հնչյունի ն դառնալու երևույթը վաղնջական ժամանակներին է վերաբերում: Երզնկայի Անի, Վանի գավառի Անիշատ (շատ բառով), Գյումուշանեի շրջանի Անիքոյ հին բնակավայրերի անուններում առկա է նշված ան- արմատը և -ի ածանցը:

*Աշտուխինի* (<sup>1</sup>Aštuhini KUR-ոյ): Աշտուխինի ազգագավառը ոսումնասիրողները տեղադրում են Կարս գետի ակունքի շրջանում, որտեղից էլ գտնվել է Վանի թագավոր Արգիշտի 1-ինի՝ դրա նվաճման մասին սեպագիր արձանագրությունը (Арутюнян, 1985, էջ 49):

Ուրարտ գրիչները հաճախ հին հայերենի բառերը, որոնք ունեն ս(s) հնչյունը, գրի են առել շ (š) ունեցող վանկերի սեպանշանների միջոցով (Ջահուկյան, 1992, էջ 228-229):

Ուստի մենք կարծում ենք, որ Աշտուխինի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *աստանել*՝ «ուղղել» -ան- սուկածանցով բայի *աստ*- արմատը, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -(ս)հի և -ոյ մասնիկները: Այն նշանակում է «ուղիղ կառուցված բնակավայր»:

*Աստ*- բառը մենք տեսնում ենք Նախիջևանի Աստապատ (-ա- հողակապով և պատ բառով), Վասպուրականի Քաջբերունիք գավառի Աստապատ, Վանի շրջանի Աստաբերդ (բերդ բառով) և Կապանի Աստածոր ու այլ հին գյուղերի անուններում, որոնց մեջ նշված աստ- արմատը հանդիպում է այդ նույն իմաստով:

Ի դեպ, ժամանակին Գ. Մելիքիշվիլին Աշտուխինի տեղանունը անհիմն կերպով նույնացրել է ժամանակակից Աստախանե բնակավայրի հետ՝ Կարս գետի Ախուրյանին միախառնվելու անկյունում: Դրանցում նա առանձնացնում է ուրարտերենի կարծեցյալ *աժես*- «լոբի» արմատը, որը այդ լեզվում չկա: Այս անհիմն փաստերի վրա հեղինակը եզրակացնում է, որ տվյալ տարածաշրջանը ներկայացնող Աշտուխինին բնակեցված է եղել ուրարտներով (*Меликишвили*, 1954, էջ 109): Իրականում Աշտուխինին չի նույնանում Աստրախանեի հետ: Իսկ վերջինս տեղի վիմագիր արձանագրությամբ վկայված Աստեղանին է (Խաչատրյան, 1998, էջ 125):

*Աշբալաշի* (<sup>KUR</sup> Ašqalaši): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի տարեգրության տվյալների համաձայն՝ Աշբալաշի երկիրը գտնվել է Դիաուխիի (Տայք՝ Ճորոխի ավազանում) Ջուաինա քաղաքից (Ժմկ՝ Զիվին) ոչ շատ հեռու (*Арютюнян*, 1985, էջ 48-49): Կարծում ենք՝ Աշբալաշին նշված բնակավայրից ոչ շատ հեռու Երզրունի շրջանի այժմյան Աշկալեն է, որի անվան վրա -ա- հողակապով ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ši(še) ածանցը: Դա միջնադարի հայկական Աշխալին է, որի անվան մեջ առկա է հին հայերենի *աշխ*՝ «մարդ և անասուն» արմատը -ալի ածանցով ու նշանակում է «մարդկանցով և անասուններով լի բնակավայր»:  
*Աշխ* բառը հանդիպում է Շիրակի Աշխալի և Ալաշկերտի Աշխալի հին գյուղերի անուններում (հմմտ. քիւ և խուղ, քեւ և խեւ, Ջահուկյան, 1987, էջ 253):

*Ասապա* (<sup>URU</sup> Asapa): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանի սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ասապա բերդը գտնվել է Ուայայիս գավառում (հարավ-արևմուտքից Վանա լճին առընթեր տարածք): Նկատի ունենալով այս փաստը՝

ուսումնասիրողները այն նույնացնում են նշված տեղի ավամերձ՝ հետազայի Ջապա բնակավայրի հետ (Арутюнян, 1985, էջ 45):

Հին հայերենին խորթ չէ բառակազմի ա- հ.-ե. նախածանցը, որը ոչ մի իմաստ չի տալիս բառին (հմմտ. նաւթի, որ է անաւթի՝ «անոթի, սոված», նաւր, որ է անաւր՝ «նոսր», Ջահուկյան, 1987, էջ 254»): Մենք ունենք նաև գ և ս հնչյունների հերթագայության երևույթը (հմմտ. գկռտոց և սկրտոց, սկիզբ և սկսել, որոնք նույն բառերն են): Տեղանուններից Ջավդեքը հանդիպում է Սավդեք ձևով, Աբիսիան՝ Աբիզին, Նորատոււր՝ Նորադուզ տարբերակներով: Ջապա տեղանունը հիշեցնում է Ճորոխի ավազանի Ջապանց (հոգնակի թվի սեռական հոլովի վերջավորությամբ, գետակ), Մուշի Ջափնու և Հայաստանի հյուսիսի Ջափանց լեռնաշղթայի անունները, որոնցում առկա է *աւի*՝ «եզր» բառը -գ սաստկացուցիչ նախածանցով: Կարծում ենք՝ Ջապա տեղանունը նույնպես իր մեջ ունի այդ *աւի* (ապ)՝ «եզր» արմատը -ա ածանցով:

*Ատաունի* (<sup>URU</sup>Atauni): Վանի թագավոր Մենուայի Մուշում գտնված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ իր զորքով Ատաունի բնակավայրը նվաճելուց հետո մտնում է Ուրմե երկիր (Арутюнян, 1985, էջ 45-46):

Կարծում ենք՝ Ատաունին, որի անվան մեջ ուրարտները ավելացրել են իրենց -uni ածանցը, Սղերդ քաղաքից (այժմ՝ Սիրտ) քիչ արևելք եղած հայկական Ատ գյուղն է, որից արևմուտք գտնվել է Ուրմեն՝ Սասունը:

Ատաունի տեղանունը կարելի է համեմատել Դերսիմի գավառի Ատա (-ա ածանցով), Ուրմիա լճից անմիջապես արևմուտք ընկած Ատա, Վանի նահանգի Ադբակի շրջանի Ատես (հոգնակի հայցական հոլովածևով) և նույնի Թիմարիի գավառի Ատեր (-եր հոգնակիակերտ վերջավորությամբ) հին գյուղերի անունների հետ: Դրանց բուրի մեջ, ինչպես և Ատաունիի, առկա է հին հայերենի *հատ*՝ «կտրելը, հատված, կտոր» բառի *ատ* տարբերակը, որը հուշում է այդ տարածքների կտրտված լինելու մասին:

*Արածու* (<sup>URU</sup>Araşu): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ այդ բնակավայրը գտնվել է Սանգիբուտու երկրում (Ուրմիա լճից անմիջապես հյուսիս), Արծաթիա լեռան փեշերին (Арутюнян, 1985, էջ 31):

Արածու տեղանունը հիշեցնում է Ծղուկ գավառի (Սիսիանի շրջան) Արածի (-ի ածանցով), Այրարատ նահանգի Արած (գավառ), Վայոց ձորի Արած, Մուշի Արածանի (-անի մասնիկով) և Արցախի Արածանս (-ան ածանցով և հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Արցախի Արածանս հին տեղանունները: Դրանց բոլորի, ինչպես և Արածու տեղանվան մեջ, առկա է հայերենի հ.-ե. *արած-իլ*՝ «արածել, ճարակել (խոտ)» բայի *արած-* արմատը, որը հուշում է նշված վայրերի հարուստ արածատեղերի առկայության մասին (Ջահուկյան, 1988, էջ 157):

*Արբու* (<sup>URU</sup>Arbu): Այս բնակավայրը գտնվել է Արմարիլի երկրում (Վանի նահանգ, նույնը, էջ 32):

Արբու տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի հայերենի հ.-ե. *արբ-*՝ «խմել, ըմպել» արմատը և -ու ածանցը (հմմ. հատել և հատու, հաղթել և հաղթու, հասնել և հասու, Ջահուկյան, 1998, էջ 31): Այն նշանակում է «ջրարբի հողերով բնակավայր»:

*Արբ* բառը մենք տեսնում ենք Սուկաց Արբենց (հոգնակի սեռական հոլովածևով), Սասունի Արբի (-ի ածանցով) և Վանի շրջանի Արբիկ (-իկ մասնիկով) հին գյուղերի անուններում:

*Արդա* (<sup>URU</sup>Arda): Ուրարտուի թագավոր Արգիշտի 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Արդան Իգարաբ-խուբի երկրի բնակավայրերից մեկն է եղել: Այս գավառը գտնվել է Ճորոխի ավազանում (Арютюнян, 1985, էջ 33):

Կարծում ենք՝ Արդա տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *արդ*՝ «ծև, կարգավորություն» արմատից և -ա(-այ) ածականակերտ ածանցից ու նշանակում է «կարգով ու կանոնով կառուցված բնակավայր»:

Այս բառը հանդիպում է Թունանյանի շրջանի Արդվի (-վի ածանցով), Շիրակի Արդիկ (-իկ մասնիկով, այժմ՝ Արթիկ), Աբովյանի շրջանի Արդիզ (պետք է լինի Արդիս, որը հոգնակի հայցական հոլովածևն է), Բասեն գավառի Արդի (-ի ածանցով) և Խարբերդի նահանգի Արդական (-ական մասնիկով) հին բնակավայրերի անուններում: Հավանական է, որ Արդա բնակավայրը տեղով և անունով նույնական լինի Արդվինի շրջանի Արդալա գյուղի հետ: Վերջինիս մեջ բացի *արդ* արմատից կա նաև հին հայերենի *ալ-ք*՝ «խորք, խորունկ տեղ» բառը:

*Արդարակիխի* (<sup>1</sup>Ardarakihī): Ուրարտուի արքա Արգիշտի 1-ինի տարեգրության հաղորդման համաձայն՝ Արդարակիխի ազգագավառը գտնվել է Դիաուխի երկրի կազմի մեջ: Դա հետագայի Տայք նահանգն է՝ Ճորոխի ավազանում (Арутюнян, 1985, էջ 33):

Այդ տեղանվան -իխի բաղադրիչը ուրարտների կողմից ավելացված ածանց է: Գ. Ջահուկյանը Արդարակիխի անվան մեջ առանձնացնում է հին հայերենի *արդար* բառը (Ջահուկյան, 1998, էջ 157): Սակայն մենք կարծում ենք, որ այն կազմված է հին հայերենի *արդ*՝ «ծև» կարգավորություն և *առակ*՝ «օրինակ» արմատներից ու նշանակում է, թե բնակավայրը կառուցված է օրինակելի ձևով: Այդ հարցում պետք է նկատի ունենալ, որ սեպագրերում *ռ* և *ր* հնչյունները իրարից տարբերակելու միջոց չի եղել: Դրանք միշտ գրվել են *ր* (ր) ունեցող վանկանշանների օգնությամբ:

*Արդ* բառը հանդիպում է Արածանիի ստորին հոսանքի ավազանի Խոզաթ գավառի Արդական (-ական ածանցով), Երզրումի Արդի (-ի մասնիկով), Վերին Բասենի Արդի և այլ հին տեղանուններում, իսկ *առակ* բաղադրիչը տեսնում ենք Մուշի Առակ, Վանի Աղբակ գավառի Առակ հին գյուղերի անուններում:

*Արդիկչի* (<sup>SADU</sup>Ardikšī): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի տարեգրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Արդիկչի լեռը գտնվել է Մուսասիր (այժմ Մուջեսիր՝ Սիդեկանից 5 կմ դեպի արևմուտք) և Խուբուշկիա (Ջերմի ձախակողմյան ավազան) երկրների միջև (Арутюнян, 1985, էջ 33):

Հավանական է, որ Արդիկչի անվան մեջ -šī բաղադրիչը ուրարտներն են ավելացրել: Դա նրանց լեզվի գոյականակերտ ածանց է: Դրանում առկա է նաև հին հայերենի *արդ*՝ «ծև, կարգավորություն» արմատը և -իկ ածանցը, որոնք վկայում են, թե այդ լեռը շատ սիրուն տեսք ունի: *Արդ* բառը հանդիպում է միջնադարի հայկական մի շարք տեղանուններում (տե ս Արդա, Արդարակիխի):

*Արդիունակ* (<sup>URU</sup>Ardiunak): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Արդիունակ բերդաքաղաքը գտնվել է Այադու երկրում: Վերջինս ներկայացրել է Վանա լճի հարավային ավազանը (նույնը, էջ 34):

Արդիունակ տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայերենի հնդեվրոպական *արդ*՝ «ծև, կարգավորություն» արմատը, -ի ածանցը և *ունակ*՝ «ընդունակ» բառը (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 160): Դրան-

ցից առաջինը հանդիպում է Բասենի Արդի, Շիրակի Արդիկ (-իկ մասնիկով, այժմ՝ Արթիկ), Թունանյանի շրջանի Արդվի (-վի մասնիկով) և այլ հին գյուղերի անուններում: Իսկ երկրորդը մենք տեսնում ենք Հայաստանի Ունագաստա աստծու անվան մեջ, որը նշանակում է «ունակ արարող» (հմմտ. *աստանել*՝ «քննել» բայի աստ- բաղադրիչը -ան ստկածանցի հետ, Ջահուկյան, 1988, էջ 157):

Արդիունակ տեղանունը, շատ հավանական է, որ վերցված է աստծու անունից, որը նշանակում է «ձև, կարգավորություն ստեղծող» (տե՛ս Ծիմիունակ):

*Արիահինի* (<sup>KUR</sup>Ariaini): Ուրարտագետները այս գավառը որոնում են Սևանա լճից հարավ-արևելք ընկած տարածաշրջանում (նույնը, էջ 35):

Արիահինի տեղանունը, թերևս, հիմքում ունի հայերենի հ.-ե. *արի*՝ «քաջ» բառը, որի վրա -ա- հոդակապով ուրարտները ավելացրել են -ini ածականակերտ ածանցը: Այն առկա է Մուշի շրջանի Արի, Վայոց ձորի Արին (-ն հին մասնիկով) և Դիարբեքիի նահանգի Լիջե գավառի Արիս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) հին գյուղերի անուններում:

*Արխի* (<sup>KUR</sup>Arhi): Վանի արքա Մենուայի Մուշում թողած սեպագիր արձանագրության մեջ Արխի գավառը հիշատակված է Կուլմերի (հետագայի Քղիմար) քաղաքի շրջանի և Ուրմեի (Սասուն) կապակցությամբ (նույնը, էջ 43):

Կարծում ենք՝ այն Սասունի Խիանք գավառակի Արխունք գյուղն է նշված շրջանով, որը գտնվել է Մուշից քիչ հարավ-արևմուտք: Արխի տեղանունը կարելի է համեմատել Օլթիի շրջանի Արխիս (հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Ջանգեգուրի Արխուստի (-ուստ ածանցով և -ի սեռականի մասիկով) տեղանունների հետ:

Եթե նկատի ունենանք, որ Սասունի Արխունք գյուղը հանդիպում է նաև Արկիկ տարբերակով, իսկ Օլթիի Արխիսը՝ Արկանիս (-անի ածանցով) ձևով, ապա պարզ կդառնա, որ մենք տվյալ դեպքում գործ ունենք հին հայերենի *արկ*՝ «ձգել, մտցնել» բայարմատի հետ: Վերջինս առկա է Շատախի Արկանիս, Սյունիքի Բաղք-Աձանան գավառի Արկանի ձոր և Արևիքի Արկավանք հին տեղանուններում:

Արխի տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի *արկ*՝ «ձգել, մտցնել» արմատը (հմմտ. կեղ և խեղ, կաղ և խաղ, Ջահուկյան, 1987, էջ 253), -ի ածանցը ու հուշում է, թե այն գտնվել է (կամ նրա կենտրոնը) ինչ-որ ձորի կամ կիրճի մուտքի մոտ: Ղա Պլինիուսի հի-

շատակած Արխենեն է, որտեղ ըստ պատմիչի Տիգրիսը շատ մոտ է հոսում Արսանիասին (Արածանի գետ, Մանանդյան, 1936, էջ 109): Իրոք, Տիգրիսի այդ թևի սկունքները Արածանիի Մեղրագետ վտակի սկիզբ առնելու տեղից քիչ են հեռու:

*Արծաբիա* (<sup>KUR</sup>Aršabīa): Արծաբիա գավառը, ինչպես ուսումնասիրողները պարզել են, գտնվել է համանուն լեռան փեշերին, Ուրմիա լճից հյուսիս գտնվող Սանգիբուտու երկրում (Арутюнян, 1985, էջ 43): Կարծում ենք՝ Արծաբիան Մասիսից անմիջապես հարավարևմուտք ընկած Կոգովիտ գավառն է, որի Արծաբիաքար լեռան փեշերին գտնվել է Արծաբի բերդը և նույնանուն գյուղը: Ի դեպ, նշված լեռը, ինչպես վերը տեսանք, ուրարտական սեպագիր աղբյուրներում նույնպես կոչվել է Արծաբիա անունով:

Արծաբիա լեռան անունը, որի -ia ածանցը ուրարտներն են ավելացրել, իր մեջ ունի հին հայերենի *արծ-*՝ «փայլուն, սպիտակ» և *ափ*՝ «ծայր, եզր» արմատները՝ վերջինիս *աբ* տարբերակով (հմմտ. փլանիմ և բլիլ, Ջահուկյան, 1987, էջ 253) ու նշանակում է «լեռ, որի ծայրը փայլուն է, սպիտակ»: Դրա անունով էլ կոչվել է գավառը:

Այդ արծ- արմատից են կազմված Բագրեվանդ գավառի Արծակ (-ակ մասնիկով), Կարինի Արծն (-ն ածանցով), Տարոնի Արծինք (-ին և -ք ածանցներով) և այլ հին տեղանուններ:

*Արծաշկու* (<sup>URU/KUR</sup>Aršašku): Որոշ գիտնականների կարծիքով՝ Արծաշկուն Վանա լճի հյուսիսային ափի հետազայի Արծկե բնակավայրն է իր շրջանով: Ոմքանք էլ գտնում են, որ այն նույն լճի հյուսիսարևելյան ափին առընթեր ուշ ժամանակների Արձեշն է (նույնը, էջ 34-35):

Ասորեստանի թագավոր Սալմանասար 3-րդը մ.թ.ա. 856 թ. արշավանքի ժամանակ, վերադառնալով Դայաենիից (Ճորոխի ավազան), հարձակվում է Արծաշկուի՝ Ուրարտուի մայրաքաղաքի վրա՝ պարտության մատնելով Արամու արքայի զորքին: Նա այդտեղից անցնում է երիտիա լեռը և հայտնվում Արմարիլի երկրում (Վանի նահանգ): Երիտիան Արձեշի և Վասպուրականի միջև գտնվող հին հայկական Երիտունիք գավառի լեռն է: Հետևաբար Արծաշկուն Արձեշն է և ոչ Արծկեն, որը գտնվում է նրանից դեպի արևմուտք:

Արծաշկու տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայերենի հ.-ե. *արծ-*՝ «սպիտակ» արմատը և -աշ ու -ք ածանցները: Այն հանդիպում է Բագրևանդի Արծակ (-ակ ածանցով), Կոգովիտի Արծաբի (*ափ*՝ «եզր» բառի հետ), Կարնո Արծն (-ն մասնիկով) և Տարոնի Ար-

ծինք հին տեղանուններում: Իսկ հայկական Արճեշ տարբերակի մեջ առկա է -եշ ածանցը, որի շ հնչյունի ազդեցությամբ արմատի ծ բաղաձայնը դարձել է ճ: Տեղանվան վերջի k(կ) հնչյունը, կարծում ենք, հին հայերենի -ք ածանցն է:

*Արծիդու* (<sup>ՏADU</sup>Arşidu): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Արծիդու լեռը, որի վրա կառուցված է եղել Արգիշտինա բերդը, գտնվել է Այադու երկրում: Վերջինս ընդգրկել է Վանա լճի հարավային ավազանը (Арутюнян, 1985, էջ 45):

Մենք հակված ենք մտածելու, որ այն նշված տարածաշրջանի Մոկսի գավառի Արծեթոն կոչված հետազայի գյուղի մոտի սարն է: Կարելի է ենթադրել, որ Արծիդուն, ինչպես նաև Արծեթոնը հին հայերենի արծաթ արմատի քիչ աղավաղված ձևերն են: Վերջինս հանդիպում է Արցախի Արծաթասար (լեռ), Կիլիկիայի Արծթի (լեռներ) և Երզրունի Արծթի (գյուղ) հին տեղանուններում:

*Արծուզու* (<sup>URU</sup>Arşuğu): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Արծուզուն Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) բնակավայրերից մեկն է (նույնը, էջ 45):

Արծուզու տեղանունը, կարծում ենք, կազմված է հայերենի հ.-ե. *արծ-* «սպիտակ, փայլուն» արմատից, -ուկ ածանցի -ուգ բարբառային տարբերակից և -ու մասնիկից (տես Արծաբիա, Արծաշկու): Այն վկայում է տեղանքի սպիտակավուն երանգ ունենալու մասին (հմմ. հասու, հաղթու, զորու և այլն, Ջահուկյան, 1987, նույն հեղինակ, 1988, էջ 160, էջ 241):

*Արկանիա* (<sup>ՏADU</sup>Arkania): Ասորեստանի տիրակալ Աշուրնասիրապալ 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ ասուրական զորքը մուտք է գործում Ամադանի լեռների անցուղին, իջնում Դիրիա գավառը, որը գտնվել է Ամադանի և Արկանիա լեռների միջև, հետո անցնում է Ծուա գետը: Վերջինս Տիգրիսի Ծովք լճից սկիզբ առնող համանուն վտակն է (Арутюнян, 1985, էջ 36): Պարզ է, որ ժամանակակից Մադենի մոտի լեռնանցքի արևմտյան կողմի լեռները կոչվել են Ամադանի (տես տեղում), իսկ արևելյանը՝ Արկանիա անունով (Խաչատրյան, 1998, էջ 123):

Արկանիա անունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *արկ* «մտցնել, մուծել» արմատից և -անի ածականակերտ ածանցից ու

վկայում է տեղում լեռնանցքի առկայության մասին: *Արկ* բառը մենք տեսնում ենք Այունիքի Արկանաձոր (-ան ածանցով և ծոր բառի հետ), Շատախի Արկանիս (-անի մասնիկով, հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) և Բաղքի Արկանի հին տեղանուններում:

*Արնա* (<sup>URU</sup>Arna): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Արնան Արմարիլի երկրի բերդաքաղաքներից մեկն է: Վերջինս Վասպուրական նահանգն է (Арутюнян, 1985, էջ 45):

Արնա տեղանունը հիշեցնում է Պարսկահայքի Առնա (-այ ածանցով), Գեղարքունիքի Առնեղ (-եղ մասնիկով), Այրարատ նահանգի Շաղկոտն գավառի Առնիկ (-իկ փոքրացուցիչով) և Մուշի շրջանի Առնիս (հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով) հին գյուղերի անունները: Դրանք բոլորը իրենց կազմում ունեն հայերենի հ.-ե. *առն* «արու վայրի ոչխար» արմատը և հուշում են, թե այդ բնակավայրերի շրջակա տարածքները հարուստ են եղել վայրի արու ոչխարներով: Այդ բառի խոյ հոմանիշը մենք տեսնում ենք Պարսկահայքի Խոյ և Տրապիզոնի գավառի Խոյանի (-անի ածանցով) հին տեղանուններում: Արնա տեղանունը կազմված է նույն այդ *առն* արմատից և -ա(յ) ածանցից:

*Արմարիլի* (<sup>KUR</sup>Armarili): Ասուրական սեպագիր արձանագրություններում հիշատակված Արմարիլի երկրի անունը հանդիպում է նաև Արմիրալի, Արմիրալիու, Արամալի և այլ աղավաղված տարբերակներով: Այն իր տարածքով համընկնում է Վանի նահանգի հետ (նույնը, էջ 38-39):

Արմարիլի տեղանունը, կարծում ենք, բաղկացած է հայերենի հ.-ե. *արմ*՝ «ցեղ, զարմ, զարմիկ, տոհմիկ» և *ար*\* (այր) «տղամարդ» արմատներից և ուրարտների կողմից ավելացված -ili ածականակերտ ածանցից: Այն նշանակում է «զարմիկ այրերի նահանգ» (հմմտ. Ջահուկյան, 1998, էջ 157): Այս բացատրությունը հաստատվում է նաև այն փաստով, որ դա հին հայ մատենագրության մեջ փոխարինված է Վասպուրական անունով, որը կազմված է պարսկերենի *վասպուր*՝ «իշխան» բառից ու նշանակում է «իշխանական»:

*Արմ*- արմատը հանդրպում է հայոց հին մայրաքաղաք Արմավիրի անվան մեջ *աիր*(օրի)՝ «իշխան» բառի հետ և շատ այլ հին տեղանուններում (տես Արմանի):

*Արպույանի* (<sup>URU</sup> Arpujani): Ուրարտուի արքա Մենուան, Վանից հայտնաբերված իր սեպագիր արձանագրություններից մեկի տվյալներով, Արպույանի բնակավայրը նվաճել է ի թիվս Խուլմերունի (հետագայի Քղիմար), Ուլիբանի (Սասունի Խուլբ գավառ) և այլ վարչաքաղաքական միավորների (Арютюян, 2001, N 44):

Եթե նկատի ունենանք, որ ուրարտական սեպագրերում պ և փ հնչյունները զանազանելու միջոց չի եղել և դրանք տրվել են միայն ք պարունակող վանկանշանների օգնությամբ, ապա Արպույանին կարելի է տեղով և անունով նույնացնել նշված տարածաշրջանի Սասունի Մոտկան գավառի Արփի գյուղի հետ: Արպույանին այդ դեպքում կարելի է համեմատել Կապանի շրջանի Արփիկ (-իկ ածանցով), Եղեգնաձորի Արփի (-ի մասնիկով), Երզրումի Արփի, Կաղզվանի Արփալի (-ալի վերջավորությամբ), Աշոցքի Արփա (-ա ածանցով) և Արփանեալ (-ան և -եալ մասնիկներով) հին տեղանունների հետ, որոնք իրենց կազմում ունեն հին հայերենի *արփի* «եթեր» արմատը:

Արպույանի տեղանունը իր մեջ ունի այդ *արփի*- արմատը -ու ածանցով: Վերջից ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ani մասնիկը: Նշված բոլոր բնակավայրերի անունները մատնացույց են անում այդ տեղերի եթերային օդ ունենալու հանգամանքը:

*Արտարապշա* (<sup>KUR</sup> Artarapsa): Այդ գավառը, ինչպես ուսումնասիրողները պարզել են, գտնվել է Վանա լճի հյուսիս-արևելյան ավազանում, հետագայի Արձեշի հարևանությամբ (Арютюян, 1985, էջ 41): Արտարապշա տեղանունը բաղկացած է հայերենի հ.-ե. *արտ*՝ «մշակելի հող», *առ*՝ «կողքին, առընթեր» և *ափ*՝ «գեր» արմատներից հոգնակի հայցական հոլովի -ս ցուցիչով ու նշանակում է «ծովի ափին առընթեր մշակելի հողեր ունեցող գավառ» (Ց, էջ 122): *Արտ* բառը առկա է Այրարատ նահանգի Արշարունիք գավառի Արտագերս (գեր՝ «վեր» բառի հետ -ա- հոդակապով և հոգնակի հայցականի -ս ցուցիչով), Վասպուրականի Արտագ (ագ-՝ «չոր» արմատով), Արդահանի Արտանի (-անի ածանցով) և շատ այլ հին տեղանուններում:

*Արուշի* (<sup>URU</sup> Aruši): Ուրարտուի տիրակալ Սարդուրի 2-րդի Խարբերդի շրջանում հայտնաբերված սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Արուշին Մելիտեա (Մալաթիա) երկրի բնակավայրերից մեկն է: Այն ուսումնասիրողները հավանական են հա-

մարում նույնացնել Ծովք լճի հյուսիս-արևելյան ափին առընթեր ուշ ժամանակների Ալոշ գյուղի հետ (Арытюнян, 1985, էջ 42):

Սակայն մենք, նկատի ունենալով այն հազամանքը, որ այդ վավերագիրը գտնվել է Խարբերդի շրջանում, հակված են մտածելու, թե Արուշին վերջինիս համանուն կենտրոնի մոտ գնվող հին Արուսի բնակավայրն է:

Ուրարտական սեպագրերում հին հայերենի որոշ բառեր, որոնք ունեն ս հնչյուն, գրի են առնվել Տ ունեցող վանկերի սեպանշանների օգնությամբ:

Կարծում ենք՝ Արուշի տեղանունը ներկայացնում է հին հայերենի *արուս*՝ «սև խունկ, զուկի» բառը -ի ածանցով: Այն հիշեցնում է Երգրումի Խունկ, Արցախի Շուշիի շրջանի Խունկթալա հին տեղանունները: Հավանաբար նշված գյուղերի տարածքներում խնկենին տարածում է ունեցել:

*Արքուքի(ու)նի* (<sup>1</sup>Arquq(u)ni): Այս ազգագավառը ներկայացրել է Սյունիքի Շահապունիքի շրջանը, որի Արքույք բնակավայրի անունով էլ ուրարտները այն հիշատակում են (Խաչատրյան, 1998, էջ 123, հմմ. Арытюнян, 1985, էջ 37):

Կարծում ենք՝ Արքուքինի տեղանունը կազմված է հին հայերենի *արքա*՝ «թագավոր» բառի *արք*- արմատից առանց -այ ածանցի (հմմտ. արքի, արքենի և այլն) և -ոյք ածանցի սղված -ուք ձևից: Վերջից ուրարտները ավելացրել են -ino ածականակերտ ածանցը: Այն նշանակում է «արքայական՝ գերազանց բնություն ունեցող բնակավայր»:

Այդ *արք* արմատը հանդիպում է Քղիի գավառի Արք և Սասունի Արքիք (-իք ածանցով) հին տեղանուններում:

*Բազու* (<sup>KUR</sup>Bazu): Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 3-րդի Նիմրուդ քաղաքի ավերակներից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Բազու գավառի մեջ մտել են Քիլիսա, Իգեղա, Դիուաբլի, Ուալիա, Թասու և Ուրա բնակավայրերը: Այդ նույն գրավոր աղբյուրի մեկ այլ հատվածի տվյալներով՝ թվարկված գյուղերը պատկանել են Էնզի երկրին: Այս փաստերի հիման վրա ուսումնասիրողները Բազուի շրջանը տեղադրում են Արածանիի՝ Եփրատի մեջ թափվելու տեղից քիչ հյուսիս՝ հայկական Անձիթի տարածքում (նույնը, էջ 51):

Բազու տեղանունը հիշեցնում է միջնադարի հայկական Տարոնի Բազու (-ու ածանցով), Վանա լճի հարավ-արևելյան ափի Բազ, Վա-

նի Աղբակ գավառի Բագ, Վանի շրջանի Բագ, Գուգարք նահանգի Ծորուփորի շրջանի Բագաբերդ (-ա- հողակապով և բերդ բառի հետ) հին գյուղերի անունները: Հավանական է, որ դրանց նման Բագուն էլ իր մեջ ունի հին հայերենի իրանականից փոխառյալ *բագ*-արմատը՝ տվյալ դեպքում -ու ածականակերտ ածանցով (Ջահուկյան, 1987, էջ 241), որը հանդիպում է *բագուկ* բառի մեջ -ուկ փոքրացուցիչ մասնիկի հետ: Դա հուշում է, թե Բագուն և վերը թվարկված բնակավայրերը գտնվել են լեռան բագուկի վրա:

*Բալդուարծա* (<sup>URU</sup>Balduarsa): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Բալդուարծա բնակավայրը գտնվել է Այադու (Վանա լճի հարավային ավազան) երկրում (Арутюнян, 1985, էջ 52):

Գ. Ջահուկյանը այդ տեղանվան մեջ առանձնացնում է արծաբաղադրիչը, որը կապում է հին հայերենի *արծ*-՝ «փայլուն, սպիտակ» արմատի հետ (Ջահուկյան, 1998, էջ 152):

Վերջինս հանդիպում է Բագրևանդի Արծակ (-ակ ածանցով), Կարինի մոտի Արծն (-ն մասնիկով) և Կոզովիտի Արծափ (*ափ*՝ «եզր» բառի հետ) հին տեղանուններում: Բալդու բաղադրիչը մենք տեսնում ենք Վանի նահանգի Կոտուրի լեռների շրջանի Բալտ, Կիլիկիայի Բալդո (սեռական հոլովի -ո ցուցիչով) և Երզրումի գավառի Բալդասոր, որը նույն Բլդաձորն է, հին գյուղերի անուններում: Դա, կարծում ենք, հին հայերենի *բաղտ*՝ «չարագուշակ, վատ, գեշ» արմատն է բարբառային *բալդ*- տարբերակով, որը առկա է Բալդուարծա տեղանվան մեջ ու- հողակապով և *արծ* բառի հետ, որը, թերևս, հուշում է տեղանքի սպիտակավուն հողեր ունենալու մասին:

*Բալտուլխի* (<sup>1</sup>Baltulhi): Բալտուլխի ցեղը ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված է Դիաուլխի երկրի կազմում: Այսինքն՝ նրանք ապրել են Ճորոխի ավազանում (Арутюнян, 1985, էջ 52):

Բալտուլխի անունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *բաղտի*՝ «չարագուշակ, վատ» և *ուլխի*՝ «հեղեղատ, սրընթաց գետ» արմատներից: Դրանցից առաջինը հանդիպում է Կոտուրի լեռների շրջանի Բաղտ, Վանի գավառի Բաղտ և Երզնկայի Բաղտակոր բնակավայրերի անուններում: Մեզ հավանական է թվում, որ Բալտուլխի ցեղը բնակվելիս է եղել մի վտանգավոր հեղեղատի մերձակա տարածքում, որի անունով էլ այն կոչվել է:

*Բամնի* (<sup>SADU</sup>Bamni): Վանի արքա Արգիշտի 1-ինի տարեգրության մեջ գրված է, որ ուրարտական գործը նվաճել է Բիխուրանի բնակավայրը, հետո գրավել Բամնի լեռան շրջանը (Арутюнян, 2001, N173, VI, 16-20):

Իսկ Սարդուրի 2-րդը տարեգրության մեջ նշում է, որ ուրարտական զենքից փախչող ժողովուրդը զբաղեցնում է Ուշկիանի և Բամնի լեռները (նույնը, N141, F, 26-27):

Ուսումնասիրողները Ուշկիանին նույնացնում են Իջևանից Դիլիջան ձգվող Ոսկեպար լեռների հետ (Զահուկյանը, 1987, էջ 445): Տարածաշրջանի երկրորդ և միակ լեռնաշղթան Փամբակն է, որը ավելի վաղ կոչվել է նաև Բամբակ: Վերջինս, կարծում ենք, կազմված է հին հայերենի *բամա՛* «զոհի սեղան, բեմ, բարձրունք» արմատից -բ հին ածանցով (հմմտ. «թում» և «թումբ», «թամք» և «թամբ», «շամ» և «շամբ», «շեղ» և «շեղբ») և -ակ մասնիկով:

Ի դեպ, Բամզ անունով մի բնակավայր եղել է Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, որի ձիշտ ձևը \*Բամս պետք է լինի՝ հին հայերենի հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով: Ապարանի շրջանում՝ Փամբակի լեռների փեշերին, Բամբ անունով մի գյուղ է հնում գոյություն ունեցել: Իսկ Բամբակ է կոչվել Չըլդըր լճի ավազանի մի շրջան: Կարծում ենք, Բամնի լեռնաշղթան նույնական է հայկական Բամբակի հետ թե տեղով, թե անունով: Այդ անունը իր կազմի մեջ ունի հին հայերենի *բամա՛* «բարձունք» արմատը, որի վրա ուրարտները ավելացրել են -ոն ածականակերտ ածանցը:

*Բանիու* (<sup>URU</sup>Baniu): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Բանիու բնակավայրը գտնվել է Այադու (Վանա լճի հարավային ավազան) երկրում (Арутюнян, 1985, էջ 52):

Այդ տեղանունը կարելի է համեմատել Արդահանի շրջանի Բանիկ (-իկ ածանցով), Երզնկայի Բանիկ, Արձեշի Բանի (-ի մասնիկով), Բիթլիսի նահանգի Բանի, Արցախի Գարդմանի շրջանի Բանանց (-անք ածանցով, հոգնակի թվի սեռական հոլովածևով), նույնի Դիզակի Բանածոր (-ա- հոդակապով, ձոր բառի հետ) և այլ պատմական բնակավայրերի անունների հետ: Դրանց բոլորի մեջ առկա է հայերենի հ.-ե. *բան՛* «գործ» արմատը:

Բանիու տեղանունը, նշված բառից բացի, իր կազմում ունի հին հայերենի -իվ ածանցը (հմմտ. Դիարբեքիի Սարիվ, Դերսիմի Հարթիվ հին բնակավայրերի և Երևանի հին Մամռիվ ջրանցքի անունները):

րը): Ուրարտները, չունենալով վ հնչյունը, հայերեն բառերի կամ տեղանունների այդ բաղաձայնը ներկայացնում էին ս(ու) կամ Ե ունեցող վանկանշանների օգնությամբ (Ջահուկյան, 1987, էջ 242):

*Բան բառի «գործ»* հոմանիշից կազմված են Բերկրիի շրջանի Գործոթ (-ոյթ ածանցով) և Սասունի Խուրթ գավառի Գործավար (-վար ածանցի հետ) հին գյուղերի անունները:

*Բարզուրիանի* (<sup>URU</sup>Bazzuriani): Այս բնակավայրը գտնվել է Վանա լճի հարավ-արևմտյան ավազանի Ուայախս երկրում (Арютюнян, 1985, էջ 54):

Բարզուրիանի տեղանվան մեջ առանձնանում է հին հայերենի *բարծր*՝ «բարծր» բառը, որի վրա -ի- հոդակապով ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ani ածանցը (Ջահուկյան, 1988, էջ 160): Սեպագրերում ձ հնչյունը գրի առնելու միջոց չի եղել: Այն դպիրները կարող էին ներկայացնել միայն շ ունեցող վանկերի սեպանշանների օգնությամբ: Իսկ *բարծր* բառի լսվող ու չգրվող ը հնչյունը ուրարտները արտահայտել են ս(ու) ձայնավոր ունեցող վանկերի նշանների օգնությամբ: *Բարծր* բառը հանդիպում է Կիլիկիայի Բարծր (բերդ), Կոտայքի Բարծրադիր, Անիի շրջանի Բարծրաշեն և շատ այլ բնակավայրերի անուններում:

*Բենզու* (<sup>URU</sup>Benzu): Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 3-րդը Կալխու քաղաքի հնավայրից (Նիմրուդ) հայտնաբերված սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ գործով էնզի գավառը նվաճելուց հետո գրավում է Ուրարտուին պատկանող Բենզու և Անգանու բերդերը: Վերջինս ուսումնասիրողները նույնացնում են այժմյան Սադենից մոտ 10 կմ դեպի արևելք գտնվող էնզենե բնակավայրի հետ (նույնը, էջ 55):

Ուստի դրա հարևանությամբ էլ պետք է որոնել Բենզուն: Հավանաբար, այն նույնական է նշված տարածքի հին Պենզա բնակավայրի հետ՝ նշված Կովկասի ռուսական շտաբի 5 վերստանոց քարտեզում: Հիշենք այն հին տեղանունները, որոնցում Բ հնչյունը տարբերակներում հանդիպում է այ բաղաձայնով:

Այսպես, Կոգովիտի Բաղնոց գյուղը կոչվել է նաև Պատնոց, Արդվինի շրջանի Օպիզան՝ Օբիզա, Քղիի Քերպոզը՝ Քերբոզ և այլն: Բենզու տեղանունը կարելի է համեմատել Տայքի Բենեք (-եք ածանցով, գավառ), Թումանյանի շրջանի Բենիկ (-իկ փոքրացուցիչով), Վանի շրջանի Բենի (-ի մասնիկով, գավառ) և այլ հին տեղանուններ:

րի հետ: Կարծում ենք, տվյալ տեղանվան մեջ առկա են հին հայերենի *պեն-* արմատը, որը հանդիպում է *պեպեն* «անհարթ կետեր» բառի մեջ («անհարթ մակերես» իմաստով) և հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչը: Վերջին ս բաղաձայնը հաճախ է դառնում գ (հմմտ. սկսել և սկիզբ, սկրտալ և գկրտալ): Տեղանուններում Ջավդեքը ունի Սավդեք տարբերակը, Մարատուսը՝ Մարադուգ, Նորատուսը՝ Նորադուգ և այլն):

*Բիանի* (<sup>URU</sup>Biani): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի տարեգրության տվյալների համաձայն՝ Բիանի բնակավայրը գտնվել է Տարիունիից (հայկ. Դարույնք՝ Երասխի վերին ավազանում) Դիաուխի (հայկ. Տայք), Ջուաինա (Ժմկ. Ջիվին՝ Թորթում գետի ակունքներում) տանող ճանապարհի ինչ-որ հատվածում (նույնը, էջ 56):

Նկատի ունենալով սա՝ մենք Բիանին հնարավոր ենք համարում նույնացնել Թորթում գետի հովիտի Ջիվինից ոչ շատ հեռու միջնադարի հայկական Վան բնակավայրի հետ: Ուրարտները, չունենալով իրենց լեզվում վ հնչյունը, այն հաճախ գրելիս են եղել b ունեցող վանկանշանների օգնությամբ: Իսկ հայերենի բարբառային քմայնացած ա ձայնավորը նրանք ներկայացրել են -իա(ի)- ձևով: Այդպես են նրանք Վան անունը դարձրել Բիաինա՝ դրա գավառը նշելու համար, կամ Գառնին գրել են Գիարնի ձևով: Հին հայերենի *վան*՝ «բնակավայր, հյուրանոց, իջևան» արմատը, որը առկա է Վան տեղանվան մեջ, որպես այդպիսին մենք տեսնում ենք Երզնկայի Վան, Ակնի շրջանի Վան, Գողթան գավառի Վան և Վասպուրականի Վան հին տեղանուններում:

*Բիաինա* (<sup>KUR</sup>Biaina): Վանի թագավորները իրենց ստեղծած պետությունը (մ.թ.ա. 859-591 թթ.) միշտ հիշատակել են Բիաինա անունով: Նրանցից միայն Ռուսա 1-ինը այն կոչել է Բիաինիլի (-ili ածանցով), որը թարգմանաբար նշանակում է «Բիայնական»:

Սարգուրի I-ի (9-րդ դարի երկրորդ կես) աքքադերեն լեզվով գրել տված սեպագիր աղբյուրում Բիաինան փոխարինվել է Նաիրի տերմինով (Арютюнян, 1985, N1): Այն այդպես է հիշատակված նաև նրա հաջորդ Իշպուինիի և վերջինիս որդի՝ Մենուայի Քելաշինի երկլեզվյան արձանագրության ասուրերեն լեզվով գրված տարբերակում (նույնը, N3):

Ասորեստանի տիրակալները այս քաղաքական կազմավորումը իր ստեղծման տարվանից անվանում էին Ուրարտու: Դա Ուրուատ-

րի (հետագայում՝ Կորդուք) երկրի անվան վերջին Ուրարտու տարբերակն է՝ քիչ փոխված, որով նրանք կոչել են Վանի նահանգում ուրարտների ստեղծած պետությունը: Սակայն Շամշի-Ադադ 5-րդը (մ.թ.ա. 823-810 թթ.) այն հիշատակում է Նաիրի անունով (Арутюнян, 1970, էջ 136): Այդպես են վարվել նաև Ադադներարի 3-րդը ((մ.թ.ա. 810-783 թթ.) ( նույնը, էջ17)) և Սարգոն 2-րդը (նույնը, N49)՝ այս քաղաքական միավորը երբեմն կոչելով Նաիրի անունով: Դա ասուրական բարդ բառ է, որը նշանակում է «լեռնային երկիր» (տես Նաիրի):

Աստվածաշնչի «Թագավորությունների գրքում» գրված է, որ Ասորեստանի տիրակալ Սենեբքիմին իր որդիները սպանում և փախչում են 'RRT երկիր: Վերջինս Ուրարտու անվան եբրայական՝ առանց ձայնավորների գրության ձևն է: Նշված գրավոր աղբյուրի հունարեն թարգմանության մեջ այն փոխարինված է Արարատ, իսկ լատինականում՝ Արարադ տարբերակով:

Ի դեպ, «Բաբելական ժամանակագրության» տվյալներով՝ Սինախերիբին իր որդին սպանել է տեբետ ամսի 20-ին (Дьяконов, 1951, N63), որը համընկնում է մ.թ.ա. 681 թ. դեկտեմբերի հետ: Նրա հաջորդ արքա Ասարխադոնի «Նամակ Աշուր աստծուն» սեպագիր աղբյուրի հաղորդման համաձայն՝ մարդասպանները ապաստան էին գտել Շուպրիա երկրում (նույնը, N67), որտեղ և եկել էին Ուրարտուից փախստականներ (նույնը, N 65):

Այս բոլորից հետևում է, որ Սինախերիբին սպանողները գնացել էին ոչ թե Ուրարտու, այլ վերջինից արդեն անկախ Շուպրիա (հետագայում՝ Սասուն) երկիր: Այսինքն՝ Աստվածաշնչում Ուրարտու անունը գործածված է իր նախկին նշանակությամբ, երբ Շուպրիան մտնում էր նրա կազմի մեջ: Մ.թ.ա. 680 թվականից Ուրարտուն, կորցնելով գերիշխանությունը լեռնաշխարհում, ամփոփվում է Վանի նահանգի և Արարատյան դաշտի Ազա գավառի ու նրանց միջև ընկած շրջանների սահմաններում:

Նույն գրավոր աղբյուրի՝ Երեմիա մարգարեի գրքի հաղորդումներից մեկի համաձայն, Եհովա աստվածը հրահրում է Մարագ թագավորներին ընդդեմ Բաբելոնի և ցանկանում է օգնության կանչել Արարատի, Մինիի (Ուրմիա լճի հարավային ավազանի Մանա երկիր), Աջբենագի (սկյութների, որոնք ապաստան էին գտել Մարաստանում) թագավորություններին:

Ն. Ադոնցը այս իրադարձությունը նույնացնում է Պարսից Կյուրոսի կողմից մ.թ.ա. 532 թ. Բաբելոնի գրավման հետ՝ նկատի ունենա-

լով, որ Երեմիա մարգարեն ապրել է նշված թագավորի ժամանակ (Ադոնց, 1972, էջ 283): Սակայն հեղինակը նշում է, որ այդ ժամանակ Արարատ՝ Ուրարտու, Մինի՝ Մանա և Աշքենագ՝ Սկյութական թագավորություններ գոյություն չունեին (տես նույն տեղում): Դրա հետ միասին պետք է նկատի ունենալ, որ ոչ թե Երեմիան է կոչ անում այդ կազմավորումներին ապստամբած Բաբելոնի դեմ, այլ դա Եհովա աստծու ցանկությունն է եղել: Ավելին, այդ պատերազմի կոչի ժամանակ Պարսից թագավորությունը գոյություն չունեի: Դրա փոխարեն տեքստում հիշատակված են «մարաց թագավորները»:

Ուստի մենք գտնում ենք, որ այդ իրադարձությունը վերաբերում է մ.թ.ա. 652-651 թթ. Բաբելոնի ապստամբությանն Ասորեստանի գերիշխանության դեմ, երբ նշված թագավորությունները գոյություն ունեին, ինչպես նաև մարաց առանձին քաղաքական կազմավորումները: Ուրարտական սեպագիր աղբյուրներում Վան քաղաքը հիշատակված է Տոսպ անունով: Սակայն ուրարտներն իրենց ստեղծած պետությունը կոչել են Վան քաղաքի անունով Biaina, այն էլ տեղի հայկական բարբառի քմայնացած ա ծայնավորով: Վերջինս հանդիպում է նրանց իսկ կողմից հիշատակված Giarniani (Գառնի) և Biani (Վան՝ Ճորոխի միջին ավազանում)՝ տեղանուններում (Ջահուկյան, 1987, էջ 431 և Աղաբեկյան, էջ 20):

Ուրարտները Վան տեղանվան սկզբի վ հնչյունը արտասանել են b, քանի որ նրանք այն չեն ունեցել: Այստեղ ուրարտների b հնչյունը չի դարձել հայերենում վ, քանի որ այդ լեզվից փոխառյալ բառերում հայերենը այն պահպանել է նույնությամբ (հմմտ. ուրարտ. baba «լեռ, բլուր» և հայ. բաբա՝ նույն իմաստով, ուրարտ. burgana «բուրգ» և հայ. բուրգ, նույնը, էջ 21):

Վան տեղանունը կազմված է հին հայերենի վան «բնակավայր» արմատից: Հ. Աճառյանը այն համարում է իրանականից փոխառյալ բառ, որը կարող էր կատարված լինել մինչև մ.թ.ա. 9-րդ դարը և օգտագործվել հիշյալ բնակավայրը նշելու համար (նույնը, էջ 20): Այդպես են կոչվել Երզնկայի Վան, Խարբերդի Վան, Ախալցխայի Վան, Նախիջևանի Վան, Այրարատի Վանանդ (-անդ ածանցով, գավառ), Գեղարքունիքի Վանեվան և շատ այլ հին հայկական բնակավայրեր:

*Բիխուրանի* (<sup>URU</sup>Bihurani): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի տարեգրության հաղորդման համաձայն՝ ուրարտական գործը նվաճում է Բիխուրանի բնակավայրի շրջանը, հետո գրավում Բամնի լեռան տարածքը (Арутюнян, 2001, N173, VI, 17-20):

Բամնին Փամբակի լեռներն են, որոնք սկսվում են Սևանա լճի անմիջապես հյուսիս-արևմուտքից: Տաուշի շրջանի արևմտյան մասում, որը հարակից է նշված լճի հյուսիսային շրջանին, Հախում գետի վերին հոսանքի շրջանում կա մի հին գյուղատեղի, որը կոչվում է Բոխըր խաչ: Մենք կարծում ենք, որ դա Արգիշտիի հիշատակած Բիխուրանին է, որի անվան մեջ առկա է ուրարտների ավելացրած -ani ածանցը:

Բոխըր տեղանունը կարելի է համեմատել Նախիջևանի Բուխրուտ (-ուտ ածանցով), Ղափանի Բուխրուտ հին գյուղերի և Ջանգեզուրի Ջևու բերդի մոտակայքի Բուխրուտ լեռան անունների հետ: Ի դեպ, Ղափանի Բուխրուտ բնակավայրի անունը հանդիպում է նաև Փուխրուտ ձևով, Բուխուրուտ լեռան անունը՝ Փխրուտ, Բամբակի լեռները՝ Փամբակ: Գ. Ջահուկյանը գրում է հին հայերենի բառերում այդ բ և փ հնչյունների իրար փոխարինելու երևույթի մասին (Ջահուկյան, 1987, էջ 253):

Բիխուրանին, ինչպես և վերը բերված տեղանունները, իր կազմի մեջ ունի հին հայերենի *փուխր* «կակուղ, փափուկ» արմատը, որը հուշում է տեղանքի հողերի այդպիսին լինելու մասին: Տեղանունը հնչել է Բիխուրանի, որի առաջին վանկի լավող և չգրվող ը հնչյունը ուրարտ դպիրները գրել են i(h) ունեցող վանկի նշանի օգնությամբ, քանի որ սեպագրերում ը գրելու միջոց չի եղել:

*Բիտայ* (<sup>URU</sup>Bitaj(a)): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Բիտայ բնակավայրը գտնվել է Այադու (Կանա լճի հարավային ավազան) երկրում (Артеюнян, 1985, էջ 57):

Այն կարելի է համեմատել Երզրունի նահանգի Բիտ (Բիթ), Արդվինի Բիտի (-ի ածանցով) և Հրազդանի կիրճի Բիտնի (-նի մասնիկով) հին տեղանունների հետ, որոնցում առանձնանում է հին հայերենի *բիտ* «արորի խոփ» արմատը: Բիտայ տեղանունը, որն իր մեջ ունի այդ արմատը և -ա(i) ածանցը, մատնացույց է անում, որ այդ տարածքում գուրանը շատ են օգտագործել: *Բիտ* բառի հոմանիշ *խոփ* «գուրանի կտրիչ» բառը հանդիպում է Բիթլիսի նահանգի Սղերդի գավառի Խոփ, Դիարբեքիրի Խոփ, Մուշի գավառի Խոփեր և այլ հին բնակավայրերի անուններում:

*Բիրիխլուզա* (<sup>URU</sup>Birhīlūza): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության

տվյալների համաձայն՝ Բիրխիլուզա բնակավայրը գտնվել է Այադու (Վանա լճի հարավային ավազան) երկրում (նույնը, էջ 56-57):

Այն հիշեցնում է Վանի գավառի Բիրի (-ի ածանցով), Մուշի Բիրան, Բալուի շրջանի Բիրան, Արագածոտնի Բիրական (-ական վերջավորությամբ, այժմ Բյուրական) հին բնակավայրերի անունները, որոնցում առանձնանում է հին հայերենի *բիր*՝ «բրիչ, գավազան» արմատը:

Բիրխիլուզա տեղանվան մեջ բացի նշված *բիր*՝ «բրիչ» արմատից առկա է նաև հին հայերենի *խիլ*՝ «փնտրտուք» բառը:

Եթե նկատի ունենանք, որ հին հայերենում գոյություն է ունեցել նաև ս և գ հնչյունների լծորդություն (հմմտ. սկսել և սկիզբ, սկրտալ և գկռտոց, տեղանուններում Սավդեքը հանդիպում է Ջավդեք տարբերակով, Մարատուսը՝ Մարադուզ, Նորատուսը՝ Նորադուզ), ապա պարզ կդառնա, որ Բիրխիլուզա տեղանվան մեջ առկա է -ուք ածանցը: Անունը դրված է հոգնակի հայցական հոլովածևով, որը վկայված է գ տարբերակով:

Կարելի է ենթադրել, որ նշված բնակավայրերում, ինչպես նաև Բիրխիլուզա գյուղում, հողը մշակելու հիմնական միջոցը եղել է բրիչը:

*Բիթ-Չամանի* (<sup>KUR/URU</sup>Bit-Zamani): Այս գավառը հիշատակված է ասուրական սեպագիր արձանագրություններում, որը ներկայացրել է այժմյան Դիարբեքիրի շրջանը: Իսկ նույն գրավոր աղբյուրների տվյալներով՝ դրա կենտրոնը կոչվել է Ամեդու, որը Դիարբեքիրն է (նույնը, էջ 25 և 58): Ամեդուն Ամիդ տարբերակով մենք հանդիպում ենք հայ պատմիչ Ագաթանգեղոսի աշխատության մեջ:

Բիթ-Չամանի տեղանվան առաջին բաղադրիչը, ինչպես հայտնի է, ասուրերեն bitu՝ «տուն, բնակություն» բառն է, որը նշված սեպագիր աղբյուրներում հանդիպում է Ատրեստանի և հարակից որոշ երկրների հորջորջումների հետ (հմմտ. Բիթ-Ագուսի, Բիթ-Բարուա, Բիթ-Բուրուտաշ, Բիթ-Սանգիբուտու, նույնը, էջ 57-59):

Չամանի տեղանունը, կարծում ենք, իր կազմում ունի հայերենի հ.-ե. *ամ*- արմատը (հմմտ. *ամալ*՝ «լցնել») «լի, առատ» իմաստով, գ-սաստկացուցիչ նախածանցը (Ջահուկյան, 1987, էջ 243) և -անի հավաքական նշանակությամբ մասնիկը: Այն նշանակում է «լի, առատ»:

Ամենայն հավանականությամբ դա հաստատվում է նշված գավառի կենտրոն Ամիդի անունով, որը նույնպես իր մեջ ունի *ամ*-՝ «լի, առատ» արմատը՝ հին հայերենի –իտ ածանցի հետ (հմմտ. *ծրծիտ*՝

«գիշատիչ», *ծրծել*՝ «կեղեքել», նույնը, էջ 358): Վերջինս հանդիպում է նաև Անձիտ, Սևիթ և այլ հին հայկական տեղանուններում:

Ի դեպ, հին հայերենում գոյություն է ունեցել նաև դ և տ հնչյունների հերթազարկություն (հմմտ. դոփեմ և տոփեմ, նույնը, էջ 253):

Նշված գ- նախածանցով և *ամ*-՝ «լի» արմատով են կազմված Սևանա լճից քիչ դեպի հարավ-արևելք գտնվող Ջաման (-ան հոգնակիակերտ մասնիկով, ավերակ), Բայազետի գավառի Ջամիք (-իք ածանցով) և Արդվինի Ջամվան (*վան*՝ «բնակավայր» բառի հետ) հին բնակավայրերի անունները:

*Բուբուզի* (<sup>URU</sup>Bubuzi): Ուրարտական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Բուբուզին Արմարիլի (Վասպուրական) երկրի բնակավայրերից մեկն է եղել (Арутюнян, 1985, էջ 59):

Այն կարելի է համեմատել Կիլիկիայի Անտիոքի շրջանի Բոբոս գյուղի անվան հետ: Վերջինս հանդիպում է նաև Բոբոս ծևով: Կարծում ենք՝ դրանում առկա է հին հայերենի պարսկերենից փոխառյալ *բոբ*՝ «գորգ» բառը և -ոք ածանցը: Այդ անունը դրված է հոգնակի հայցականի հոլովածևով:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ հին հայերենում գոյություն է ունեցել ս և գ հնչյունների հերթազարկություն (տես Բիրխիլուզա), ապա պարզ կդառնա, որ Բուբուզի տեղանունը Բոբոսի նման իր կազմում ունի *բոբ*՝ «գորգ» արմատը և դրված է հոգնակի թվի հայցական հոլովածևով և հուշում է տեղանքի գերազանց՝ գորգի նման բնություն ունենալու մասին:

Կարծում ենք՝ Բուբուզին Այադուի տարածքի հետագայի՝ Շատախի գավառի Բոբոնիս գյուղն է, որի անվան մեջ - ոս (< - ոք) վերջավորությունը փոխարինված է -ոն և -ի ք ածանցներով: Հոգնակի հայցական հոլովում տեղանունը դարձեցել է Բոբոնիս:

*Բուզունիա* (<sup>URU</sup>Buzunia): Ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումների համաձայն՝ Բուզունիա գավառը գտնվել է Իգանի (Չըլդըր լճի հարավային ավազան) և Էրիախի (արևելյան Շիրակ) երկրների միջև (նույնը, էջ 59-60):

Ու ժամանակակից Աշոցքի շրջանն է, որը կոչվել է իր հին Բագունիք բերդաքաղաքի անունով (հմմ. Ուրմե և Արմե, Կուդմուխի և Կադմուխի):

Բուզունիա տեղանունը, թերևս, իր կազմում ունի հին հայերենի *բագ*- արմատը, որն առկա է *բագուկ* «բագուկ» բառի մեջ և -ունի ածանցը:

Պրա վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ia մասնիկը: Այդ բառը հանդիպում է Աղբակի Բազ, Վանի շրջանի Բազ և Երզնկայի Բազունիս հին բնակավայրերի անուններում ու հուշում է, թե այդ գյուղերը գտնվել են լեռան բազուկի վրա:

*Բուինիալխի* (<sup>URU</sup>Buinalhi): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի Սիսիանում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ գրված է, որ Ծուլուկու երկրի (հայկ. Ծղուկ գավառ) տերերը նրան ներկայացել են Իրդուանի բնակավայրում (նույնը, N 411):

Իսկ Սարդուրի 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ նա Իրդուանիի հետ նվաճում է նաև Բուինիալխի բնակավայրը (նույնը, N 241, A, 16-17): Հետևաբար վերջինս պետք է որոնել Սիսիանի շրջանի սահմաններում (Арутюнян, 1985, էջ 160):

Ինչպես Գ. Զահուկյանն է կարծում, Բուինիալխի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *բոյն* «թռչունի բույն, գազանի որջ» արմատը իր «հյուղակ, խրճիթ» իմաստով (Զահուկյան, 1988, էջ 158):

Իսկ երկրորդ՝ -ալխի բաղադրիչը, կարծում ենք, նույն լեզվի *աղխ* «ցեղ, ժողովուրդ» արմատն է սեռական հոլովի -ի ցուցիչով: Այդ տեղանունը նշանակում է «հյուղակներում ապրող մարդիկ»:

*Բույն* բառը առկա է Խարբերդի նահանգի Բույնե (-է ածանցով) և Սասունի Սոտկան գավառի Բույնուտի (-ուտ մասնիկով) հին տեղանուններում:

*Գաուրախի* (<sup>KUR/URU</sup>Gaurahi): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Գաուրախի գավառը իր համանուն կենտրոնով տեղադրվում է Արձածանի և Եփրատ գետերի միախառնման հարավային անկյունում և նույնացվում այդ տեղի հին հայկական Գավրեքի հետ, որի անվան -եք մասնիկը ուրարտները փոխարինել են -ahi ածանցով:

Գ. Զահուկյանը նշված տեղանունը բխեցնում է հին հայերենի *գավառ* բառից: Նույն տարածքի Արածանիի Սուսս վտակի անվան մեջ նա տեսնում է այդ լեզվի ուրո «ուրո» արմատը, որը տվյալ գետի բնութագիրն է (նույնը, էջ 157 և 152):

Գավառ բառը նույնությամբ շատ է հանդիպում հայոց հին տեղանուններում, որը և հաստատում է գիտնականի այդ ստուգաբանությունը:

*Գետա* (<sup>URU</sup>Geta): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր արձանագրության հաղորդումների համաձայն՝ Գետան Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) 30 բերդաքաղաքներից մեկն է եղել (Арутюнян, 1985, էջ 62):

Գ. Ջահուկյանը կարծում է, որ Գետա տեղանունը հիշեցնում է հին հայերենի *գետ*՝ «գետ» բառը: Սակայն վերջինս այն ժամանակ գ-ի փոխարեն պետք է ունենար վ բաղաձայնը (Ջահուկյան, 1988, էջ 161):

Կարծում ենք՝ ոչ բոլոր հայկական տեղանուններն են, որոնք Գեղարքունիքի նման այն ժամանակ բառասկզբում ունեցել են վ (Ուելիկունի): Օրինակ՝ Արածանիի Տիգրիսին խառնվելու անկյունի Գաուրախին (Գավռեք) այդ նույն ձևով էլ վկայված է, կամ Գառնին ուրարտները հիշատակում են Գիարնիանի ձևով:

*Գետ* արմատը առկա է Ախուրյանի շրջանի Գետք (-ք ածանցով), Շիրակի Գետիկ (-իկ մասնիկով), Երզրումի Գետիկ և այլ հին տեղանուններում:

Գետա տեղանունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *գետ*՝ «գետ» արմատը և -ա(-այ) ածանցը:

*Գիարնիանի* (<sup>KUR</sup>Giarniani): Գառնի ամրոցի պեղումներից հայտնաբերված՝ Վանի տիրակալ Արգիշտի 1-ինի սեպագիր արձանագրության մեջ նշված է, որ նա նվաճել է Գիարնիանի երկիրը (Арутюнян, 2001, N240): Ինչպես ուսումնասիրողները կարծում են, թագավորը այդ շրջանը կոչել է իր բերդի անունով:

Մովսես Խորենցու կարծիքով՝ Գառնին կոչվել է Գեղան թագավորի թոռ Գառնիկի անունով, որը ժառանգություն է ստացել այդ ձեռակերտը (Մովսես Խորենացի, I, ԺԲ): Սակայն հայ պատմիչը մեկ այլ արժիքով գրում է, որ հայոց թագավոր Վաղարշակը Հայկի զարմի մարդկանց համար ստեղծում էր նախարարություններ և նրանց կոչում այդ գավառների անուններով (նույնը, I, Ը): Ուստի Գառնին տեղանուն է եղել և ոչ անձնանուն:

Գ. Ջահուկյանը Գառնին բխեցնում է ուրարտերենի *garini*՝ «ամրոց, բերդ» բառից (Ջահուկյան, 1988, էջ 147): Եթե այդպես է, ապա ուրարտները Գիարնիանիի փոխարեն կգրեին Garini:

Տեղանուններում հաճախ կ բաղաձայնը փոխարինվում է գ-ով: Այսպես՝ Բիթլիսի Կառնոց գյուղի անունը հանդիպում է Գառնոց ձևով, Երզրումի Կառնին՝ Գառնի, Փոքր Հայքի Կառնակը՝ Գառնակ, Մուշի Կառնենը՝ Գառնեն, Ախուրյանի Կառնուտը՝ Գառնուտ և այլն:

Կարծում ենք՝ Գառնի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *կառ*՝ «կանգնեցնել, շինել, հաստատել» արմատը և հոգնակի հավաքական իմաստ տվող -նի ածանցը: Այն նշանակում է «հաստատուն շինություններ ունեցող բնակավայր»:

Ուրարտների հիշատակած տարբերակում առկա է Գառնի անվան ա ծայնավորի բարբառային քմայնացած տարբերակը:

*Գուգունա* (<sup>P</sup>Guguna): Ուրարտական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ այս գետը գտնվել է Վանի շրջանում (Арутюнян, 1985, էջ 65):

Գ. Ջահուկյանը Գուգունա տեղանվան մեջ առանձնացնում է հին հայերենի *գոգ*՝ «գոգավոր, փոս» արմատը (Ջահուկյան, 1988, էջ 152):

Կարծում ենք դրա -սոս բաղադրիչը հին հայերենի -ուն ածականակերտ ածանցն է: Տվյալ բացատրությունը մատնանշում է, որ այդ գետը գտնվել է գոգավոր տեղում:

*Գոգ բառն* առկա է Բիթլիսի Գոգակ (-ակ ածանցով), Վանի նահանգի Գոգան (-ան մասնիկով), Ջավախքի Գոգաշեն և շատ այլ հին բնակավայրերի անուններում՝ հուշելով դրանց տեղանքի գոգավոր լինելու մասին:

*Գուլուտախի* (<sup>KUR</sup>Gulutahi): Ուսումնասիրողները այդ գավառը տեղադրում են Երասխ և Արփա գետերի միախառնվելու անկյունում (Арутюнян, 1985, էջ 66): Ղա հաստատվում է տեղի Գուլուլու հին բնակավայրի առկայությամբ, որը Գուլուտի դրափոխված ձևն է: Գուլուտախի տեղանունը կազմված է հին հայերենի *գուլ*՝ «բութ» արմատից և -ուտ ածանցից, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ahi ածանցը: Այն հուշում է տեղի գուլ՝ կոշտ հողեր ունենալու մասին:

Գուլ բառը մենք տեսնում ենք էջմիածնի շրջանի Գուլուտ, Մեղրիի Գուլ և Ապարանի շրջանի Գուլապատ (-ա հոդակապով և պատ բառի հետ) հին տեղանուններում:

*Գուրիաինի* (<sup>KUR</sup>Guraini): Վանի արքա Ռուսա 1-ինի Սևանա լճի հարավային ափի Ծովինար գյուղի մոտակայքի սեպագիր արձանագրության մեջ Գուրիաինին հիշատակված է 19 երկրների հետ, որոնք գտնվել են «ծովի այն կողմում, բարձր լեռներում» (նույնը, էջ 67):

Եթե նկատի ունենանք, որ նա զորքով այդ լճի ավազան մուտք է գործել հյուսիս-արևմտյան կողմից (իսկ դա այդպես է), ապա այդ երկրները պետք է որոնել Սևանա լճից հարավ և հարավ-արևելք, այսինքն՝ Սյունիքի և Արցախի տարածաշրջաններում:

Գուրիաինի տեղանունը, որի մեջ առկա է ուրարտների ավելացրած -ini ածանցը, հիշեցնում է Վանի նահանգի Ջուլամերկի շրջանի Գորանիս (-անի ածանցով և հոգնակի հայցականի -ս ցուցիչով), Ախալցխայի Գորա (-ա մասնիկով) և Վասպուրականի Աբաղայի դաշտի Գորան (-ան վերջավորությամբ) հին տեղանունները, որոնցում առանձնանում է *գոր* բաղադրիչը:

Հին տեղանուններում նկատվում է *ր* և *ռ* հնչյունների լծորդություն: Արցախի Գորոզ բերդի անունը հանդիպում է Գոռոզ ձևով, Բարձր Հայքի Գորոբու վանքինը՝ Գոռոբու, Դերսիմի Կորճան գյուղինը՝ Գոռճան տարբերակով:

Ուստի կարծում ենք, որ Գուրիաինի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *գոր* «խորխտ, խիզախ» արմատը և -իա(-յա) ածականակերտ ածանցը: Գուրիաինի երկիրը, թերևս, Գորիսի շրջանն է, որի անվան մեջ առկա է -իք ածանցը: Այն հոգնակի թվի հայցական հոլովով է դրված:

*Գուրքու* (<sup>\$ADU</sup>Gurqu): Վանի թագավոր Արգիշտի 2-րդի տարեգրության հաղորդումների համաձայն՝ ուրարտական զորքը նվաճում է Տուարածինի-խուբի գավառը մինչև Գուրքու լեռը: Գ. Ղափանցյանը վերջինս նույնացնում է Հաշտյանք գավառի Քարքե լեռան հետ (նույնը, էջ 67-68, հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 154):

Տուարածինի-խուբին՝ հայկական Տվարածատափ գավառը, ընկած է եղել այժմյան Խնուսից անմիջապես հյուսիս, որից Հաշտյանքը բաժանված է Վարաժնունիք, Արշամունիք և Պալունիք գավառներով ու գտնվել է Սասունի հյուսիս-արևմտյան սահմանին առընթեր (Երենյան, քարտեզ): Ուստի դժվար է ճշմարտացի համարել Գուրքուի Քարքեի հետ նույնական լինելը:

Մենք առաջարկում ենք Գուրքու լեռը, որի անվան վերջի -qu սեպանշանը ընթերցվում է նաև qu<sub>8</sub>, նույնացնել այժմյան Օլթիից մոտ 14 կմ հարավ-արևմուտք գտնվող Կարադաղի (լեռ) հետ, որը միջնադարում հայտնի է եղել Գըրգուռ անունով: Տուարածինի-խուբիից այն բաժանված է ոչ թե երեք, այլ մեկ շրջանով, որը Բասենն է՝ Երասխի վերին հովտում: Այդ լեռը կոչվել է նաև Գուրգուր, որի անվան վերջին հնչյունը ուրարտները չլսելու հետևանքով կարող էին

բաց թողնել: Այդ տեղանունը կազմված է գրգռալ «գրգռոց հանել» բնածայնական արմատից և հուշում է, թե լեռը հրաբխային է եղել:

*Գուրքումելի* (<sup>KUR</sup>Gurqumeli): Վանի տիրակալ Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտ հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ Գուրքումելին հիշատակված է Սևանա լճից հարավ և հարավարևելք գտնվող երկրների հետ (Арутюнян, 1985, N389):

Կարծում ենք, այն Սյունիքի Հաբանդ գավառն է, որը կոչվել է իր Գորգանց գյուղի անունով: Գուրքումելի տեղանվան զս սեպանշանը ընթերցվում է նաև ցս<sub>13</sub>: Ուստի այն կարելի է կարդալ Գուրգումելի, որի մեջ առկա է հին հայերենի *գորգ*՝ «խալի» արմատը, ներգոյական հոլովի -ում վերջավորությունը և *ել*՝ «գառիվեր» բառը: Այն հուշում է այդ տարածքի գառիվեր լանջերի և գորգերի նման ծաղկուն բուսական աշխարհի մասին:

*Գորգ* բառը նման իմաստով հանդիպում է այժմյան Օլթիի շրջանի Գորգեր (-եր հոգնակիակերտով), Խոտրջուրի Գորգան (-ան ածանցով) բնակավայրերի և Մասիսից արևմուտք Գորգան լեռան անուններում:

*Դայազունա* (<sup>URU</sup>Dajazuna): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Դայազունան Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) 30 բերդաքաղաքներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 70):

Դայազունա տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *դախ*՝ «կարծր» արմատի *դայ* բարբառային տարբերակից և *սուն*՝ «պահել» բառից ու նշանակում է «կարծր կամ ամուր տեսք ունեցող բերդ»:

Պետք է նկատի ունենալ, որ հայկական հին տեղանուններում առկա է ս-ի գ դառնալու հնչյունափոխությունը (հմմտ. Մարատուս և Մարադուզ, Նորատուս և Նորադուզ, Աբիսիա և Աբիզիան և այլն): Դայ- արմատը մենք տեսնում ենք Կարսի մարզի Դայլար, Սեբաստիայի նահանգի Դայլի (լի «առատ» բառի հետ) և Կոզովիտի Դայեար (-եար ածանցով) հին տեղանուններում:

*Դարանի* (<sup>URU</sup>Darani): Ուրարտուի արքա Արգիշտի 1-ինի Էլառ գյուղի մոտ թողած սեպագիր արձանագրության հաղորդումների համաձայն՝ Դարանի քաղաքը Ուլուանի գավառի (Կոտայքի շրջան) կենտրոնն է եղել (նույնը, էջ 77):

Այն կարելի է համեմատել Նախիջևանի Ղար, Տրապիզոնի նահանգի Ղարալի (-ալի ածանցով), Սյունիքի Բաղք գավառի Ղարատափ, Սանայինի մոտի Ղարք (-ք մասնիկով) և Վանի Հեքյարի շրջանի Ղարու (-ու վերջավորությամբ) հին գյուղերի անունների հետ, որոնց մեջ առանձնանում է հին հայերենի *ղար*՝ «բարձրավանդակ, գառիվայր, շեղ բարձրություն» արմատը: Ղարանի տեղանունը, բացի այդ արմատից, իր կազմում ունի -անի ածականակերտ ածանցը: Այն նշանակում է «շեղ բարձրության վրա կառուցված բնակավայր»:

*Ղեգիզու* (<sup>URU</sup>Dezizu): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Ղեգիզուն գտնվել է Այադու (Վանա լճի հարավային ավազան) երկրում (նույնը, էջ 73):

Այդ տեղանունը հիշեցնում է Վանի Հեքյարի գավառի Ղեգ, Կոտուրի շրջանի Ղեգա (-ա ածանցով), Նախիջևանի Ղիգա և Խոյի Ղիգաղիգ հին բնակավայրերի անունները, որոնց մեջ առկա է հայերենի հ.-ե. *ղեգ*՝ «կույտ, շեղջ» արմատը, որը հուշում է, թե գյուղը կառուցված է թունբ տեղի վրա:

Ղեգիզու տեղանունը, բացի այդ *ղեգ* արմատից իր կազմում ունի -իք ածանցը, որով այն հոգնակի թվի հայցական հոլովում դառնում է Ղեգիս:

Չ հնչյունի ս բաղաձայնին փոխարինելը խորթ չէ հին հայկական տեղանուններին: Օրինակ՝ Մարատուսը վկայված է նաև Մարադուզ ձևով, Նորատուսը՝ Նորադուզ, Աբիսիան՝ Աբիզին և այլն:

Ղեգիզու տեղանունը հուշում է, թե այդ բնակավայրը կառուցված է եղել բլուրների վրա: Տեղանվան վերջի ս(ու) ձայնավորը Ասորեստանի գրիչներն են ավելացրել: Այն նրանց լեզվի ուղղական հոլովի -ս(ում) վերջավորության առաջին հնչյունն է:

*Ղիաուխի* (<sup>1</sup>Diauhj, <sup>1</sup>Diauehj): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Ղիաուխի (Ղիաուեխի) վարչաքաղաքական միավորը, որի անունը հանդես է գալիս ցեղ մատնանշող (I) դետերմինատիվով, ինչպես մասնագետները գտնում են, նույնական է ասուրական վավերագրերում բազմիցս վկայված Ղայանի նահանգի (Ղայաենի) հետ և գտնվել է Ճորոխի միջին ավազանում: Ղա հետագայի հայկական գրավոր աղբյուրներում հիշատակված Տայքն է (նույնը, էջ 70, 73):

Դրանում առկա է *դայ-* արմատը դիա- ձևով և արմատի ո(օ) ձայնավորով, որը այդ տեղանվան հոգնակի թվի սեռական հոլովում վերականգնվում է (հմմտ. Տայք և Տայոց):

Այդ արմատի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի՝ մի դեպքում *-hi*, իսկ մյուս դեպքում՝ դրա տարբերակ *-ehi* (e<sub>hi</sub>) ածականակերտ ածանցը:

Հին հույները այդ երկրի անունը վերցրել են ուրարտներից: Դրա համար էլ նրանց պատմիչների հիշատակած *taoxoi* «տաոխսներ» տայեցիներին վերաբերող անունը իր մեջ պահպանել է ուրարտների *-hi* ածանցի հետքը (h=խ):

Դիաուխի տեղանվան *դիաու* (*diau*)- բաղադրիչը, որը ասուրական տարբերակի *dai-*ն է, իրենից ներկայացնում է հին հայերենի *դահ*՝ «կարծր» արմատի *դայ-* տարբերակը, որը հուշում է Տայոց քար-ժայռի կարծր լինելու մասին: Դրա վրա կառուցված համանուն բերդի անունով էլ երկիրը կոչվել է Տայք (տես Դայանի):

*Դիդինի* (<sup>KUR</sup>Didini): Ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումների համաձայն՝ Դիդինին Դիաու(ե)խիին (հայկական Տայք) հարևան գավառ է ձորոխի ավազանում (նույնը, էջ 73):

Կարծում ենք՝ այդ տեղանունը իր կազմում ունի հին հայերենի պարսկերենից փոխառյալ *դէտ*՝ «դիտող, պահապան» արմատը, որի վրա ուրարտները ավելացրել են ածականակերտ *-ini* ածանցը:

Այն առկա է Կոզովիտի Դիդան (-ան մասնիկով), Աշտարակի շրջանի Դիդիկոնդ (հմմտ. *կոնդ*՝ «բլուր»), Նախիջևանի Դիդվար (-վար ածանցով), Իջևանի Դիտավան և այլ հին տեղանուններում: Հին հայերենում դ հնչյունը հաճախ է փոխարինում տ բաղաձայնին (Զահուկյան, 1987, էջ 253, տես Ադանի):

Կարծում ենք՝ Դիդինի երկրի համանուն կենտրոնը դիտանոց է ունեցել, որի պատճառով էլ այն նման անուն է ձեռք բերել:

Հարկ է նշել, որ Գ. Մելիքիշվիլին ժամանակին Դիդինի տեղանունը համեմատել է վրացերենի *դիդի*՝ «մեծ» բառի հետ և դրա հիման վրա եզրակացրել, որ նշված գավառը բնակեցված է եղել վրացական ցեղերով (Меликишвили, 1954, էջ 119):

Կարծում ենք՝ վերը բերված փաստերը հերքում են նրա այդ տեսակետը, քանի որ Դիդինի տեղանունը կազմված է հին հայերենի *դետ-* (դիտ, դիդ) արմատից, որը հաճախ է հանդիպում հայկական հին տեղանուններում:

*Դիլիզիա* (<sup>URU</sup>Dilizia): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Դիլիզիան Այադու երկրի (Վանա լճի հարավային ափագան) 30 բերդաքաղաքներից մեկն է: Դրանք գտնվել են լեռների կիրճերում և ավելոծվող ծովի ափին (Арутюнян, 1985, էջ 74):

Այդ տեղանունը կարելի է համեմատել Խարբերդի գավառի Դիլակ (-ակ ածանցով), Բիթլիսի նահանգի Սղերդի շրջանի Դիլան (-ան մասնիկով), Արձեշի Դիլան, Կարսի Դիլան, Երզրումի Դիլավ (-ավ ածանցով, հմմտ. Մուկսի Կձավ, Բագրևանդի Ձիրավ, Հայկական պարի լեռ Սուկավ, Սափտակի Որդնավ, Капанцян, 1975, էջ 169) և այլ հին տեղանունների հետ:

Դրանցում առկա է հին հայերենի *տիլի*՝ «ցեխ» արմատի *դիլ* բարբառային տարբերակը (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 160):

Դիլիզիա տեղանունը այդ *դիլ*- արմատի հետ իր կազմում ունի իք ածանցը: Այն հոգնակի հայցական հոլովածնում դառնում է Դիլիս: Հին հայկական տեղանուններում նկատվում է ս հնչյունի գ դառնալու երևույթը (հմմտ. Սավդեք և Ջավդեք, Մարատուս և Մարադուգ, Նորատուս և Նորադուգ, տես Բենզու):

Այդ տեղանվան վրա ուրարտները վերջից ավելացրել են իրենց լեզվի -ia մասնիկը: Դիլիզիան նշանակում է «տղմտ տեղ գտնվող բնակավայր»:

*Դիրիա* (<sup>KUR/URU</sup>Diria): Ասորեստանի թագավոր Աշուրնասիրապալ 2-րդի տարեգրության մեջ գրված է, որ նա զորքով մուտք է գործել Ամադանի լեռների անցուղի, իջել Դիրիա գավառ Արկանիա և Ամադանի լեռների միջև, ապա անցել Ծուա գետը (Арутюнян, 1985, էջ 36):

Դա այժմյան Մադենի մոտի լեռնանցքն է, որի արևմտյան կողմի լեռները կոչվել են Ամադանի (տես ս), իսկ արևելյանը՝ Արկանիա (տես ս): Իսկ Ծուա գետը Ծովք լճից սկիզբ առնող Տիգրիսի ակունքի համանուն թևն է (Խաչատրյան, 1998, էջ 123):

Դիրիա տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի հայերենի *հ.-ե. դնել*՝ «դնել» արմատից կազմված *դիրի*՝ «դիրք, դրվածք» բառը, որի վրա ասորեստանցիները ավելացրել են -ia ածանցը:

Այն ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է Դիրգունի ձևով, որում ուրարտերենի -uni ածանցը փոխարինում է առաջինի -ia մասնիկին: Իսկ երկու ձայնավորների միջև եղած j կիսաձայնը ուրարտները դարձրել են g (հմմտ. Ijani և Igani):

*Դիր* բառը մենք տեսնում ենք Դիարբեքիրի շրջանի Դիրան (-ան ածանցով), Սասունի Դիրա (-ա մասնիկով), Կոտուրի լեռների շրջանի Դիրալի (-ալի վերջավորությամբ) և Վանի Դիրի հին տեղանուններում:

*Դիուաբլի* (<sup>URU</sup>Diabli): Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 3-րդի Կալխու քաղաքի հնավայրից հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ Դիուաբլին հիշատակված է որպես էնզի երկրի բնակավայր: Վերջինս հայկական Անձիթ գավառն է՝ Արածանիի ստորին ավազանում (Арутюнян, 1985, էջ 75):

Դիուաբլին, կարծում ենք, տեղով և անունով նույնանուն էր Մալաթիայից հարավ-արևելք միջնադարի հայկական Դիվոլ բնակավայրի հետ: Դրանից ենթադրվում է, որ այդ ժամանակ էնզին, որը Մալաթիայի շրջանի արևելյան հարևանն էր, իր մեջ ընդգրկել է նաև Եփրատից արևմուտք ընկած որոշ տարածքներ:

Դեռևս մ.թ.ա. 14-րդ դարից Մալաթիայի գավառը մեծ մասամբ բնակեցված է եղել խուրիներով: Կարծում ենք՝ նրանց արտասանությամբ հայկական Դիվոլ տեղանունը դարձել է Դիուաբլի: Ուրեմն ասորեստանցիները այդ տեղանունը օգտագործել են խուրիների հնչմամբ:

Վերջիններս, ինչպես ուրարտները, վ բաղաձայն չեն ունեցել: Նրանք հայկական տեղանունների այդ հնչյունը դարձրել են ու կամ բ: Դրա համար էլ Դիվալ տեղանունը (կամ Դիվոլ) դարձել է Դիուաբլի:

Այն կազմված է հին հայերենի պարսկերենից փոխառյալ *դեվ*- (դիվ)՝ «դեվ» և հ.-ե. ծագումով *ալլ-եյ*՝ «սրբել» արմատներից ու նշանակում է «սուրբ դեվ»:

*Դեվ* բառը մենք տեսնում ենք Սարիղամիշի շրջանի Դիվիկ (-իկ ածանցով), Ալաշկերտի Դիվավան (ավան բառի հետ), Խնուսի Դիվանի (-անի մասնիկով) և Օլթիի Դիվածոր հին տեղանուններում:

Հետևաբար, նշված բնակավայրերում հեթանոսական ժամանակաշրջանում Դեվ աստծու պաշտամունք է եղել:

Իսկ *ալլ-* արմատը հանդիպում է Քղիի գավառի Ավլո, Վանի նահանգի Ավլիան (-յան ածանցով) և Ախալցխայի Ավլախ (հմմտ. ախ < աղխ «բազում» բառի հետ) հին բնակավայրերի անուններում:

*Դուաին* (<sup>URU</sup>Duain): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման

համաձայն՝ Ղուաինն Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) բնակավայրերից մեկն է եղել (նույնը, էջ 75):

Այս անունը հիշեցնում է Բասենի շրջանի Ղու, Ալաշկերտի Ղուավան (ավան բառի հետ), Վանի Աղբակ գավառի Ղուավան և Վանի նահանգի Բաշկալայի Ղուվան (վան բառի հետ) հին գյուղերի անունները:

Հին հայերենի *ղու*՝ «բլուր» արմատը պարսկերենից փոխառյալ բառ է, որը առկա է տվյալ Ղուաին տեղանվան մեջ -ային ածականակերտ ածանցով ու նշանակում է «բլրային»:

*Եղիանի* (<sup>URU</sup>Ediani): Վանի տիրակալ Սարգուրի 2-րդի տարեգրության հաղորդումներից մեկի համաձայն՝ նա զորքով գնում է Էտիունի, նվաճում Լիքիունի երկիրը և ապա՝ Եղիանի թագավորանիստ քաղաքը (Арутионян, 2001, N 241):

Լիքիունին Սևանա լճի հարավային ափին առընթեր հետագայի Լիճք բնակավայրն է իր շրջանով (տես Լիքիունի): Նշված տարածաշրջանից անմիջապես արևելք զբաղեցրել է Սոդք գավառը (այժմ Ջոդի շրջան), որի Ետեցիք (հանդիպում է նաև Եդեցիք ձևով), միջնադարյան գյուղի հետ կարելի է նույնացնել Եղիանին:

Վերջինիս -անի ածանցը, որը ավելացրել են ուրարտները, փոխարինում է հայկական տարբերակի -եցի և -ք մասնիկներին: Իսկ տ և դ հնչյունների տարբերությունը հին հայերենի գանազան բարբառների արտասանության հետևանք է (հմմտ. տոփեմ և դոփեմ, Ջահուկյան, 1987, էջ 253, տես Աղաենի):

Եդ- բաղադրիչը հայերենի հ.-ե. *ետ*՝ «հետո, ետքը, վերջը» (տես հետ, հետին) արմատի տարբերակ է:

Եղիանին նշանակում է «հետևի կողմում գտնվող բնակավայր»:

*Ելաինի* (<sup>KUR</sup>Elaini): Վանի արքա Ռուսա 1-ինի Սևանա լճի հարավ-արևմտյան ափի մոտ թողած սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ նա զորքով Ելաինին նվաճել է ի թիվս նշված լճից այն կողմ (հարավ-արևելք), բարձր լեռներում գտնվող 19 երկրների (Арутионян, 1985, էջ 252):

Կարծում ենք՝ Ելաինի տեղանունը կազմված է հայերենի հ.-ե. *ել*՝ «գառիվեր» արմատից -ա ածանցով, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ino ածականակերտ մասնիկը:

*Ել* բառը հանդիպում է Շատախի շրջանի Ելք (-ք վերջավորությամբ, լեռ), Սասունի Մոտկանի գավառակի Ելիկ (-իկ ածանցով),

Կողովիտի Ելան (-ան մասնիկով) և այլ հին տեղանուններում ու հուշում է տեղի գառիվեր դիրքի մասին:

*Ելուգիա* (<sup>URU</sup>Elugia): Ասորեստանի թագավոր Թիզլաթպալասար 3-րդի տարեգրության մեջ հիշատակված Ելուգիա բնակավայրը ուսումնասիրողները տեղադրում են Ծովք լճից քիչ հարավ-արևմուտք (նույնը, էջ 254): Դա Խարբերդի նահանգի Եղեգիք գյուղն է. որի անունը կազմված է հին հայերենի *եղեգ* «եղեգ» արմատից -իք հոգնակիակերտ ածանցով: Ելուգիա տեղանվան մեջ -իք մասնիկը փոխարինված է -ia վերջավորությամբ:

*Եղեգ* բառը շատ է հանդիպում հայերեն հին տեղանուններում:

*Ետինի* (<sup>SADU</sup>Eitini): Ասորեստանի թագավոր Աշուրնասիրապալ 2-րդի տարեգրության հաղորդման համաձայն՝ Ետինի լեռը (այն հիշատակված է նաև Edinu ձևով) գտնվել է Տումե գավառում: Վերջինս ուրարտների հիշատակած Տումեիշկին է՝ հին հունական պատմիչների հիշատակած Տոմիսան, հայկական Թմնիսը՝ Եփրատի արևելյան ափին՝ Արածանիի միախառնման տեղից քիչ հարավ (նույնը, էջ 188):

Կարծում ենք՝ Ետինի տեղանվան մեջ առկա է հայերենի *ի-ե. ետ*՝ «հետո, ետքը, վերջը» (տարբ. *իետ*, *իետին*) արմատը, որը հանդիպում է Սողք գավառի Ետեցիկ, Սասունի Ետինք (-ինք ածանցով), Դերսիմի Հետի, Ջանգեզուրի Հետիկ (-իկ փոքրացուցիչով) և Բիթլիսի Հետինս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով) հին տեղանուններում:

Ետինի լեռան անունը բացի *ետ* արմատից, կարծում ենք, իր մեջ ունի նաև -ին ածականակերտ ածանցը: Այն նշանակում է «ետևի լեռ»:

*Երատելի* (<sup>URU</sup>Erateli): Վանի տիրակալ Արգիշտի 1-ինի Լոդիստոյան տարեգրության տվյալների համաձայն՝ Երատելի և Երատելիլիուլի «մյուս» Երատելի (ուրարտ. սև «այլ») բնակավայրերը գտնվել են Իյանի գավառի մեջ, որը տեղադրվում է Չըլդըր լճի հարավային ափագանում (նույնը, էջ 257):

Գ. Ջահուկյանը Երատելի տեղանվան մեջ առանձնացնում է հայերենի *ի-ե. տեղ*՝ «տեղ, վայր» արմատը (Ջահուկյան, 1998, էջ 156):

Իսկ դրա առաջին բաղադրիչը, կարծում ենք, հայերենի *ի-ե. երեղ*՝ «տատանում, շարժում» բառի եր- արմատն է, որը հուշում է,

թե տվյալ բնակավայրը գտնվել է երերացող ճահճուտ տեղանքին առընթեր:

Այդ հանգամանքն են մատնացույց անում Վայոց ձորի Երերան (-ան ածանցով), Վանի նահանգի Թիմարի գավառակի Երերին (-ին մասնիկով), Սողբի Երերի (-ի վերջավորությամբ) և Արագածոտնի Երերոն (-ոն ածանցով, Երերունք) և այլ հին գյուղերի անուններ:

*Եր(ե)բունի* (<sup>URU</sup>Er(e)buni): 1950 թ. Երևանից քիչ դեպի հարավ-արևելք գտնվող Արին-բերդ բլուրի վրա հնագիտական մի արշավախումբ հայտնաբերեց Վանի թագավոր Արգիշտի 1-ինին վերաբերող մի սեպագիր արձանագրություն (Арютюнян, 2001, N 197-198), որտեղ գրված է, թե նա կառուցել է բերդ և այն կոչել է Եր(ե)բունի՝ «Բիայնա պետության հզորության, թշնամի երկրների հնազանդության համար» (Арютюнян, 1985, էջ 257):

Ուրարտագետ Ս. Իսրայելյանը, ուսումնասիրելով վերը նշված գրավոր աղբյուրը, նկատել է Եր(ե)բունի և Երևան տեղանունների նույնությունը (Իսրայելյան, էջ 8):

Սակայն հեղինակը Եր(ե)բունի անվան մեջ տեսնում էր ուրարտերենի *irb(u)*- «հափշտակել, գողանալ» արմատը և այդ լեզվի -սո ածականակերտ ածանցը, որը, իբր, հայերենում հնչյունափոխվելով դարձել է -ան:

Նրա կարծիքով այդ *irb(u)*- բառը բացի նշված իմաստից կարող էր նշանակել նաև «գրավել, նվաճել, հաղթել» (նույնը, էջ 11-13):

Սակայն այդ արմատը բացի «հափշտակել, գողանալ» իմաստից ուրիշ այլ բան այդ լեզվում չի նշանակում:

Ավելին բերդաքաղաք հիմնադրողը այն չէր կարող նման ձևով անվանել: Հետևաբար, Եր(ե)բունի տեղանունը ուրարտերեն *irb(u)*-բառի հետ կապ չունի:

Այդ տեղանունը *Er-e-bu-u-ni* ձևով հանդիպում է Արին-բերդից հայտնաբերված միայն երկու բրոնզե վահանների վրա գրված սեպագիր արձանագրություններում (Арютюнян, 2001, NN218, 220): Արգիշտի 1-ինի մյուս բոլոր վավերագրերում այն հանդիպում է *Er-bu-u-ni* տարբերակով (նույնը, NN 173, 174, 201, 214-217, 235):

Ս. Իսրայելյանը նկատել է, որ վերջինիս նման *e(ե)* ծայնավորը տղված է նաև *Er-ku-a-hi* ազգագավառի անվան մեջ, որը հիշատակված է նաև *Er-e-ku-a-hi* ձևով: Դա նկատվում է նաև <sup>URU</sup>*Er-di-a* քաղաքի անվան մեջ, որը ունի <sup>URU</sup>*E-ri-di-a-ni* տարբերակը (Իսրայելյան, էջ 11):

Այդ *e(ե)* ծայնավորի բառամիջում սղվելը մենք տեսնում ենք նաև ուրարտերենի որոշ արմատներում: Օրինակ՝ *dieriasia-* «վախենալ» բայի հիմքը իր խոնարհման մեկ այլ ձևում դառնում է *dirasijabi, ainiei*՝ «ոմն մեկը» դերանունը հանդիպում է նաև *aniei*, իսկ *aisei* «երբևէ» բառը՝ *ašeei* ձևով: Ուրեմն՝ ոչ միայն բառամիջի *e-ն*, այլ նաև *i* ծայնավորը որոշ դեպքերում սղվում են: Իսկ դրանք իրար հերթա-գայում են (46 a, էջ 23-29):

Հետևաբար *Erbuni* տարբերակում *e* հնչյունը սղված է: Դա ուրարտների լեզվին հատուկ երևույթ է: Այդ տեղանվան ճիշտ ձևը *Erebuni-ն* է:

Ուրարտական սեպագրության մեջ կիրառված *er* սեպանշանը ունի նաև *ir* ընթերցումը: Ուրարտ դպիրներին հաջողվել է որոշ դեպքերում դրան հաջորդող կամ նախորդող վանկանշանների օգնությամբ ցույց տալ, թե այդ երկու ընթերցումներից որ մեկն է տվյալ բառի մեջ:

Իսկ *Er-e-bu-u-ni* և *Er-bu-u-ni* տարբերակներում չի երևում, թե սկզբի սեպանշանը *er* է, թե *ir*:

Դրա լուծումը մենք տեսնում ենք միայն Երևան տեղանվան մեջ, որը սկսվում է *-ե* ծայնավորով:

Արգիշտի 1-ինի այդ բերդը կոչել է մոտակա Երևան բնակավայրի անունով: Քանի որ ուրարտերենը վ հնչյուն չի ունեցել, այն փոխարինվել է *b (բ)* բաղաձայնով (Իսրայելյան, էջ 98): Իսկ վերջի *-ան* հայերենի ածանցը ուրարտները փոխարինել են իրենց լեզվի *-սու* մասնիկով (Աղաբեկյան, էջ 20):

Ի դեպ, ինչպես վերը նշվեց, Մ. Իսրայելյանի կարծիքով՝ ուրարտերենի *-սու* ածանցը հայերենում հնչյունափոխվել և դարձել է *-ան*: Դա հիմնավորելու համար հեղինակը բերում է ուրարտերենի հիմքում *-u(ու)* ունեցող ներգործական սեռի բայեր, որոնք, այդ հնչյունը փոխարինելով *-a-* ծայնավորով, դառնում են չեզոք (նույնը, էջ 14): Դրանք համապատասխան սեռի բայի ցուցիչներ են, որոնք կապ չունեն ուրարտերենի *u(ու)*-ի հայերենում ա դառնալու հետ:

Իրականում նրանց դպիրները հայերեն տեղանունները հիշատակելիս շատ դեպքերում դրանց վերջածանցները փոխարինել են իրենց լեզվի որևէ մասնիկով:

Երևան տեղանունը կազմված է հայերենի *h.ե. երև-* արմատից, որը պռկա է *երև/իլ*՝ «երևալ» բայի մեջ, և *-ան* ածանցից ու նշանակում է «երևացող տեղում գտնվող բնակավայր»:

*Երև-* արմատը հանդիպում է Երզրունի նահանգի Դերջանի գավառակի Երևանս (հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով), Տուրուբերանի Երևարք (-ար և -ք ածանցներով, այն ժողովրդական ստուգաբանության հետևանքով ձեռք է բերել նաև Երիվարք ձևը), Վանանդի Երևիլ (-իլ մասնիկով, դաշտ), Սյունիքի Երևիք (-իք վերջավորությամբ, գավառ, որի անունը նույնպես ժողովրդական ստուգաբանության հետևանքով ստացել է նաև Արևիք ձևը), Արաբկիրի Ս. Երևունն (-ունն ածանցով, վանք) և այլ հին տեղանուններում:

Նկատի ունենալով վերը բերված փաստերը՝ կարծում ենք, որ Վանի թագավոր Արգիշտի 1-ինի այդ սեպագիր արձանագրությունները վկայում են ոչ թե Երևան բնակավայրի հիմնադրման, այլ դրա առաջին հիշատակության մասին: Այդ արքան Երևանի մոտ բերդաքաղաք է հիմնել և այն կոչել դրա անունով, ինչպես նշված է արձանագրության մեջ, թշնամի երկիրը հնագանդ պահելու համար:

*Երիաիհի* (<sup>KUR</sup>Eriani): Վանի արքա Ռուսա 1-ինի Ծովինարի սեպագիր արձանագրության հաղորդումների համաձայն՝ Երիաիհին 19 այլ երկրների հետ գտնվել է ծովի (Սևանա լիճ) այն կողմի (հարավ-արևելյան) բարձր լեռներում (Арютюнян, 1985, էջ 258):

Այդ տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի հին հայերենի *երև*՝ «որսի վայրի կենդանի» արմատը սեռական հոլովի -ա ցուցիչով, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ini ածականակերտ ածանցը: Այն հուշում է, թե նշված գավառը հարուստ է եղել որսի կենդանիներով:

*Երիախի* (<sup>KUR</sup>Eriahi): Երիախի գավառը ընդգրկել է արևելյան Շիրակը (Арютюнян, 1985, էջ 258-259):

Այն կոչվել է Ղազարապատից քիչ հարավ՝ Գարապուլաղ գյուղի մոտի Երիվանք (*վանք* բառի հետ) ավերակ գյուղի անունով, որը միջնադարում դարձել էր սրբատեղի:

Երիախի տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *երև*՝ «որսի վայրի կենդանի» արմատից, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ahi ածականակերտ ածանցը: Այն հուշում է տեղի որսի կենդանիներով հարուստ լինելու մասին:

*Երև* բառը մենք տեսնում են Տաուշի շրջանի Երիծոր (ավերակ բերդ), Սյունիքի Սողք գավառի Երիշատ, Սիսիանի Երիստան (լեռնագագաթ) և այլ հին տեղանուններում:

*Երիկուախի* (<sup>KUR</sup>Erikuahi, <sup>KUR</sup>Er(e)kuahi): Ուրարտուի թագավոր Մենուայի Մասիսի հյուսիսային լանջի այժմյան Տաշբուրուն գյուղի մոտ հին Ցուլկերտ բնակավայրի ավերակներից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ ուրարտական գործը նրա հրամանատարությամբ նվաճել է Երիկուախի երկիրը՝ Լուխիունի թագավորանիստ քաղաքով: Դա Տաշբուրունի շրջանն է (նույնը, էջ 260):

Ն. Ադոնցը Երիկուախին նույնացնում է այդ տարածքի հին Օրկուվի գյուղի հետ, որի անունով էլ գավառն է կոչվել (Ադոնց, 1972, էջ 203):

Գ. Ջահուկյանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ -ahi ածանցը ուրարտներն են ավելացրել, երիկու- բաղադրիչը նույնացնում է հայերենի հ.-ե. *երեկո*՝ «երեկո, իրիկուն» բառի հետ: Սակայն այն առաջարկում է ընկալել որպես «արևմուտք» (Ջահուկյան, 1998, էջ 158):

Այդ *երեկո* բառը, ինչպես Հ. Աճառյանն է նշում, ունի նաև «գիշերը մի տեղ մնալ, գիշերել» իմաստը: Դրա բարբառային *իրիզուն* տարբերակը, առանց -ուն ածանցի, մենք տեսնում ենք Սյունիքի Գիլաբերդ գավառի Իրիզիս (-իք ածանցով. այն դրված է հոգնակի թվի հայցական հոլովածևով) և Կապանի շրջանի Իրիզիս (ավերակ գյուղ) հին բնակավայրերի անուններում:

Ուրեմն Երիկուախի տեղանունը նշանակում էր «իջևանատուն», որտեղ կարելի է գիշերել:

*Երինու* (<sup>KUR</sup>Erinu): Վանի արքա Մենուայի սեպագիր արձանագրություններից մեկը գտնվել է Ախթամար կղզում: Դրա մեջ գրված է, որ նա անց է կացրել ջրանցք Ախունի բնակավայրի մոտով դեպի Երինու երկիր: Ուսումնասիրողները, նկատի ունենալով Ուրարտուի տիրակալների այն սովորությունը, երբ նրանք իրենց կառուցած բերդերի կամ շինությունների տեղում գրավոր հուշարձան են թողել, գտնում են, որ վերը նշված վավերագիրը Ախթամար է բերվել Վանա լճի հարավ-արևելյան ավազանից, որտեղ և նրանք տեղադրում են Երինուն (Арутюнян, 1985, էջ 261):

Երինու տեղանունը ամենայն հավանականությամբ իր կազմում ունի հին հայերենի *երէ*՝ «որսի կենդանի» և -նի հոգնակի իմաստ ընծեռող մասնիկը: Այն սեռական հոլովում դարձել է Երինու: Դա, անշուշտ հուշում է նշված տարածքի որսի կենդանիներով հարուստ լիճնելու մասին:

*Երէ* բառը մենք տեսնում ենք Սողքի Երիշատ, Վասպուրականի Աղիովիտի շրջանի Երիշատ, Վանի Հեքյարի գավառի Երիք (հոգնակիակերտ -ք ցուցիչով) հին տեղանուններում:

*Երիտ/դիա* (<sup>SADU</sup> Erit/dia): Ասորեստանի տիրակալ Սալմանասար 3-րդի սեպագիր արձանագրություններից մեկի մեջ գրված է, որ նա գործով Արծաշկու քաղաքը նվաճելուց հետո բարձրանում է Երիտիա լեռը, հետո մտնում Արմարիլի երկիր (Վասպուրական):

Ուսումնասիրողներից ոմանք Արծաշկուն նույնացնում են Վանա լճի հյուսիսային ափին առընթեր հին Արծկեի, իսկ Երիտիան՝ դրանից անմիջապես հյուսիս գտնվող Սիփան լեռան հետ (Арутюнян, 1985, էջ 261):

Արծաշկուն չէր կարող Արծկեն լինել, քանի որ Սիփանը անցնելով՝ հնարավոր չէ մուտք գործել Վասպուրական: Իսկ Արծեշին արևելքից հարևան Երիթունիք գավառի լեռը, որը ուրարտները Երիտիա ձևով են հիշատակել այդ գավառի անունով, անցնելով անմիջապես կարելի է հայտնվել Վանի նահանգում:

Գ. Զահուկյանը Երիտիա լեռան անվան մեջ տեսնում է հին հայերենի *երիթ*՝ «մեծ սեպ» արմատը, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ia մասնիկը: Ուրեմն՝ այդ լեռան գագաթը մեծ սեպի ձև ունի: Երիտունիք հայկական գավառը հետագայում դրա անունով է կոչվել:

*Սեպ* արմատը հանդիպում է Աշոցքի շրջանի Սեպ, Գավառի շրջանի Սեպաքար, Տրապիզոնից մոտ 50 կմ արևմուտք գտնվող Սեպի լեռների և լեռնագագաթների անուններում:

*Երունի* (<sup>URU</sup> Eruni): Մենուայի Վանում թողած մի սեպագիր արձանագրության մեջ Երունի բնակավայրը հիշատակված է Ուլիբա (հայկական Խուլբ) և Դիրգունի (այժմյան Մադենի լեռնանցքին հարավից առընթեր) գավառների կապակցությամբ (նույնը, էջ 262):

Կարծում ենք՝ Երունին տեղով և անունով համապատասխանում է Սասունի Խուրթ գավառի Երուն գյուղի հետ:

Այն կարելի է համեմատել Դերսիմի շրջանի Երուտ (-ուտ ածանցով) բնակավայրի անվան հետ:

Հ. Աճառյանը գրում է, որ հայերենի հ.-ե. *երեր*՝ «տատանում, շարժում» բառը եր- արմատի կրկնությունն է:

Այն հանդիպում է Վայոց ձորի Երեր, Սողքի Երերի (-ի մասնիկով), Արագածոտնի Երերոն (-ոն վերջավորությամբ) և այլ հին բնակավայրերի անուններում:

Երունի տեղանունը իր մեջ ունի տվյալ եր- արմատը՝ -ունի ածանցով: Այն նշանակում է «երեբացող տեղի կամ ճահճուտի մոտ գտնվող բնակավայր»:

*Ջաբախա* (<sup>KUR</sup>Zabaha): Ուրարտուի տիրակալ Արգիշտի 1-ինը, ինչպես գրված է նրա տարեգրության մեջ, գորքով գնում է դեպի Ջաբախա երկիր և նվաճում այն: Դրանից հետո նա գրավում է Իգանի երկիրը և վերադառնում Երիախի (արևելյան Շիրակ): Ուսումնասիրողները, նկատի ունենալով Չըլդըր լճի հարավային ավազանի Իգանի գավառը նվաճելու փաստը, Ջաբախան նույնացնում են դրանից քիչ հյուսիս գտնվող հետագայի Ջավախքի հետ (Арютюнян, 1985, էջ 76-77):

Ա. Ա. Մելքոնյանը ի մի է բերել Ջավախք տեղանվան մասին եղած բոլոր տեսակետները (Մելքոնյան, էջ 34): Ի. Շոպենը Ջավախք անունը բխեցնում է վրացերենի *ջավ* «գարի» բառից: Դա, նրա կարծիքով, հիմնավորվում է, իբր, այն փաստով, որ այդ գավառում գարին լավ է աճում: Ա. Ա. Մելքոնյանը ցույց է տալիս, որ վրացերենում ջավ բառ, այն էլ «գարի» իմաստով, գոյություն չունի (տես նույն տեղում):

Վ. Սարգսյանը գտնում է, որ Ջավախք տեղանունը կազմված է հին հայերենի *ճապաղ*՝ «փռված, տարածված, ծավալված» արմատից: Նրա կարծիքով՝ դա հաստատվում է այդ գավառի՝ հարթավայրում գտնվելու փաստով (տես նույն տեղ): Տվյալ ստուգաբանությունը համոզիչ չէ, քանի որ հայոց լեզվում պ բաղաձայնը երբեք չի դառնում վ:

Տ. Դալայանը Ջավախք տեղանվան մեջ տեսնում է ալաներենի (օսերեն) *ձաբախ*՝ «լավ, բարեբեր» արմատը (տես նույն տեղում):

Կարծում ենք՝ Հայկական լեռնաշխարհի որևէ տեղանուն չի կարելի բխեցնել հյուսիս-կովկասյան յուրաքանչյուր լեզվի որևէ համահունչ արմատից, քանի որ դրանք իրարից խիստ զանազանվող էթնիկական տարածաշրջաններ են: Այդուհանդերձ ալաներենի ձ հնչյունը հայերենում չի դառնում ջ, իսկ բ-ն՝ վ: Դրանց մասին ոչ մի փաստ հայտնի չէ:

Ա. Պետրոսյանի կարծիքով՝ Ջավախք տեղանունը բաղկացած է հայերենի *ջավ*՝ «որդի, գավակ» և այն «ջուր» արմատներից ու նշանակում «ջրի գավակներ»: Նրա կարծիքով՝ այդ ստուգաբանությունը վկայում է խոր հնում այդ գավառում գոյություն ունեցող ջրի պաշտամունքի մասին (տես նույն տեղում):

Ի դեպ, հեթանոսական շրջանում բոլոր հին ժողովուրդները ունեցել են ինչպես ջրի, այնպես էլ արևի, լուսնի և բնության այլ երևույթների պաշտամունք: Ավելին, *ջավ* «որդի» և *ախ* «ջուր» բառեր մենք չենք գտնում ոչ Հ. Աճառյանի և ոչ էլ հայերենի որևէ այլ բառարանում, որը ինքնին մերժում է նման ստուգաբանությունը:

Ջավախք տեղանունը կարելի է համեմատել Արցախի Քաշունիք գավառի Ջավն (-ն հնդեվրոպական մասնիկով, Ջահուկյան, 1987, էջ 234), Երզրումի Ջավան (-ան հոգնակի իմաստ ընծեռող ածանցով), Տրապիզոնի Ջավանի (-անի ածանցով), Վանա լճի հարավարևմտյան ափին մոտ գտնվող Ջավան (լեռ) և Կիլիկիայի Ջավեր (հոգնակիի -եր ցուցիչով) հին տեղանունների հետ, որոնցում առանձնանում է ջավ- արմատը:

Մեղրի քաղաքից 8-9 կմ հարավ-արևմուտք մի լեռ կոչվել է Ջավախտ, որի անվան *խտտ* բաղադրիչը հուշում է, թե ջավը բույսի անուն է:

Կարծում ենք՝ տվյալ *ջավ*- բառը հին հայերենի *ջով*՝ «բույսի ծիլ, ընծյուղ» արմատի մի ձևն է:

Հին հայերենում ա ծայնավորի ո դառնալու առիթով Գ. Ջահուկյանը նշում է, որ *թառամ* բառը հանդիպում է թռռոմ, թարշամը՝ թորշոմ տարբերակով (նույնը, էջ 253): Այդ նույն ձևով էլ ջավը կարող էր դառնալ ջով:

Ջավախք տեղանունը, հավանաբար, կազմված է հին հայերենի նշված *ջով*՝ «բույսի ծիլ, ընծյուղ» արմատի *ջավ* տարբերակից և *աղխ*՝ «բազում, բազմություն» արմատի *ախ* ձևից ու նշանակում է «ուտելի ցողունավոր բույսերով՝ ջավերով (հմմ. ճավ) հարուստ բնաշխարհ ունեցող գավառ»:

*Չամանի* (<sup>KUR</sup>Zamani): Չամանի գավառը հիշատակված է Վանի տիրակալ Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտ գտնվող սեպագիր արձանագրության մեջ՝ ծովի այն կողմի (հարավ-արևելք) բարձրադիր լեռներում գտնվող 19 երկրների շարքում (Арютюнян, 1985, էջ 77):

Կարծում ենք՝ Չամանի գավառը այժմյան Չողից քիչ հյուսիս միջնադարի հայկական Չաման գյուղն է իր շրջանով հանդերձ: Չամանի տեղանունը, հավանաբար, իր կազմի մեջ ունի հին հայերենի *ամ*՝ «լի» արմատը (հմմտ. ամ-ալ «լցնել») գ- սաստկացուցիչ նախածանցով և -անի հավաքական իմաստ տվող վերջածանցով: Ամ- բառը մենք տեսնում ենք Վասպուրականի Ամք (-ք մասնիկով),

Քղիի շրջանի Ամառիձ (առիձ «գյուղ» բառի հետ) և Արցախի Չետաբեկի Չամանլի (գ- նախածանցով, -ան վերջածանցով, որից հետո թուրքերը ավելացրել են իրենց լեզվի լի հոգնակիակերտ մասնիկը) հին տեղանուններում: Չ- սաստկականը առկա է Վանի նահանգի Չակոս (ակոս բառով) և Չերվանդավան (Երվանդ անունով) բնակավայրերի անուններում:

*Չամբա* (<sup>KUR</sup>Zamba): Ասորեստանի արքա Աշուրնասիրպալ 3-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Չամբա գավառը գտնվել է Արկանիա լեռների (Ժմկ. էրգանիի արևելյան հատված) և Ծուա գետի (Տիգրիսի Ծովք լճից սկիզբ առնող վտակ) միջև (Арutyоhяh, 1985, էջ 78):

Չամբա տեղանունը կարելի է համեմատել Դերսիմի շրջանի Չամբեղ (-եղ ածանցով), Բզունիքի Չամբիկ (-իկ մասնիկով), Կիլիկիայի Չամբուր (-ուր վերջավորությամբ) հին գյուղերի և Տայքի Չամպ լեռնաշղթայի անունների հետ:

Կարծում ենք՝ դրանց բոլորի մեջ առկա է հայերենի հ.-ե. *ամայ* «ամայ» արմատը, որը, ինչպես Հ. Աճառյանն է նշում, ամբ ձևով հանդիպում է հայերենի մի շարք բարբառներում:

Այդ տեղանունները իրենց սկզբում ունեն նաև հին հայերենի սաստկական գ- նախածանցը:

Առանց վերջինի ամպ բառը հանդիպում է Բիթլիսի նահանգի Ամբ, Վանի Աղբակ գավառի Ամպիկ և Արդահանի Ամպուր հին գյուղերի անուններում:

Չամբա տեղանունը կազմված է այդ նույն *ամայ* բառի «ամբ» տարբերակից գ- նախածանցով և սեռական հոլովի -ա ցուցիչով:

Հավանաբար, նշված բոլոր բնակավայրերը, ինչպես և Չամբա գավառը, ունեցել են շատ ամպոտ եղանակ կապված լեռների դիրքի հետ:

*Չանգիունա* (<sup>URU</sup>Zanziuna): Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդի Տուշխանից գտնված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ նա զորքով Արծաշկուն (Արձեշ) նվաճելուց հետո մուտք է գործում Արմարիլի երկիր (Վասպուրական), հասնում Չանգիունա բնակավայրը, որտեղից էլ վերադառնում է Ասորեստան (Арutyоhяh, 1985, էջ 78):

Ակնհայտ է, որ Չանգիունան Վանի նահանգի հարավում գտնվող Անձևացյաց գավառի համանուն կենտրոնն է, որի անունը

հիշատակված է հին հայերենի գ- սաստկական նախածանցով և վերջից -ն մասնիկով:

Քանի որ սեպագրերում ձ գրելու ուրիշ միջոց չկա, վերջինիս ձ հնչյունը ներկայացված է z ունեցող վանկանշանի օգնությամբ:

Անձևացյաց տեղանունը հայտնի է նաև Անծավացիք ձևով, որը դրա ճիշտ ձևն է, իսկ առաջինը ժողովրդական ստուգաբանության հետևանքով առաջացած տարբերակ է, որով էլ ուրարտները այն հիշատակել են:

Այդ տեղանունը իր մեջ ունի հին հայերենի *անծավ*՝ «քարայր, այր» արմատը, որը հանդիպում է Արձեշի շրջանի Անծավ, Օլթիի Անծավ, Մուշի Անծավ, Վանի Անծավ և այլ հին տեղանուններում ու մատնացույց է անում տեղում քարայրների առկայությունը:

*Ջի(ու)քունի* (<sup>KUR</sup>Zi(u)quni): Վանի թագավոր Ռուսա 2-րդի համանուն լճի հյուսիսային ափին գտնվող այժմյան Ադիլջեվազ գյուղում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ հիշատակված է Ջիուքունի գավառի նվաճման մասին: Նկատի ունենալով այդ վավերագրի գտնվելու տեղը՝ ուսումնասիրողները այն տեղադրում են նշված բնակավայրի շրջանում (Арутюнян, 1985, էջ 82-83):

Գ. Ջահուկյանը Ջիուքունի տեղանունը նույնացնում է հայերենի հ.-ե. *ծուկն* «ծուկ» արմատի հետ (Ջահուկյան, էջ 155):

Դրանում մենք տեսնում ենք առաջին ու ծայնավորի քմայնացած տարբերակը, որը հատուկ է Վանի բարբառին: Իսկ ձ բաղաձայնը սեպագրերում արտահայտելու հնարավորություն չի եղել: Գրիչներն այն ներկայացրել են z ունեցող վանկերի սեպանշանների միջոցով, որը սովորաբար գ գրելու համար է օգտագործված:

*Ձուկ* բառը առկա է Վայոց ձորի Ձկնարած (արած բառով), Վանի շրջանի Ձկնտուն (տուն բաղադրիչով), Երզրումի Ձկնաջուր և այլ հին գյուղերի անուններում՝ կապված մոտի գետերի կամ լճերի ձկներով հարուստ լինելու հետ:

*Ջուաինա* (<sup>URU</sup>Zuaina, <sup>URU</sup>Zuani): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի Ճորոխի միջին ավազանի այժմյան Ջիվին գյուղից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ ուրարտական գորքը նվաճել է Ջուանի քաղաքը: Ուսումնասիրողները դրա հիման վրա վերջինս, որը վկայված է նաև Ջուաինա ձևով, նույնացնում են արդի Ջիվինի հետ (Арутюнян, 1985, էջ 83):

Այն կարելի է համեմատել Շիրակի Ջու, Սասունի Ջու (լեռ), և Երզրումի նահանգի Ջուան (-ան ածանցով) հին տեղանունների հետ:

Կարծում ենք՝ դրանցում առկա է հին հայերենի *զու քաշել*՝ «արշավել» բայի *զու*- արմատը, որը, հավանաբար, նշանակում է «արշավ»:

Չուաինա տեղանվան մեջ *զու* արմատի հետ ունենք -ային ածանցը (հմմտ. Դուաին, տես):

Գուցե այդ արմատից կազմված անուն ունեցող բնակավայրերը ունեցել են երկար շարքերով կառուցված տներ, որի համար էլ այդպիսի հորջորջում են ձեռք բերել:

Կարծես դրա մասին վկայում են Երզրումի Արշավան (-ան ածանցով) և Շուշիի Արշավապատ հին գյուղերի անունները:

*Ջուզուխե* (<sup>URU</sup>Ջսջսհե): Մանազկերտից քիչ հարավ՝ այժմյան Խոտանլու գյուղից հայտնաբերված Վանի թագավոր Մենուայի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ նա ջրանցք է անց կացրել Մենիզայանի քաղաքի մոտից, որի հետ կապված թվարկվում են մի քանի բնակավայրերի անուններ: Դրանցից մեկն էլ Ջուզուխեն է (Арутюнян, 2001, N 77):

Այն հիշեցնում է Երզնկայի Ջոզնի (-նի ածանցով), Խնուսի Ջոզնի և Սյունիքի Բաղք-Աձանան գավառի Ջոզող (-ող մասնիկով) հին գյուղերի անունները, որոնցում առանձնանում է *զոզ*- բառը: Վերջինս, կարծում ենք, հին հայերենի *ոզել*՝ «ասել, խոսել, երգել, նվագել» բայի *ոզ*- արմատն է գ- սաստկական նախաձանցով (Ջահուկյան, 1987, էջ 243):

Ջուզուխե տեղանվան զոզ- հիմքի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի *-սի* ածանցը: Դրանում համոզվելու համար հիշենք, որ ուրարտները սեպագիր արձանագրություններում բառավերջի ի հնչյունը երբեմն փոխարինում էին *e*-ով, որը ոչ մի իմաստային երանգ չի տալիս:

*Ջոզ* բառի առկայությունը տեղանուններում հուշում է նշված բնակավայրերում երգիչների և նվագողների գոյության մասին:

Հիշենք Բաբերդի Երգի (-ի ածանցով), Շիրակի Երգս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով), Երասխի և Ախուրյանի միացման անկյունի Երգ և այլ տեղանուններ:

*Էթիունի* (<sup>KUR</sup>Etiuni, <sup>KUR</sup>Etiuhi): Էթուինի երկիրը, ուրարտական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն, ընդգրկել է արևմուտքում՝ Երասխի (արևելյան Շիրակ), Կատարգա (հայկական Կղարջք), Ուխտերուխի (Հայկական պարի հյուսիս-արևելյան լանջեր), Գուլուտախի (Ախուրյանը Երասխի հետ միախառնման անկյուն), Աբունի (Երասխի ակունքների շրջան), արևելքում՝ Լիկիու (Սևանա լճի հարավային ավազան), Ծուլուկու (Սիսիանի շրջան) և ուրիշ շատ այլ գավառներ մինչև Ուդուրի-Էթիունի (Арутюнян, 1985, էջ 262-263):

Ն. Ադոնցը նկատել է, որ Էթիունին հին Հայաստանի Այրարատ նահանգն է (Ադոնց, 1972, էջ 208):

Սիսիանից հայտնաբերված Արգիշտի 2-րդի սեպագիր աղբյուրում Ծուլուկու գավառը, որը տեղի պատմական Ծղուկն է, հարակից շրջաններով հանդես է գալիս Էթիունի երկրի կազմի մեջ (Арутюнян, 1985, N 411):

Իսկ *Ուդուրի-Էթիունի* (<sup>m</sup>U(e)duri (<sup>KUR</sup>Etiuni/uhii) երկիրը, ինչպես Արգիշտի 1-ինը իր տարեգրության մեջ գրում է, ինքը հասել է Էթիունին նվաճելուց հետո (նույնը, N 173, l 21-22): Սարդուրի 2-րդը նշում է, որ Ու(ե)դուրի-Էթիունի երկրում հնագանդեցրել է Կամանիու (Ծղուկի Կամավանքի շրջան), Արքուքինի (Սյունիքի Շահապունիք գավառ) և Լուերունի (Սիսիանի Լոր գյուղի շրջան) երկրների թագավորներին (նույնը, N 241, ճ, 47-54):

Նա Սևանա լճի արևմտյան ափին թողած սեպագիր աղբյուրում նշում է, որ գրավել է Թուլիխու բնակավայրը (այժմյան Դրախտիկ գյուղի շրջան՝ Սևանա լճի հյուսիս-արևմտյան ավազանում) և հասել Ուդուրի-Էթիունի (նույնը, N 250):

Արգիշտի 1-ինը Սիսականը անվանում է Էթիունի, իսկ Արգիշտի 2-րդը՝ Ուդուրի-Էթիունի:

Ուրարտները այդ տեղանունը թարգմանաբար ներկայացրել են Էթիունի ձևով: Վերջինս կազմված է խուրիերենի *eti-*՝ «մարմին, անձ» բառից և նրանց լեզվի -uni ածականակերտ ածանցից ու նշանակում է «անձնական» (Խաչատրյան, 1998, էջ 111): Դա Այրարատ տեղանվան անուղղակի թարգմանությունն է:

Սduri- բառը ուրարտերենում չի եղել: Կարծում ենք՝ այն ուրարտները հայերից են վերցրել: Դա, թերևս, հին հայերենի *կոտորի*՝ «կտոր, պատար» բառը կարող է լինել:

Հին հայերենում *կոտոր*՝ «վրան մածուցիկ նյութ քսած փայտ, որով թռչուն են բռնում» բառը հանդիպում է նաև *ոտոր* ձևով, ործ

«ստամոքսից վեր եղած կերակուր» արմատը բարբառներում առկա է կ հնչյունով (հմմտ. կօրծկալ նույն իմաստով), ոգնի արմատը բարբառներում կոգնի տարբերակն էլ ունի (հմմտ. Ջահուկյան, 1987, էջ 254): Այս դեպքում բառասկզբի ո ձայնավորը, որը իր մեջ ունի կոկորդային կ բաղադրիչ հնչույթ, շփոթվում է սովորական կ բաղաձայնով սկսվող ո-ին նախորդող բաղաձայնի հետ:

Կարծում ենք՝ կոտոր բառի կ հնչյունը ուրարտները համարել են բառասկզբի ո ձայնավորի հնչույթ և բաց են թողել:

Մեր այս ենթադրությունը, կարծում ենք, հաստատվում է նաև այն փաստով, որ Մուշի բարբառի բառամիջի ո ձայնավորը, որը երկհնչյուն է և արտաբերվում է -ուը-, u(e)duri տարբերակում առկա է: Այս իրողությունը առկա է նաև Լուերունի տեղանվան մեջ, որը կազմված է լոր բառից: Այդ բարբառով լորը հնչում է լուըր, կոտորը՝ կուըտոր և այլն: Ավելին, նշված բարբառում կոտոր բառը տ բաղաձայնի փոխարեն ունի դ: Իսկ ուրարտները ը ձայնավորը տվյալ դեպքում ներկայացրել են -ե ձայնավորի միջոցով, քանի որ առաջինի համար սեպագրերում արտահայտելու միջոց չկա:

Այսպիսով, Ու(ե)դուրի-եթիունի տերմինը նշանակում է եթիունի երկրի մեկ այլ մաս, կտոր:

Եթիունի տեղանունը մենք համարում ենք Այրարատի ուրարտերեն անուղղակի թարգմանություն: Դրանց ներկայացրած տարածքները նույնական են: Այրարատը, ինչպես Մովսես Խորենացին գրում է, կոչվել է հայոց Արա Գեղեցիկ թագավորի անունով: Այն, մեր տեսակետով, բաղկացած է Արայ և *արտ*՝ «մշակելի հող» բառերից ու նշանակում է «Արայի մշակելի հող»: Դա հաստատվում է ոչ միայն պատմահոր վկայությամբ այն մասին, թե երկիրը կոչվել է Արայի անունով, այլ նաև այն փաստով, որ նրա աշխատության Բեռլինի թանգարանի ձեռագրում Այրարատ տերմինը գրված է Արայարտ ձևով:

*Էնզի(տե)* (KUR<sup>URU</sup>Enzi(te)): Ասուրական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ Էնզի(տե) գավառը գտնվել է Իշուա երկրի կազմում: Այն, ինչպես ուսումնասիրողները պարզել են, ընդգրկել է Եփրատի, Հայկական Տավրոսի և Արածանի գետի միջև ընկած տարածքը: Դա հին հայկական Անձիթն է՝ խեթական սեպագիր տեքստերի *Hinzuta*-ն (Арутюнян, 1985, էջ 255-256 և Խաչատրյան, 1998, էջ 36):

Գ. Ջահուկյանը գրում է, որ հին հայերենի ի- նախդիրը ծայնավորներից առաջ յ- է դարձել, որը հնչել է հ- (Ջահուկյան, 1987, էջ 244): Դրա համար էլ Անձիթ տեղանունը հանդիպում է Հանձիթ տարբերակով:

Կարծում ենք՝ այն կազմված է հայերենի հ.-ե. *անձն*՝ «մարդ, մարդ ինքը» բառի անձ- արմատից (ն-ն հին մասնիկ է, նույնը, էջ 238) և -իթ ածանցից (հմմտ. Սասունի Սևիթ, Մակուի Իրիթ):

Այդ անձն բառը մենք տեսնում ենք Սյունիքի Չավնդուր գավառի Անձնալի (-ալի ածանցով), Կանի Գյավուշի շրջանի Անձիք (-իք հոգնակիակերտով) հին գյուղերի անուններում: Դրանք մատնանշում են, որ տվյալ բնակավայրերը մարդաշատ են եղել:

*Թակթուննիա* (<sup>URU</sup>Taktumnia): Արձեշի մոտի Հաղի գյուղում հայտնաբերված Կանի թագավոր Արգիշտի 2-րդի սեպագիր արձանագրության մեջ հիշատակված Թակթուննիա բնակավայրը ուսումնասիրողները տեղադրում են նշված վայրում (Արչուսյան, 1985, էջ 178):

Թակթուննիա տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *թաք*՝ «ծածկվել, պահվել» և հ.-ե. ծագումով *թունք*՝ «պատնեշ, թունք» բառի «թուն» տարբերակից: Վերջից ուրարտները ավելացրել են իրենց -ia տեղ ցույց տվող մասնիկը:

Թունք բառի մեջ առկա է հին -ք ածանցը (Ջահուկյան, 1987, էջ 238): Հարկ է նշել, որ ուրարտական սեպագրերում է հնչյունը ներկայացնում է թ, իսկ է-ն՝ տ բաղաձայնը: Իսկ կ և ք լծորդությունը շատ է հանդիպում միջնադարյան հայկական տեղանուններում: Օրինակ՝ Դերսիմի Կուռնեղ գյուղը կոչվել է նաև Քուռնեղ, Երզրումի Կանը՝ Քան, Սղերդի Կիզանը՝ Քիկան և այլն:

Թաք արմատը հանդիպում է Կաղզվանի շրջանի Թաքնալի (-ալի ածանցով), Աշոցքի Թաքնալի, Գուգարքի Թագունաբակ (-ա- հոդակապով, բակ բառի հետ) և այլ հին գյուղերի անուններում:

*Թասա* (<sup>URU</sup>Tasa/u): Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 3-րդի սեպագիր արձանագրություններից մեկի հաղորդման համաձայն՝ Թասա/ու բնակավայրը գտնվել է Էնգի երկրում: Վերջինս հին հայկական Անձիթ գավառն է՝ Արածանիի ստորին ավազանում (Արչուսյան, 1985, էջ 180):

Թասա կամ Թասու տեղանունը հիշեցնում է Ջանգեզուրի Որոտան գետի աջ ափի Թաս, Խոյի շրջանի Թասիվ (-իվ ածանցով), Կոզովիտի Թասու (-ու մասնիկով) և Բիթլիսի Թասու հին գյուղերի անունները:

Դրանք կազմված են հին հայերենի *թաս-*՝ «փոքր աման» արմատից: Կարծում ենք՝ նշված բնակավայրերը գտնվել են թասի նման փոս տեղերում:

Թասա/ու տեղանունը իր մեջ ունի նշված *թաս* արմատը և մի դեպքում *-ա*, մյուս դեպքում՝ *-ու* ածանցը:

*Թարզուաինի* (<sup>KUR</sup>Tarzuaini): Վանի տիրակալ Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտ գտնված սեպագիր արձանագրության մեջ Թարզուաինին հիշատակված է ևս 18 երկրների հետ, որոնք գտնվել են «ծովի մյուս կողմի բարձր լեռներում» (Սյունիքի և Արցախի տարածաշրջան, նույնը, էջ 176):

Այն հիշեցնում է Շահունյանի շրջանի Թառիջ գյուղի անունը, որը սեռական հոլովում կրառնար Թառջվա (հմմտ. Լոռի և Լոռվա, Շուշի և Շուշվա, Շորագալ(Շիրակ) և Շորագվա և այլն):

Ուրարտները, չունենալով վ բաղաձայնը, այդ տեղանվան նշված ձևի վ հնչյունը դարձրել են ս(ու)՝ վերջից ավելացնելով իրենց լեզվի *-ini* ածականակերտ ածանցը:

Սեպագրերում ջ գրելու միջոց չի եղել: Դրա համար այն դպիրները ներկայացրել են z(q) ունեցող վանկերի նշանների օգնությամբ (հմմտ. *Zabāha* և *Zabaha*):

Թառիջ տեղանունը կազմված է հայերենի *հ.-ե. թառ* արմատից, որը բացի «հավի թառ» նշանակությունից ունի նաև, ինչպես Հ. Աճառյանը նշում է, «մարդոց բարձր տեղ նստելը» իմաստը և *-իձ* գոյականակերտ ածանցի բարբառային *-իջ* տարբերակը: Այն հուշում է բնակավայրի բարձր տեղում գտնվելու մասին:

*Թառ* արմատը հանդիպում է Վանի նահանգի Թառ, Ամասիայի Թառ, Խարբերդի Թառիկ (*-իկ* ածանցով), Երզնկայի Թառու (*-ու* մասնիկով) և այլ հին գյուղերի անուններում:

*Թերիաինի* (<sup>KUR</sup>Teriaini): Վանի տիրակալ Սարգուրի 2-րդի տարբերության հաղորդումներից մեկի համաձայն՝ մի տարի ուրարտական զորքը նվաճում է Թերիաինին՝ ի թիվս Արքուքինի (Սյունիքի Շահապունիք գավառ), Լուերունի (Սիսիանի Լոր գյուղը իր տարածքներով), Կամնիու (Ծղուկի Կամավանք բնակավայրը իր շրջակայքով), Կուալբանի (Արցախի Մեծ Կուենք) և այլ երկրներ (Арх-тукян, 1985, էջ 188):

Կարծում ենք՝ Թերիաինի գավառը Ջանգելանի շրջանն է՝ հիշատակված իր Թերի հին գյուղի անունով:

Թերիաինի տեղանունը, թերևս, կազմված է հայերենի հ.-ե. *թեր*՝ «կողմ» արմատից՝ -ի և -ային ածանցներով:

Թեր բառը մենք հանդիպում ենք Վանի շրջանի Թերի, Բիթլիսի Թերուկ (-ուկ մասնիկով) և Տրապիզոնի Թերց (հոգնակի թվի սեռականի -ց ցուցիչով) հին բնակավայրերի անուններում:

*Թուլիխու* (<sup>URU</sup>Tulihu): Ուրարտուի արքա Սարգուրի 2-րդը Ծովինար գյուղի մոտից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդումների համաձայն՝ գործով նվաճում է Թուլիխու բնակավայրը և հասնում Ուղուրի-Էթիունի երկիր: Ուսումնասիրողները այն որոնում են Սևանա լճի ավազանում (նույնը, էջ 187):

Պետք է նկատի ունենալ, որ Ուղուրի-Էթիունին Էթիունի (տես) երկրի, որը Այրարատ նահանգն է, տարբերակն է: Այն սկսվում է Փոքր Կովկաս լեռների բարձունքներից և ընդգրկում է դրանց հյուսիս-արևելյան լանջերը: Թուլիխուն գտնվել է լճի արևելյան ավազանում, քանի որ այն սահմանակից է Ուղուրի-Էթիունիի հետ:

Հնարավոր է, որ նշված տարածքի Կարմիրի շրջանի Դրախտիկ գյուղի նախկին Թուլխուջա (Թուխլուջա) անունը, որի վերջում առկա է թուրքերի կողմից ավելացված իրենց լեզվի -ջա ածանցը, Թուլիխուն է:

Թուլիխու տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *թուլ*-՝ «թույլ» արմատի «թուլ» տարբերակից և *ուղխ*՝ «հեղեղատ» բառի ուխ ձևից՝ սեռական հոլովի -ու ցուցիչով:

Դրանում երկրորդ ու ձայնավորը տղվել է, իսկ փոխարենը լսվողը հնչյունը ուրարտական դպիրները ներկայացրել են որպես i:

Տեղանունը նշանակում է «թույլ հեղեղատին մոտ գտնվող բնակավայր»:

*Իզանի* (<sup>KUR</sup>Igani, <sup>KUR</sup>Ijani): Ուրարտուի արքա Արգիշտի 1-ինը իր տարեգրության տվյալների համաձայն՝ մի տարի գործով գնում է և նվաճում Զաբախա երկիրը (Զավախք): Վերադարձին գրավում է Իզանիի շրջանը՝ իր Մակալտունի քաղաքով: Հետո նա գալիս է Երիախի (արևելյան Շիրակ):

Նա այդ նույն սեպագիր աղբյուրի մի հաղորդման համաձայն՝ մեկ այլ տարում հպատակեցնում է Լուշա գավառի առաջնորդին, այնուհետև գրավում Իզանի երկիրը (Арционян, 2001, N 174, B 1, 39):

Լուշան Տայքի Պարտիզացիոր գավառն է ժամանակակից Բարդիս գյուղը իր շրջանով, որը հիշատակված է իր Լուսինք բնակավայրի անունով (Խաչատրյան, 1998, էջ 113, 115):

Իսկ Սարգսուրի 2-րդը Կուրիանի գավառը (Կուր գետի ակունքների շրջան՝ Չըլդըր լճից քիչ արևմուտք) գրավելուց հետո գնում է Իգանի:

Ուսումնասիրողները, նկատի ունենալով տվյալ փաստը, այն տեղադրում են նշված լճի հարավային ավազանում (Арutyонян, 1985, էջ 84-85):

Կարծում ենք՝ Իգանին հետագայի Իգանաձոր գյուղն է՝ իր շրջակա տարածքներով, որը գտնվել է Չըլդըր լճի հարավային ավազանում:

Կարելի է ենթադրել, որ Իգանի տեղանվան մեջ առկա է հայերենի հ.ե. *գան*՝ «ծեծ» արմատը, որը սկզբնապես ունեցել է «բիր» իմաստը (հմնտ. սանսկրիտի ghaṇa «բիր, կոպալ»): Իսկ սկզբի ի ծայնավորը հին հայերենի նախդիր է, որը ծայնավորներից առաջ յ է հնչել, իսկ բաղաձայններից առաջ՝ ի (Ջահուկյան, 1987, էջ 244-245): Այն հանդիպում է նաև հին տեղանուններում: Օրինակ՝ Ղափանի շրջանի Գայ գյուղը կոչվել է նաև Իգաց, Բիթլիսի Խլաթը Իխլաթ, Կամախի Մարեթը՝ Իմարեթ, Էջմիածինը Իէջմիածին և այլն:

*Գան* արմատը հանդիպում է Խարբերդի նահանգի Գան, Սյունիքի Գիլաբերդի շրջանի Գան, Տրապիզոնի Գան և Նախիջևանի Գանս (հոգնակի թվի հայցականի -ս ցուցիչով) հին գյուղերի անուններում, որոնց մեջ այն «ծեծ» իմաստ ունենալ չէր կարող: Թվարկած տեղանունները հուշում են, որ *գան* արմատը դրանցում միայն «բիր, բրիչ» իմաստը կարող է ունենալ, որը մատնանշում է այդ գյուղերում բրիչով աշխատանքի գերակայության մասին:

*Իշտելուանի* (<sup>KUR</sup>İsteluaṇi): Վանի արքա Սարգսուրի 2-րդի տարեգրության հաղորդումներից մեկի համաձայն՝ ուրարտական գորքը, նվաճելով Երիախին (արևելյան Շիրակ)՝ շարժվում է դեպի Իշտելուանի գավառ, հետո՝ Աբունի (Հավնունիք՝ վերին Երասխի հովտում) ու Աբիլիանիխի (Աբեդյանքը՝ դրա միջին ավազանում, նույնը, էջ 95-96):

Հենվելով այս փաստի վրա, որի համաձայն Իշտելուանին գտնվել է արևելյան Շիրակից վերին Երասխ տանող երթուղու վրա, մենք այն նույնացնում ենք Կարս գետի Ախուրյանին միախառնվելու անկյունի միջնադարյան Աստեղանիի (այժմ Աստախանե) և իր շրջանի հետ:

Ուրարտները, ինչպես հայտնի է, շատ հաճախ հին հայկական տեղանունների s հնչյունը ներկայացրել են որպես š (Ջահուկյան, 1987, էջ 228-229):

Սակայն դժվար է բացատրել, թե նրանք ինչու են այդ տեղանվան սկզբի ա ծայնավորը դարձրել *i*, իսկ մեջտեղում ներկայացրել *u* (ու) ավելորդ հնչյուն (հմմտ. Արդվինի անունը, որը նրանք դարձրել են Irdani-):

Աստեղանի տեղանունը իր կազմում ունի հայերենի *h.-ե. աստղ*՝ «աստղ» բառը -անի հոգնակի իմաստ տվող ածանցով, սակայն ոչ «աստղ» իմաստով: Հ. Աճառյանը նշում է, որ այդ արմատը հին նախալեզվի *stel* բառն է *a-* նախածայնով: Հին հունարենում և լատիներենում աստղ արմատի զուգահեռ նույնահունչ բառերը «քարասյուն, քարակոթող» իմաստներն ունեն: Դա, կարծում ենք, «քարասյուն» է նշանակում (ռուսերեն *скала*): Գուցե, Աստեղանին այդպես է կոչվել, քանի որ շրջապատված է եղել քարասյուններով: Արցախի Մեծունիք գավառի Աստեղաբլուր (բլուր), Տարոնի Աստղաբերդ և Սասունի Խիհանք գավառի Աստղյան (-յան ածանցով) բերդի անունները նման իմաստ ունեն:

*Իշտիկունի* (<sup>URU</sup>İstikuni(u) KUR): Լճաշենի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Վանի թագավոր Արգիշտի 1-ինը Կիեխունին (Հրազդանի շրջան) նվաճելուց հետո մտնում է Իշտիկունի երկիր, որը ընկած էր ծովի ափին, և հասնում Լիկիուի շրջան (Սևանա լճի հարավային ափի Լիճքը՝ իր շրջակա տարածքներով): Այսինքն Իշտիկունի գավառը ընդգրկել է այդ լճի արևմտյան ավազանը (Арютюнян, 1985, էջ 96):

Կարծում ենք՝ Իշտիկունի տեղանունը կազմված է հին հայերենի *տիկ-*՝ «տիկ» արմատից և -ունի ածանցից: Այն սկզբից ունի սաստկական *q-* նախածանցը, որից առաջ սովորաբար հնչել է ը ծայնավորը:

Տյուրիկի (Ժմկ. Դիվրիզի) և Ակնի միջև միջնադարում եղել է Ըշթթենիք անունով (*թութ* արմատով և -ենի ածանցով) մի բնակավայր, որի սկզբի *q-* նախածանցը դարձել է *z-*: Այն խեթական սեպագիր աղբյուրներում հանդիպում է Իշտիտինա անունով (տե՛ս):

Սիսիանի շրջանի հին Ըշկամի (կամ բառի հետ -ի ածանցով) գյուղի անունը նույնպես սկզբից ունի *q-* սաստկական նախածանցը, որը դարձել է *z*:

Հավանաբար, Իշտիկունի տեղանունը Նոր Բայազետի շրջանի Տիկնածոր (տե՛ս Թիկնածոր) վայրի անվան հին մի տարբերակ է:

Տիկ արմատը հանդիպում է Արցախի Հարձլան գավառի Տիկ, Արդահանի Տիկան (-ան ածանցով), Ապարանի շրջանի Տիկնավանք

(ավերակ վանք) և այլ հին տեղանուններում, որը հուշում է, թե այդ տեղերում եղել է շինություն կամ վանք, որի սյուները տիկի ձև են ունեցել: Սակայն Իշտիկունի տեղանունը հուշում է, թե այդ գավառը տիկերով հարուստ է եղել ձկնորսության նպատակով:

*Իրդանիունի* (<sup>URU</sup>Irdaniuni): Վանի արքա Արգիշտի 1-ինի Մարմաշենից հայտնաբերված սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ ուրարտական գորքը նվաճում է Երիախի գավառը (արևելյան Շիրակ), հետո՝ Իրդանիունի բնակավայրը՝ մինչև Իշքիգուլու երկիր (Арутюнян, 2001, N179):

Նրա տարեգրության այդ նույն արշավանքին վերաբերող բաժնում գրված է, որ ուրարտական գորքը նվաճել է Երիախին և հասել Իշքիգուլու երկիր (նույնը, N173, I, 21): Այս փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ Իրդանիունին Իշքիգուլու երկրի քաղաք է:

Այդ նույն վավերագրի 5-րդ սյունակում կարդում ենք, որ թագավորը նվաճել է Երիախին, հետո՝ Կատարգան (Կղարջք) և ապա հասել Իշքիգուլու (նույնը, V, 47-49): Պարզվում է, որ Իշքիգուլուն իր Իրդանիունի կենտրոնով գտնվել է Կղարջքից անմիջապես այն կողմ (Арутюнян, 1985, էջ 88-89): Վերջինիս հյուսիս-արևմտյան հարևանը ըստ «Աշխարհացույցի» Նիգալ գավառն է՝ Արդվին քաղաքով (Խաչատրյան, 1998, էջ 125), որոնց անունները Արգիշտին հիշատակում է խիստ աղավաղված ձևով՝ Նիգալը Իշքիգուլու, իսկ Արդվինը Իրդանիունի ձևով (-ունի ուրարտական ածանցով):

Արդվին տեղանունը իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. «արդ, ձև, կարգավորություն» արմատը -ու և -ին ածականակերտ ածանցներով ու նշանակում է «կարգուկանոնով կառուցված բնակավայր»:

Այդ բառը առկա է Օծունի Արդվի (-ու և -ի մասնիկներով), Արդիկ, (այժմ՝ Արթիկ), Տրապիզոնի շրջանի Արդն (-ն հին մասնիկով) և Բասենի Արդի հին տեղանուններում:

*Իրնունի* (<sup>URU</sup>Irnuini): Մանազկերտից քիչ դեպի հարավ-արևմուտք՝ Խոտանլու գյուղում գտնված Վանի տիրակալ Մենուայի սեպագիր արձանագրության մեջ մի քանի այլ բնակավայրերի հետ հիշատակված է նաև Իրնունին (Арутюнян, 2001, էջ 91):

Կարծում ենք՝ Իրնունի տեղանվան մեջ առկա է հայերենի հ.-ե. իր-՝ «բան» արմատը -ն մասնիկով և ուրարտների կողմից ավելացված -սու ածականակերտ ածանցը:

Տվյալ *իր* բառը, որը կարող է գործածվել առանց -ն մասնիկի (հմմտ. եզն և եզ, ողն և ող, անծն և անծ, Ջահուկյան, 1987, էջ 238), հանդիպում է Պարսպատունիքի Իրի (-ի ածանցով), Ճորոխի ավազանի Իրիս (-իք ածանցով) հին բնակավայրերի անուններում:

*իր-* արմատի բան «գործ» հոմանիշից են կազմված Տայքի Բերդացիոր գավառի Բանակ (-ակ ածանցով), Արցախի Դիզակի շրջանի Բանածոր (-ա- հողակապով և ծոր բառով), Դաշքեսանի Բանանց և Այնթափի Բանք հին գյուղերի անունները:

*իրույանի* (<sup>URU</sup>Irujani): Ուրարտուի թագավոր Սարդուրի 2-րդի տարեգրության մեջ նշված է, որ նա զորքով գնացել է Էթիունի, նվաճել Լիքիու գավառը (Սևանա լճի հարավային ափի Լիճք գյուղը իր շրջանով), ապա գրավել Եդիանի բնակավայրը (Ջողի շրջանի հին Ետեցիկ գյուղը): Դրանից հետո նա հպատակեցրել է Իրույանի գյուղը (Арютюнян, 2001, N241, А, 13-16 և 35, էջ 21-22): Հետևաբար, վերջինս գտնվել է Ջողի շրջանի տարածքում:

Կարծում ենք՝ Իրույանի տեղանունը իր կազմում ունի հայերենի հ.-ե. *իր-* «բան» արմատը և -ու ածանցը, որի վրա յ ձայնակապով ուրարտներն ավելացրել են իրենց -անի ածանցը:

*իր* բառը մենք տեսնում ենք Ելիզավետպոլի Իրանց (-անք ածանցով, անունը հոգնակի սեռականի ձևով է), Պարսպատունիքի Իրի (-ի մասնիկով), Մակուի շրջանի Իրիք (-իք վերջավորությամբ), Թալինի Իրինդ (-ինդ ածանցով) և այլ հին գյուղերի անուններում: Դա, թերևս, հուշում է այդ բնակավայրերի մարդկանց աշխատող, ստեղծագործ հատկությունների մասին:

Իսկ -ու ածանցը (հմմ. ածու, հասու, յաղթու, մտառու, Ջահուկյան, 1987, էջ 241) հանդիպում է Սիսիանի շրջանի Տաշու, Բաղքի Քուլու, Գողթնի Շրջու և Վանանդի Մշկու հին բնակավայրերի անուններում:

*Լուերունի* (<sup>URU</sup>Lueruni): Ուսումնասիրողները Լուերունի գավառը որոնում են ինչ-որ տեղ Արքուքինիի հարևանությամբ (Арютюнян, 1985, էջ 131-132):

Եթե Արքուքինին Սյունիքի Շահապունիքն է՝ հիշատակված Արքույք բնակավայրի անունով, ապա Լուերունին, կարծում ենք, դրան հյուսիս-արևելքից սահմանակից Սիսիանի շրջանն է, որը վկայված է իր Լոր գյուղի անունով, որը Մուշի բարբառի հնչմամբ Լուըր կդառ-

նա: Դրա վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի մի դեպքում -uni, իսկ մեկ այլ դեպքում -uhi ածանցը:

Տեղանվան հիմքում առկա է հայերենի հ.-ե. լոր-՝ «լորենի» արմատը, որը հանդիպում է Մուշի Լորաձոր (-ա- հողակապով և ձոր բառի հետ), Դերսիմի Լորինք (-ինք ածանցով), Բաբերդի Լորի (-ի մասնիկով), Թունանյանի շրջանի Լորուտ (-ուտ ածանցով) և այլ հին տեղանուններում: Այն հուշում է նշված բնակավայրերում լորի կամ լորենի ծառի առկայության մասին:

*Լուշա* (<sup>URU</sup>Lusa): Այս ազգագավառն ուրարտական սեպագիր աղբյուրների տվյալների համաձայն՝ գտնվել է ինչ-որ տեղ Երիվանի (արևելյան Շիրակ), Կատարգա (Կղարջք) և Ուխտերուխի (Հայկական պարի հյուսիս-արևելյան լանջեր) երկրների միջև (նույնը, էջ 131):

Կարծում ենք՝ այն Տայքի հարավային Պարտիզացվոր գավառն է, որը կոչվել է իր Լուսինք գյուղի անունով: Ուրարտները այն հիշատակել են առանց -ինք ածանցի:

Լուշա տեղանվան մեջ Գ. Ջահուկյանը տեսնում է հայերենի հ.-ե. լոյս «լույս» արմատի «լուս» տարբերակը (Ջահուկյան, 1988, էջ 158):

Ուսումնասիրողները պարզել են, որ հին հայերենի այն բառերը, որոնք ունեն s հնչյուն, ուրարտական սեպագրերում հանդիպում են s գրությամբ (Ջահուկյան, 1988, էջ 158):

*Լույս* արմատը լուս տարբերակով շատ հաճախ է հանդիպում հին հայկական տեղանուններում:

*Լիքիու* (<sup>URU</sup>Liqiu): Վանի թագավոր Արգիշտի 1-ինը, նվաճելով Իշտիկունի գավառը (Սևանա լճի արևմտյան ավազան), հասնում է Լիքիու: Վերջինս այդ լճի հարավային ափի Լիճք բնակավայրն է իր շրջանով (Խաչատրյան, 1998, էջ 116, 128):

Գ. Ջահուկյանը Լիքիու տեղանվան մեջ տեսնում է հայերենի հ.-ե. լիճ՝ «լիճ» արմատը (Ջահուկյան, 1988, էջ 155): Կարծում ենք՝ դրանում առկա է նաև -իվ ածանցը, որը հանդիպում է Դիարբեքիրի նահանգի Սարիվ, Դերսիմի Հարթիվ հին գյուղերի և Երևանի Մամռիվ ջրանցքի անուններում:

Լիքիուի մեջ առկա ք հնչյունը հին հայերենի լիկ բառի մեջ փոխարինված է ք բաղաձայնով: Դրանք իրար փոխարինել կարող են: Օրինակ՝ Երզրումի Կան գյուղը վկայված է նաև Քան ձևով, Սղերդի

Կիզանը՝ Քիկան, Ղերսիմի Կուռնեղը՝ Քուռնեղ, Կուր գետը՝ Քուռ և այլն:

*Խազանի* (<sup>URU</sup>Hazani): Վանի թագավոր Սարդուրի 2-րդի Մալաթիայից դեպի հյուսիս-արևելք՝ Եփրատի ձախ ավի այժմյան Իզլի գյուղում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ հիշատակված Խազանի տեղանունը ուսումնասիրողները նույնացնում են Սասունի Խազան բնակավայրի հետ (Арутюнян, 1985, էջ 211):

Այն հիշեցնում է Վանի նահանգի Հեքյարի գավառի Խազ, Վանի շրջանի Խազ, Երզրումի Խազ, Մուշի Խազան (-ան ածանցով) և Մանազկերտի Խազաններ (-ան ու -եր հոգնակիակերտ մասնիկներով) հին գյուղերի անունները: Ղրանցում, կարծում ենք, առկա է հայերենի հ.-ե. *խազ*՝ «մուլի, մուլեզին» արմատը:

Խազանի տեղանունը իր մեջ ունի այդ արմատը և -անի ածակաակերտ ածանցը: Այն, կարծես, մատնանշում է տեղի գետի հորդառատ լինելու մասին, որի անունով էլ կոչվել են նշված բնակավայրերը:

*Խալդիրիուլխի* (<sup>URU</sup>Haldiriulhi <sup>KUR</sup>ebani): Խալդիրիուլխի գավառը ուրարտական թագավոր Մենուայի Երզրումի շրջանի մի քարածայռի վրա գրված սեպագիր աղբյուրի հաղորդման համաձայն՝ գտնվել է Ղիաուլխի երկրի (Տայք, Ճորոխի ավազանում) մեջ (նույնը, էջ 220):

Ուստի այն նույնացնել Չըլդըր լճի անվան հետ և տեղադրել համանուն լճի ավազանում, որը չի մտել Տայքի կազմի մեջ, բացառվում է (Меликишвили, 1960, էջ 428):

Կարծում ենք՝ Խալդիրիուլխին Ճորոխի միջին ավազանի Խաղտո ձոր գավառն է: Այդ տարածաշրջանը ընդգրկված է եղել Ղիաուլխի կազմի մեջ:

Խալդիրիուլխի տեղանունը, թերևս, կազմված է հին հայերենի *խաղտել*՝ «յօղել, կցել» բայի *խաղտ*- արմատից, -իր ածանցից և *ուլխի*՝ «հեղեղատ, ձոր» բառից: Ղրանցից առաջինը առկա է Խաղտիք գավառի, Կարինի Խաղտոառիճ գյուղի և Սյունիքի Խաղտք բնակավայրի անուններում:

Ի դեպ, Խաղտոձոր գավառը միջնադարում հայտնի էր նաև Կիցկահ (կահ, հարստություն) անունով և իր Կիսկիմ աղավաղված ձևով:

*Խասրանա* (<sup>URU</sup>Hasrana): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Խասրանա բերդաքաղաքը գտնվել է Այադու երկ-

րում: Կերջինս ընդգրկել է Վանա լճի հարավային ավազանը (Арутюнян, 1985, էջ 226):

Կարծում ենք՝ Խասրանան ժամանակակից Սյուկյուս գետի (Մոկս) ափի այժմյան Խասրա գյուղն է: Այդ տարածքը գտնվել է Այադուի կազմի մեջ:

Ի դեպ, նշված Խասրա բնակավայրը միջնադարի հայկական գրավոր աղբյուրներում հիշատակված է նաև Կասր ձևով: Դեռևս հին հայերենում, ինչպես Գ. Ջահուկյանը նշում է, խ և կ հնչյունների լծորդություն հանդիպում է (հմմտ. խեղ և կեղ «ծուռ», Ջահուկյան, 1987, էջ 253):

Կասր կամ Խասրա տեղանունը հիշեցնում է Վանի նահանգի Խոշաբի գավառի Կասր (Կասրանի, Կասրիկ) և Ախալցխայի Կասր (այժմ՝ Անի) հին գյուղերի անունները:

Կարծում ենք, ինչպես նշված տեղանունները, նույնպես և Խասրանան, իր մեջ ունի հին հայերենի *կաս*՝ «մանրել, ջարդել» արմատը -ր աճականով և -ան ածանցով (հմմտ. բարծ ու բարծր, ցած և ցածր, թանծունք ու թանծր, մանուկ ու մանր):

Այդ *կաս* բառից են կազմված կասու կամ կասել՝ «ցորենը ծեծել, կամնել» բառերը:

Դա հուշում է, թե Խասրանա տեղանունը նշանակում է «բնակավայր, որտեղ մարդիկ զբաղվել են կալսելու գործով»:

Հիշենք, Շուշիի Կալեր, Բաբերդի Կալեր և այլ հին տեղանունները, որոնք այդ նույն իմաստն ունեն:

*Խիստա* (<sup>URU</sup>Hista): Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 3-րդի Կալխու հնավայրից գտնված սեպագիր աղբյուրի տվյալների համաձայն՝ Խիստան էնզի (հայկական Անծիթ) երկրի բնակավայրերից մեկն է: Ուսումնասիրողները գտնում են, որ այն Անծիթ գավառի հետագայի Հեշտո գյուղն է (Арутюнян, 1985, էջ 231):

Խիստան հիշեցնում է Ճորոխի միջին ավազանի՝ Սպերի շրջանի Խիստացիոր գյուղի անունը, որը դրված է հոգնակի սեռական հոլովաձևով՝ *փոր*՝ «գոգավորություն» բառի հետ:

Այդ տեղանունը իր կազմում ունի հին հայերենի *խիստ*՝ «կարծր, ամուր» արմատը և -ա ածանցը ու նշանակում է «ամուր շինություններ ունեցող բնակավայր»: Կարծում ենք՝ հետագայի Հեշտո տարբերակը այդ Խիստա տեղանվան հականիշ ձևն է՝ առաջացած ժողովրդական ստուգաբանության հետևանքով:

*Խուզանանի* (<sup>URU</sup>Huzanani <sup>KUR</sup>ebani): Այդ գավառը Արածանիի ստորին ավազանի հին հայկական Խոզան (այժմ՝ Խոզաթ) բերդաքաղաքն է իր շրջանով (նույնը, էջ 232):

Խուզանանի տեղանունը կազմված է հին հայերենի *խոզան*-«ծղոտ» արմատից, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ani ածանցը:

Հիշենք Այրարատի Խոզան, Կիլիկիայի Խոզան և Խնուսի շրջանի Խոզան հին գյուղերի անունները, որոնք իրենց կազմում ունեն այդ բառը և հուշում են տեղանքի ծղոտով հարուստ լինելու մասին:

*Խունդուր* (<sup>URU</sup>Hundur): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Խունդուրը Արմարիլի երկրի (Վասպուրական) ամրոցներից մեկն է (նույնը, էջ 233):

Կարծում ենք՝ Խունդուրը տեղով և անունով նույնական է նշված տարածաշրջանի Ջուլամերկի գավառակի Խոնդոֆ բնակավայրի հետ՝ հիշատակված ռուսական գրավոր աղբյուրներում: Հավանական է, որ ռուս ճանապարհորդը այդ տեղանվան վերջի ը բաղաձայնը շփոթել է ֆ-ի հետ, քանի որ դրանք հնչմամբ իրար մոտ են:

Կարելի է ենթադրել, որ Խունդուր տեղանունը կազմված է հին հայերենի *խոնջ*՝ «վայր, ցած» արմատից և -որ ածանցից:

Հին հայերենում դ և ջ հնչյունների իրար փոխարինելու մասին նշված է Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության մեջ» (հմմտ. Խինդ և Խնջույք, Ջահուկյան, 1987, էջ 175): Իսկ -որ ածանցից են կազմված *բեկոր* (բեկ), *կլոր* (կիլ), *մոլոր* (մոլի) բառերը (նույնը, էջ 235):

Խունջ արմատը հանդիպում է Ամասիայի շրջանի Խոնջալի (-ալի ածանցով), Վանի Աղբակ գավառի Խոնջալիս (հոգնակի հայցականի -ս ցուցիչով) և Ախալքալաքի Խոնջալի (լիձ, աղավաղված ձևով Խանջալի) հին տեղանուններում:

Խոնդոր տեղանունը, ինչպես և վերը նշվածները, հուշում է, թե այն գտնվել է ցածր տեղում:

*Խուշանի, Խուշալիսի* (<sup>KUR</sup>Hušani <sup>KUR</sup>Hušalhi): Ուրարտուի թագավոր Սարդուրի 2-րդը, իր տարեգրության հաղորդման համաձայն, գործով գնում է Դիաուխի երկիր (հայկ. Տայք), նվաճում այն: Հետո նա շարժվում է դեպի Շերիագի բնակավայր (Ժմկ. Ագորդ), ապա

Թորթուն գետի ավազանում գրավում Բիանի բնակավայրը (հետագայի Վան) և Խուշանի գավառակը (Арютюнян, 2001, էջ 234):

Վերջինս, կարծում ենք, Թորթունի ավազանին անմիջապես սահմանակից այժմյան Օլթիի շրջանն է, որի Խոշ գյուղի անունով ուրարտներն այն հիշատակում են:

Խուշանի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *խոշ*- արմատը, որը հանդիպում է *խոշոր*՝ «անհարթ, խորդուբորդ» բառի մեջ -որ ածանցով (Ջահուկյան, 1987, էջ 235):

Իսկ Խուշալխի տարբերակում բացի այդ խոշ- բաղադրիչից մենք տեսնում ենք *աղխ*՝ «բազում, բազմություն» բառը:

*խոշ* արմատը հանդիպում է Կաղզվանի շրջանի Խոշ, Խարբերդի Խոշ, Մուշի Խոշական, Ալաշկերտի Խոշան (-ան ածանցով) և Տրապիզոնի Խոշուտ (-ուտ մասնիկով) հին բնակավայրի անուններում, որը մատնանշում է այդ գյուղերի տարածքների անհարթ լինելու մասին:

*խուսիշիլի* (<sup>URU</sup>Husišili): Խարբերդի նահանգի Մազկերտ գյուղում հայտնաբերված Վանի արքա Ռուսա 2-րդի խիստ տուժած սեպագիր արձանագրության մեջ հիշատակված է Խուսիշիլի անունով մի բնակավայր (Арютюнян, 1985, էջ 234):

Նկատի ունենալով այդ գրավոր աղբյուրի հայտնաբերման վայրը և կրոնական բովանդակությունը՝ նշված գյուղը պետք է, որ գտնվեր Մազկերտի մոտակայքում: Ն. Վ. Հարությունյանի կարծիքով՝ այդ տեղանվան մեջ -šili բաղադրիչը ուրարտերեն է և ունի -եցի իմաստը (Арютюнян, 2001, N 418 և ծան.23):

Մեր կարծիքով՝ Խուսիշիլին նշված տարածքի միջնադարի Խուսիկ (-իկ մասնիկով) գյուղն է, որի մեջ առկա է հին հայերենի *խոյս*՝ «խուսափել, խորշել» բայի խուս տարբերակը: Այն ունի նաև «խոտոր» իմաստը: Ղա հուշում է, որ բնակավայրը կառուցված է խոտոր կամ շեղ, թեք բարձրության վրա: Մենք ունենք նաև Արղանամադենի գավառի հետագայի Խուսնուկ (-ն և -ուկ ածանցներով) բնակավայրը:

*Ծիադխի* (<sup>KUR</sup>šiadhi): Վանի թագավոր Մենուան, համանուն լճի հյուսիս-արևելյան ավազանի Գործոթ գյուղում հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ նվաճել է Ծիադխի գավառը: Ուսումնասիրողները, նկատի ունենալով այդ վավե-

րագրի գտնվելու տեղը, առաջարկում են Ծիաղխին որոնել նշված տարածքին հարակից ինչ-որ տեղ (Арютюнян, 1985, էջ 235):

Ծ և ծ հնչյունների իրար փոխարինելու երևույթը խորթ չի եղել հայկական հին տեղանուններին: Վանի գավառի Ծակտար գյուղի անունը հանդիպում է նաև Չակտար ծևով, Արցախի Ծարը՝ Չար, Ախալցխայի Ծինուբանը՝ Չինուբան տարբերակով:

Ծիաղխին հիշեցնում է Խոտանլուից քիչ դեպի արևելք՝ Սիփան լեռան Չիաթնուկ գագաթի և համանուն անդունդի անունը: Հնարավոր է, որ Ծիաղխին ներկայացրել է նշված լեռների շրջանը: Ուրարտները Չիաթնուկ անվան կեսը փոխարինել են իրենց լեզվի -hi ածանցով, որի արդյունքում այն դարծել է Ծիաղխի:

Վերջինս իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *ծի* «ծի» արմատը, որը հանդիպում է Ճորոխի միջին ավազանի Սպերի գավառակի Չիաջուր, նույն տարածքի Չիաբակ և Սյունիքի Աղահեջք գավառի Չիասար հին տեղանուններում:

*Ծինիշպալա* (<sup>URU</sup>šinišpala): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Ծինիշպալան Արմարիլիի (Վասպուրական) բերդաքաղաքներից մեկն է, որը գտնվել է Ուբիանդա լեռան փեշերին (նույնը, էջ 235):

Ծինիշպալա տեղանվան մեջ, կարծում ենք, առկա է հայերենի հ.-ե. *ծին*՝ «ծնունդ, ծագում, բուն» և *պալ*՝ «ժայռ» արմատները: Վերջինս դրանում գործածված է սաստկական գ- նախածանցով, որը դարծել է շ: Իսկ դրանից առաջ եղած ը ձայնավորը սեպագրերում, որտեղ այն գրելու հնարավորություն չկա, ներկայացված է i ունեցող վանկի նշանի միջոցով (տես Իշտիտինա և Իշտիկունի տեղանունները):

Ծինիշպալա տեղանունը մոտավորապես նշանակում է «ժայռածին», որը բերդի համար խիստ բնութագրական է:

Ծին արմատը մենք տեսնում ենք Բարծր Հայքի Ծնառիծ (*առիծ*՝ «բնակավայր» բառի հետ), Շատախի Ծնի (-ի ածանցով), Խարբերդի Ծնիկ (-իկ մասնիկով) և այլ հին տեղանուններում:

Իսկ *պալ* բառը հանդիպում է Արածանիի միջին ավազանի Պալունիք (-ունի և -ք ածանցներով, գավառ), Հայաստանի հյուսիսի Պալխար (*խար*՝ «այրել» բառով), Բալուի շրջանի Պալան (-ան մասնիկով) և Ղերսիմի Պալաշար հին բնակավայրերի անուններում:

*Ծինիունակ* (<sup>URU</sup>šiniunak): Լուվրի թանգարանում գտնվող Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ծինիունակն Արմարիլիի (Վասպուրական) բերդաքաղաքներից մեկն է: Ն. Վ. Հարությունյանը այդ տեղանունը համեմատում է Այադու գավառի Արդիունակ բնակավայրի հորջորջման հետ և դրանցում առանձնացնում *արդի-*, *ծինի* և *-ունակ* բաղադրիչները (Арутюнян, 1985, էջ 235):

Կարծում ենք՝ դրանցից ունակը հին հայերենի *ունիլ*՝ «բռնել, ունենալ» բայի արմատից կազմված *ունակ* «ունակություն» բառն է, ծինի-ն հայերենի հ.-ե. *ծին*՝ «ծնունդ» արմատն է սեռական հոլովի -ի ցուցիչով, իսկ *արդին* *արդ* «ձև, կարգավորություն» բառն է սեռական հոլովածևով:

Հնարավոր է Ծինիունակ բնակավայրը կոչվել է ծինի՝ ծնունդի ունակություն տվող համանուն աստծու անունից:

*Ծիքարա* (<sup>URU</sup>šiqarra): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ծիքարան Այադույի (Վանա լճի հարավային ավազան) 30 բերդաքաղաքներից մեկն է (նույնը, էջ 235):

Կարծում ենք՝ այն Վանի նահանգի Կարկառի գավառի, որը նախկինում գտնվել է Այադու երկրի կազմում, Ծիկարա՝ միջնադարյան հայկական բնակավայրն է:

Հին տեղանուններում կ և ք հնչյունների լծորդություն հանդիպում է: Օրինակ՝ Սղերդի Կիգան գյուղի անունը հանդիպում է նաև Քիկան ձևով, Էրզրումի Կանը՝ Քան, Դերսիմի Կուռնեղը՝ Քուռնեղ և այլն:

Հավանական է, որ Ծիկարան (-ա ածանցով) հայերենի հ.-ե. *ծիծարն* բառն է, որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, կազմված է նախալեզվի *gār*՝ «ծիծաղ, երգ» արմատի կրկնությամբ (հմմտ. թիռ՝ «թռիչք» և թիթեռ, թեղ՝ «ղեգ, շեղջ, կույտ» և թիթեղ, ծաղր և ծիծաղ, Ջահուկյան, 1987, էջ 251):

Ծիծառ բառը առկա է Տարոնի Ծիծառն, Մուշի Ծիծեռի, Սյունիքի Ծիծառնաքար (բերդ) հին տեղանուններում:

Թերևս, բնակավայրի նման անունը պայմանավորված է այդ տարածքում նշված թռչունի շատ լինելու հանգամանքով:

*Ծուդալա* (<sup>URU</sup>šudala): Ուրարտական սեպագիր աղբյուրների հաղորդումների համաձայն՝ Ծուդալան Բուզունիա գավառի բնակա-

վայր է: Իսկ վերջինս (տե՛ս) ներկայացրել է ժամանակակից Աշոցքի շրջանը (Арутюнян, 1985, էջ236):

Կարծում ենք՝ Ծուղալան այդ նույն տարածաշրջանի հետագայի հայկական Ծիղելի գյուղն է՝ հիշատակված Ղ. Ալիշանի «Շիրակ» աշխատության մեջ:

Այն Պտղոմեոսի քարտեզի վրա նշված տարածքի Sedala-ն է:

Թե Ծուղալան և թե Սեղալան հայկական Ծիղելի տեղանվան՝ օտարների կողմից աղավաղված տարբերակներն են:

Կարելի է ենթադրել, որ Ծիղելի տեղանունը կազմված է հին հայերենի *դիտ-ել*՝ «դիտել» բայի *դիտ-* արմատից և -ելի ածանցից (հմմտ. գով-ել և գովելի, հայ-ել և հայելի, գործ-ել և գործել, «գործող» և այլն):

Այս դիտ- արմատի դ և տ հնչյունները դրափոխվել են, և բառասկզբում հայտնված տ բաղաձայնը դարձել է ծ: Հին հայերենին խորթ չի եղել տ և ծ լծորդությունը (հմմտ. արած և արատ, բուտ և բուծ-ել, լափրտ և լափրծ, տատանել և ծածանել, Ջահուկյան, 1987, էջ 255):

Ծիղելի տեղանունը նշանակում է «դիտելի տեղում գտնվող բնակավայր»:

Այդ *դիտ* կամ *դետ* արմատը առկա է Արտաշատի շրջանի Դիտակ (-ակ ածանցով), Իջևանի Դիտավան (*ավան* բառի հետ), Աշտարակի Դիտիկունդ (*կունդ* արմատով) և այլ հին տեղանուններում: Այն հուշում է, թե դրանք իրենց բարձր դիրքով տեղանքը դիտելու առավելություն են ունեցել:

Կարծում ենք՝ Արդահանի Ծիթելի հին գյուղի անունը նույնպես նշված արմատն ու ածանցը ունի իր կազմում:

Ի դեպ, Մուշի բարբառում սարի կատարը կոչվել է *ծիղիլ* բառով, որը կազմված է այդ նույն դիտ- արմատի ծիղ- տարբերակից և -իլ ածանցից (հմմտ. կաթ-ել և կաթիլ, տեսնել և տեսիլ, Ջահուկյան, 1998, էջ 26):

*Ծուլուկու* (<sup>KUR</sup>Şulusku): Ծուլուկու գավառը Սիսիանի շրջանն է Արգիշտի 2-րդի Թանահատի վանքում թողած սեպագիր արձանագրության մեջ հիշատակված իր հին Ծղուկ անունով (Երեմյան, քարտեզ, Арутюнян, 1985, էջ 236):

Վերջինիս հնչող և չգրվող ը ձայնավորը ուրարտ դպիրները, չունենալով այն գրելու միջոց, ներկայացրել են ս (ու) վանկանշանի օգնությամբ:

Ծղուկ տեղանվան մեջ մենք տեսնում ենք հին հայերենի *ծուղակ* (-ակ ածանցով) *որոգայթ*՝ «թակարդ» բառի ծուղ- արմատը -ուկ մասնիկի հետ:

Այն հանդիպում է Շատախի շրջանի Ծուղ և Ախալցխայի Ծուղուտ (-ուտ ածանցով) հին տեղանուններում: Դրանք, կարծես, հուշում են, թե այդ բնակավայրերը ծուղակ հիշեցնող դիրք են ունեցել:

*Կամանիու* (<sup>KUR</sup>Kamaniu ebanii): Կամանիու ազգագավառը հիշատակված է Արքուքինիի և Լուերունիի հետ (նույնը, էջ 100-101): Արքուքինին (տես) Սյունիքի Շահապունիք գավառն է, որը հնում այդպես կոչվել է իր Արքույք կենտրոնի անունով, իսկ Լուերունին Սիսիանի շրջանի Լոր գյուղն է՝ իր մերձակա տարածքով:

Կարծում ենք՝ Կամանիուն այդ տարածաշրջանի Ծղուկ գավառի Կամավանք հին բնակավայրն է իր շրջանով:

Կամանիու տեղանունը կազմված է հին հայերենի *կամ*՝ «ցորեն կալսելու գործիք» արմատից՝ -ան և -իվ մասնիկներով:

Կամ բառը հանդիպում է Կարսի շրջանի Կամալի (-ալի ածանցով), Կիլիկիայի Կամնոց (-ն և -ոց մասնիկով), Օլթիի Կամք և այլ հին տեղանուններում:

*Կատարզա* (<sup>KUR</sup>Katarza ni): Կատարզա ցեղի երկիրը՝ ազգագավառը, գտնվել է Ճորոխի ստորին ավազանում և նույնացվում է հին հայկական Կղարջքի հետ (Арютюнян, 1985, էջ 105):

Կատարզա տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *կատար*՝ «ծայր, լեռան գլուխ» արմատից հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով, որը դրանում առկա է գ ձևով:

Ջ և ս հնչյունների լծորդությունը խորթ չէ հին հայերենին (հմմ. սկսել և սկիզբ, սկրտոց և գկրտալ): Այն նկատվում է նաև տեղանուններում: Օրինակ՝ Սյունիքի Սավդեք գավառի անունը գործածված է նաև Ջավդեք ձևով, Կայքի շրջանի Մարատուսը՝ Մարադուգ, Սևանի ավազանի Նորատուսը՝ Նորադուգ և այլն:

Կատար բառը մենք տեսնում ենք Երզրումի շրջանի Կատար երկրի անվան մեջ, Արցախի Կատարովանք, Կապանի Կատար և այլ հին գյուղերի անուններում: Դա հուշում է այդ բնակավայրերի կամ շրջանների բարձր դիրք ունենալու մասին:

Կղարջք տեղանունը, կարծում ենք, ժողովրդական ստուգաբանության արդյունք է:

*Կուայանի* (<sup>URU</sup>Kuajani): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Կուայանի բնակավայրը գտնվել է Այադու (Վանա լճի հարավային ավազան) երկրում (նույնը, էջ 113):

Կարծում ենք՝ Կուայանի տեղանվան մեջ առկա է հայերենի հ.-ե. *կոյ*՝ «անասունի աղբ» արմատի կու տարբերակը -այ և -անի ածանցներով:

Կու բառը հանդիպում է Խարբերդի գավառի Կու, Արագածոտնի Կուաշ (-աշ ածանցով, այժմ՝ Կոշ), Սյունիքի Շահապունիքի շրջանի Կուք (-ք մասնիկով) և այլ հին բնակավայրերի անուններում: Դա հուշում է, թե նշված գյուղերի հողերը հարուստ են եղել հումուսով:

*Մախունիա* (<sup>SADU</sup>Mahunnia): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Մախունիա լեռը գտնվել է Այադու երկրում (նույնը, էջ 138): Վերջինս ընդգրկել է Վանա լճի հարավային ավազանը: Դրա արևելյան հատվածը Ռշտունիք գավառն է զբաղեցրել: Վերջինիս Մահռաշտ գյուղի անունը, կարծում ենք, իր կազմի մեջ ունի *-ռաշտ* բաղադրիչը, որը Ռշտունիք տեղանվան հիմքում է ընկած, և *մահ-* բառը, որը առկա է Մախունիա լեռան անվան մեջ: Դրանում մենք տեսնում ենք նաև -ունի ածանցը, որից հետո՝ ասորեստանցիների՝ ավելացրած -ia մասնիկը:

Կարելի է ենթադրել, որ Մախունիան այդ նույն Ռշտունիքի տարածքի այժմյան Արտես լեռն է: Դրա անվան մահ- բաղադրիչը մահակ «բիր, ցից» բառն է -ակ ածանցով:

Այդ լեռան գագաթը, հավանաբար բիրի կամ ցցի նման է: Մահարմատը այդ իմաստով մենք տեսնում ենք «Աշխարհացույցում» հիշատակված Մահկերտ տուն գավառի անվան մեջ:

*Մատնի* (<sup>SADU</sup>Matni): Ասորեստանի թագավոր Աշուրնասիրապալ 2-րդի տարեգրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Մատնի լեռը գտնվել է Դիր(ի)ա (Դիրգունի) գավառում (նույնը, էջ 138): Վերջինս տեղադրվում է այժմյան Մադենի մոտի լեռնանցքից անմիջապես հարավ:

Մատնի լեռան անունը կարելի է համեմատել Բաղեշի Խիզանի շրջանի Մատ, Վանի Թիմարի գավառի Մատ, Սղերդի (այժմ՝ Սիիրտ) Մատին (-ին ածանցով), Խուլբի (Սասուն) Մատիկ (-իկ մասնիկով) հին գյուղերի անունների հետ:

Կարծում ենք՝ Մատնի լեռան անունը թվարկված տեղանունների նման կազմված է հայերենի հ.-ե. *մատ*՝ «մոտ կամ առաջ գալ» արմատից ու -նի ածանցից: Այն հուշում է լեռնանցքի մուտքի մոտ լինելու մասին:

*Մաքալտունի* (<sup>URU</sup>Maqaltuni): Մաքալտունին ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակված է որպես Իգանի գավառի բնակավայր: Այն տեղադրվում է այժմյան Չըլդըր լճի հարավային ավազանում (նույնը, էջ 132):

Գ. Ջահուկյանը այդ տեղանվան մեջ տեսնում է հին հայերենի մակաղ «ոչխարների փարախ» և *տուն* «տուն» արմատները (Ջահուկյան, 1987, էջ 445):

Լրացման կարգով նշենք, որ Մաքալտունիի մեջ առկա է ք բաղաձայնը, իսկ առաջարկվող մակաղ բառի մեջ մենք ունենք կ: Այդ լծորդությունը հանդիպում է հին տեղանուններում: Օրինակ՝ Դերսիմի Քուռնեղ գյուղի անունը հանդիպում է նաև Կուռնեղ ձևով, Երգրումի Քանը՝ Կան, Սղերդի Քիկանը՝ Կիգան, Քուռ գետի անունը՝ Կուր և այլն:

Վերը նշված մակաղ բառը մենք տեսնում ենք Սյունիքի Հաբանդ գավառի Մակաղոց (-ոց ածանցով) հին բնակավայրի անվան մեջ:

*Մենիգայանի* (<sup>URU</sup>Menizajani): Ուրարտուի թագավոր Մենուան Արածանի գետից ջրանցք է անցկացրել Մենիգայանի, Ուկուանի, Ջուգուխե, Իրնունի և Աբասինի բնակավայրերի հողերը ոռոգելու համար: Դրա մասին գրված է նրա Մանազկերտից քիչ հարավարևմուտք գտնվող Խոտանլու գյուղում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ: Դրանից ուսումնասիրողները եզրակացնում են, որ թվարկված գյուղերը պետք է որոնել այժմյան Մանազկերտի շրջանում (Арутюнян, 1985, էջ 141):

Կարծում ենք՝ Մենիգայանի տեղանվան մեջ առկա է ուրարտների ավելացրած -ani ածանցը j ձայնակապով: Իսկ Մենիգան, հավանաբար, այդ նույն տարածքի հետագայի Մանազկերտն է, որի մեջ առկա է կերտ բառածանցը: Մալաթիա քաղաքի անունը նրանք դարձրել են Մելիտեա, որի նման էլ Մանազկերտը՝ Մենիգայանի:

Մանազկերտ տեղանունը բացի նշված -կերտ ածանցից իր կազմում ունի հին հայերենի *ման*՝ «պտույտ, շրջան, ոլորք, գալար» և ազգազել «չորացնել» բայի *ազ*- արմատները ու նշանակում է «չոր շրջան»:

Ման բառը հանդիպում է Երզնկայի գավառի Ման, Դերջանի Մանց, Տուրուբերան նահանգի Մանկերտ և այլ հին բնակավայրերի անուններում: Իսկ ազ-ը մենք տեսնում ենք Բիթլիսի Ազ, Օրդուբադի շրջանի Ազա (-ա ածանցով), Դերսիմի Ազաբերդ, Ելիզավետպոլի նահանգի Ազալի (-ալի մասնիկով) և այլ գյուղերի անուններում:

*Մուշունի* (<sup>URU</sup>Mušuni): Մուշունի բնակավայրը հիշատակված է Ուրարտուի արքա Մենուայի Կանա լճի հարավ-արևելյան ափին առընթեր Նորգյուղ բնակավայրից հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ: Այդ իսկ պատճառով էլ ուսումնասիրողները հակված են այն տեղադրելու նշված վայրում (նույնը, էջ 147):

Կարծում ենք՝ Մուշունի տեղանունը կազմված է հին հայերենի *մոշ*՝ «մոշ» արմատից, որի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -սու ածանցը:

Այդ բառը մենք տեսնում ենք Սյունիքի Աղահեջք գավառի Մոշենք (-ենք ածանցով), Երզրումի Մոշինց (-ինք մասնիկով) և Երզնկայի Մոշուտ (-ուտ վերջավորությամբ) հին գյուղերի անուններում:

*Նալ(ա)* (<sup>SADU</sup>Nal(a)): Ասորեստանի արքա Թիգլաթպալասար 3-րդի Կալխու քաղաքի հնավայրում հայտնաբերված քարե սալիկների սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ նա զորքով նվաճել է Նալ լեռան ստորոտի Ուլուբա գավառը և մտցրել իր թագավորության կազմի մեջ: Ուսումնասիրողները այն նույնացնում են Հայկական Տավրոսի հետ (Арютюнян, 1985, էջ 149):

Եթե նկատի ունենանք, որ Ուլուբան Խուլբ գավառն է՝ Տիգրիս գետի Կուլպ կոչվող թևի ավազանում, ապա Նալ լեռը նույնանում է նշված տեղից անմիջապես հյուսիս գտնվող ժամանակակից Ալչա-կարա լեռնագագաթի հետ:

Նալը հիշեցնում է Կարսի շրջանի Նալ, Պեղամա լեռների Նալասար լեռնագագաթների անունները:

Այն իրենից ներկայացնում է հին հայերենի *նալ*՝ «պայտ» արմատը, որը Հ. Աճառյանը համարում է արաբերենից հայերենին անցած բառ:

Սակայն, ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա լեռան անունը վերաբերում է ավելի վաղ ժամանակների:

Հին հայերը Նալ են կոչել լեռը՝ նկատի ունենալով դրա գագաթի պայտածն լինելը:

*Շալզի* (<sup>URU</sup>Šalzi): Լուվրի թանգարանում գտնվող՝ Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Շալզին Այադու գավառի (Վանա լճի հարավային ավազանը) բնակավայրերից մեկն է (նույնը, էջ 238):

Հին հայերենի այն բառերը, որոնք ունեն ս հնչյունը, ուրարտների կողմից օգտագործվելիս նրանց արձանագրություններում ներկայացված են չ պարունակող վանկերի սեպանշանների միջոցով: Այդպես ուրարտները հայերեն ծես բառը գրել են *šišali* ձևով, աստենը՝ *ištini*, մեսությունը՝ *meš* «նվիրվածություն», սարը՝ *šer* «բարձր» և այլն (Զահուկյան, 1987, էջ 429):

Հին հայերենում նկատվում է նաև ս հնչյունի գ դառնալու հնչյունափոխությունը: Օրինակ՝ սկսել և սկիզբ, սկրտոց և գկրտալ: Դա առկա է նաև տեղանուններում: Սավդեք գավառի անունը մենք ունենք Զավդեք ձևով, Վայքի շրջանի Մարատուսը՝ Մարադուգ, Գեղարքունիքի Նորատուսը՝ Նորադուգ և այլն:

Այս հնչյունական երևույթները նկատի ունենալով՝ Շալզի տեղանվան մեջ կարելի է տեսնել հայերենի հ.-ե. *սալ*՝ «սալ, տափակ քար» արմատը՝ հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով:

Սալ բառը առկա է Սարիղամիշի Սալուտ (-ուտ ածանցով), Արդահանի Սալուտ, Տարոնի Սալ, Շարուրի Սալ և այլ հին գյուղերի անուններում, որը հուշում է, թե այդ բնակավայրերի մոտ սալքարի հանքեր են եղել:

*Շանատուաինի* (<sup>KUR</sup>Šanatuaini): Այդ գավառը հիշատակված է Վանի արքա Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտի սեպագիր արձանագրության մեջ 18 երկրների հետ միասին: Դրանք գտնվել են Սևանա լճից հարավ և հարավ-արևելք (Арутюнян, 1985, էջ 238-239):

Նկատի ունենալով այն փաստը, որի համաձայն ուրարտական սեպագրերում հայերենից վերցրած ս հնչյունով բառերը ներկայացված են չ ունեցող վանկանշանների միջոցով (տես Շալզի), Շանատուաինի տեղանվան մեջ կարելի է առանձնացնել *սան*՝ «կաթսա» և հ.-ե. *տալ*՝ «տալ» բայի տու տերբերակը -ա- հոդակապով ու -ային ածանցով: Այն նշանակում է «կաթսայի նման փոսերով հարուստ շրջան»:

Սան բառը հանդիպում է Բաղեշի նահանգի Սան, Թունանյանի շրջանի Սանային (ոչ Սանահին), Սղերդի Սանե (-է ածանցով), Վա-

նի Սանաց (հոգնակի թվի սեռական հոլովի -աց ցուցիչով) և այլ հին գյուղերի անուններում:

*Շաշկի* (<sup>1</sup>Šaški): Վանի թագավոր Սարգուրի 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Շաշկի ցեղը ապրել է Դիաուխի (հայկ. Տայք) երկրում (նույնը, էջ 242):

Այն կոչվել է իր զբաղեցրած տարածքի անունով:

Հին հայերենի շաշել «ջրի, զենքի ծայն հանել» բայի *շաշ-* արմատը տեղանուններում հանդիպում է նաև *շաշ-* ձևով: Օրինակ՝ Կապանի շրջանի Շաշգետ գյուղը (Շաշիգետ) բնականաբար կոչվել է իր մոտի շաշող գետի անունով (այժմ՝ Շիշկերտ): Սևանա լճի հարավային ավազանի Շաշին (-ին) հանքային աղբյուրի անվան մեջ նույնպես առկա է տվյալ շաշ- արմատը: Սակայն Երզրումի գավառի Շաշեն (-են ածանցով) գյուղի անվան մեջ այն պահպանվել է նույնությամբ:

Կարելի է ենթադրել, որ Շաշկի ազգագավառի անունը նույնպես կազմված է այդ շաշ «շաչյուն» արմատից և -ք հոգնակի մասնիկից:

Այն, ըստ երևույթին, կոչվել է տեղի շաշող գետի անունով:

*Շաշնուինի* (<sup>KUR</sup>Šašnuini): Վանի տիրակալ Մենուայի Արածանի գետի վերին ավազանի Բաղնոց գյուղի մոտից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ պարտության է մատնում Կուտունեն բնակավայրում գտնվող զորամիավորմանը, նվաճում իր դեմ ապստամբած Ալզի երկիրը և ապա՝ Շաշնուինի գավառը (Арютюнян, 2001, N 148 և N149):

Եթե նկատի ունենանք, որ Կուտունեն Վանա լճի հարավարևմտյան ափին առընթեր ժամանակակից Կոտունն է (Арютюнян, 1985, էջ 125), իսկ Ալզին դրանից անմիջապես հարավ-արևմուտք գտնվող հին հայկական Աղծնիքը (տես Ալզի), ապա Շաշնուինին վերջինիս հյուսիս-արևմտյան հարևան Սասնո գավառը պետք է լինի: Ն. Վ. Հարությունյանը այն տեղադրում է նշված տարածքում (նույնը, էջ 242):

Հին հայերենի Սասնո սեռական հոլովածևի վրա ուրարտները ավելացրել են իրենց լեզվի -ino ածականակերտ ածանցը:

Դա հաստատվում է նաև այն փաստով, որ ուրարտները սեպագրերում հայերեն բառերի ս ծայնավորը ներկայացնում էին որպես š (տես Շալզի):

Սասուն տեղանունը «Աշխարհացույցում» հիշատակված է Սասուն տարբերակով, որը հին հայերենի *սան*՝ «կաթսա» հին

«փոս» իմաստով արմատի -ա- հոդակապով կրկնությունն է (հմմտ. մարդ և մարդմուրդ, մայ՝ «մանրել» և մամուլ, մար՝ «զինու փառ» և մամուռ, Ջահուկյան, 1987, էջ 251):

Սան բառից են կազմված Բիթլիսի նահանգի Սան (Սանո, Սանու), Թումանյանի շրջանի Սանային (-ային ածանցով և ոչ՝ Սանահին) և այլ տեղանուններ: Դրանք բոլորը հուշում են, որ այդ գյուղերը, ինչպես Սասունի համանուն կենտրոնը, գտնվել են փոս տեղում կամ այդպիսի տարածքին կից:

*Շարնի* (<sup>URU</sup>Šarni): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդումներից մեկի համաձայն՝ Շարնին Արմարիլիի (Վասպուրական) բերդաքաղաքներից մեկն է (նույնը, էջ 239):

Կարելի է ենթադրել, որ Շարնի տեղանունը կազմված է հին հայերենի շար «շարվածք» արմատից և -նի հոգնակի իմաստ ընձեռող ածանցից (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 155):

Կարծում ենք՝ այն տեղով և անունով Վանի նահանգի Բերկրի գավառի (Երեմյան, քարտեզ) Շար բնակավայրն է:

Շար բառը հանդիպում է Փոքր Հայքի Շար, Երզրումի Շարակ (-ակ ածանցով), Կոզովիտի Շարան (-ան մասնիկով), Գորիսի շրջանի Շարքար (քար բառի հետ) և այլ հին տեղանուններում:

*Շարուարդի* (<sup>URU</sup>Šaruardi, <sup>URU</sup>Saruardi): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալներից մեկի համաձայն՝ Շարուարդին Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) բերդաքաղաքներից մեկն է (Арютюнян, 1985, էջ 167):

Կարծում ենք՝ Շարուարդի տեղանունը կազմված է հին հայերենի շար «շարվածք» և հնդեվրոպական ծագումով արդ «ծև, կարգավորություն» արմատներից՝ -ու- հոդակապով (հմմտ. Ջահուկյան, 1988, էջ 160) և -նի հոգնակիակերտ ածանցով:

Շար բառը մենք տեսնում ենք Քղիի շրջանի Շարակ (-ակ ածանցով), Խնուսի գավառակի Շարանքարեր (վայր), Երզրումի Շարիք (-իք մասնիկով), նույնի Շարող և այլ հին գյուղերի անուններում:

Հնարավոր է, որ Շարուարդին Շատախի շրջանի, որը հնում ընդգրկված է եղել Այադուի կազմում, Շար գյուղն է:

*Շեբետերի(անի)* (<sup>URU</sup>Šebeteri(ani) KUR-nie): Ժամանակակից Պալուի մոտից հայտնաբերված Վանի արքա Մենուայի սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ ուրարտական գործը նվաճել է Շեբետերիա քաղաքի երկիրը, հետո գրավել Խուզանան ու ապա՝ Ծուպանին: Նկատի ունենալով տվյալ վավերագրի գտնվելու վայրը՝ ուսումնասիրողները Շեբետերիան որոնում են Պալուին մոտ տարածքում (Арютюнян, 1985, էջ 243):

Կարծում ենք՝ Շեբետերիան (այն նշված գրավոր աղբյուրում հանդիպում է նաև առանց -ani ածանցի) տեղով և անունով Սասունի Սևիթ բնակավայրն է իր շրջանով, որն ընկած է Պալուից քիչ արևելք:

Հիշենք այն իրողությունը, որի համաձայն ուրարտ դպիրները հաճախ հին հայերենի ս ունեցող բառերի այդ հնչյունը ներկայացրել են թ բաղաձայնով, իսկ վ-ն, քանի որ իրենց լեզվում այն չկար, փոխարինում էին b-ով (Ջահուկյան, 1987, էջ 429): Հետևաբար Սևիթը նրանց մոտ կդառնար Շեբեթ-, որի հաջորդ -եր բաղադրիչը հայոց լեզվի հոգնակիակերտ մասնիկ է, իսկ -ia-ն, կարծում ենք, ուրարտների ավելացրած ածանց է:

Սևիթ տեղանունը բաղկացած է հին հայերենի *սև*՝ «սև» արմատից և -իթ ածանցից:

Այդ բառը մենք տեսնում ենք Խնուսի շրջանի Սևիկ (-իկ ածանցով), Վանի Աղբակ գավառի Սևիկ, Շատախի Սևիկ, Դիարբեքի Սևորակ, Երզրումի Սևքար և այլ գյուղերի անուններում: Իսկ -իթ ածանցը առկա է Ծոփքի Անձիթ գավառի և Մակուի գավառի Իրիթ գյուղի անուններում:

*Շիլահինի* (<sup>KUR</sup>Šilaini): Վանի տիրակալ Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտից հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ Շիլահինին հիշատակված է Սևանա լճից այն կողմ (հարավ-արևելք) գտնվող երկրների հետ (Арютюнян, 1985, էջ 246):

Ուրարտական սեպագրերում հանդիպող հին հայերենի ս ունեցող բառերը հաճախ ներկայացված են թ բաղաձայնով (Ջահուկյան, 1987, էջ 429):

Այդ դեպքում Շիլահինի տեղանվան մեջ կարելի է տեսնել հին հայերենի *սիլ*՝ «խաղողի հնձան» արմատը և -ային ածանցը:

Սիլ բառը հանդիպում է Շատախի Սիլվան (վան «բնակավայր» բառի հետ), Ակնի շրջանի Սիլվան, Սասունի Մոտկան գավառակի Սիլեն (-են ածանցով) և այլ հին տեղանուններում:

Կարծում ենք՝ Շիլահնի գավառը Շուշիի շրջանն է, որը կոչվել է իր Սիլինք բնակավայրի անունով:

*Շիկանու* (<sup>URU</sup>Sikanu): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Շիկանուն Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) բնակավայր է (Арутюнян, 1985, էջ 246):

Ուրարտ դպիրները իրենց սեպագրերում հին հայերենից վերցրած այն բառերն ու տեղանունները, որոնք ունեն ս հնչյուն, հաճախ ներկայացրել են *š* բաղաձայնով (21, էջ 429): Նույնպես վարվել են նաև ասորեստանցիները:

Քանի որ Շիկանուն հիշատակված է ասուրական սեպագրերում, բառավերջի ենթադրվող *i* ծայնավորը դարձել է ս (ու), որը նրանց լեզվի ուղղական հոլովի արդյունք է:

Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ մենք ենթադրում ենք, որ Շիկանու տեղանունը կազմված է հին հայերենի *սիկ* «ցեխ, տիղմ» արմատից և -անի ածականակերտ ածանցից:

Սիկ բառը հանդիպում է Կիլիկիայի Սիկ (բերդ ծովափին), Վանի գավառի Սիկեխ (-եխ ածանցով) և Արդվինի Սիկոտ (-ոտ մասնիկով) հին գյուղերի անուններում:

Դա վկայում է այդ բնակավայրի տարածքի տղմոտ լինելու մասին:

*Պարա* (<sup>URU</sup>Parra): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Պարան Այադու երկրի (Վանա լճի հարավային ավազան) բերդաքաղաքներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 157):

Պարա տեղանունը, կարծում ենք, իր մեջ ունի հին հայերենի *պար*՝ «շուրջ, շրջան» արմատը -ա (այ) ածանցով ու նշանակում է «շրջանաձև դրվածք ունեցող բնակավայր»:

Պար բառը առկա է Ուրմիայի արևմտյան ավազանի Պար, Ակնի շրջանի Պարաձոր, Բիթլիսի Խիզանի գավառակի Պարս (հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով), Վանի Հեքյարի գավառի Պարս հին բնակավայրերի անուններում:

Հետագայի Մոկս գավառի տարածքը նախկինում գտնվել է Այադու երկրի կազմի մեջ: Կարծում ենք՝ Մոկսի Պար բնակավայրը տվյալ Պարան է:

*Պարիսու* (<sup>URU</sup>Parisu): Ասորեստանի թագավոր Թիզլաթպալասար 3-րդը այժմյան Նիմրուդից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդումների համաձայն՝ գրավում է Ուլուբա գավառը, ապա նվաճում Նալ լեռան հակադիր կողմում գտնվող մի քանի բնակավայրեր, որոնց թվում նաև Պարիսուն (նույնը, էջ 154):

Ուլուբան Սասունի Խուլբ գավառն է, Նալ լեռը՝ դրանից անմիջապես հյուսիս գտնվող այժմյան Ալչակարա գագաթն է, որից հյուսիս Մուշի շրջանն է: Այդտեղի Պարուշ գյուղը, կարծում ենք, Պարիսուն է:

Վերջինս իր կազմում ունի հին հայերենի *պար*՝ «շրջան» արմատը և -իք մասնիկը: Այն վկայված է հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով: Իսկ Պարուշ հետագայի տարբերակը -իք մասնիկի փոխարեն ունի -ուշ ածանցը:

Պար բառը առկա է Երզրումի գավառի Պար, Մուկսի շրջանի Պար, Ելիգավետպոլի Պարիս, Ճորոխի միջին ավազանի Պարիսին (նաև -ին ածանցով) հին բնակավայրերի անուններում և հուշում է դրանց շրջանաձև դրվածքի մասին:

*Պիրուաինի* (<sup>KUR</sup>Piruaiini): Այդ գավառը հիշատակված է Վանի արքա Ռուսա 1-ինի Ծովինար գյուղի մոտից հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ Սևանա լճից այն կողմ (հարավ-արևելք) գտնվող երկրների հետ (նույնը, էջ 159):

Պիրուաինի տեղանվան մեջ մենք ունենք *բիր*՝ «բիր, բրիչ» արմատի Արցախի բարբառի պիր տարբերակը և սեռական հոլովի հին -վա ցուցիչը (հմմտ. Շուշի և Շուշվա, Լոռի և Լոռվա, Խաչլու և Խաչվա և այլն): Վերջում առկա է ուրարտների ավելացրած -ini ածականակերտ ածանցը:

Կարծում ենք, Պիրուաինին Ջանգելանի շրջանն է, որը տվյալ դեպքում ներկայացված է իր Պիրինք (-ին և -ք մասնիկներով) բնակավայրի անուններով:

Պիր բառը մենք տեսնում ենք Շարուրի շրջանի Պիր, Երզրումի Պիրալի (-ալի ածանցով), Կոգովիտի Պիրալի, Վանի Հեքյարի գավառի Պիրան (-ան մասնիկով) և այլ հին տեղանուններում: Այն մատնանշում է, թե այդ բնակավայրերում շատ գործածական է եղել բիրը՝ բրիչը:

*Սալուրիա* (<sup>URU</sup>Saluria): Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդի Տուշխանում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ Սալուրիան հիշատակված է որպես Էնգիտե երկրի բնակավայր: Վերջինս հայկական Անձիթ գավառն է՝ Արածանիի՝ Եփրատին միանա-

լու տեղից անմիջապես հարավ-արևելք (Арютюнян, 1985, էջ 165): Ուսումնասիրողները վաղուց նկատել են, որ Սալուրիա տեղանունը իր մեջ ունի հին հայերենի սալոր «սալոր» բառը, որի վրա ասորեստանցիները ավելացրել են -ia ածանցը:

Այն հանդիպում է Երզնկայի Սալոր, Մուշի Սալորիկ, Վանի Հեքյարի գավառի Սալորին (-ին ածանցով) հին գյուղերի անուններում:

*Սարդաուրի* (<sup>URU</sup>Sardauri): Ասորեստանի տիրակալ Թիգլաթպալասար 3-րդը Կալխու քաղաքի (այժմ՝ Նիմրուդ) հնավայրից հայտնաբերված սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ նվաճում է Ուլուբա գավառը Նալ լեռան ստորոտում, ապա դրա մյուս կողմում, ի թիվս այլ բնակավայրերի, գրավում է նաև Սարդաուրան (նույնը, էջ 167):

Եթե Ուլուբան հետագայի Խուլբի շրջանն է այժմյան Կուլպ գետի ավազանում, Նալը՝ ժամանակակից Ալչակարա լեռնագագաթը, նշված տեղի հյուսիս-արևմտյան սահմանին, ապա Սարդաուրան վերջինից քիչ դեպի արևմուտք Պալուի շրջանի միջնադարյան Սարդեղ գյուղը պետք է լինի:

Սարդաուրա տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *սարդ*՝ «լիբանանյան մայրի», *ուրի* (օրի)՝ «իշխան» արմատներից ու նշանակում է «իշխանական մայրի ծառ ունեցող բնակավայր»:

Հետագայում Սարդեղ գյուղի անվան մեջ վերջին բառը փոխարինված է -եղ ածանցով:

Սարդ բառը հանդիպում է Պարսպատունիքի Սարդուն (-ուն ածանցով), Այրարատ նահանգի Սարդյան (-յան մասնիկով) և Դիարբեքիի շրջանի Սարդե (-է վերջավորությամբ) հին գյուղերի անուններում:

*Սիրիմուտարա* (<sup>SADU</sup>Sirimutara): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի տարեգրության մեջ գրված է, որ նա մի տարի գնացել է Ջաբախա երկիր, նվաճել այն և հասել Ուզինաբիտարնա քաղաքը ու Սիրիմուտարա լեռները (Арютюнян, 1985, N 137, I, 9-10):

Այս հաղորդման հիման վրա ուսումնասիրողները Սիրիմուտարան որոնում են Ջավախքի սահմաններին առընթեր տարածքներում (Арютюнян, 1985, էջ 107):

Կարծում ենք, տվյալ գրավոր աղբյուրի այդ բաժնում ուրարտ դպիրները թույլ են տվել սխալ՝ նշված լեռնաշղթայի և բնակավայրի

նվաճումը ներկայացնելով Ջաբախայի հետ անմիջական կապի մեջ: Ղա միևնույն տարում կատարված երկու ուղղություններով արշավանքի նկարագրությունն է:

Իրականում Արգիշտի 1-ինը, նվաճելով Ջավախքը, փոխում է իր ճանապարհը, ետ է գալիս և Երասխ գետի ակունքներով դեպի արևմուտք հասնում է Սիրիմուտարա՝ հայկական Սրմանց լեռներ (Բյուրակն) և դրանց արևմտյան լանջերին նվաճում Ազնաբերդը՝ Ուզինաբիտարնա քաղաքը:

Նշված համադրությունները, կարծես, հաստատում են մեր ենթադրությունը:

Սիրիմուտարա անունը իր կազմում ունի հին հայերենի *սուր*՝ «սուր» արմատը, -մն ածանցը (Ջահուկյան, 1987, էջ 239) և -ու- հոդակապով ուրարտների ավելացրած իրենց լեզվի *tara*՝ «հզոր» բառը, որը Սրմանց տարբերակում փոխարինված է հին հայերենի հոգնակի թվի սեռական հոլովի -անց ցուցիչով: Սեպագրերում հնարավոր չէ բաղաձայն հնչյունների կուտակումներ գրի առնել, ուստի սրմ- բաղադրիչը ներկայացված է սիրիմ- ձևով:

Իրոք, Սրմանց լեռները սուր գագաթներ ունեն:

*Սուգունիա* (<sup>URU</sup>Sugunia): Այդ բերդաքաղաքը գտնվել է Վանա լճի հարավ-արևելյան ափից քիչ հեռու, որը Ն. Վ. Հարությունյանը նույնացնում է նույն տարածքի հետագայի Սուկան (Սոկան) բնակավայրի անվան հետ (Арутюнян, 1985, էջ 171):

Կարծում ենք՝ Սուգունիա տեղանվան մեջ առկա է հայերենի հ.-ե. *սունկն* «սունկ» արմատի սոկոն բարբառային տարբերակը: Ի դեպ այն վկայված է կ հնչյունի փոխարեն գ բաղաձայնով (հմմտ. սունգն, սունգ և այլն):

Նշված արմատի վրա ասորեստանցիները ավելացրել են -ia տեղ ցույց տվող մասնիկը:

Սունկ բառը հանդիպում է Երզրունի շրջանի Սնկառիձ (Սնգառիձ, առիձ «բնակավայր» բառի հետ), Տրապիզոնի նահանգի Սունգուրդ (-ուրդ ածանցով) և Ղերսիմի գավառի Սունկ (վանք) հին տեղանուններում:

Այն մատնացույց է անում տեղի սունկերով առատ լինելու մասին:

*Տարիունի* (<sup>KUR</sup>Tariuni): Վանի թագավոր Արգիշտի 1-ինի տարեգրության տվյալների հիման վրա ուսումնասիրողները Տարիունի գավառը տեղադրում են Երասխի վերին հոսանքի ավազանում և

դրա անունը նույնացնում Բասենի շրջանի՝ Դարոյնքի հետ (Арутюнян, 1985, էջ 177):

Հին հայերենում տ և դ հնչյունների իրար փոխարինելու երևույթը հայտնի է (հմմտ. տոփեմ և դոփեմ, Ջահուկյան, Հայոց, էջ 253): Այն առկա է նաև տեղանուններում (տե ս Ադաենի):

Կարծում ենք՝ Դարոյնք տեղանունը իր մեջ ունի հին հայերենի *դար* «բարձրավանդակ, գառիվայր, շեղ բարձրություն» արմատը և -ոյնք գոյականակերտ ածանցը: Իսկ Տարիունի տարբերակը նշված արմատի հետ ներկայացնում է -իուն (-յուն) ածանցը:

Դար բառը հանդիպում է Կոզովիտի Դարակ (-ակ մասնիկով), Գառնիի շրջանի Դարակ, Սասունի Դարուք (-ուք ածանցով) և Տիգրիսի վերին ավազանի Դարենց (-ենք վերջավորությամբ, անունը ներկայացնում է հոգնակի թվի սեռականի ձևը) հին բնակավայրերի անուններում: Այն հուշում է գյուղի կամ գավառի շեղ բարձրության վրա գտնվելու մասին:

*Տուարածինի-խուբի* (<sup>KUR</sup>Tuaraşini-hubi): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Տուարածինի-խուբի գավառը ուսումնասիրողները տեղադրում են Երասխ գետի վերին ավազանում և նույնացնում հին հայկական Տվարածատաւի գավառի հետ (Арутюнян, 1985, էջ 185-188):

Վաղուց հայտնի է, որ տվյալ տեղանվան մեջ առկա է հին հայերենի *տուար*՝ «արջառ» և *արած* (արածիլ «արածել» բայի մեջ) ու *տաւի* «հարթ, տափակ դաշտ» արմատներից (Ջահուկյան, 1988, էջ 155):

Վերջին բաղադրիչը ուրարտական տարբերակում փոխարինված է -ini ածանցով և hubi «հովիտ» բառով (Ջահուկյան, 1987, էջ 443):

*Ուայաիս* (KUR<sup>URU</sup>Uajais): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ուայաիս գավառը գտնվել է Այադու երկրում (Վանա լճի հարավային ավազան, Арутюнян, 1985, էջ 193):

Ուայաիս տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *վաիս* «երկյուղ» արմատի վայ տարբերակից և հայերի հեթանոսական *Աիս* քանու աստծու (հմմտ. այս «քամի») անունից ու նշանակում է «Աիս աստծու սարսափ»: Ուրարտները, չունենալով վ հնչյուն, տվյալ դեպքում այն ներկայացրել են ս (ու) ծայնավորով:

Վայ բառը հանդիպում է Սյունիքի Վայոց ձոր գավառի Վայք (-ք մասնիկով) բերդի, Կաղզվանի Վայսզոմ գյուղի և Արցախի Վայու ձոր շրջանի անուններում:

*Ուբիանդա* (<sup>SADU</sup>Ubianda): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Ուբիանդա լեռը գտնվել է Արմարիլի (Վասպուրական) երկրում (նույնը, էջ 196):

Հին հայերենի որոշ բառերի մեջ նկատվում է բ և պ հնչյունների լծորդություն (հմմտ. բղբջակ և պղպջակ, բղետ ու պղետ, բոյտն և պոյտն, Ջահուկյան, 1987, էջ 252):

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Ուբիանդա տեղանունը կարելի է համեմատել Սյունիքի Բաղք գավառի Ոպն (-ն մասնիկով), Ծղուկի շրջանի Ոպնի (-նի ածանցով), Գորիսի Ոփավոր (-ավոր վերջավորությամբ)՝ Գողթնի Ոփիկ (-իկ մասնիկով) և Գեղարքունիքի Ոփյաց ձոր հին տեղանունների հետ: Հ. Աճառյանը նշում է, որ ոպ արմատը հանդիպում է նաև ոփ ձևով:

Կարծում ենք՝ Ուբիանդա լեռան անունը կազմված է հին հայերենի *ոպ* (ոփ)՝ «խոռոչ, փոս» արմատից՝ -ի և -անդ ածանցներով ու նշանակում է, որ այն իր գագաթին կամ փեշերին ջրափոս կամ մեծ խոռոչ ունի:

*Ուբուրդա* (<sup>KUR</sup>Uburda): Վանի թագավոր Արգիշտի 1-ինը իր տարեգրության հինգերորդ տարվան վերաբերող բաժնի տվյալների համաձայն՝ զորքով գնացել է Ուբուրդա երկիր, գրավել դրա Իրդունի թագավորանիստ քաղաքը: Այնուհետև նա տիրացել է Ուիշուշինի երկրին՝ հասնելով Խախի (Арютюнян, 2001, N 173, II, 40-44):

Ուսումնասիրողները, նկատի ունենալով այն, որ տվյալ Խախի երկիրը Երզնկայի շրջանն է, որը կոչվել է իր Խախ գյուղի անունով, Ուբուրդան որոնում են Բարձր Հայքում (Арютюнян, 1985, էջ 196):

Ֆ. Քյոնիզը առաջարկում է Ուբուրդան նույնացնել այդ տարածաշրջանի Պտղոմեոսի քարտեզում նշված Օբորդենե բնակավայրի հետ (տես նույն տեղ):

Օբորդենեն տեղով համընկնում է Երզրունի գավառի Օփուկ (-ուկ ածանցով) հին բնակավայրի հետ, որը գտնվել է Երասխի ծախակողմյան Մուրց վտակի ակունքից քիչ դեպի արևելք: Այն կոչվել է նաև Օբավանք:

Ուբուրդա տեղանունը կարելի է համեմատել Սյունիքի Բաղք-Աճանան գավառի Ոպն, Ծղուկի Ոպնի (-նի ածանցով), Գորիսի Ոփավոր (-ավոր վերջավորությամբ, ավերակ բերդ), Գողթնի Ոփիկ

(-ի մասնիկով), Վանի նահանգի Մոկս գավառակի Օբին (-ին ածանցով, հանդիպում է նաև Ուփիկ ձևով) և Գեղարքունիքի Ուփյաց ձոր հին տեղանունների հետ:

Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հին հայերենում գոյություն է ունեցել բ և պ հնչյունների լծորդություն (Ջահուկյան, 1987, էջ 252-253): Իսկ տվյալ տեղանուններում առանձնացող հին հայերենի *ուփ* «խոռոչ, փոս» արմատը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, հանդիպում է նաև ու պ ձևով:

Ուբուրդա գավառի անունը, կարծում ենք, կազմված է տվյալ *ուփ* «խոռոչ» արմատի *ոբ* տարբերակից, որը հանդիպում է նաև բերված օրինակներից մի քանիսի մեջ և -ուրդ ածանցից: Այն հուշում է, թե այդ տարածքը հարուստ է խոռոչներով՝ ջրափոսերով:

*Ուզինաբիտարնա* (<sup>URU</sup>Uzinabitarna): Վանի արքա Արգիշտի 1-ինի տարեգրության մեջ Ուզինաբիտարնա քաղաքը և Սիրիմուտարա լեռնաշղթան հիշատակված են որպես Ջաբախա երկրին առընթեր (Арутюнян, 2001, N 171): Սակայն դրանցից առաջինի անվանապես նույնական լինելը Ազնաբերդի հետ, որը գտնվել է Սրմանց լեռների արևմտյան փեշերին, և Սիրիմուտարա ու Սրմանց հորջորջումների համապատասխանությունը ցույց են տալիս, որ դրանք Ջավախքի հետ կապ չունեն: Սեպագիր աղբյուրում ներկայացված են միևնույն տարվա երկու տարբեր ուղղություններով թագավորի կատարած արշավանքները (տես Սիրիմուտարա):

Ուզինաբիտարնա տեղանվան սկզբի ձայնավորը հայկական Ազնաբերդ տպրբերակում ա հնչյունն է ներկայացնում: Ուրարտական դպիրները օ-ին մոտ հնչող ա-ն, չունենալով դրանցից առաջինի գրելու միջոց, ներկայացրել են ս (հմմտ. Արմե և Ուրմե, Կադմուխի և Կուդմուխի և այլն): Իսկ *բերդն* բաղադրիչը դրափոխելով և աղավաղելով՝ նրանք դարձրել են -բիտարնա՝ պահպանելով բերդն բառի վերջի -ն մասնիկը, որը առկա է նաև *ազն*՝ «ազգ, սերունդ, ցեղ» բառի մեջ: Ազնաբերդ բառացի նշանակում է «այդ տարածքի ցեղին պատկանող բերդ»:

Այդ առիթով հիշենք Նախիջևանի շրջանի Ազնաբերդ, Մեղրու Ազնաբերդ (լեռ), Ակնի գավառի Ազնի (-ի ածանցով), Քղիի Ազնիկ (-իկ մասնիկով) և այլ հին տեղանունները:

*Ուիդուաինի* (<sup>KUR</sup>Uiduaini): Ուրարտուի թագավոր Ռուսա 1-ինի Շովինար գյուղի մոտից հայտնաբերված սեպագիր արձանագրու-

թյան մեջ Ուիդուաինին հիշատակված է Սևանա լճից այն կողմ գտնվող 18 երկրների հետ միասին (նույնը, էջ 200-201):

Ուրարտերենը վ բաղաձայն չի ունեցել: Օտար տեղանունների այդ հնչյունը ուրարտ դպիրները սեպագիր տեքստերում ներկայացրել են ու կամ բ հնչյունների նշաններով:

Ուիդուաինի տեղանվան վերջում առկա է նրանց կողմից ավելացված -ini ածանցը:

Ենթադրվող \*Վիդվա ձևի մեջ կարելի է տեսնել հին հայերենի *վիթ*՝ «այծյամ» արմատի վիդ տարբերակը և եզակի թվի սեռական հոլովի -վա ցուցիչը (հմմտ. Լոռի և Լոռվա, Գյումրի և Գյումրվա, Շորագալ և Շորագլվա, Շուշի և Շուշվա):

Կարծում ենք՝ Ուիդուանին Պարսպատունիքի Վիդիա (-իա ածանցով) գյուղն է իր շրջակա տարածքներով՝ նշված ռուսական Կովկասյան շտաբի 5 վերստանոց քարտեզում:

Վիդ (վիթ) բառը հանդիպում է Վասպուրականի Մարդաստան գավառի Վիտահոտ (հոտ «երամակ» բառի հետ), Մալաթիայի Վիտանի (-անի ածանցով) հին բնակավայրերի անուններում: Դա հուշում է նշված տարածքներում վիթերի առկայության մասին:

*Ուիզուկու* (<sup>ՏADU</sup>Uizuku): Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Ասորեստանի թագավորը գորքով Արմարիլիից (Վասպուրական) անցնում է Ուիզուկու լեռը, մտնում Այադու երկիր (Վանա լճի հարավային ավազան, նույնը, էջ 201):

Ուրարտ դպիրները իրենց լեզվում չունենալով վ հնչյուն, այն օտար անուններում փոխարինել են ս(ու) ձայնավորով կամ բ բաղաձայնով: Կարծում ենք՝ տվյալ դեպքում գործ են ածել առաջինը:

Այդ պարագայում Ուիզուկու տեղանունը կարելի է համեմատել Կարսի մարզի Վիզին (-ին ածանցով), Տրապիզոնի շրջանի Վիզեր (-եր մասնիկով) և Երզրումի Վիզան (-ան վերջավորությամբ) հին բնակավայրի անունների հետ, որոնց մեջ առանձնանում է հին հայերենի *վիզ*՝ «պարանոց, ճիտ» արմատը: Այն հուշում է, թե այդ գյուղերը գտնվել են սարի կամ լեռան պարանոցին առընթեր:

Կարծում ենք՝ Ուիզուկու լեռան անունը, բացի տվյալ վիզ բառից, իր կազմում ունի -ուկ ածանցը: Վերջի ու ձայնավորը ավելացրել են ասորեստանցիները: Դա նրանց լեզվի ուղղական հոլովի ցուցիչի մեջ է մտնում:

*Ուլտուզաինի* (<sup>1</sup>Սltuzaini KUR-նի): Ուլտուզաինի ազգագավառի միակ հիշատակությունը հանդիպում է Արգիշտի 1-ինի տարեգրության մեջ: Այնտեղ գրված է, որ մի տարի Բիայնիլիի թագավորը գործով գնում է, նվաճում Աբիլհանիխին, Անիշտիրգան, Կուարգանին և ապա Ուլտուզաինի ցեղի երկիրը (Арутюнян, 1985, N 173, I, 17-18):

Եթե նկատի ունենանք, որ Աբիլհանիխին հայկական Աբեղյանք գավառն է՝ Երասխի վերին ավազանի հյուսիսային հատվածում, Անիշտիրգան՝ Անիի շրջանը (տես ս), ապա վերջինից համարյա նույնքան հեռավորության վրա, որքան այն բաժանված էր Աբեղյանքից, դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է այժմյան Օլթին: Վերջինս միջնադարում կոչվել է Ուղտի, որի շրջանի հետ էլ մենք հակված ենք նույնացնելու Ուլտուզաինին: Այն կազմված է հին հայերենի ասուրերենից փոխառյալ *ուղտ*՝ «ուղտ» և *-ուս*՝ «ուս» արմատներից ու ուրարտների կողմից ավելացված *-ini* ածանցից, որը նշանակում է «ուղտի ուսի նման տեղանքի մոտի բնակավայր»: Հին հայերենում ս և գ հնչյունների լծորդությունը հայտնի է (Ջահուկյան, 1987, էջ 355):

Ուղտ բառը մենք տեսնում ենք Շուշիի գավառի Ուղտական, Երզրումի Ուղտածոր, Մուշի Ուղտամ (ամ- «լի» բառի հետ) և Գեղամա լեռների Ուղտապարանոց հին տեղանուններում:

*Ու(հ)թե(հ)րուխի* (<sup>KUR</sup>Ս(i)te/iruh*i*): Ուսումնասիրողները նկատի ունենալով ուրարտական սեպագիր աղբյուրների ընծեռած տեղեկությունները՝ Ուիթերուխի գավառը տեղադրում են Հայկական պար լեռնաշղթայի հյուսիս-արևելյան փեշերին՝ Ալաշկերտից դեպի արևելք Երասխի աջ ավազանում (Арутюнян, 1985, էջ 203):

Կարծում ենք՝ Ուիթերուխի տեղանվան մեջ առկա է հին հայերենի *վիթ*՝ «այծյամ» արմատը *-եր* հոգնակիակերտ մասնիկով: Ուրարտները վերջից ավելացրել են իրենց լեզվի *-սի* ածականակերտ ածանցը:

Քանի որ նրանք չեն ունեցել վ հնչյուն, այն դպիրները փոխարինել են տվյալ դեպքում ս(ու) ծայնավորով:

*Վիթ* բառը «վիտ» տարբերակով առկա է Վասպուրականի Մարդաստան գավառի Վիտահոտ (*-ա*- հոդակապով, հօտ «ոչխարների, նաև ուրիշ չորքոտանիների հօտ» բառի հետ) և Մալաթիայի շրջանի Վիտանի (*-անի* հավաքական նշանակությամբ ածանցով) հին բնակավայրերի անուններում:

Հին հայերենի տ և թ հնչյունների հերթազայությունը Գ. Ջահուկյանը տեսնում է *թէն*՝ «թաց» (հմմտ. տէն «թաց») և *քերթել*՝ «քեր-

թել» (հմնտ. բարբառային քերտել) բառերի մեջ (Զահուկյան, 1987, էջ 253):

Փոքր Հայքի Թախթուկ գյուղի անունը հանդիպում է նաև Թախտուկ ձևով, Բալուի գավառակի Թիլը՝ Տիլ, Զավախքի Թմբուկը՝ Տմբուկ, Վայքի շրջանի Կուտանը՝ Քութան, Արձեշի Կուտանը՝ Քութան տարբերակով և այլն:

*Ուլուանի* (<sup>KUR</sup>Սևանի): Վանի թագավոր Արգիշտի 1-ինը սեպագիր արձանագրություն է թողել Կուտայքի շրջանի էլառ գյուղի մոտ: Դրանում գրված է, որ նա նվաճել է Ուլուանի երկիրը՝ Դարանի քաղաքով հանդերձ: Ուլուանին մոտավորապես ներկայացրել է նշված շրջանը (35, էջ 206-207):

Ուրարտական սեպագրության մեջ օ ձայնավոր գրելու միջոց չի եղել, ուստի այն ներկայացված է ու ընթերցվող վանկանշանների միջոցով:

Ուստի մենք Ուլուանի տեղանունը, որի մեջ առկա է ուրարտ դպիրների ավելացրած -ani ածանցը, համեմատում ենք Բալուի շրջանի Օղու (-ու ածանցով), Մուշի Օղական (-ական մասնիկով), Մակուի Օղակ, հին բնակավայրերի անունների հետ, որոնք իրենց մեջ ունեն հայերենի հ.-ե. *օղ*՝ «օղակ» արմատը, որն ինչպես Հ. Աճառյանն է նշում, ունի նաև «կլոր» իմաստը: Դրանում առկա է նաև -ու ածականակերտ ածանցը: Ուլուանին նշանակում է «օղակաձև տարածք ունեցող»:

*Ուպունու* (<sup>KUR/URU</sup>Սք(p)սմ(m)ս/e): Ասորեստանի թագավոր Սալմանասար 3-րդի սեպագիր արձանագրություններից մեկի մեջ գրված է, որ նա նվաճել է Ուպունու քաղաքը, որը պատկանում է Շուպրիայի (Սասուն) թագավոր Անխիտիին: Ուսումնասիրողները այն նույնացնում են բյուզանդական գրավոր աղբյուրներում հիշատակված նույն տարածաշրջանի Ἀφουων-ի՝ ժամանակակից Ֆունի հետ (նույնը, էջ 208-209):

Ն. Ադոնցը նշում է, որ դա միջնադարի հայկական Ափում գյուղն է, որը հանդիպում է նաև Օփում ձևով (Ադոնց, 1972, էջ 138, ծան. 2):

Բնականաբար վերջինիս սկզբի ա ձայնավորը, որը օ-ին մոտ հնչում է ունեցել, սեպագրերում ներկայացվել է ու, քանի որ դրանցում չկար օ գրելու հնարավորություն:

Ափում տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *ափն* «ծայր, եզր» արմատից -ում ներգոյական հոլովի վերջավորու-

թյամբ և նշանակում է «մի բանի ծայրին կամ եզրին գտնվող բնակավայր»:

Դա հաստատվում է Ասորեստանի տիրակալ Ասարխադոնի այն վկայությամբ, որի համաձայն՝ Ուսուսուսու բերդը գտնվել է ամպի նման բարձր լեռան վրա (Дьяконов, N 67):

Ափ բառը մենք տեսնում ենք Քղիի գավառի Ափեվանք, Մեղրիի Ափկես, Սասունի Ափյան և այլ հին գյուղերի անուններում:

*Ուսուսուանի* (<sup>KUR</sup>Ususuani): Վանի թագավոր Մենուան իր սեպագիր արձանագրություններից մեկի հաղորդման համաձայն՝ նվաճել է Ուլիբա երկրի Քիրպունի, Ուսուսուանի երկրի Արպույանի և այլ բնակավայրեր (Арутюнян, N 44):

Քանի որ Ուլիբան Սասունի խուլք գավառն է, Ուսուսուանիի շրջանը նույնպես պետք է որոնել այդ տարածաշրջանում:

Արպույանին, կարծում ենք, Սասունի Մոտկան գավառի Արփի կամ Արփի բնակավայրն է: Հետևաբար Ուսուսուանին նշված շրջանն է:

Ուսուսուանի տեղանունը, եթե նկատի ունենանք, որ դրանում առկա է ուրարտների ավելացրած իրենց լեզվի -ani ածանցը, հիշեցնում է Բաբերդի Ուսուսել (-ել մասնիկով) և Արցախի Ասկերանի շրջանի Դահրավ գյուղի մոտի Ուսուսանց (աղբյուր, հավանաբար մոտակա բնակավայրի անունով) հին տեղանունները:

Այն կազմված է հայերենի հ.-ե. ուս՝ «ուս» արմատի կրկնությամբ և հուշում է, թե Ուսուսանի գավառի համանուն կենտրոնի տները կառուցված են եղել կողք-կողքի ուս-ուսի տված:

*Ուտուխա* (<sup>URU</sup>Utuhā): Ուտուխա բնակավայրը, ինչպես ուսունանասիրողները բացահայտել են, գտնվել է Դիաուխի երկրում և նշված տարածաշրջանի Թորթումի գավառի հետագայի Ուխտա գյուղն է՝ դրափոխված ձևով (Арутюнян, 1985, էջ 243): Այն հանդիպում է նաև Ուխտիք տարբերակով:

Կարծում ենք՝ Ուխտա տեղանվան մեջ առկա է հին հայերենի ուխտ «դաշն, պայման» արմատը՝ փոխառյալ պարսկերենից և -այ ածանցը: Այն հանդիպում է Երզրումի Դերջան գավառի Ուխտիք (-իք մասնիկով), Նոր Բայազետի Ուխտ և Արցախի Հադրութի շրջանի Ուխտածոր հին տեղանուններում: Հավանական է, որ նշված բնակավայրերը ուխտատեղի են ունեցել:

*Ուշկիանի* (<sup>SADU</sup>Uškiani): Ուշկիանի և Բամնի լեռնաշղթաները հիշատակված են Վանի թագավոր Սարգուրի 2-րդի տարեգրության մեջ Սևանի հյուսիսային ավազանի և հարակից շրջանների նվաճման կապակցությամբ (Արտյոնյա, 2001, N 241 F):

Ուշկիանին Իջևանի Ոսկեպարն է, իսկ Բամնին՝ Փամբակի սարերը (տես):

Գ. Ջահուկյանը Ուշկիանի տեղանվան մեջ տեսնում է հին հայերենի *ոսկի* «ոսկի» արմատը -եան ածանցով (Ջահուկյան, 1987, էջ 441):

Ոսկի բառը հանդիպում է Տայքի Ոսկեհանք, Սյունիքի Երնջակի շրջանի Ոսկեծոր, Վանի գավառի Ոսկեբակ և այլ հին գյուղերի անուններում:

*Ուրայանի* (<sup>URU</sup>Uraiani, <sup>URU</sup>Ureiuni): Ուրարտուի թագավոր Սարգուրի 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Ուրայանին Ուխտերուխիի (Հայկական պարի հյուսիս-արևելյան լանջեր) բնակավայր է: Այն հանդիպում է նաև Ուրեյունի ձևով (Արտյոնյա, 1985, էջ 210):

Կարելի է ենթադրել, որ Ուրայանի տեղանունը կազմված է հին հայերենի ուռ «ուռենի» արմատից -ա ածանցով, իսկ Ուրեյունին՝ -ե մասնիկով: Առաջինի մեջ -ani, իսկ երկրորդում՝ -ունի ածանցը -յ հոդակապով ուրարտներն են ավելացրել:

Ուռ բառը հանդիպում է Ստեփանավանի շրջանի Ուռուտ (-ուտ ածանցով), Սյունիքի Վայոց ձոր գավառի Ուռիք (-իք մասնիկով), Շատախի Ուռիկ և Երզնկայի Ուռեք հին տեղանուններում:

*Քադիաինի* (<sup>KUR</sup>Qadiaini): Վանի տիրակալ Սարգուրի 2-րդի տարեգրության տվյալների համաձայն՝ Քադիաինի երկիրը գտնվել է Աբիլիանիխիի (Աբեդյանք՝ Երասխի վերին ավազանում) և Երիախիի (արևելյան Շիրակ) միջև Իշտելուանիի (Կարս գետի Ախուրյանին միանալու անկյունի այժմյան Աստախանեն իր շրջանով) հարևանությամբ (նույնը, էջ 98):

Կ և ք հնչյունների լծորդությունը խորթ չէ հին հայկական տեղանուններին: Օրինակ՝ Փոքր Հայքի Կարկառ բերդը կոչվել է նաև Քարքար, Մեղրու շրջանի Կարճևանը՝ Քարչևան, Աղծնիքի Կեթիկը՝ Քեթիկ և այլն:

Տ և թ բաղաձայնները նույնպես դրանցում երբեմն փոխարինել են իրար:

Այսպես, Բիթլիսի Մուտ գյուղը հայտնի է եղել նաև Մութ անունով, Արցախի Հանրության շրջանի Տունը՝ Թուն, Սասունի Սևիտը՝ Սևիթ և այլն:

Նկատի ունենալով տվյալ փաստերը՝ Քաղիաինի տեղանունը, որի վերջում առկա է ուրարտների ավելացրած -ini ածանցը, կարելի է համեմատել Ամիդի շրջանի Կաթիան (-յան ածանցով), Գեղարքունիքի Կաթիկ (-իկ մասնիկով) և Կարսի Կաթիլք (-իլ վերջավորությամբ և -ք մասնիկով, լեռ) հին տեղանունների հետ: Դրանք իրենց մեջ ունեն հին հայերենի *կաթ*՝ «չիթ, կայլակ» արմատը և հուշում են այդ վայրերի անձրևոտ լինելու մասին:

Քաղիաինին կազմված է այդ արմատից՝ -յա ածանցով:

*Քալանիա* (<sup>URU</sup>Qalanian birtu): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Քալանիա բերդաքաղաքը գտնվել է Մահունիա (տես) լեռան վրա՝ Այադու երկրում (նույնը, էջ 100):

Քալանիա տեղանունը կարելի է համեմատել Աղձնիք նահանգի Քաղի (գավառ), Ուտիքի Քաղաբերդ (-ա ածանցով, բերդ բառի հետ) և Նախիջևանի Քաղան (-ան մասնիկով) հին տեղանունների հետ, որոնցում առանձնանում է հին հայերենի քաղ «արու այծ, նոխազ» արմատը:

Քալանիան կազմված է այդ քաղ արմատից և -ան ածանցից՝ ուրարտների կողմից ավելացված -ia մասնիկով:

Քաղ բառի այծ հոմանիշը հանդիպում է Տարոնի Այծաբերդի, Սյունիքի լեռների Այծասար գագաթի, Հայկական պարի արևմտյան հատվածի Այծպտկունքի (լեռ) հին անուններում:

*Քիեխունի* (<sup>URU</sup>Qieħuni KUR-ni): Վանի տիրակալ Արգիշտի 1-ինը իր տարեգրության տվյալների համաձայն՝ զորքով նվաճում է Ուլուանի երկիրը (Աբովյանի շրջան), հետո գրավում Քիեխունին և ապա մուտք գործում Իշտիկունի (Սևանա լճի արևմտյան ավազան): Նկատի ունենալով այս և նման այլ փաստեր՝ Ն. Վ. Հարությունյանը Քիեխունին գետեղում է Հրազդանի շրջանում (Арцухан, 1985, էջ 108-109): Այդ տեղանվան մեջ մենք տեսնում ենք հին հայերենի *կեխ*՝ «թամբ» արմատը Մուշի բարբառի *կիեխ* քմայնացած ձևով: Իսկ կ և ք հնչյունների լծորդությունը խորթ չէ հայոց հին տե-

ղանուններին: Այսպես՝ Փոքր Հայքի Կարկառ բերդը հիշատակված է նաև Քարքար անունով, Մեղրու շրջանի Կարճևանը՝ Քարչևան, Աղծնիքի Կեթիկը՝ Քեթիկ և այլն:

Կարծում ենք՝ Քիեխունի տեղանունը, որի մեջ առկա է նաև -ունի ածանցը, հուշում է, թե այդ գավառը գտնվում է թամբ հիշեցնող տարածքում:

Այդ իմաստն ունեն Արագածի շրջանի Թամբ, Խոտրջուրի Թամբ հին գյուղերի անունները:

*Քիպա* (<sup>URU</sup>Qipa): Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող արծանագրության տվյալների համաձայն՝ Քիպա բնակավայրը գտնվել է Ուայախս երկրում (Վանա լճի հարավարևմտյան ավազան, նույնը, էջ 111):

Հավանաբար, Քիպա տեղանունը կազմված է հին հայերենի կիպ (քիպ) «կպած» արմատից ու նշանակում է «մի բանի կպած բնակավայր»:

Այդ բառը մենք տեսնում ենք Կարսի շրջանի Կիպար (-լար թուրքերենի ածանցով), Սպերի գավառի Կիպանս (-ան մասնիկով և հոգնակի թվի հայցական հոլովի -ս ցուցիչով) հին բնակավայրերի անուններում:

*Քիրպունունի* (<sup>URU</sup>Qirpunosni): Վանից հայտնաբերված Մենուայի մի սեպագիր արծանագրության հաղորդման համաձայն՝ Քիրպունունին Ուլիբա երկրի բնակավայրերից մեկն է (նույնը, էջ 111):

Ուլիբան (տես Ուլիվի) Սասունի Խուլբ գավառն է, որի արևելյան հարևանը Մոտկանի շրջանն է: Քիրպունունին, կարծում ենք, Մոտկանի Քերպու բերդաքաղաքն է, որը ուրարտական ժամանակներում մտած է եղել Խուլբի կազմի մեջ:

Քիրպունունի տեղանունը իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *քեր*՝ «քերած բան» իմաստով արմատը, -բ (տես Տունե), -ուն ածանցները, և վերջից ուրարտների ավելացրած -սու մասնիկը: Այն նշանակում է «տաշած քարերով կառուցված բնակավայր»:

Քեր արմատը հանդիպում է Երզրումի գավառի Քերան (-ան ածանցով), Վանի Քերբան (-բ և -ան մասնիկներով), Երզնկայի Քերեր (-եր հոգնակիակերտ վերջավորությամբ), Ամիդի Քերիկ (-իկ փոքրացուցիչ մասնիկով) և Խուլբի Քերմ (-մ ածանցով) հին գյուղերի անուններում:

*Քիունա* (<sup>URU</sup>Qiuna): Ասորեստանի տիրակալ Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության հաղորդման համաձայն՝ Քիունան Այադուի (Վանա լճի հարավային ավազան) բերդաքաղաքներից մեկն է (Арутюнян, 1985, էջ 112):

Ամենայն հավանականությամբ այն Վանի նահանգի Շատախի գավառակի, որի տարածքը Այադուի կազմում է եղել, Կիվաշ (-աշ ածանցով) կամ Կիվերս բնակավայրն է:

Կարծում ենք՝ Քիունա տեղանունը իր մեջ ունի հայերենի հ.-ե. *քիվ*՝ «շենքի կտուրի դուրս կարկառած մաս» արմատը և -ն մասնիկը (հմմտ. դուռ և դուռն, բուռ և բուռն, դառ և դառն):

Ուրարտերենը վ հնչյուն չի ունեցել: Օտար բառերի այդ բաղաձայնը նրանք արտաբերել են կամ ու, կամ բ: Դրա համար նրանց դպիրները Քիվն տեղանունը գրել են Քիունա ձևով:

Այդ Քիվ բառը հանդիպում է Ատրպատականի Քիվան (-ան ածանցով), Բաբերդի Կիվ, Սասունի Կիվե (-ե մասնիկով), Ուղտիքի Կիվի (-ի ածանցով) և Արձեշի Կիվիս հին գյուղերի անուններում:

*Քուալբանի* (<sup>KUR</sup>Qualbani): Վանի արքա Սարգուրի 2-րդի տարեգրության մեջ այն հիշատակված է Սևանա լճի մյուս կողմում (հարավ-արևելք) գտնվող երկրների հետ (նույնը, էջ 114): Դա Արցախի Մեծկուանք գավառն է՝ Թարթառ գետի վերին ավազանում:

Գ. Ջահուկյանը Քուալբանի տեղանվան մեջ տեսնում է հայերենի հ.-ե. *կոյ* (կու)՝ «անասունի աղբ» և աղբ «աղտեղություն» արմատները (Ջահուկյան, 1988, էջ 158): Դրանում առկա է նաև -անի հավաքական իմաստ տվող ածանցը:

Նշված բառերը հնայական հին տեղանուններում շատ են հանդիպում՝ հուշելով տեղի հողերի հումուսով հարուստ լինելու մասին:

*Քուարլինի «հովիտ»* (<sup>KUR</sup>Quarlini *hubi*): Ուրարտական սեպագիր արձանագրությունների տվյալների հիման վրա ուսումնասիրողները Քուարլինի խուբի գավառը տեղադրում են Կարմիր բլուրի և Էջմիածնի միջև (Арутюнян, 1985, էջ 114):

Դրա սկզբի զս սեպանշանը ընթերցվում է նաև ku<sub>13</sub> (Labat, էջ 115):

Կուարլինի տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայերենի հ.-ե. *կոյ* (կու)՝ «անասունի գոմաղբ» արմատը, նույն ծագումով *առ*՝ «ղեմը, առջևը» նախդիրը և *-ի*՝ «լիք» բառը: Վերջից ուրարտները կցել են իրենց լեզվի *-ini* մասնիկը և *hubi* «հովիտ» բառը:

Այդ բոլորը հուշում են, թե նշված դաշտի մշակելի հողերը հունու- սով հարուստ են:

Կու բառը առկա է Խարբերդի Կու, Արագածոտնի Կուաշ (-աշ ա- ծանցով, այժմ՝ Կոշ), Սյունիքի Շահապունիք գավառի Կուք (-ք հոգ- նակիակերտ մասնիկով) և այլ հին բնակավայրերի անուններում:

*Քուլիաինի* (<sup>1</sup>Quliaini KUR-ni): Վանի թագավոր Արգիշտի 2-րդը Քուլիաինի ցեղի երկիրը նվաճելուց հետո դրա մասին սեպագիր ար- ծանագրություն է թողնում Արագածի հյուս-արևմտյան փեշերի Գու- լիջան գյուղի մոտ: Դա նկատի ունենալով՝ ուսումնասիրողները այն նույնացնում են վերջինիս և իր շրջանի հետ (նույնը, էջ 116):

Միջնադարում Գուլիջանը կոչվել է Կուլիձան (այժմ Սպանդա- րյան գյուղ): Ուրարտները ճ բաղաձայնը սեպագրերով գրելու հնա- րավորություն չեն ունեցել: Դա ներկայացրել են յ ունեցող վանկերի սեպանշանների օգնությամբ: Այդ տեղանվան մեջ մենք տեսնում ենք հայերենի հ.-ե. *կուլ* տալ բայի *կուլ* արմատը իր երկրորդ տար- բերակ ընկնուլ «ջրի տակ ընկղմվել» իմաստով: Դրա հաջորդ բա- դադրիչ *-ձան-*ը գործողություն ցույց տվող ածանց է՝ հին պարսկերե- նից փոխառյալ (հմմ. Դիլիջան կամ Տիլիձան՝ կազմված տիլ «ցեխ» և *-ձան* բաղադրիչներից կամ պարսկերեն ատրձանակ՝ կազմված ատր «կրակ» և *-ձան* ու *-ակ* բաղադրիչներից, այն նշանակում է «կրակող»):

Այս տեղանունը, կարծես, հուշում է նշված տարածքի խիստ անձրևոտ լինելու մասին:

Կուլ բառը հանդիպում է Կապանի Կուլաբերդ, Շուշիի Կուլաթաղ և շատ այլ հին բնակավայրերի անուններում:

*Քուրիակա* (<sup>KUR</sup>Quriaka): Վանի արքա Արգիշտի 2-րդը Արձեշի Հաղի գյուղի մոտ սեպագիր արձանագրություն է թողել: Դրա մեջ հի- շատակված են Քուրիակա և Արտարապշա շրջանները, ուր նա ոռոգման համար ջրանցք է անցկացրել: Ուսումնասիրողները բնա- կանաբար նշված գավառակները որոնում են Վանա լճի հյուսիսային ավազանի արևելյան հատվածում, որտեղ և գտնվել է նշված գրա- վոր աղբյուրը (Арутюнян, 1985, էջ 123):

Ի դեպ, շատ տեղանուններ հայ մատենագրության մեջ հանդի- պում են մեկ կ, մեկ այլ դեպքում դրա փոխարեն ք բաղաձայնով: Օրինակ՝ Կուր գետի անունը վկայված է Քուռ ձևով, Կոգովիտի Կու- րը (գյուղ)՝ Քուր, Կանիկուրը՝ Քանիքուր և այլն:

Դա նկատի ունենալով՝ մենք Քուրիակա տեղանվան մեջ տեսնում ենք հին հայերենի *կուր*՝ «տաշտ, նավակ» արմատը և -եակ ածանցը, որը հուշում է, թե գավառի տարածքը փոսի նման է: Այդ Կուր բառը հանդիպում է նաև Ախալցխայի Կուր, Վանի նահանգի Հեքյարի գավառի Կուր, Բիթլիսի Կուրանի (-անի ածանցով), Վայոց ձորի Կուրանք և այլ հին գյուղերի անուններում:

*Քուրիանի* (<sup>KUR</sup>Quriani): Ուրարտուի թագավոր Սարգուրի 2-րդը տարեգրության մեջ գրում է, որ զորքով գնացել է էթիունի երկիր, նվաճել Երիախի գավառը (արևելյան Շիրակ), այնուհետև գրավել է Քուրիանի երկիրը և ապա Իգանին (Չըլդըր լճի հարավային ավազան): Ուսումնասիրողները դրա հիման վրա գտնում են, որ այն գտնվել է Իգանիի հարևանությամբ (նույնը, էջ 123):

Վերջինս, ինչպես նշվեց, գտնվել է Չըլդըր լճի հարավային ավազանում, որից անմիջապես արևմուտք Կուր գետի ակունքներն են: Այդ շրջանն էլ, կարծում ենք, կոչվել է Քուրիանի՝ Կուր գետի անունով, որը հայտնի է նաև Քուռ հորջորջմամբ: Քուրիանի տեղանունը կազմված է հին հայերենի *կուր*՝ «տաշտ» արմատից և -յան ածանցից: Վերջինս հուշում է, թե այդ գավառը կոչվել է գետի անունով, որը ըստ էության նշանակում է «տաշտի ձևի փոսեր ունեցող»:

*Քուտա* (<sup>URU</sup>Qutta): Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի՝ Լուվրի թանգարանում գտնվող սեպագիր արձանագրության տվյալների համաձայն՝ Քուտա բնակավայրը գտնվել է Ուայախս երկրում (Վանա լճի հարավային ավազանի արևելյան հատված, նույնը, էջ 125):

Կարծում ենք՝ Քուտան Վանի նահանգի Կարձկան գավառի, որի տարածքը ժամանակին ներկայացնում էր Ուայախսը, Կուտ գյուղն է (Զահուկյան, 1988, էջ 160):

Քուտա տեղանունը կազմված է հին հայերենի կոյտ «կույտ» արմատի կուտ (հմմ. կուտ-ել) տարբերակից՝ -ա ածանցով:

Այն առկա է Վայքի շրջանի Կուտան (-ան ածանցով) կամ Քութան, Արձեշի Կուտան (Քութան) հին գյուղերի անուններում, որոնք ունեն նաև կ-ի փոխարեն ք բաղաձայնը: Ի դեպ, Կուր գետի անունը նույնպես հայտնի է Քուռ ձևով:

Կույտ բառը նշված տեղանուններում, ինչպես Քուտայի մեջ, վկայում է, որ դրանք կառուցված են թունք տեղի՝ կույտի վրա:

*Քուտումե* (<sup>URU</sup>Qutume): Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված Քուտումե բնակավայրը ուսումնասիրողները տեղադրում են Վանա լճի հարավ-արևմտյան ափամերձ շրջանում՝ այն նույնացնելով տեղի այժմյան Կուտում (Կոտում) գյուղի հետ (Арутюнян, 1985, էջ 125):

Այդ տեղանունը կարելի է համեմատել Վայքի շրջանի Կուտան (-ան ածանցով, Քութան), Արձեշի Կուտան (Քութան), Մուշի Կուտ, Տաուշի Կուտ և այլ հին գյուղերի անունների հետ, որոնցից մի քանիսը ունեն կ հնչյունի փոխարեն ք բաղաձայնը:

Քուտումե տեղանունը, ինչպես և թվարկվածները, իր կազմի մեջ ունի հայերենի հ.-ե. *կոյտ*՝ «կույտ» արմատի կուտ տարբերակը և հուշում է, թե այդ բնակավայրը նույնպես կառուցված է թումբ տեղի վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին քառորդի շումերական սեպագիր աղբյուրներում հիշատակված, նույն հազարամյակի երկրորդ քառորդում գոյություն ունեցած Արատա անունով երկիրը նույն վավերագրերի տվյալներով՝ գտնվել է Եփրատ գետի վերին հոսանքի լեռնային շրջանում: Նկատի ունենալով հին հայերենի տ և ծ հնչյունների լծորդությունը և նշված տեքստերի տվյալները՝ Արատան մենք նույնացնում ենք Արածանի գետի միջին ավազանի հայկական Արածանի բնակավայրի հետ, իսկ երկիրը՝ տեղադրում դրա տարածքանում:

*Արատ*- արմատը, որը հին հայերենում ունի իր *արած*- և *արատ* տարբերակները, նշանակում է «արտավայր, արածատեղի», որն էլ ընկած է Արատա տեղանվան հիմքում: Այն հանդիպում է նաև մի շարք հին հայկական տեղանունների մեջ:

Մեր կարծիքով՝ Արատան հայկական առաջին պետական կազմավորումն է:

Մ.թ.ա. 23-րդ դարի Աքքադի թագավոր Նարամսուենի դեմ ապստամբած և պարտություն կրած Արևմտյան Սիրիայի և Արևելյան Փոքր Ասիայի երկրների անունների ցուցակում հիշատակված է նաև Արմանի անունով մի երկիր: Այն տեղադրվում է Վերին Տիգրիսի արևմտյան ավազանում և նույնանում ուրարտական սեպագիր աղբյուրների՝ Արմեի (Ուրմե) հետ թե՛ տարածքով և թե՛ անունով: Արմանի տեղանունը, կարծում ենք, կազմված է հին հայերենի *արմ*-արմատից՝ «գարմիկ, տոհմիկ» իմաստով և -անի ածականակերտ ածանցից: Նշված տարածաշրջանի գավառներ Բիթ-Ջամանին՝ Ամեղու կենտրոնով, Ալզինին, Շաշնուինին և ուրարտական ու ասուրական սեպագիր աղբյուրներում հիշատակված բնակավայրերի անունները նույնպես կազմված են հին հայերենի արմատներից: Նկատի ունենալով այդ բոլոր փաստերը՝ մենք կարծում ենք, որ Արմանին մ.թ.ա. 23-րդ դարում նույնպես ներկայացրել է հայկական պետական մի կազմավորում:

Մեկ այլ քաղաքական միավոր, հիշատակված նույն Նարամսուենի նշված սեպագիր աղբյուրում, Ուլիվին է, որն ուսումնասիրողները տեղով և անունով նույնացնում են Սասունի Խուլբ գավառի հետ:

Խուլք տեղանունը կազմված է հին հայերենի *խուլ* արմատից՝ որա «խուլ տեղ գտնվող» իմաստով և -բ ածանցից և նշանակում է «շրջակայքից կտրված տեղում գտնվող շրջան»:

Երրորդ պետական կազմավորումը Հայասան է՝ հիշատակված մ.թ.ա. 14-13-րդ դդ. խեթական սեպագիր աղբյուրներում: Այն ընդգրկել է Հայկական Տավրոս լեռների, Վանա լճի, Եփրատ գետի և Սև ծովի միջև ընկած տարածքները: Հայասա տեղանունն իր հիմքում ունի *հայ* արմատը, որը Հայք երկրի և հայ ժողովրդի անունն է: Դրա վրա խեթերն ավելացրել են իրենց լեզվի ածականակերտ –*aša* ածանցը:

Հայասա երկրի Ազի, Իսուվա, Պախուվա, Ծուխմա և Կումախա նահանգների անունները, որոնք բոլորն էլ ունեն իրենց տեղերում համապատասխան հայկական համարժեքները, կազմված են հին հայերենի արմատներով: Նույնը վերաբերում է Հայասա երկրի բնակավայրերի անուններին:

Մ.թ.ա. 1113 թ. Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինը ձեռնարկում է արշավանք դեպի հյուսիս ու նվաճում Նաիրի 60 երկրներ՝ գավառներ: Այդ առիթով նա հիշատակում է Հայկական լեռնաշխարհի տարածքում նվաճած 23 երկրների և 17 լեռնաշղթաների անուններ: Դրանց ճնշող մասը բացատրվում է հին հայերենով, որը ցույց է տալիս, թե այդ տարածաշրջանը բնակեցված է եղել հայերով:

Մ.թ.ա. 9-7-րդ դդ. ասուրական և ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված նահանգների, գավառների, բնակավայրերի, լեռների ու գետերի անունները, որոնց մեծ մասը տեղում ունի իրենց հայկական համարժեքները, նույնպես կազմված է հին հայերենի արմատներով:

Հայկական լեռնաշխարհը մոտ մ.թ.ա. 6-4-րդ հազարամյակներում զբաղեցնում էին հնդեվրոպական նախալեզուն կրողները, որոնք մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից արդեն ճյուղավորվել էին և ցրվել զանազան ուղղություններով: Տեղում մնացած բնիկները սկսել են աստիճանաբար ձևավորվել որպես հայոց լեզվի կրողներ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆԿԱՆԱՑԱՆԿ

Աբաս 72	Ահալիկ 82	Անծավացիք 124
Աբասաբադ 72	Աինիծոր 82	Անծավ 124
Աբասածոր 72	Աղբակ 55	Անծիտ 84, 152
Աբասաշեն 72	Աղբանց 55	Անծիք 84, 128
Աբդաշ 52	Աղբի 55	Անստան 84
Աբեդյանք 73	Աղբյուր 76	Աշխալի 86
Աբդաշ 53	Աղբյուրակ 76	Ապարանք 24
Աբկես 60	Աղդամ 78	Առավան 25
Աբրանք 74	Աղին 77	Առափ 26
Ադա 54	Աղկան 80	Առափի 25, 26
Ադել 54	Աղկի 80	Առնա 27, 93
Ավա 19	Աղյուս 79	Առնեղ 27
Ազանց 19	Աղն 78	Առնիս 93
Ազիք 19	Աղնիկ 78	Առնիկ 93
Ազնաբերդ 157	Աղվերան 79	Աստաբերդ 86
Ազնի 157	Աղտաղտ 78	Աստածոր 86
Ազնիկ 157	Աղտավ 78	Աստապատ 86
Ազորդ 19	Ամառիձ 123	Աստեղանի 131
Ալ 20, 31	Ամիդ 103	Ավար 54
Ալա 20	Ամք 122	Ավարիկ 54
Ալիշի 77	Այանք 83	Ավախ 113
Ալիք 77	Այաշ 83	Ավիհան 113
Ալիքալի 77	Այնթափ 56	Ավլո 113
Ալքի 20	Այս 83	Ավնի 74
Ալքյան 20	Ան 83	Ատա 87
Ախա 80	Անբերդ 83	Ատես 87
Ախաենք 80	Անագերտ 83	Ատեր 87
Ախաշեն 80	Անգանք 84	Արած 11, 25, 88
Ախս 80	Անգավանք 84	Արածի 11, 25, 88
Ախտամ 78	Անգիս 84	Արածանի 11
Ախուրա 81	Անգև 84	Արածանս 88
Ախուրի 81	Անի 83, 85	Արածոնք 11, 25
Ախուրյան 81	Անիշատ 85	Արավանես 75
Ահալի 82	Անծալի 84	Արատան 11

Արատենք 11  
Արատինք 11  
Արբենց 88  
Արբի 88  
Արբիկ 88  
Արդալա 88  
Արդան 133  
Արդական 8  
Արդի 88, 90, 133  
Արդիկ 88, 90  
Արդիգ 88  
Արզնի 23  
Արի 90  
Արին 90  
Արիս 90  
Արխիկ 90  
Արխունք 90  
Արծաթասար 92  
Արծակ 91  
Արծափ 21, 91  
Արծափաքար 91  
Արծեթոն 92  
Արծինք 26, 91  
Արծթի 92  
Արծն 91  
Արկանաձոր 93  
Արկանի 90  
Արկանիս 90, 93  
Արկիկ 90  
Արծնի 23  
Արճեշ 91  
Արմալի 18  
Արմանիս 18  
Արմավիր 17  
Արշավան 125  
Արշավապատ 125  
Առնիկ 27  
Արտանի 94

Արտագերս 94  
Արտագ 94  
Արփա 94  
Արփալի 94  
Արփանյալ 94  
Արփի 94  
Ափեվանք 161  
Ափկես 60, 161  
Ափյան 161  
Ափնագեղ 60  
Ափում 160  
  
Բաղնոց 98  
Բագ 95, 96  
Բագաբերդ 96  
Բագու 95  
Բագունիս 105  
Բալդասոր 96  
Բալդո 96  
Բալար 96  
Բաղտ 96  
Բաղտակոր 96  
Բամբ 97  
Բամբակ 97  
Բամզ 97  
Բանակ 134  
Բանաձոր 134  
Բարծան 60  
Բարծենք 60  
Բարծր 98  
Բարծրաղիոր 98  
Բեղ 73  
Բեղամն 73  
Բեղոնք 73  
Բենի 98  
Բենեք 98  
Բենիկ 98  
Բիտ 102

Բիտնի 102  
Բիրական 62, 103  
Բիրան 62, 103  
Բիրի 103  
Բլղաձոր 96  
Բուք 28  
Բութակ 28  
Բուխրուտ 102  
Բույնուտ 105  
  
Գագեր 28  
Գագիկ 28  
Գան 131  
Գասե 29  
Գասման 29  
Գասնի 29  
Գետիկ 106  
Գոգան 107  
Գոգաշեն 107  
Գոգակ 107  
Գորա 108  
Գորանիս 108  
Գորան 108  
Գորգան 109  
Գորգեր 109  
Գորիս 108  
Գորոբ 108  
Գորոզ 108  
Գրգուռ 108  
Գուլ 107  
Գուլապատ 107  
Գուլուտ 107  
  
Դախն 56  
Դայլի 109  
Դայեար 56  
Դար 110  
Դարալի 110

Դարատափ 110	Երերին 116	Թառ 125
Դարենց 155	Երերոն 120	Թառիկ 128
Դարուր 155	Երիզա 27	Թառու 129
Դարք 110	Երիզակ 27	Թաս 128
Դեզ 110	Երիծոր 117	Թասիվ 128
Դիղան 111	Երիշատ 118, 120	Թասու 128
Դիդիկոնդ 111	Երիստան 118	Թարխանե 67
Դիդվար 111	Երիք 120	Թարխանաբերդ 67
Դիզան 110	Երևանս 118	Թարխնիկ 67
Դիզադիզ 110	Երևարք 118	Թարխուն 67, 68
Դիլան 112	Երևիլ 118	Թաքնալի 128
Դիլավ 112	Երևիք 118	Թերի 129, 130
Դիլիջան 166		Թերց 130
Դիվական 113	Չագա 30	Թերուկ 130
Դիվաձոր 113	Չագալի 30	Թիկնաձոր 132
Դիվանի 113	Չաման 104	Թիրկիլոխ 68
Դիրիկ 113	Չամանլի 123	Թոնի 58
Դիտակ 142	Չամբեդ 123	Թոնիս 58
Դիտավան 111, 142	Չամբուր 123	Թոնուս 58
Դիրա 113	Չամիք 104	Թոնուկ 58
Դիրալի 79, 113	Չամվան 104	Թու 57
Դիրի 79, 113	Չափանց 87	Թուալի 57
Դու 114	Չափնու 87	Թուլխուջա 130
Դուավան 114	Չիվին 124	Թուն 57
Դուվան 114	Չոզնի 125	
	Չոզող 125	Իրանց 134
Եդեցիք 114	Չու 125	Իրի 134
Ելան 66, 115	Չուան 125	Իրիզիս 119
Ելիկ 114		Իրիթ 150
Ելք 114	Էլխիս 66	Իրիս 134
Ետեցիք 114, 115	Էլուկ 67	Իրիք 134
Ետինք 115		
Երզ 125	Ըշթթենիք 31	Լալ 32
Երզի 125	Ըշկամի 132	Լալալի 32
Երզս 125		Լալան 32
Երեր 120	Թագան 65	Լալկան 32
Երերան 116	Թագունաբակ 128	Լալավեր 32
Երերի 116, 120	Թամբ 164	Լալելի 33

Լալեք 32	Խուլագյուղ 24	Կատար 143
Լալվար 32	Խուլիկ 18	Կատարովանք 143
Լիս 33	Խուսնուկ 139	Կարին 39
Լոր 134.		Կարս 39
Լորածոր 135	Ծակտար 140	Կիզերս 165
Լորի 135	Ծանծաղ 37	Կիզիս 165
Լորուտ 135	Ծիղելի 142	Կիզվան 69
	Ծիծառն 141	Կիզիկ 69
Խազ 136	Ծիծառնաքար 141	Կիզինքար 69
Խազան 136	Ծիծեռի 141	Կիվ 165
Խազաններ 136	Ծխիկ 38	Կիվաշ 165
Խախ 35	Ծղուկ 142	Կիրան 59
Խախու 35	Ծնառիձ 140	Կիրաշեն 59
Խախկերտ 35	Ծնի 140	Կիրատեղ 59
Խաղտք 136	Ծնիկ 140	Կիրատու 59
Խաղտոձոր 136	Ծոբուփոր 32	Կիրիկ 59
Խաշղար 69	Ծոպանիս 32	Կոտոն 168
Խաշին(ք) 69	Ծոպի 32	Կորճան 108
Խասդար 68	Ծուղ 143	Կուաշ 144, 166
Խասրա 137	Ծուղուտ 142	Կուտ 168
Խոզան 138		Կուտան 167, 168
Խոշ 139	Կաթիան 163	Կուր 166, 167
Խոշական 139	Կաթիլք 163	Կուրանի 167
Խոշան 139	Կաթիկ 163	Կուրանք 167
Խոշուտ 139	Կալարաշ 38	Կուք 144, 166
Խոնջալի 138	Կալարուք 38	
Խոռ 37	Կալարք 38	Հայեք 30, 43, 75
Խոռանց 37	Կամալի 143	Հայելիկ 75
Խոռզոն 37	Կամնոց 143	Հայնի 30, 43, 75
Խուղ 36	Կամք 143	Հայթաղ 30, 43, 75
Խուղի 36	Կան 38	Հայրաբլուր 72
Խուդատատվան 36	Կառնեն 106	Հայրաշեն 72
Խութ 36	Կառնի 106	Հայրք 72
Խութիս 36	Կառնոց 106	Հատեր 35, 36
Խութձոր 36	Կառնուտ 106	Հատին 75
Խուլ 18, 23	Կասե 29	Հատիս 75
Խուլի 18	Կասիկ 39	Հատք 35, 36
	Կասր 39	Հեշտո 137

Հետի 115  
Հետինս 115  
Հիմսոր 58  
Ձիաբակ 140  
Ձիաթռնուկ 140  
Ձիաջուր 140  
Ձիասար 140

Ճիմճիմ 51  
Ճոճկան 62  
Ճուն 51

Մադան 66  
Մադեն 66  
Մակաղոց 145  
Մահկերտ 144  
Ման 146, 147  
Մանագկերտ 145  
Մանկերտ 44, 146  
Մանս 44

Մանց 146  
Մանուց 34  
Մատ 144  
Մատիկ 144  
Մատին 144  
Մար 45  
Մարաթուք 45  
Մարածոր 45  
Մեծ 45  
Մոշենց 146  
Մոշենք 146  
Մոշուտ 146

Նալ 146  
Նիգե 31  
Նիգի 31  
Նիրկերտ 45

Շակչիար 69  
Շահ 69  
Շահալի 69  
Շամ 47  
Շամախի 47  
Շամանց 47  
Շամուտ 47  
Շաշգետ 148  
Շաշին 148  
Շար 149  
Շարակ 69, 149

Շարան 149  
Շարիք 149  
Շարող 149  
Շավչեթի 70  
Շիշկերտ 148  
Շող 70  
Շողան 70  
Շողեր 70

Ոպն 156  
Ոսկեբակ 169  
Ոսկեհանք 169  
Ոսկեպար 162  
Ոսկեծոր 162  
Ոփավոր 156  
Ոփիկ 156  
Ոփյաց ծոր 157

Պալա 48  
Պալաշար 48  
Պալան 140  
Պալխար 140  
Պալս 48  
Պալունիք 140  
Պահանիս 49  
Պահանց 49  
Պահավանք 49

Պահու 49  
Պատոնց 98  
Պար 49, 151, 152  
Պարա 51  
Պարածոր 151  
Պարիս 152  
Պարս 151  
Պիր 152  
Պիրալի 152  
Պիրան 152

Ջավախտոտ 122  
Ջավախք 121, 122  
Ջավանի 122  
Ջավեր 122

Սալ 147  
Սալոր 157  
Սալորիկ 153  
Սալորին 153  
Սալուտ 147  
Սան 149  
Սանային 147, 149  
Սանե 147  
Սասուն 148  
Սարդե 153  
Սարդուն 153  
Սեպ 120  
Սեպաքար 120  
Սղան 47  
Սղան 48  
Սղերդ 48  
Սրմանց 154  
Սիլեն 150  
Սիլինք 151  
Սիլվան 150  
Սիկ 151  
Սիկեխ 151

Սիկոտ 151  
Սևիկ 150  
Սևորակ 150  
Սևքար 150  
Սունկ 154  
Սունգուրդ 154

Վայսզոն 156  
Վայոց ձոր 156  
Վայու 156  
Վան 99, 101  
Վանանդ 101  
Վանևան 101  
Վիզան 158  
Վիզին 158  
Վիտահոտ 158, 159  
Վիտանի 158, 159

Տախ 49  
Տախիկ 50  
Տամբեր 50  
Տամիթադ 50  
Տամուրդ 50  
Տաշու 134  
Տիլիճան 166  
Տիկ 132  
Տիկան 132

Տիկնավանք 132  
Տվարածատափ 155  
Ուզ 64  
Ուզի 64  
Ուզում 64  
Ուզոց 64  
Ուխտա 161  
Ուխտածոր 161  
Ուխտիք 161  
Ուղտական 159  
Ուղտամ 159  
Ուղտածոր 159  
Ուղտապարանոց 159

Ուղտի 159  
Ուրմիա 64  
Ունջի ձոր 65  
Ունջոռք 65  
Ուռի 51  
Ուռեք 162  
Ուռիք 162  
Ուսուսանց 161  
Ուսուսել 161

Փամբակ 97, 102  
Փիլաքլի 63  
Փխրուտ 102

Քերան 164  
Քերբան 164  
Քերիկ 164  
Քերոն 164  
Քերպու 164  
Քըսր 69  
Քինդրանց 65  
Քիվան 165  
Քուռ 166

Օբավան 70  
Օբավանք 156  
Օբիզա 70  
Օբին 157  
Օբորդենե 156  
Օգնաբադ 63  
Օգնուտ 63  
Օղակ 160  
Օղական 160  
Օրոր 62  
Օրորան 62  
Օփիկ 70  
Օփուկ 70, 156  
Օփում 160

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

*Ադոնց Ն.*, Հայաստանի պատմություն, թարգմանված ֆրանսերենից, Երևան, 1972:

*Ադոնց Ն.*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմանված ռուսերենից, Երևան, 1987:

*Ալիշան Ղ.*, Սիսվան, Վենետիկ, 1791:

*Աղաբեկյան Մ. Ա.*, Հայ-ուրարտական հնչյունական համապատասխանությունները, «Զահուկյանական ընթերցումներ», Երևան, 2006:

«Աշխարհացոյց» Մովսիսի Խորենացույ, Վենետիկ, 1881:

*Աճառյան Հ.*, Հայերենի արմատական բառարան, հ. I-V, Երևան, 1971-1979:

*Աճառյան Հ.*, Հայոց անձնանունների բառարան, հ. I-V, Երևան, 1942-1962:

*Ավետիսյան Տ.*, Հայոց ազգանունների բառարան, Երևան, 2000:

*Բարսեղյան Լ. Ա.*, Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ, Երևան, 1996:

*Երեմյան Ս.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963:

*Իսրայելյան Մ.*, Էրեբունի-բերդ քաղաքի պատմությունը, Երևան, 1971:

*Խաչատրյան Վ.Ն.*, Արցախն ըստ ուրարտական սեպագիր աղբյուրների, «Լեռնային Ղարաբաղի հանրապետության անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի նյութեր, Երևան, 2007:

*Խաչատրյան Վ.Ն.*, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դդ., Երևան, 1998:

*Խաչատրյան Վ.Ն.*, Հայոց հին պատմության հարցեր, Երևան, 2010:

*Խաչատրյան Վ.Ն.*, Հայոց հին պետականության կառուցվածքի հարցը, «Հայոց պատմության հարցեր», 7, Երևան, 2006:

*Հակոբյան Թ.*, *Մելիք-Բախշյան Ս.*, *Բարսեղյան Հ.*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ.1, 1986, հ. 2, 1988, հ.3, 1991, հ.4: 1998, հ. 5, 2001(ՀՏԲ):

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981:

Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971:

*Հերոդոտոս*, Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986:

*Ղափանցյան Գ.*, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940:

*Մանանդյան Հ.*, Երկեր, հ. Ա, Երևան, 1977:

*Մարտիրոսյան Ն.*, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին,- «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1961, N 3:

*Մելքոնյան Ա. Ա.*, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

*Մելքոնյան Ա.*, Հայաստանի քարերի աշխարհում, Երևան, 1986:

*Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1881:

*Մովսիսյան Ա.*, Հնագույն պետությունը Հայաստանում (Արատտա), Երևան, 1992:

*Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Երևան, 1987:

*Ջահուկյան Գ.*, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Երևան, 1998:

*Ջահուկյան Գ.*, Ուրարտերենը և հայերենը, «Ուրարտու-Հայաստան», Երևան, 1988:

*Ջահուկյան Գ.*, Հայերենի ստուգաբանական բառարան, Երևան, 2010:

Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, հրատ. Ս. Մալխասյանի, Երևան, 1939:

*Ստրաբոն*, Աշխարհագրություն (թարգմ. Հ.Աճառյանի), Երևան, 1940:

*Փավստոս Բուզանդ*, Պատմություն հայոց, (թարգմ. Ս.Մալխասյանի), Երևան, 1968:

*Քոսյան Ա. Կ.*, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004:

*Քսենոֆոն*, Անաբասիս (թարգմ. Ս.Կրկյաշարյանի), Երևան, 1970:

*Քսենոֆոն*, Կյուրոպեդիա (թարգմ. Ս.Կրկյաշարյանի), Երևան, 2000:

*Авдиев В. И.*, История Древнего востока, Москва, 1970.

*Аветисян Г. М.*, Государство Митанни, Ереван, 1984.

*Арутюнян Н. В.*, Биайнили, Ереван, 1970.

*Арутюнян Н. В.*, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

*Арутюнян Н. В.*, Топонимика Урарту, Ереван, 1985.

*Гайдукевич В.*, Боспорское царство, М.-Л., 1949.

*Гамкрелидзе Т. В., Иванов В. В.*, Индоевропейские языки индоевропейцы, т. I, II, Тбилиси, 1984.

*Георгиев В. И.*, Передвижение смычных согласных в армянском языке и вопрос этногенеза армян, Вопросы языкознания, Москва, 1960, N 5.

*Джаукян Г.*, Хайасский язык, его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964.

*Джаукян Г.*, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

- Дьяконов И.*, Ассиро-вавилонские источники по истории Урарту.- «Вестник древней истории», Москва, 1951, N1-4.
- Дьяконов И.*, Предыстория армянского народа, Ереван, 1968.
- Дьяконов И.*, «Эпиграфика востока», VI, Москва, 1952.
- Капанцян Г.*, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975.
- Капанцян Г.*, Колибель армян, Ереван, 1948.
- Крамер С.*, История начинается в Шумере, Москва, 1965.
- Меликишвили Г.*, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
- Меликишвили Г.*, Наири-Урарту, Тбилиси, 1954.
- Пиотровский Б.*, Ванское царство, Москва, 1956.
- Хачатрян В. Н.*, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971.
- Сарианиди В.*, Бактрия сквозь мглу веков, Москва, 1984.
- Barton G.*, The Royal Inscriptions of Sumer and Akkad, London, 1929.
- Forrer E.*, Die Provinzeinteilung des assyrischen Reiches, Leipzig, 1920.
- Grüterbock H.*, Die historische Tradition und ihre literarische Gestaltung bei Babiloniern und Hethitern bis 1200 J, "Zeitschrift für Assyriologie, Berlin, Bd. 44, Heft 1-2, 1938.
- Грозны В.*, Histoire de l'Asie Antérieure, Paris, 1947.
- Kramer S.*, From the Tablets of Sumer, Colorado.
- Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig, 1916, ff.
- Keilschrifturkunden aus Boghazköi, Berlin, 1921, ff.
- Labat R.*, Manuel d'Épigraphie akkadienne, Paris, 1952.
- Monte G., Tischler J.*, Die Orts- und gewässernamen der hettitische Texte. Weisbaden, 1978.
- Rot K.*, Die Bedeutung des Armenischen.- «Հանդես անսորյա», Վե՛նե-տիկ, 1927.

[2000 թ.]

Կ. Ն. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՍԵՊԱԳԻՐ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

(Տեղագրական և ստուգաբանական քննություն)

Տեխ. խմբագիր՝ Ս. Է. Ճանճապանյան

Սրբագրիչ՝ Ն. Կ. Ղազարյան

Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 30: Տպաքանակ՝ 200:

Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ  
Երևան-9, Տեղյան 91

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0224404

A  $\pi$   
98346